

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՍԱՐԿԱԽԱԳԻ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԱՅՑ—1870

Դ ՏՊԵՐԱՆԻ ՄՐՑՈՅ ԿԸՆԹԱԿԱՆԻ ԷՇՄԻԱՆՆԻ

ՖԱՎԱՐԱԳԵՏ.

Զ Ա Գ Ա Ր Ե Ա Յ

Ս Ա Ր Կ Ա Ւ Ա Գ Ի

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրան
Հ Հ Հ

Հ Ա Տ Ա Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա Բ Հ Ա Յ Ա Յ

Ա-Յ-1870

Ի ՏՊԵՐԵԼՆԻ ԱՐԲՈՅ ԿԱԹՈՎԻՆԻ Է ՀԱՄԴԱԾՆԻՆ


Ի Ա Ե Ա Ր Ե Ա Պ Ա Տ


ՀՐԱՄԱՆԻ

Յ. Յ. ԿԵՐՊԻԿԵՎԻՑ Դ.

ԱՆՀԱՓԵԼԻ ԵՒ ԱՐԲԱՇԱՋՈՅՆ ԿԱԹՈՎԻԿՈՍԻ ՀՄԵՐԿԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՎ

Հայոց





ՅՈՒՀԱՆԻԿ

ԱՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆՑ

Ն Ա Խ Ե Ւ

Ա. Թ.

Վահագիայի Եւ հայրենասէր

ՅՈՒՂԱՆՆԵՍ ՄՏԵՓԱՆՆԵԱՆ

ՅՈՎՆԱՆԵԱՆՑ

Ի ՀԱԽԱՍՏԻՍ

ԽՈՐԻՆ ԶԳՈՑՄՈՒՑ

ԵՒ

Ի Ն Շ Ա Կ

ԵՐԱԲՏԱԳԻՏՈՒԹԵԱՆՑ




Ա Զ Դ

Ի հրատարակել մերում զպատմազրութիւնս զայս Սարկաւազին Զաքարիացի, դրուն ձեռագիր օրինակ հեղինակին ունեաք ի Մատևնադարանի Մայր Աթոռոց մերոց Կամողիկէ Ա. Եջմիածնի, յորմէ գաղափարեցաք զներկայս՝ դոցըն ինչ փոփոխութեամբք կէտազրութեանցն, ուղղութեամբք տառասխալիցն, և յաւելլով ի օտորին լուսանցն զհայ. Թարգմանութիւնս աղազդի բառից, և ընծայեմք ի վայելք մերոց և օտարաց բանասիրաց.

Աւաղ՝ զի Գ. թշ Հատորոց Կոնդակ անուանելոյ ձեռացիր օրինակ հեղինակին չերեի ի միջի, զոր զտաք յայլոց հազիւ զմի օրինակ և եթ, թէև այն ևս լի պակասութեամբք թերթից. Ի բնազրին Ա. և Բ. Հատորոց ևս զտանկին պակասութիւնք բառից, որը ի հնութենէն մաշեալ և որը քերեալ դոլով, անդերծանելի մնան :

Յուսամք, զի յերկրորդ տպազրութեան պատմութեանս, եթէ յաշողացուք ի ձեռս բերել զայլ օրինակս երից Հատորոց պատմութեանս, և եթէ ամենող ունին նորա զպակաս թերթս որ ի սմբն երևին, լքացուցանեմք լոյ սկասորդս պատմութեանս որ ի տեղիս տեղիս :



Յ Ա Ն Կ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ ՊԱՏՄՈՒԹԵՍՆԱՑ.

Գ. Ա.	Պատմութիւն և կարգ թաշ գաւորացն Պարսից:	Գ. ԺԴ. Վասն զարգուց երիվարացն, ,, ԺԵ. Գնալն ի տուն Ամեային, ,, ԺԶ. Սպանումն Պառչպայխանին, ,, ԺԷ. Պատերազմ Պարսից ընդ վրաց:
Բ.	Թագաւորք Հայոց,	,, ԺԸ. Ապոտամիկն Դափիթ խանի, ,, ԺԹ. Գնալն Շահին յեմիսանայ:
Գ.	Թագաւորելն Երտաշրի:	, Ե. Վասն Գեօղալ անուն կը- նոջ և գործոց նորա:
Դ.	Թագաւորութիւն Ֆահմայիլին	, ԵԱ. Վասն կաշեայ զրամին՝ առ- նելց:
Ե.	Թագաւորութիւն Թահման- գին:	, ԵԲ. Զքոսանք Շահին կանամիք:
Զ.	Թագաւորութիւն Խուտա- բանտին:	, ԵԳ. Սպանումն որդուցն իւրօյ:
Ը.	Թագաւորութիւն առաջնոյ և մեծ Արասին:	, ԵԴ. Մահ Շահ ։ Արա թագա- ւորին:
Ժ.	Թագաւորութիւն առաջնոյ և մեծ Արասին:	, ԵԵ. Թագաւորութիւն Շահ Սա- ֆուն:
ԺԱ.	Գնալն Շահին ի Գուլփի- քան:	, ԵԶ. Հակառակութիւն որդոյ Շահ ։ Արասին:
ԺԲ.	Աջողմունք թագաւորու- թեան Շահ ։ Արասին:	, ԵԷ. Մանուցումն համառօտ:
ԺԳ.	Գնալն ի տուն Դափիթ Ե- րիցու:	, ԵԸ. Վասն Ամիրգունաց խանին, ,, ԵԹ. Դիպուանք չարաց ի սորա ժամանակին:

- ԳԼ. Պատմութիւն Մովսէս Կառ
թուղիկոսին՝ սակաւիկ
,, Լ.Ա. Վասն մանկանցն ժաղպելոց:
,, Լ.Բ. Վասն մարդուզովզոցն:
,, Լ.Գ. Պատերազմ կնոջն ընդ դայ-
րյուն:
,, Լ.Դ. Հենք Քրոտացն ի զաշոն
Ըստուրաց:
,, Լ.Ե. Մահ Էմիրդունաց խանին:
,, Լ.Զ. Գնալն Օսմանցոց ի վերաց
Բազգատաց:
,, Լ.Ե. Գնալն Ռուստամ խանի ի
Վան:
,, Լ.Բ. Վասն զլուխ զրողացն:
,, Լ.Թ. Վասն Ամազգար Շահ զուլի
րէլին:
,, Խ. Թէ ո՞րպիսի ոքէր Թահմազ-
զուլի խանն:
- ԳԼ. Խըն. Արշաւանք Խանին յաշխար-
հըն Օսմանցոց:
,, Խ.Բ. Պատիժ Ըլին Խալամին Մահ-
մատի:
,, Խ.Գ. Վասն անուանի Խափսկո-
պատոց:
,, Խ.Դ. Վարք և պատմութիւն
Յովհաննես Խափսկոպատի:
,, Խ.Ե. Պատմութիւն և վարք Մը-
խիթար Խափսկոպատին:
,, Խ.Զ. Վասն սակերաց Ֆաջար
փաշային:
,, Խ.Հ. Գնալն Օսմանցոց ի զաւա-
ռըն Արարաւենան:
,, Խ.Բ. Գնալն խանին ի վերաց Օս-
մանցոց:

Վ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

Յօր թէ զիսես Ժիս ի՞նչ է լնալ
Զերիս տեսակս եմ Հաստատեալ
Այն բատից տարերց յօդեալ
Եմ երկքառ տատիւն լուծեալ
Իսկ երկրորդ զշշ վանզի բարդեալ
Քառ ամբ զուգիս տառ ամբ լուծեալ
Բազ զործիւ ի ծայր եկալ
Անդրաբարձմամբ յաւարտ ածեալ
Այն մի տառ Գ վանդ լնալ
Դամից տառից որոշեալ
Քառ ամբ բառիւք արտաքանեալ
Ի մրցենաց արտափայշեալ
Առա եռապիս աւարտ ածեալ
Այն Եռապիս Ե Խի լնալ
Եի աւելորդ շարագասեալ

ԶԵՐԱՐԵՍՆ ՍԵՐԿԱՒՄԸ ԳՐԻ

Պ Ա Տ Մ Ա Գ Բ Ո Ւ Խ Թ Ւ Խ Ն

ԳՏ Ա Խ Վ Ե

Ե Ր Ա Յ Ա Ն Խ Ե Ր Ա Յ Ա Ն Խ Ե Ր Ա Յ Ա Ն Խ Ե Ր Ա Յ Ա Ն

Գլուստմութիւն և զկարդ թագաւորացն պարսից և զժա-
մանակս նոցա՝ Աստանօք կամիմ յայտ առնել. բայց
ոչ զիտեմ զսկիղըն նոցա ուստի լւալ: Պանզի քաջ քարտու-
ղարն Տրդասոց Եղաթանգեղս Լատին և մեծն Վովչէս Խո-
րինացին՝ Արշակոյ պարթեէ առնեն սկիղըն պատմութեան
նոցա մինչև Երանեան. Բարունաբար ծանուցանեն մեզ համեղ
և քաղցր ռձով յարմարեալ: Խակ իմ առեալ 'ի նոցունց շա-
րադրութեանց զբեցից աստեն: Ազգ առնելով ձերում իմաս-
տութեան, զի ընդ բազում զիտութեանց ձերոց և զակաւս
իմ շարայարեսցի. որ է այս: Յետ Եղեքսանդրի Վակեդոնա-
ցւոյ որդւոյն Աքդանիփայ՝ որք տիրեցին աինզերաց, չորեքին
գայեակորդիք նորա՝ որ կոչեցան Անախոքոս. որ և Ալեքսիոս տիր-
եաց պարսից՝ Վարաց և Հայոց, և անուանեցաւ Նիկանովը.
կացեալ ամս Լ. և Եւ ապա Ենախոքոս՝ որ կոչեցաւ Խենոս:
Յետ ԿԵ ամին Եղեքսանդրի՝ Արշակ քաջ 'ի Քետու-
րական ծննդոց՝ յազգէ պարթեաց՝ 'ի Շահը աշխարհին միու-
շանաց, ելեալ բազում զօրօք, և հալածէ զԱնախոքոս. և
ունանք սպանեալ ևս ասեն զնա, և ինքն տիրեաց ամենայն արևե-
լից 'ի վերայ արեաց աշխարհին, և հնազանդ արար 'ի ներքոյ
տերութեան իւրոյ. և առեաց մինչև ամս Լ: Եւ յետ սորա որ-
դւոց որդիս ամս բազում մինչև Երանեան: Խորա աւուրս բար-

ձաւ թագաւորութիւնն Արշակունեաց 'ի Պարսից. և մեք զայն յիւրում տեղւոցն պատմեսցուք: Եւ դարձցուք 'ի կարգ բանիս: Եւ կացեալ Արշակ ամս 1.Ա: մեռանի: Արտաշէս ամս 1.Օ: Արշակ ամս . . . : Արշական ամս 1.: Արշակ ամս 1.Ա: Արշէզ ամս 1.: Արշաւիր ամս 1.Օ: Արտաշէզ 1.Գ: Դարեհ ամս 1.: Արշակ ամս Ժ.Թ: Արտաշէզ ամս 1.: Պերող ամս 1.Գ: Ա.աղարշ ամս ԾՕ: Արտաւան ամս 1.Ա: Որոյ յաւուրս սորա բարձաւ տերութիւնն սոցա 'ի Պարսից. և մեք թողցուք յայլում վայրի պատմել, և պատմեսցուք և զկարգ թագաւորացն Հայոց մինչեւ ցխոսրով:

Գ.Լ.ՈՒԽ Բ.

Յ.Ա.Հ.Մ. Հ. Հ. Ա. Վ.

Վանզե որպէս ասացաք, թագաւորեալ Արշակայ 'ի վերայ արեաց աշխարհին, սա թագաւորեցոյց զեղքայր իւր Ա.աղարշակ, և առաքեաց բազում զօրօք 'ի Հայոց, և երկրորդ իւր արար զնա՝ կալ ընդդիմ թշնամեաց: Եւ եկեալ մեծաւ զօրութեամբ տիրեաց աշխարհիս Հայոց, կայեալ զթագաւորութիւնս ամս Ի.Ի: Արշակ ամս Ժ.Գ: Արտաշէս ամս Ի.Է: Տիգրան ամս 1.Գ: Արտաւազդ ամս. . : Արշամ ամս Ի: Արգար ամս 1.Բ: Անան ամս. . : Աննատրուկ ամս 1.: Երուանդ ամս Ի: Արտաշէզ Խ.Ի: Արտաւազդ ամս. . : Տիգրան ամս Ի.Է: Տիգրան ամս Խ.Ի: Ա.աղարշակ ամս Ի: Խոսրով ամս. . : Աստ զադարեցաւ և թագաւորութիւնն Արշակունեաց 'ի Հայոց՝ ժամանակ ինչ: Խոկ 'ի Պարսից բարձաւ բնաւին: Ա.ամսնզե էր թագաւոր Պարսից Արտաւան, խոկ ոմն Արտաշիր անուն՝ որդի Ասսանայ Ատահրացւոյ՝ միաբանեցոյց ընդ իւր ամենայն աղջն Ալշաւունեաց. և զօրս բազում առեալ և զնաց 'ի վերայ Արտաւանայ՝ և եսպան զնա, և ինքն թագաւորեաց 'ի վերայ ամենայն Պարսից: Զոր լուեալ թա-

գաւորն Հայոց Խոսրով մեծաւ բարկութեամբ քինախնդիր լինի արեան ազգականին իւրոյ Արտաւանայ. և առեալ զզօրս իւր՝ գնայ ՚ի վերոյ Արտաշրի, և հալածէ զնա մինչ ՚ի Հնդիկս. և ինքն աւերէ վերմիրն, քակէ, և զերէ, և անմարդաբնակ առնէ աշխարհին ամենայն Եւ ամս Ճ.Ը. այսպէս արար՝ մինչև ինքն ևս սպանաւ ՚ի յԱնակայ, որպէս պատմէ Ազաթանգեղոսւ Խսկ Արտաշրի տիրէ Հայոց մինչև ցգալն Տրդատայ: Եւ մեք զմնացեալ կարդս թագաւորացն Հայոց ճառեսցուք մինչև ՚ի սպառիլ նոցաւ Արդյետ Խոսրովու թագաւորէ Տրդատ որդի նորա՝ ամս ՞Ծ.Օ.։ Խոսրով ամս Խ.։ Տիրան ամս Ճ.Օ.։ Արշակ ամս Լ.։ Պապ ամս Խ.։ Վարազդատ ամս Դ.։ Արշակ ամս Խ.։ Վազարշակ ամս. . . . Խոսրով ամս Խ.։ Ծապուհ ամս Դ.։ Արտաշրի ամս Օ.։ Եւ բարձաւ թագաւորութիւնն Հայոց մինչև ցայսօր:

Գ.Լ.Ա.Խ. Գ.

Թ.Ա.Հ.Ա.Վ.Հ. Ա.Հ.Դ.Ա.Հ. Վ.

Թագաւորեաց Արտաշրի ՚ի վերոյ ամենայն Պարսից: Եւ ապա որդի նորա Ծապուհ, Յազկերտ, Ակերող, Արմիզտ, Խոսրով, Աւատ, Արտաշրի, Խոսէ, Խոսրով, Բորն, Զարմանդուխտ, Յազկերտ: Մինչև ցաստ գտաք զկարդս թագաւորացն Պարսից՝ և ոյլ ոչ ես. քանզի խառնակեցաւ թագաւորութիւնք նոցա՝ աստ և անդ անկաներով՝ ոչ սուեալ որդի ՚ի հօրէ: Այլ ոմանք ելուզակարար՝ որպէս Ծարսյեաղջին: Ոմանք բռնութեամբ՝ որպէս զկարար՝ թամանուրն: Եւ այլք խարեւութեամբ տիրեցին թագաւորութեանց. վասնորոյ և մեք ոչ կարացաք ուղղել զկարդ նոցին, վասն այսորիկ և ոչ զրեցաք զանուանս նոցա, թէև կարող էաք: Այլ զի դտաք՝ զի ՖՀան-Ծահ թագաւորեալ՝ յորդւոց որդի մինչև ցմերս ժամանակ, և զրեցաք. և զզործս և զարարեալս նոցա՝ զը ինչ և լուեալ ելք՝ է համբաւոյ

և կամ է յիշտառակարանաց զրոց զտետլ՝ ասուն յուշաբից առանց ձանձրանալոց: Այլ և զթուականն եւս զրեցից, սակայն թե՛ւ ոչ սկիզբն թագաւորելոյ նոցա, այլ զոր ինչ զափ ըստ ժամանակին այնմ զրեցից, և զուք անմեղաղիր լերուք, զի այս է կարողութիւն իմ, զթերին՝ ձերում զիտութեամբ լցուք, և նեքաւով Օաքեռս ՚ի պատարակելոյ աղատ արարեք, և լերուք ողջ հոգւովն Եստուծոյ, ամեն:

Գ. Լ. ՈՒԽԻ Դ.

Թագաւորական ջնան - Ըստան

Ջնան - Ըստ թագաւորեաց յԱտրպատա'խան աշխարհի ՚ի վերոյ ամենայն Պարսից, և յաջողեցաւ թագաւորութիւն նորայոց քան զյառաջին թագաւորան, և հնագանդեցան նմա ամենայն Պարսիկք և Ապրը, և անկաւ աչ նորա ընդ տիեզերս ամենայն, բայց ոչ զիաեմ՝ եթէ յորում թուականի եղեւ նա թագաւոր: Այլ զի Եռաքել պատմաղիր ասէ՝ թէ՞ ՚ոգնը՝ թուին ջնան - Ըստ Ըստուլոյ ըերդն էառ, ՊՊ. ՚Ա թուին զԱխցիւէ էառ և դերեաց, ջն. թուին զԱղնկայ էառ,,, այսքանս յԱռաքելէ լրւաք: Իսկ յայլում պատմութեանց այսպէս լուաք, ջն. թուին ելեալ բազում զօրօք և գնաց յերկիրն Իրաղայ, քակեաց և աւերեաց զամենայն տունն Պարսից, կոտորեաց զամենեան, և գնաց մինչեւ ՚ի Տեղեայլովիս՝ որ է Ասպահան, և քաղաքացիքն ընդդիմացան նմա: Իսկ ջնան-շահ բռնութեամբ էառ զքաղաքն, և աւերեալ կործանեաց, և փոյց զամենայն շնուածուն, և կապեալ զջուր զեւոյն՝ որ կոչէ ՚Անտարայ, և Զրասոյզ արար զամենայն. քանզի հողեղին երւ այսպէս տիերեաց ամենայն տանն Իրաղայ, և անուն նորա ասրածեցաւ ընդ տիեզերս: Եւ անտի ելեալ գնաց ՚ի Ճըէ և չխորասան, և նուածեաց զամենայն տունն Պարսից, և զարձաւ-

դնաց՝ ի թափանու⁽¹⁾) իւր՝ ի թառըեզ Ը ահաստանի։ Եւ զնաց ընդ առաջ նորա Ասթուղիկոսն Աղթամաշայ Տէր Օ աքարիա բազում ընծայիւր։ Եւ ընկալաւ զնա թագաւորն սիրով։ Քանզի սիրող էր ազգիս քրիստոնեից։ Եւ ետ նմա թղթով և զապալով⁽²⁾) զկաթուղիկոսութիւնն սուրբ Էջմիածնի։ Եւ դշնոյ նորա Բակում խաթուն ևս սիրեաց զնա՝ որպէս զայր իւր ՖՀան-Ծահ։ Եւ եղեւ հակառակիւ ընդդիմութեամբ իշխանին Բաղեշոյ. և թագաւորն առաքեաց Կ. զօրադյուխ Բժմաօք ՚ի վերայ Խորթայ. և զնացեալ աւերեցին և քակեցին զամենայն երկիրն, և նատան ՚ի վերայ բերդին, և մերձ էին առնուլ զնաւ Զնոյն կամենին առնել ՚ի Բաղեշ և է Մուշ. ՚ի Խութ և ՚ի Աստուն և յամենայն սահմանս նոցա։ Օ որ լուեալ Ասթուղիկոսն Օ աքարիա. և զնայեալ առ աշխարհակալ թագաւորն ՖՀան Ծահ և առ դշնոյն Բակում խաթուն, և արար հաշտութիւն, և դարձոց զրարկութիւն ինքնակալին ՚ի խաղաղութիւն, և ինքն զնաց ՚ի տեղի իւր՝ ՚ի հկացափառ Վթոռն ՚ի սուրբ Էջմիածնի։ Եւ դի սպասմաւթիւնս մեր ոչ էր վասն Ասթուղիկոսին, այլ վասն ՖՀան-շահին, որպէս խոսացաք առնել սկիզբ, և մինչև տառ հաղեւ կարացաք զտանել վասն նորա։ Եյտուհետեւ զոր ինչ զայց, զայն կարգաւ ծանուցից մինչև ցմեղ։

Գ-Լ Ա-Խ Ե-

Ուստի առաջ կատարեալ է առաջապես և ըստ բանական։

Այնոււ կենդանի էր ՖՀան-Ծահն, ուներ որդի մի շատան-Վլիանուն, այր զռուղ և անզդամ, լիբր և չարաւեր, կողուկադ և յափշտակող. զոր վասն չարութեան նորա՝ ոչ սիրեր զնա

(1) Գահ. ամոռ Էջմանութեան։

(2) Կաղաքածազիր. հրովարտակ։

Հայրն։ Եւ ելեալ շրջէր ինքնազլուխյերկիրն Արարատեան՝ թափառական աստ և անդ։ Եւ յորժամլուաւ՝ թէ հայր իւր գնաց ՚ի Շիրազ և ՚ի Վրման, կամեցաւ Հասան-Ալին ըմբռնել ըդ Կամուղիկոսն. և նորա իմացեալ՝ վախեաւ և եմուտ յԱղթամար կղղի՝ որպէս պատմէ Ըռաքել պատմաղիր։ Եւ ֆհան-Շահըն եկեալ ՚ի Թաւրէզ՝ և իմացաւ զար արարմունս որդւոյն իւրոյ. և ասաց, սա ոչ կարէ առնել թագաւորութիւն վասն ամրարտաւանութեան իւրոյ։ Եւ կուեալ առ ինքն զլշաղուպ թոռն իւր՝ և ասաց ցնա. որդեակ՝ հայրն քո վասն ամրարտաւանութեան իւրոյ զըկեցաւ ՚ի թագաւորութիւնե., այլ զու. եղեր արժանի, վասնորոյ արի և քաջ լե՛ր յիշխանութեան և է մարզաշահութեան, պատրաստ լե՛ր ՚ի զըկերոյ զհնազանդեալսն։ Բայց հօր քում մի տացես տեսանել արեւ, այլ ՚ի դիպահոջ արտացես զնա՞ մինչեւ մեռցի, և զու վարեա՞ զկեանս քո թագաւորելով երկիրի. և եօ որքան կենդանի եմ, սպահեա զիս, և յորժամ մեռանիմ, թագեա՞ զիս, և զհանն քո դիմեկում խաթուն՝ որպէս զմոյր քո պատուեա՞ և որպէս առնես ինձ, նոյնովէս արա՞ և ընդնաւ Զայս ասաց, և առեալ ՚ի զլեսյ իւրմ, զթազն ալքունական եր՝ ՚ի զլուխ նորա՝ և երկիր եպտգ նոմաւ Խսկ Հասան-Ալին յորժամ լուաւ զպատուեր հօր իւրոյ առ որդին իւր, անհետ եղեալ կորեաւ, և ոչ զիտաց՝ թէ, զի՞նչ եղեւ։ Բայց համբաւ հանին՝ թէ, զնացեալ է յաշխարհն Օսմանցւոց, և եղեալ է լնկիր եղուզակաց, որք են ֆալալիք։ Խսկ Աշաղուոպ թագաւորեալ ՚ի վերայ ամենայն Պարսից՝ պահելով զպատուեր հաւոյն, հանդարտ և խաղաղ կենօք վարեր զթագաւորութիւնն։ Եւ էր նորա քոյր մի որ տուաւ ամուսնութեան Ծխ-Հայտարին՝ որդւոյ Ծխամիուն Արտաւիոյ, Եւ սզբա այր և կին խորհեցան սպանանել զլշաղուպ թագաւորն, և ինքեանք լինել թագաւորուակ ՚ի Վրմանզի Եաղոււալ ոչ ուստր ուներ և ոչ զուստր, ոի ժառանգ լիցի թագաւորութեանն։ Եւ յաւուր միում կուցին զթագաւորն ՚ի ձաշ սիրոյ. և մահացու զեղ խառնեալ ընդ

կերակուրն՝ ետուն նմա. և իրրե եկեր, աղդ եղե. նմա. և հրամացեաց քեռ իւրում և փեսային՝ բռնութեամբ ուտել. և այնպէս մեռան երեքեան ՚ի միասին՝ Եաղուպին՝ քոյրն՝ և փեսային. և այսպէս բարձան նոքա: Բայց Եաղուպի ո՛չ զթազաւորութեան թուականն գտի և ոչ մաշուն:

Գ. Լ. Ա. Խ. Խ.

Խ. Ա. Խ. Խ. Խ.

Որպէս ասացաք՝ վասն մաշուան Եաղուպին՝ դեղով լինել, տակայն մինչդեռ յոգւոջ եր՝ հրամայեաց զամենայն աղդատահմն Հայտարին ընածինջ առնելու որ և արարին: Եւ ուներ որդի մի ծնեալ ՚ի քեռէ Եաղուպին՝ Խամայիլ անուն, զնա վախուցին յԱղթամար կղզին. և եղե խոռվութիւն և աղմուկ մեծ ՚ի մլջ զօրացն Պարսից վասն բառնալոյ թագաւորութեանն: Ա ասնորոյ Խլուանդ ոմն ո՛չ ՚ի թագաւորութեանց տոհմե, այլ յայլմե, որ տեսեալ զանտերութիւն աղզին, միարանեցոյց ընդ ինքեան զոմանս իշխանացն, և եղե ինքնազուխ թագաւոր: Եւ դժկամակ եղեալ իշխանացն՝ առաքեցին յԱղթամար և թերին զխմայէլն և ցուցին զօրաց՝ թէ սա թոռնէ ջհան-Ծահին՝ և քեռորդի Եաղուպին, զատ արժան է առնել թագաւոր: Որում հաւանեալ ամենեցուն՝ եղին զնա թագաւոր, այլ քաջ և ուժեղ, և ՚ի պատերազմունս զօրեղ: Աս ՚ի թագաւորելն իւրում հալածեաց զԽլուանդն՝ և հնազանդեցոյց պզօրսն: (1). Զ. Օ. թուին եղե սա թագաւոր: (1). Զ. Ա. Գ. թուին Ալիշմա ոմն եղե եղուզակ և թաղնարար անկու. ՚ի վերայ զօրաց Ծահին, և զբազումս կատորեաց: Խոկ Ծահն առաքեաց ՚ի վերայ նորա զօրս, և հալածեցին զնա և զզօրս նորա: Բայց վասն սորա՝ ասեն՝ զըսց այսպէս, փորեր զերկիր և առներ հոր, և թերեալ խոյ և թաղեր ՚ի հորն՝ մինչե ցեղջիւրն. և ինքն հեծնոյր չ ձի, և ՚ի հեռասաւա-

Նէ արշաւելք, և յորժամ հուռդ լինելք առ խոյն, խանարչելք 'ի ձիոյն և ըմբռնելք զեղջերաց խոյին, և ցանցեալ հանելք 'ի զրոյն, և գանգամ շուրջ ածելք զիւրեաւ՝ և ձգելք սռաջի իւր, մինչ զե երիվարն ո՛չ ժամանելք նմա, վասնորոյ անուանեցաւ Շահպետան որ և Խոյարարձ: Եւ պատմեցին թագաւորին Օսմանցւոց Առևթան Ակլիմին՝ զքաջութիւն Շահին. և նա առաքեաց զեսպանս առ Շահին, զե պատերազմաւ տեսցենզմի մեանս. և հաստատեցաւ բանն. և եղին սպայման, զե 'ի զաշաբին Զատկաց պատերազմեցին:

Խակ Շահն զտեալ զոմն հոմանուն Խամայիլ, և ձեւացոյց զնա թագաւոր, և արար զնա կողմնասպահ. և ետ նմա պատուելք, թէ զեալ լիցի ինձ սպանումն, և կամ ըմբռնումն, զու մնա կենդանի, լիցին թագաւոր 'ի վերայ արեաց ազգիդ. և առաջե ամենայն մեծառնծոցն ընկալաւ զպատուելք զայս՝ անուանեալն Շահ-Խամայիլ, և կայր հնազանդ ճշմարիտ Շահին: Եւ ՚ի թուին ԶԱԿԻՒ խմբեցաւ պատերազմն, և 'ի բազմութենէ զօրացն Օսմանցւոց 'ի վախուստ զարձան զօրքն Պարսից: Եւ ասեն ԶԱԿ Ենկիւարի պնդեցան զկնի Շահին, և Շահն սակաւ արամբ խոյս ետ, և զողեալ 'ի տեղի ինչ թագեաւ: Խակ նոքա ըմբռ Շահին Փամայիլ զանուանեալն Շահ, կարծեցեալ՝ թէ ճշմարիտ Շահն իցէ. զե զնշան Շահին ուներ: Եւ առեալ տարան առ թագաւորին իւրեանց Ակլիմ: Եւ եհարց ցնա Ակլիմ, զո՞ւ ևս Շխամափութուն' և Շխ-Հայտարի որդին Շահ-Խամայիլն Պատասխանէ, Խամայիլն, ևս ոչ եմ արժանի կոչիլ Շահ, ոյլ պակաս ծառայ եմ Շահին: Օք թէ պիտ հոմանուն եմ նմա, սակայն զանուանակրութիւնս ոչ է ինձ մեծութիւն, ոյլ նուաստ ծառայ եմ զանուանակցին խոյ Շահ Խամայիլի տեսուն իմօյ: Ասէ, Ակլիմն, անէծս կարդա ազդին քո, և ես ազատեմ զքիդ: Ասէ Խամայիլ, անէծք լիցի 'ի վերաց այնոցիկ որք ուրանան զալչն իմ, և քեզ լիցի նզովք և անէծք որ Վար ես, ո՛չ ունիս օրէնս և ո՛չ դաւանութիւնս

և ո՞ւ կրօնս հաւատոց: Եւ դայս իրեն լուաւ 'ի նմանէ' և զար-
համարհանս իւրն և ազգին, հրամայեաց քարկոծել զնաւ Եւ
նա միշտ գոհանայր զազգէն իւրմէ և անիծանէր և հայհոյեր
զՕսմանցին, և ասէր. երթեալ պատմեցէք անուակցի տեսան
իմոյ, թէ՝ հոմանուն ծառայ քո՛ վասն սիրոյ անուանն քո չէլո՞ց) Եղեւ և դու մի՛ թողուցուս զարիւնն իմ 'ի վերայ Երազտի՛ Քըր-
տացս. և թիթեան մի՛ իջուսցես չ հանդրուժնս իջեանի իմոյ:
Եւ քարկոծեցին՝ զնաւ և մեռաւ. և այլք կալանաւորք՝ որք կոյին
անդ, և աղասեցան՝ փոխադարձ առնելով, և զնացեալ պատմե-
ցին Ծահին: Ա ասնորոյ երգիչքն Պարսից երգս յօրինեցին վասն
նորա ըստ նորուն բանի: Խոկ Ծահին յորժամ լուաւ զմահն
Խամայելին՝ և զպատուելին, առաքեաց հրաւիրակս սաստիւ ընդ
ամենայն տէրութիւն իւր. զօր եկեալ ժողովեցան՝ անթիւ և
անհամար՝ ո՞չ միայն սպայտազօրք, այլ և ռամիկք և հողագործք
մինչև կանայք անզամ. և նա բայեալ զզանձատունն և բաշ-
խեալ ամենեցուն առաստ ռածիկս, և քարոզ կարդայր զնալ 'ի
վերայ Օսմանցւոց: Եւ լրտեսքն զնացեալ պատմեցին Ալիմին:
Եւ նա հմբաւալով հեքնէր՝ ասելով. նա զբ ինչ և եաես մի-
նէն և եկեր. զիաշըդ համարձակի զալ 'ի վերայ իմ: Վասնզի և
նա զումարեաց զօրս իւր, և զնայ 'ի վերայ Դամասկոսի՝ որ է
Ծամ: Խոկ Ծահին եկեալ զօրօքն զնաց 'ի կողմն Օսմանցւոց.
և զբաղում տեղի քակեալ տւերեաց, և զերեաց զբաղումս:
Եւ զտեալ Ալիմ՝ անուն ոմն տաճիկ, և հրամայեաց քարկոծել
զնաւ փոխանակ Խամայելին. և դարձաւ բազումաւարաւ 'ի թաւ-
րէզ. և յետ սակաւ ռաւուրց մեռաւ 'ի թուին Ֆառար կավեալ
զթաղաւորութիւնն ամս Խէ:

(5) Այս է ՀՀՆԿ կամ չէնկ, որ ՀՀՆԿ-ի թարգմանին

Գ.Լ.Ա.Խ.Խ. Ե.

ՅՈՒՆԻԿԱՏԻԿ ՅՈՒՆԻԿԱՏԻԿ:

Ը ահ - Խամհմաղ թագաւորեաց զկնի հօր իւրոյ Խամսյիլի ՚ի
թուին ջ ւեւ: Այլ բարերար և շնարար և սիրող քրիստոնեից՝
առանց աղքահութեան, և շափաւոր յուաելն և յըմիկելն և
ի դգենուլն: Աչ պճնող, այլ որպէս հասարակ մարդիկ զգենուն,
նոյնպէս և ինքն առներ: Եւ եր ողորմածասիրտ. քանզի Եւ Ճան
ամաց հասարակ հարկն շնորհեաց ամենայն ումեք: Այլ զգողս
և աւազակս երարձ յաշխարհէ: Եսաե զլկոփ և զանամօթ կա-
նայս՝ որք նստեին ՚ի փողոցի և ՚ի պանդոկի, և հրապարակաւ
պոռնկութիւն գործեին և հարկս տային թագաւորաց. զնոսա
խսպառ սպառեաց ՚ի թագաւորութեան իւրոյ աշխարհէն: Այլ
և զմաքսն ճանապարհաց վերացցց, և յամենայն հանդրուանս
կայարանաց շինեաց պանդոկս, և փորեաց ջրհորս ՚ի վերայ ամե-
նայն ճանապարհաց: Եւ զրեթէ ոչ մնաց տեղի ինչ անշնչն ՚ի
ժամանակի սորա: Այլ և ՚ի զատաստանի իրաւարար և ուղղա-
դատ: Եւ այսպէս վարեաց զթագաւորութիւն իւր ՚ի կեանսիւր
(Ե) Ե. թ. Պ. թուին Վ իրք չարացան. և զոր ինչ Պարսիկք զնային
ի Տիփիս, նորա կողուպակին և բրածեծ առնեին: Եւ լուեալ Ը ա-
հըն՝ զնաց զօրօք ՚ի վերայ նոցա, և զերեաց զՏիփիս և ամենայն
զաւառն, և դարձաւ ՚ի տեղի իւր ՚ի թաւերէզ: Եւ ուղղեաց զամե-
նայն կարգան քաղաքական, զմնիթս, զկապիճն, զկշիռս, և զամե-
նայն արուեստուորս, զկրպակս, զպանդոկս, և որյայլ ինչ քա-
զաքի լինի առևտուր ՚ի զնել և ՚ի վաճառել, և զանուղիզն
կորուսաներ մահուամբ: Եւ ոչ զք կարեր թիւրել, զի չարամահ
առնեին: Խսկ թագաւորն անդկաց առւմա անուն՝ լուաւ զքա-
ջութիւն նորա, մեղմ ընծայիւք եկն առ նա. և եկաց ժամանակ
ինչ՝ և խաղաղութեամբ դարձաւ: Եղբայր մի դոյր Ը ահին Ալ
խաս անուն. որ ՚ի թագաւորել եղբօրն փախեաւ՝ երկուցեալ ՚ի

սպանմանեւ, և աշայացանեցաւ, և զնացեալ առ Խոնթկարնէ), և առեալ երեր. . . ՚ի վերայ եղբօրն ՚ի թուին ջ. Վ. Ա. զորբաղում ոճիրս գործեայ՝ աւերելով՝ զերելով դրազում տեղիս: Եւ առա թագաւորն Խաւհմազելեալ զնաց ՚ի վերայ երկրին Օսմանցւոց, և աւերեաց զխնուս, զբառէն, զԵրզըում, զԳ. երջան, զԱկի, զԲարերդ, զԵզնկայ, զԱպեր, և այլ բազում տեղիս, և զարձաւ. ՚ի Խաւրելզ: Եւ եզեւ խռովութիւն ՚ի մէջ երկուց որդւոց թագաւորին Օսմանցւոց, և պատերազմեցան ընդ միմեանս յԽ-կոնիոն՝ որ է Պ. օնիսայ, ՚ի թուին ՈՒ. Ա. Ալիմն զԲայազիան յաղ-թեաց և փախոցց մինչեւ ցԵրզըում. և անտի ելեալ Պ. որդւով և Լ. Ա. մարդով գնաց առ Ծ. ահ. - Խաւհմազն, և նա ընկալաւ զնա և զորդիսն հանդերձ զօրօքն, և առաքեաց ՚ի Խոզիրան՝ որ է Պ. ա-զուին. վասնորոյ զովիչք Պարսից ասացին երդս վասն Բայցազի-ախն բազում զովութեամբ: Եւ ՚ի ժամանակի սորա էր թագաւոր ուն յազդէն Ա. քաց Ալիմն անուն. սա իրրեւ ըւաւ զգնալ Բայցազիախն առ Ծ. ահն, իմացաւ զիոչ ոք կարեւ ընդդիմանալ նմա, և ելեալ կամաւ իւրով գնաց առ ոսս Ծ. ահին է ՈՒ. Ա. թուին Ե. Ա. թագաւորն Կախեթու Եղեքսանդր առաքեաց զորդին Խ. Ի Կոստանդին՝ պատանդ առ Ծ. ահն, և կային առ նմա երկուքն Ալիմն և Կոստանդին: Ե. յս Ծ. ահ. - Խաւհմազս ուներ բազում որդիս. որոց անուն առաջնոյն էր Խամայէլ, և էր կարի շարադործ. և հայրն եղ զնա ՚ի կլոյ ինչ, զի անդ կացցէ ցօր մահուն, և ինքն Ծ. ահ. - Խաւհմազ մեռաւ: Ամանք ասեն սմա՞ իւրով մահուամբ մեռանիլ է ՈՒ. Ա. թուին, ոմանք ՚ի բաղանիս խեղդեալ ասեն ՚ի ՈՒ. Ա. թուին. զՃշմարիան Եստուծոյ է յայտնի. որ զիսէ զամենացն:

(4) Կերեակալ թագաւորն (Օսմանցւոց):

Գ. ԽՈՇԽԱԿԻ Բ.

ԽՈՎՈՎԵՐՆ ԹԱՅԻ ԽՈՎՈՎԵՐՆ

Պատմութիւն՝ որ վասն Խամայիլին է, երկրայութիւն արկանէ, Քանզի և Առաքեալ պատմաղիր՝ Գ. Խամայել՝ ասէ, մինն որպի Հայտարին, որ է հայր Ծահ- Խամայմաղին, որ մեռաւ ի Ցաւ թուին: Եւ երկրորդ Խամայել՝ ասէ՝ ի թուին Ա. Խ. Գ. Խամայել թագաւորեաց երկու տարի, և ի Ա. Խ. մեռաւ: Եւ ապա փոքր Խամայելն՝ ի բերդէն հանին և ի թախան⁽⁵⁾ նստաւ: Այս է Առաքելոյ պատմութիւնն Խակ՝ ի համբաւոյ՝ այսպէս լուսյ, թէ՝ առաջ Ծահ- Խամայելն մեռաւ, և կին նորա յղի էր, և ծնաւ որդի, և անուանեցին Խամայել՝ հօր անուամբն, որ ընդունելը զնա Ծահ- Խամայն. վասնզի համամայլ (էր) նմա, որ թագաւորեաց յետեղօր իւրոյ Ծահ- Խամայմաղին՝ ի մասնել Ա. Խ. Գ. թուին, բայց ոչ եհան՝ ի սարին, այլ՝ ի նոյն ամի մեռաւ. իսկ երրորդ Խամայել՝ որդիին Ծահ- Խամայմաղին՝ որ եղեալ էր զնա հայրն՝ ի կլայ, և յորժամ լուաւ զմահ Խամայիլին, եկեալ՝ ի կլայէն՝ և եկեալ թագաւորեաց՝ ի թուին Ա. Խ. Գ.: Եւ վասն սորա՝ ասէ՝ «Օքարեցի Յովշան վարդասիետ, թէ՝ այս Խամայելս եսպան զեօթանեսին զեղբարսն իւր. և ապա սկսաւ կոտորել զեշխանսն՝ զոր յացանի և զոր գաղտնի. սպառել կամլը զամենացն իշխանսն: Զոր խմացեալ զօրացն՝ ազդ առնեն իշխանին Խամարիզոյ Ամիր- Խան անուն, և իշխանին Արարատեան՝ Խօսմախ— Ա. Խ. մուտ կուեցեալ. և նոքա եկեալ սորանին զնա զաղտ, և ոչ ոք զիտաց զմահ նորա. և ՚ի չառնել դատաստան, այսպէս կարծեցեալ եղել՝ թէ զնացեալ է լրտեսութեամբ, յետ միոյ տարւոյ զալոց է. և յետոյ ծանեան զկորուստ նորա. որ թագաւորեաց ամս երիս:

(5) Աթոռ. զահ իշխանութեան:

Խուսափանակ մասնաւութիւն կատարելու դեպքութիւնները.

Խուսափանակ որդի էր Շահ - Խաւահմազին՝ և եղայր Խամայինն. և հայր սորա Խաւահմազ՝ առաքեաց զսա 'ի Խորասան, և յանձնեաց 'ի նա զամենացն աշխարհն: Եւ նա երթեալ տիրեացնոցա. և էր զեղին՝ և լոյս աչացն պակաս: Եւ անսեալ զօրացըն՝ թէ ու դոյ ժառանդ թագաւորութեան, զնացեալ բերին զնա և արտրին թագաւոր, անարի և անփոյթ 'ի պատերազմունը՝ է Զ. Ա. Ե. թուին: Խորա Բ ամին՝ եկն Լալայ Փաշայն, և աւերեաց զերեան, և զերեաց ԱՈՒ անձինս Վրիստառներց և Տաճկաց: Յետ Լալային եկն Գրահրատ փաշայն, և շնուեաց բերդ յերեան. և ելեալ զնաց 'ի Գրանձակ Ազուանից, և էառ զնա: Առին զբնաւորելու և զը ամախին և զԴամուր - զափր, որ է տուն (զուռն) Ալանաց, և մինչ 'ի Խուսափրին աիրեցին Օսմանցիք: Խոկ թագաւորն Պարսից Խուսափանտ ժողովեաց զզօրս իւր. և զնաց 'ի վերայ Գանձակայ, և (մինչ) մերձ էր առնուլ, անիծեալ աղդն Պարսից արտրին անտասուսծութիւն. զի որդի մի էր նորա, որ 'ի տեղի թագաւորի պահէր զնա՝ Ամիր - Համզայ անուն. և հարին զնա և սպանին. և եղի կրիմն կուրութիւննմատ Եթող զգործս պատերաշմին, և ելեալ զնաց 'ի Խորասան առմիւս որդին իւր Վրաս. և մեռաւ անդ՝ թագաւորեալ ամս Գ. և ոմանք Յ. ամշասենու Բայց վասն մաշուան սորա՝ ասեն, զնացեալ 'ի բաղանիս՝ զերծին զզլուին. յորժամ 'ի ներքոյ ծնօտին կամին հարթել, ածելեաւ հատին զպարանոցն: Եւ վասն անարի լինելոյ նորա՝ զովիչք Պարսից ասացին նմա երդ արհամարհանաց. և 'ի մէջ երգոյն ասացին, քակեցիր զինաւորելո, և աղբեցիր 'ի Մարանդ: Կաև առասպելս յօդեցին պյաղէս. թէ ասեին, թաղաւոր՝ այս ինչ քաղաք առին Օսմանցիք, և դու զի՞ կաս նստեալ: Խոկ նա ստամեր նոցտ ամելով, լուս լիբուք, զի հարսա-

նիս են կատուաց. և ինքն զարդարեր զկատուան՝ զիսպակ հանդերձիւ, և կախեր զանգակի ՚ի պարանոցէ կատուայն, և հրամայէր փողս հնշել. և ինքն ծափս հարկանէր և ինդայր: Օսյու առասպելեցին վասն տկար և անարի դորյն, որ նշանակէ թէ՛ որպէս կատու ՚ի տուն բնակի, և ոչ ելանէ արտաքս, նոյնպէս և առ որպէս կատու անկեալ էր ՚ի տան, ոչ ուներ փոյթ վասն աշխարհին: Եւ միւս ևս յօդեցին բան վասն կուրութեանն. զի յորժամ ելանէր արտաքս՝ և հեծնոյր է ձի՛ և ըրջէր յարձակ դաշտի, և որք ընդ նմա էին՝ ծաղք առնելով կատակէին և ամին, թագաւոր, պրակէ և մայրի, խոնարհեցն զզլուխդ, զի մի՛ հարցի ընդ ծառս. և նա խոնարհ առնէր զզլուխն մինչեւ ցօղուտ ժամա: Եւ այսպէս վարեաց զկեանս իւր անարդութեամբ մինչ ցմահ:

Գ-Լ-ՈՒ-Խ Ժ.

Յառահարսունիւն առաջնոյ և Հեծ Աբանին:

Ի հազար և Եթո թուին նստաւ Երաս թաղաւոր, այր քաջ ՚ի պատերազմի, ճոռոմարան, բաղմահանձար, յոքնաշնար, խորազէտ և ճարտարաբան, լի ամենայն հնարինք, և առ ամենայն զործս աջողակ, և առ ամենայն իրս պնդակես և աներկիւդ: Եւ ՚ի թագաւորել իւրում՝ աջողակ դտաւ զործնորաւ Վանզի ՚ի ժամանակի հօր իւրոյ՝ ապատամբեալ էր երկիրն Զօջանեթ՝ որ է Գիլան: այս Երասս զնացեալ հնազանդ արար ընդ ձեռամբ իւրով: Եւ ինքն զնաց յԵրասաի՝ տալ ողորմութիւն ընակչաց նորաւ: Եւ ազգն Պալհաւունեաց՝ որ է Օսբեկ, ելին ՚ի Բահլ Բուխարոյ, և առին զարե: քաղաք ՚ի Պարսից: Եւ ելեալ Շահ-Երասս զօրօք, և հայածեաց զնոսա՝ կոտորելով զբազումը ՚ի նոցանե, և կալեալ զորդի թաղաւորի նոցա, և ընդ իւր առեալ զնաց ՚ի Կողիքան՝ որ է Վաղուին: Օսորա ամենայն զործ

զրեալ և Առաքել պատմագիրն անօպակոս զամենայն։ Ավ ոք կամիցի զիտել զատողդն, ընթեռնուցու զայն, և ՚ի նմանէ ուղին Եյլ ես զոր ինչ լուեալ ևմ վասն այս Շահ-Արասիս, թէ սուտ և թէ առաւակել, և թէ ծշմարիս և յիրաւ, զամենն զըրքեմ։ թէ պարսաւանք և նախատինք լինի(ն), և թէ գոհութիւնք և գովութիւնք լիցի(ն), նոցալիցին որոց պատմեցին մեզ։ Վանդի նորա՝ որք ականատեսք էին, զատոյդն պատմեցին։ Իսկ նորա՝ որք ականջալուրք էին, վեր ՚ի վերոյ ասացին։ սակայն մեք զոր լուաք, զնոյն պատմեցուք՝ թէ սուտն և թէ իրաւն։

Գ. Լ. Ա. Խ. Ժ. Ա.

Պահան Շահն ՚ի Պահանիւնա։

Առվորութիւն էր Շահ-Արասին՝ որ երբեմն երբեմն յայլակերպս եղեալ շրջեր։ Այնէր՝ զի երբեմն երիվարաւ և փայեկառ զնացր՝ ուր և կամք, երբեմն միայն, երբեմն ՚ի կերող փօրեզկի՛ որ է։ Զարչի։ Աշւ այսպէս շրջեր ՚ի մէջ մէծամեծաց և ռամկաց։ Ճարցանէր և տեղեկանայր յամենայն։ ՚ի Շահն և յիշկըն, ՚ի հարկաց և յամենայն իրաց։ Աշւ եղեւ երբեմն, զի զնաց զօրօք ՚ի սահմանս Գուրիֆիքանայ, և թողեալ զզօրսն, և հեծեալ ՚ի ձի՝ սուանձին շրջեր, և էր եղանակս մերձ պահոց սուրբ Գևորգայ։ Աւ եղեւ անձրեւ սաստիկ, և թրջեաց զինքն և զշանէն⁽⁶⁾)։ Աւ զընացին դէպ ՚ի զիւղաքազաքն Գուրիֆիքան, և էր մերձ երեկոյին։ և տեսանէ մեծ բակ մի, և երկիքեղկի դռւոն ՚ի վերաց, և ուղղեաց զինքն դէպ ՚ի դռւոն այն, և եմուտ երիվարաւն ՚ի բակն։ և տեսանէ այր մի նստեալ աթոռուով ՚ի ներքոյ երեսրաց հըրուանդանի՝ որ է այլան⁽⁷⁾), և տուեալ ողջոյն և ասէ, վասն սիրոյ Շահն ընկալ զիս, զի պաղեցաց ՚ի ցրաց։ Աշւ ասէ այլն, որով-

(6) Թիկնապահ։ սպասաւոր, նուիրակ։ սուրհանդակ և լն։

(7) Սրահ կամ մեծ սենեակ։

Հետեւ զշամհն յիշեցեր, էջ՝ ՚ի ձիոյդ, և կոչեաց այրն զծառայն
իւր՝ և ասէ, զերիփարդ և զուրհանգակի՛ բարուոք պաշտպանե ։
և ինքն առեալ զշամհն և մասնէ՝ ՚ի տուն մի զարգարեալ ։ և
հանեալ զհանգերձն՝ Ծամհն առաքեաց ՚ի տունն՝ և ասէ, ցա-
մաքեցուցե՛ք զդա, և բերեալ մեծ մուշտակ մի սահաբեայ⁽⁸⁾ ։ և
եարկ ՚ի վերայ նորա, և ծիծաղելով ասէ, բարւոք է զայդ: Ասէ
հիւրն, այս բարւոք է: Ասէ այրն, ընդէ՛ր ու է բարւոք կաւատ
բողի, որ է պարագանակ Պարձեալ ասէ այրն, ևթէ լուցից
խարայի, բարւոք լինի: Ասէ հիւրն, այս բարւոք լինի: Ասէ այրն,
յիրաւի բարւոք լինի կաւատ: Եւ հրամայեաց լուցանել զբո-
խորին⁽⁹⁾: Եւ գարձեալ ասէ, թէ՛ արարից խորովածս, բարւոք
լինի: Ասէ Ծամհն, բարւոք լինի: Ասէ այրն, իրաւի լինի բար-
ւոք՝ կաւատ: Եւ այսպէս ասէր այրն, և այսպէս պատախա-
նէր Ծամհն: Եւ զոր ինչ և ասէր այրն, և արար խորտիկս,
և բերեալ զինի, և նստան ուտել և ըմպել: Եւ խօսեին յաշ-
խարհն: և ՚ի Ծամհն: Խոկ այրն միշտ բարւոք գոհանայր ՚ի Ծա-
մհն: Եւ այսպէս խօսեցան մինչև ՚ի մէջ զիշերին: Եւ ազա ետ
բերել մահիճս աղնիւս՝ Ծամհն և փայեկին, և ասաց ՚ի ներ-
քուստ աղխել զդուռն, և սակա ձիշն՝ ասէ, մի ինչ հողայք: Եւ
եկաց մինչև ցառաւօնն, և ՚ի լուսանալ առաւօտուն՝ ասաց
Ծամհն յայրն, ասա՛ զոր ինչ ծախեցիր ՚ի վերայ մեր, տացուք
զգինն: Ասէ այրն, Աստուած մի արայցէ, զոր Ծամհի անունն յի-
շողն և վասն Աստուածոյ եկեալ հիւրն՝ պատառ մի հաց կերի-
ցէ, զգինս նորա առից, և կորուսից զվարձս իմ: և այսպէս ար-
ձակեաց զնա: Բայց Ծամհն եհարց ծառայի նորա՝ թէ՛ զի՞նչ
է անուն աեառն քո: Եւ նա ասէ, Ալլահի լիքատի կոչի: Եւ ելեալ
անտի գնաց Ծամհն ՚ի տեղի իւր, և առաքեաց արս Գիտ ՚ի
Գուլիլիքան, այս ինչ տուն՝ ասէ, զնացէ՛ք և ասացէ՛ք յՏէր տանն,

(8) Սամզյր, սամարինի:

(9) Կախանելիք, խունի. 2) կուսկառան:

Հրաման է Ծահմին առ քեզ զնող առնաս: Աւ թե, ասիցէ՛ ուստի
դիտէ զիս Ծահմին, ասասաջէք, թե՝ ՚ի առաջնան զիշելը տև սեալ է
զքեզ, վասնորոյ կոչէ զքեզ առ ինքն զնալ: Աւ զնացեալ ար-
քըն զտին զնա, ետուն ողջոյն՝ և ասեն, զո՞ւ իցես ՎՃԱՀՎԵՐ-
ԹԻՆ: Աւ ասէ, սյո՞ւ ես եմ: Այւ նորա ասեն զպատզամն Ծահմին
Եւ յետ բազում առելոյ, եղ նոցա սեղան, և ինքն զգեցաւ բզ-
դիսակ ոպատմուծանն, և Էարկ զմիջովն զպատուական շախայ(10)
զօտին, և ՚ի վերայ աղաւ զաւելուր վերարկուն: Աւ կապեաց ըզ-
պողովատիկ թուրն: Աւ եդ ՚ի զլուխն զոսիկատուն ճանորէն(11):
և զգեցաւ զպնտակօշիկն ՚ի յոտան, և Էարկ զԲՀԱՆԻն(12) բնող
ուսովն, և հեծաւ զըլոռոս երիվարն, և առաջի արար զուր-
հանդակն իւր, և ելմալ զնաց ընդ հրաւիրակայն: Աւ ՚ի ճա-
նոպարհին հարցանելք ցարսն, թէ զի՞նչ կամի ընդ իս Ծահմի,
զիտեմ՝ զի սպանանէ զիս: Վանդի յանցեալ աւուրադ եկն ՚ի
զիւղն մեր զմնուոր մի, և արար անզդամութիւն, և ես ծեծեցի
զնա, և նա զնացեալ գանզատեալ է Ծահմին, վասն այնորիկ
խնորէ, զիս Ծահմին առ ՚ի սպանանել: Իսոյց ես արկից զմուրն
իմ՝ ՚ի պարանոց իմ, և անկանիմց ցոտս (յոտս) նորա, և զի՞նչ կա-
մացի առնել՝ արացէ: Խսկ արքն յառաջազդոյն մոտին առ Ծա-
հմին, և պատմեցին նմա զամենայն, և հրամայեաց բերել առաջի
իւր: Երբե եմուտ առ նա, և եա ողջոյն, և ծանեաւ՝ զի ոյն հիւ-
րըն եր՝ որ ինքն հանգոյց զնա: Վսէ Ծահմի, բարի եկիր կաւառաւ
Աւ ապա ասէ, թէ ագուցից զազնիւ ոպատմուծանս, բարուոք
լինի: Վսէ այրն, բարուոք լինի: Վսէ Ծահմի, յիրաւի բարուոք
լինի՝ կաւա՛տ: Աւ թէ տաց քեզձի թամազօք, լաւ լինի: Վսէ այ-
րըն, լաւ լինի: Վսէ Ծահմի, այո՛ բարուոք լինի կաւա՛տ: Աւ
թէ տաց քեզ վրանս խոհանոցօք, բարուոք լինի: Վսէ այրն,
բարուոք: Վսէ Ծահմի, իրաւի բարուոք լինի՝ կաւա՛տ: Աւ թէ

(10) Ցփախ. խորդ. ձունձ. մազեղէն. 2) աղնիւ ոյծեայք,

(11) Թաշչինակ.

(12) Հրացան:

տաց քեզ ու անութիւնն Ախես քաղաքին՝ որ է Շիրազ, զի՞նչ լինի Ասէ այրն, քանի գամենայն՝ բարի դա է: Եւ ապա հրամացեաց տալ զամենեսեան՝ զոր ինչ և ասաց: Եւ զրեաց թռւղթ հրամանաց և ետ Վանութիւնն Շիրազայ՝ նման Այս այն Աշլահիքիրախն է զոր Առաքել պատմազիր յիշչ ՚ի պատերազմին Արծից և Անայ, որ է ստոյդ արտղէս, որպէս և զրեցաք: Օսյոս լուսք մեք Առուրատ Խան անուն յանձնէ մրոջէ: Այլէ սակաւ ինչ ՚ի մարե խմել: Քանիզ յորժամշահ - Արամն երկիցս քշեաց և ատրաւ յերկիցն Պարսից, մայրն իմ՝ հարք և մարք իւրով բնակեցան ՚ի Գառլիքիքան, և յետոյ Քանառ քեացի Դաւիթթ Անելքն՝ որ էր զաւառապետ Առակից, բերեալ զնոսա՝ և բնակեցոց ՚ի զիւզն իւրեանց Արծնի. և զի հանն իմ Խոսրով՝ քենի էր Անելքը Դաւիթին, որ ասէին Անելքը Ուսուրական Բելազար, և զմայրն իմ Խանազայ՝ ետ ՚ի կնութիւնն օստարին իւրոյ Ակրաչի, ողք ծնան զիս. որ և զպատմութիւնս զսյոս արար մայրն իմ:

Գ. Լ. Ա. Խ. Ժ. Բ.

Աջողութեան օնութեառութեան Շահ - Աքամին:

Քաղմահնար և հանճարեղն՝ Շահ - Արամ՝ յորժամ նրա առաջնա թագաւոր, աջողեցաւ զործ նորա, քանիզ զոր ինչ երկիր՝ որ ՚ի ժամանակս հօրիւր(ոյ)՝ և կամ յայլում ժամանակի առեալ էին, սա բազում քաջութեամբ յետու էտո՝ որ ՚ի կողմանս Պարսից, որք էին՝ Զօջաննեթ՝ որ է Գիլան, զԱնտահար, զԱռլուզ, զԱրե, և այլք: Եւ ապա զօրացաւ ՚ի վերաց Օսմանցւոց: Քանիզ որպէս պատմէ Առաքեալ պատմազիր, թէ եզուզակք՝ որ է Զալալիք, որոց անուանքն զրեալ է, զի բազմացան նոքա ՚ի Առասանդնուազօլէ մինչ ՚ի Երեան. վասնորոյ զօրացաւ նա. և ժողովեալ զզօրս իւր, և զնացեալ էտ զա-

մենայն երկիրն, զոր առեալ էին Օսմանցիքն՝ ի Պարսից։ Առկա
որոյ շարադրեցաք մեք աստեն, որը են այսոքիկ, թաւրեղ, Եւախ-
իջեան, Երեան, Տփիսիս, Գոօրի, Կախեթ, Գանձակ, Ըամախի,
Շաղդատ, և այլք՝ ամենայն գաւառոք իւրեանց։ Խոկ ապա
Օսմանցիքն ողի առեալ՝ միարանեցան և նոքաւ Եւ առաքեցին
ի վերայ նորա ստրուց (15) զջ զալօղի Ամենան Փաշայ։ Եւ կոտո-
րումն սորա պատմէ Առաքեալ, ի նորուն պատմութեննէ ուսա-
բուք, և մեք մի երկարեցուուք։ Եւ նախքան զգալ զջ զալօղուն՝
զամենայն երկրի ռամիկն և շնականիքն քշեաց և տարաւ յերկի-
րըն Պարսից։ Յէ, զայսոսիկ՝ զոր ինքն Եր հնաղանդեցուցեալ,
և թէ այնոքիկ՝ որք Խաներն էին բերեալ յայլում աշխարհէ, բո՞-
վանդակ քշեալ տարաւ յաշխարհն Պարսից։ Ա անորոյ մեք
կարեոր համարեցաք շարադրել աստեն՝ զի՞նչ երկիր որ աւեր-
եաց. որք են այսոքիկ յանուաննէ թէ յետ և թէ առաջ։ և
զու ՚ի միա առ սկսեալ ՚ի կողմանցն Նախիջեանոյ՝ զլցեզա-
ձոր, զՎեզամ, զԼոնի, զՀամզա-չիման, զԵփդ, զԾարապ-
խանայ, զԾիրակ, զՕարիշատ, և զղեզորայն Կարուց, և զձորն
Կաղզուանայ, զԾաշիերտ, զՄակու, զԾղակ, զՄալամաստ,
զԽոյ, զԱրմի. և զկողմն թաւրիզու, զզաշտն Արարատու, զԵ-
րեան քաղաք, զԼոտեռ գաւառ, զԾաղկինուձոր, զԳառնուձոր,
զԱւրինաձոր, և որ զզաւառն Կարնոյ և զԲասենոյ՝ զԽնուս, և բզ-
Մանազիերտ, զԾրծիկ, զԾրծեշ, զՃերկրի, և զամենայն զաւառս
Ա անայ, և այլ ամենայն տեղիս զերեաց և աւերեաց, սյրեաց և
հրդեշեաց զամենայն բնակութիւննն, զի մի մեասցէ շնու Այս
ամենայն զոր զրեցաք, քշեաց և տարեալ բնակեցոյց յամենայն
զաւառսն Պարսից։ և յայս տեղեռջ են՝ զորս բնակեցոյց. Ար-
տաւիչ, Ահար, Ապահր, Ապուին, Համատան, Ծիրազ, Գուլ-
փէքան, Գրման, Սսպահան, Խունսար, Ալղախօս, Փարիս,
Փուալարի, Գենտուման, Լանձան, Ալինչան, Խոյիկան, Ծըս-

(15) Սէրտ-է՝ որ թարզմանի Զօրազլուխ.

շորան, և յայլ գոռառասն պարսից, զորս ոչ դիաեմ յանուանէ, որք կային և մնացին անդին մինչեւ ցայսօր. և սուած քան զառապատ, և յԱշբափ, 'ի Վառշան: Եւ այսպէս բնակեցող զնուաս յաշխարշն Բաղայ (Խրազյ), և մարդաշատ արար զամենայն տուն Պարսից: Եւ այլ ամենայն գործսնորա զրեալ է Առաքեալ վարդապետ:

Գ. Ա. Ա. Ա. Ա.

Գ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Իստ սովորութեան իւրում Ծահ-Աբաս թագաւորն՝ եղել Խուսեն առ-Հան (14) 'ի կերպ մանրավաճառի՝ որ է խուստա, Քուչը: Եւ եղեալ շրջեր 'ի մեջ ռամկաց. հարցաներ և տեղեկանցըր: Եւ այսպէս դնալով և շրջերով եմուտ ի դիւդ մի՝ որ ասի Խնձան, և զնացեալ եմուտ 'ի տուն այրի Երիցու միոյ, որոյ անունն էր Դաւիթ, և էր զրիչ, և զրեր Այսմաւուրբը. և Ծահն եմուտ 'ի տունն՝ ասէ, խուբոց առնուք: Ասէ երեցն, ունի՞ս լաւ զրիչ կարիչ: Ասէ վաճառականն, այս ունիմ ազնիւ և լաւ դանակ: Ասէ երեցն, բեր՝ զի տեսից: Իսկ նա եղ առաջի նորա զվաճառակելին իւր. և առեալ փոքրիկ զրչահատ, և ետ զզինն նորա ՃՎ փող: Եւ սկսան խօսել բազում ինչ: Ասէ սուտ վաճառականն, Վէշը բարեց՝ 'ի Ծահէն զո՞չ էք, եթէ զանկատ: Ասէ երեցն, զեռ ոչ լաւն զիսեմք Ծահի, ոչ վասն. այլ զի թագաւոր է, ոչ է արժան վատ ասել նմա: Եւ յեա բազում խօսից՝ ասէ վաճառականն, զի՞նչ է զիրքդ՝ զոր զրես: Ասէ երեցն, մերս լեզուաւս Այսմաւուր ասի, և ձեր լեզուաւդ Ծէտ + Բառով: Ասէ Ծահն, վասն սիրոյն Աստուծոյ՝ եթէ Ծահն սիրես, պատմեալ վասն Հէտացն, թէ որպէս են լեալ Հէտ (15):

(14) Կերպարանագոխ, ծպտեալ կերպարանօք:

(15) Եէհչո որ է Նահատակ:

Եւ ապա բացեալ երեցն եղիտ զճառն Յակովբայ նահատակին։
ընթեռնոյր և պատմեք տաճկերէն մի բառ միոջէ զամենայն հատու-
մբն մարմնոյ սրբոյն։ Խակ Ծահն ունին եղեալ մտօք լսէր և 'ի միտ
առնոյր Ասէ Ծահն, ով էր թագաւորն ժամանակին, որ զայդ
արար Ասէ երեցն, Յաղկերտ էր անուն նորաւ Ասէ Ծահն,
զի՞նչ հաւատոյ էր Ասէ երեցն, պարսիկ էր. սակայն կրակա-
պաշտ էր, և ոչ էր տաճիկ Ասէ Ծահն, այժմ ես զոյ յԱպա-
հան կրակապաշտ, և ասեն Քեռուր⁽¹⁶⁾։ Ասէ Երեցն, այս նորա էին
յայնմ ժամանակի թագաւոր։ Եւ յետ բազում խօսից ելեալ
Ծահն՝ և առէ, պատոյ է յլս⁽¹⁷⁾։ Եւ ելեալ զնաց ՚ի տեղի իւր.
բայց ՚ի մտի ուներ զպատմութիւնն՝ զոր երեցն պատմեաց։ Յա-
ւուր միում կոչեաց Ծահն զըլեաւորս հաւատոյն իւրեանց՝
զոր ասեն Առոր և կամ Կառուր⁽¹⁸⁾, և զԼՀովի հու - ու ըլու-
նըն⁽¹⁹⁾ որ է Առուր⁽²⁰⁾). որոյ անունն էր Ապրութաղի ներքինի. և
ոյլք ՚ի զլեաւորացն Եւ առէ յնոսա, յայսմ զիշերի տեսիլ զար-
մանալի տեսի, և ահա զոզոյ սիրտս Ասեն նորա, պատմեան զե-
րավն քո, զի լուծցէ Կառուրավն Ասէ Ծահն, ոչ է լուծանելի,
այլ կատարելի զործով. և զոր լուեալ էր երիցուն(յԱզրիցուէ),
զայն ՚ի վերայ ինքեան եղ, որպէս թէ ինքն արարեալ էր Եւ Եւ
յետոյ առէ, յորժամ կատարեցաւ հրամանն իմ, ապա լոյս յեր-
կից սաստիկ և ահեղ էջ ՚ի վերայ նորա, այնքան՝ որ զլոյս ա-
րեգականն արգելաւ։ Արդ ես ասեմ ձեղ. զրեցէք ՚ի զիրս ձեզ
կանոնն՝ և նզովիւք փակեցէք, զի թէ քրիստոնեայք տաճկանան,
և յետոյ դառնան ՚ի հաւատս իւրեանց, մի՛ արդելուք կամ
չարշարէք. այլ թոյլ տուք նոցա կալ ՚ի հաւատս իւրեանց. մի՛
զուցէ սպանանէք զնոսա, և իջանէ լոյս ՚ի նոսա, և տեսցին զայս

(16) Այս Է ՀԵ-ՀԵ-Շ՝ որ անհաւատ թարգմանի։

(17) Աղօթօ արա՛, աղօթեա՛։

(18) Նախարարապես, տարրապ. 2) յառաջազահ և լու։

(19) Արքունական, պետական ինեամակալ։

(20) Ա.Ե-ՀԵՇ՝ որ է փոխանակ արքայի, Նախող արապես։

Վահմետականք և երկմտեսցին ՚ի հաւատոց խւրեանց. և լիցի պակասութիւն մեծ ազդի մերոյ. այլ յորժամ զան առ ձեղ, տոնք նոցա զիր պաշտել զհաւատն խւրեանց. և լինին բարբառ²¹⁾, և առն հարկս ձեզ: Եւ կատարի հրամանս այս մինչեւ ցայսօր: Օի թէ որ պատճառանոք խիք տաճկացեալ իցէ, երթեալ առնուն *Կամու²²⁾ արքունի, և եկեալ պաշտեն համարձակ զհաւատս խւրեանց. և ՚ի տաճկաց ոչ ոք ասէ ինչ: Ես՛ մեք զնացաք ՚ի Պաղուին քաղաք ՚ի թուխն ՈւՃՒԴԻ, սակս վանից գործոյ: Եւ վասն Փարավեցի տաճկաց առաք նօմնս ի Ծահ-Առուէ յանեն: Եւ արանց. և ահա կան քրիստոսական հաւատով, և պաշտեն գլորիստոս, որպէս և այլք պաշտեն:

Գ.Լ.Ա.Խ. Ժ. Ժ.

Ա. Հան պարտուց եզչւուցոց:

Ասել կամիմ վասն սորին Ծահ-Արաս թագաւորիս. քանզի կարի հնարաւոր էր՝ և յ յժ հանձարեղ, և շահօղ զսիրտ մարդոյ. և ըստ հաճոյից մաղկան առներ զգործս խւր: Եւ եղեւ զի զնին խւր զարդարեաց սոկեզարդ սարօք, թէ՛ թամբն, թէ՛ սանձլն, թէ՛ կշտապանակն, թէ՛ ամբարձին, թէ՛ սրտապանակն, և այլ ամենայն կազմուածքն երիվտրին արար սոկի: Կահ զհանդերձսն խւր նոյնպէս զեղեցիկ և պատուական՝ ըստ օրինի թագաւորաց: Եւ յորժամ եղաներ յորս երեսց կամ ՚ի զբօսանս, այնպէս զարդարեալ երթայր: Եւ աեսաներ, զի զօրքն ամենեքեան արտրին զհանդերձս խւրեանց, և զկահս ձիուցն արտրին նման ինքեան. և առ սակաւ սակաւ եղեն ՚ի կերպս Ծահին: Եւ իրրե ետես Ծահն՝ թէ ամենեքեան կերպաւորեցան իրրե զինքն, և ասէ

(21) Ա.Յ.Է. Մէ-բնէուառ. ուրացեալ, ուխտազրուժ.

(22) Հրովարտակ, հրամանազիր:

ցլշնամալ - տօլուաթն⁽²⁵⁾), Ալայ՝ ունիմ ինչ ասել քեզ, զի ահա աեսանեմ՝ զի ամենայն Պօլքս իմ զգենուն հանդերձս զազնիւ քան զիս, և զուրդս երիվարաց նոցա պատռական քան զիմն։ Եւ արդ ի՞ւ իւիք մեծ իցեմ քան զնոսա, զի եթէ ոք անձանօթ զայ ՚ի մջ զօրաց մերոց, զիա՞րդ ճանաշեն զիս՝ թէ Ծահն իցեմ, զի ամենայն ոք զիերպարանա Ծահին ունին, և ոչ են պակաս քան զիս։ Օի թէ անունս իմ Ծահէ, նոքա կերպարանաւ ամենեքեան Ծահ են։ թէ ասմ նոցա, զմէ՞զ զգենուք իրրե զիս, նոքա հայհոյեն զիս, թէ ինքն ոչ այց մեզ ըզ իփրայս, և մեք մեզէն առնեմք, դա զչարի է զղենույն մեր, և արդ պատռիրեմ քեզ՝ Ալայ, զի կոչեցես զմոնեաիկնե, ոք շըրջն ՚ի մջ քաղաքիս Ասպահանայ, և աղաղակին՝ նոցին՝ ասելով, հրաման է Ծահին, եթէ ոք զգեստն իւր և զկահ ձիոյն՝ ուկի ոչ առնիցե, զզլուխ նորին հասանեմք, ահա լուարուք ամենեքեան սաստիւ զհրամանս Ծահին։ Օսցս իրրե լուան, եթէ ոք՝ որ կարող եր, և թէ՞ ոչ, արարին զպատռեր Ծահին վաղվաղակի։ Խակ ինքն Ծահ արար զիահն ձիոյն իւրոց ՚ի Համ⁽²⁴⁾կաշւոյ, և զգեստն իւրոց որպէս հասարակ մարդկան։ Եւ այսու հնարինք ամենեցունց միասն շահէր, և հաճոյանայր առ ամենեսեան։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Գլուխ է առան Անոյին։

Ամիմ⁽²⁵⁾ թէ զոր ինչ եղեալ է ՚ի ժամանակի Ծահ - Արամին՝ դրել, ոյլ ոչ կարողանամ. քանզի սակաւք են զիտողք ժամանակին՝ որք ասեին զամենայն ստուգութեամբ։ Աակայն զոր ինչ լուեալ եմ, զայն զըեմ։ Ի ժամանակին՝ յորում զնաց Ծա-

(25) Տես յիրեան 21 րլ ի ծանօթութեանն 19.րդ։

(24) Հում. 2) Խակ. ահաս. 3) Թերալորդ. 4) անկաղմ կաշի ելու։

հըն 'ի Ա բացտուն, և հնաղանդեցոյց զնոսա, և 'ի գառնալն՝
 եկն 'ի Ասյանց ձոր, որ այժմ ասի Ա բազի ձոր, և զկայ առան-
 զձմեռն անդէնու Եւ ըստ սովորութեան իւրոյ՝ յոյամ վայրի ևս
 եղեւ Բարոնիք առ-բան, և զգեցաւ փոկոյ կօշեկ՝ որ է տրեխ
 կոմ չըս-ի, և կերպարանեցաւ 'ի կերպ Է-բարութ-չ. շրջէր
 'ի զիւղորացմն, հարցանեկ և տեղեկանալը և վերահսու լ'ներ
 ամենայն իրաց: Եւ զնալով եհաս 'ի զիւղ մի՛ որ ասի Ոհափոր.
 և էր եղանակս աշնան: Եւ սուտ 'ի տուն մի, և ետես կին մի, զի
 լուցեալ էր հուր 'ի խարուկի, և նստեալ մերձ՝ և զործէր զուլ-
 պայ, և փոքրիկ աղջիկ մի՛ որպիս հնդից ամաց՝ ընդ նմա, մտեալ
 'ի տունն՝ ասէ, Է-բարութ առնուք: Ասէ կինն, ունի՛ս ուլունաւ
 Ասէ Ծահն, այս ունիմ մածամեծս և մանունս: Ասէ կինն, բեր՝
 զի տեսից: Եւ ետ առաջինորա զարկդն, որ է առաջաւ. և բացեալ
 զուլուննն եղ առաջի նորաւ Ասէ կինն, որք ան է զինն սորաւ
 Ասէ սուտ վաճառականն, զի՞նչ որ տացես, ոյն է: Եւ ասէ, կու-
 րի քաղցեալ եմ, բեր ինձ հաց 'ի զինս ուլունացգ: Ասէ կինն,
 մի՛թէ հաց տակը մարգոյ՝ և զին առնուք և լինիք վարձավա-
 ճառ: Զայս ասաց, և ելեալ երեր երիս ձուս, և փոքր պուտկաւ
 եղ 'ի վերայ հրոյն, և խարշեալ եղ առաջի նորաւ, երեր և մա-
 ծուն, և կողի, և հայ կորեկախառն. և եկեր զայն Ծահն, և
 բազում հարցաքննութիւնս արարտ Եւ յեսոյ՝ ասէ, մայր
 իմ՝ զոյ քեզ այր: Ասէ կինն, զոյ, բայց հովիւ է և արածէ
 զեաշինս: Ասէ Ծահն, ձե՞ր են ոչխարքն, եթէ այլոց: Ասէ կի-
 նըն, զոյ մեզ՝ և սոյլոց ես, զի Վ ընկերք են և ի միասին պա-
 հեն. և երբեմն երբեմն զան՝ և զնան, զի մերձ է արօսն: Ասէ
 Ծահն, զի՞նչ է անուն առն քո: Ասէ կինն, Աթոյ կոչի: Եւ
 ապա բացեալ զարկդն, և բազում շար ուլունս արկեալ 'ի պա-
 րանոց աղջկանն՝ և մօրն ապարանջան գեղին, և ասէ, Աստ-
 ուած չին պահէ՛ զառւն քո: Ասէ կինն, ասա՛ զինս սոցա, զի
 ասց: Ասէ փոքրեղիկն, զի թէ զու վարձս քո ոչ վաճառես, ևս
 իմն վաճառիցեմ արդեօք: Եւ զայս ասացեալ ելեալ զնաց 'ի

տեղի իւր. և առաքեաց յերկիրն աշարկու, թէ՛ ով ոք՝ ի Պատրասից ազգէ բռնութեամբ ինչ առնու ի ուամկաց, զզլուխն հասանեմ. այլ զոր ինչ առցեն, տացեն զզինն. քանզի զանդատեալ էր կիննու Եւ յետ երկուց առուրց՝ առաքեաց զբնուոր մի ՚ի դիւղըն Միափոր, և ասէ, զնա՛ ՚ի տուն Հայուա⁽²⁵⁾) Աթային, և ասացնա և ցկին իւր, թէ՛ Ծահն կոչէ զձեզ. և թէ ասեն՝ ուստի՛ զիսէ զմեզ Ծահն, ասա՛, լուեալ է համբաւ ձեր. վանսարոյ խնդրէ զձեզ: Եւ զնացեալ զբնուորն եղիտ զտունն. և աշա էր ՚ի ժամուն Վթայ ՚ի տուն. և ասաց զպատգամն Ծահն. և յետ ասելոյն և լսելոյն, պատրաստեցան ՚ի զնալ: Եւ զնացեալ Վթայն և երեր ՚ի հօտից իւրոց մեծաեղջեւը խոյ մի, և կինն զզեցաւ հանզերձն՝ զոր ուներ, և յանձնեցին զտունն իւրեանց զրացեացն. և սյրն շալակեաց զաղ ջիկն, և այնալ հովուական զգեստին զիսդն առաջի արկեալ զնացին. և ՚ի վաղիւն հասին առ Ծահն: Եւ ըստ պատուիրելոյ զբնուորին՝ անկեալ՝ ՚ի վերայ երեսաց իւրեանց՝ երկիրսպազին նմա. և ապա մայն ՚ի վրանն Եւ ասէ Ծահն, բարի եկիր անու⁽²⁶⁾): Ասէ կինն, բարին եղեցի անձինդ և հոգւոյզ: Ասէ Ծահն, ճանաչե՞ս զիս: Ասէ կինն, այս՝ զու այն ես՝ չոր շնորհեցեր զսաերս իմոյ զուլունս զայս: Եւ ապա ծիծաղելով ծափս եհար Ծահն՝ և ասէ, այ հա՛ որ յսյնժամ ուլունավաճառ. իի, և այժմ զիսրդ եղէ Ծահն: Եւ հրամայեաց նստիլ. և խօսեցաւ ընդ նոսա բաղում ինչ: Եւ լուաւ ՚ի նոցանէ բան իմաստութեան և հաճելի և հաւանելի: Խօսեր երբեմն ընդ առն, և երբեմն ընդ կնոջն. և ուրոյն ուրոյն լսէր պատասխանի պատշաճաւոր և կարի խելացի: Եւ յետ երկուց առուրց խիլացեաց զայրն՝ և զիկնն՝ և զաղ ջիկն՝ յոտից մինչեց զզուխ. և հրամայեաց նօտարին զրել ՚ի ամու՛ որ է Բաղաւա⁽²⁷⁾)

(25) Հովիւ.

(26) Մայր.

(27) Հրովարտակ, որտանազիր են:

Մելիքութեան²⁸), և ետ նոցա յորդւոց յորդիս լինել Մելիք այնմ զաւառի: Եւ հրամայեաց նոյն զինուորին՝ տանել զմելիք Աթայն և շրջեցուցանել զգաւառն, և ծանուցանել զհրաման Ծահին, և է, մինչև ցայսօր Մելիքի նոյն զաւառին Կայենաձորոյ՝ որ է Պաղի ձոր: Եւ ՚ի թուին Ո.Զ.Օ. էաո զիս եղբայրն իմ Խաչառուր, և զնացաք ՚ի զիւղն Միափոր. և ՚ի տան մելիք Աթային կալաք խանութ, և զործէաք արտեսա ոսկերչութեան. և ՚ի նոցանէ ուսաք զամենայն Եւ էր Մելիք Աթայ անուն ըստ անուան հաւոյն իւրոյ առաջնոյ մելիք Աթային. բայց պատառ մի հաց՝ այսքան մեծութեան հասոց:

ԴԼ.ԱՒԽ. Ժ.Օ.

Աղամանուճ Պատառակ Խառնին:

Ձե պարտ զանց առնել վասն իրացն անցելոց, ոյլ պատմել ըստ մերում կարեաց, և ըստ լրոյ համբաւոյն: Քանզի որպէս պատմ. Վապեալ վարդապետ, եթէ Պացի Մովքաւն զնացեալ երեք զԾահ-Աթան, և տարեալ ՚ի Պացտուն, զոր քակեալ աւերեաց զամենայն տունն Պաց և զկախեթ. և թագաւորըն Կախեթու Տմամիազ փոխոց ՚ի խորին Ա իրս. և թագաւորն Տփիխտու Ծաւարասափ տաեալ տարաւ ընդ իւր ՚ի Պարս, և եթող յերկիրն Ա բաց՝ զՊատաշոյ Խանն բազում հեծելոք, և ընդ նմին Մովքաւն, և ասէ, յորժամ Հնազանդեցուցես զամենայն աշխարհն Ա բաց, տար ՚ի Տմիւլիզ զՄովքաւն, և թագաւորեցն զդա. զի այնպէս էր խոստումն նորա առ Մովքաւն: Եւ ինքն Ծահ-Աթաս էր ՚ի Պարս. և Պատաշոյ Խանն կայը և զմառաւ ածէր վասն երկրին՝ թէ որպէս կարիցէ նուածել աշխարհն Ա բաց: Խակ բազմահնարն Ծահ-Աթաս, որ

(28) Մէջի, որ թարգմանի զաւառակակետ:

բնաւորեալ ուներ՝ ի սրտի իւրում զշորաւթիւնն, և կամք խա-
ռառ բառնալ զիշխատութիւնն քրիստոնեից, և խորհեցաւ՝ ի
միսս իւր, թէ Առօվաւն մնայ կենդանի՝ և լինի թագաւոր աշ-
խարհնեն Ա քայ, լինի մեղ խոնդակ և ներհակ թագաւորու-
թեան մերոյ: Կապա արար խորհուրդ ընդ համախոչն իւր՝ սպա-
նանել զԱռօվաւն, և զրեաց թռուղթ առ Պատչղայ Խաննեւ Եւ
Եր սպասմէն զրոյն ար, և ի Ծահ-Երան, մազում⁽²⁹⁾) լինի քեզ՝
Պատչղայ Խանն: Օի յորժամ աշխարհդ Ա քայ ընդ ձեռամբ
քո արացես, եթէ ինչ իւնք և է ջանա՛ սպանանել զԱռօվաւդ,
զի մի լիցի մեղ հակառակ, և կամ սրակասութիւն ինչ թա-
գաւորութեանս մերում⁽³⁰⁾: Գրեաց զթռուղթս զայս, և ինքեալ
ետ ի ձեռս սուրհանդակի՛ ասելով, այլ ումեք մի տացես ըզ-
թռուղթս, բայց միայն Պատչղայ Խաննին: Խակ շամբըն զգեցաւ
զղեստ փայեկի՛ նօսր, և կապեաց յոտն բժիժ, և առեալ ըզ-
թռուղթն՝ և զնաց: Խակ խորհեալն Ծահնն խափանեցաւ, և ներ-
հակ նորին եղեւ, ըստ զրեցելում՝ առցեն զայն՝ զոր և խորհին.
կամ ըստ Առղոմնին՝ որ փորէ խորխորատ ընկերին, անձամբ իւ-
րով լցցէ զայն, որ և եղեւ խակ: «Քանդի փայեկին որ զնաց, և հաս
ի աեղին՝ ուր Եր բանակ զբայցն: և Առօվաւն զվանն իւր հար-
եալ Եր յեղը բանակին՝ ի վերայ ճանապարհնեն. և ահա զայր
պատագարուն, և լուաւ Առօվաւն զնայն բժժայն, և ելարտա-
քըս ի վրաննեն. և աեսաննէ զպատագարուն՝ զի զոյր, և կուեաց
առ ինքն զվայեկին: Եւ ասէ, ովլ ես, կամ գաւստի՛ զաս, և կամ
յո՞երթառ Եւ նա ասէ, շամբը եմ, ի Ծահնն զամ, և եր-
թամ առ Պատչղայ Խանն, զի ունիմ թռուղթ՝ ի Ծահնն առ
նա: Եւ ասէ Առօվաւն, ես եմ. և առեալ տարաւ զնա՝ ի վրա-
նըն իւր. և ի զօրացն ոչ որ իմացաւ զդայն շամբըն. և առ-
եալ զթռուղթն՝ ի նմաննէ և հրամայեաց արքաննեկացն՝ ի զաղտ
պահել զսուրհանդակն, և բացեալ զզիրն և ետ ընթանուլ.

և իմացաւ զերն, և հրամայեաց զշաթը կորուսանել: Եւ ՚ի նոյն աւուր կոչեաց մի մի զամենայն իշխանան Ա քաց՝ գտղտ ՚ի Պարսից, և առաջի նոցա ասաց զդաղանի նետա Շահին: Եւ իսուեցաւ ընդ նոսա՝ և ասէ, զի՞նչ վեաս արարի նմա, որ նա սովանանել կամի զիս, և այս է հատուցումն փոխարինին, որ Ա քացտունն աւերեցի, զժապաւորս նոցա հալածեցի, և արդ ոյս իցէ խոստումն՝ որ կամեր առնել զիս թագաւոր ՚ի վերայ Ա քաց, արդ ազդ իմ՝ և ընտանի իմ՝ զուք էք. մի թողուցուք անհաւատ ազգին Պարսից՝ սովասել զաղգն մեր, եղերուք արդք յայսմ զիշերի ՚ի ջնջել զնոսա: Եւ բաժանեաց զաղգն Պարսից ՚ի վերայ ազգին Ա քաց, և ինքն իւրովք զօրօք. և եդ սոյցման՝ թէ՝ յայս նշանի ժամու անկերուք ամենեքեան իւրաքանչիւր բաժնի և կոտորեցիք անխնայ: Խսկ Պարսիկք ոչ զիտին զայս, և ննջեին յիւրաքանչիւր տեղի: Եւ ՚ի սոյցմանեալ ժամուն յարեան Ա քացիքն՝ ՚ի վերայ Պարսիցն, և կոտորեցին զնոսա որպէս մրջին ջերմ ջըռվ, և սպանին զՊառզայ Խանըն, զՅոււսուփ Խանն և զՊառզայ Խանն: Եւ սցլք ՚ի մեծամեծայն՝ և որք լուանն՝ ելեալ փախեան գօտելուծ՝ զլիիրաց՝ բոկոտն, թողեալ զկարասի և զգանձս՝ ասպրուստ անձանց խընդքէին. և ոչ մնաց ՚ի Պարսիցն անդ յայնմ զիշերի և ոչ մի Խսկ Ա քացիքն անկան ՚ի վերայ ընչիքն Պարսից, յափշտակեցին և կողոպտեցին. և մտեալ ՚ի գաւառսն աւար արարին զամենայն. և զինչ Տաճիկ տեսանեին՝ ՚ի սուր հանեին անխնայ, և զկանայսըն զերէին: Եւ այս ամենայն չարիքս արարին Ա քացիքն Եջլ և զՔրիստոնեից զինչսն կողոպտեին և մարդոյ չառնեին վեաս, զայս պատմեաց մեզ Պետրոս Եքեղայ Եղջոց վանից, որ բնակեր ի Յօհաննավանք. զի զինքն ևս էին կողոպտեալ Ա քացիքն ՚ի Ունչ թուին:

ԳԵՂԱՔԻ ԺԵՂՈՎԱՐ

ՊԵՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ Վ ՀԱՅՈՒ

Յորժամ կոտորեաց Մովքաւն զՊարսիկոն՝ և զԵրկիրն աւերեաց, և զիտաց թէ՛ Ծահն ու լոի՞ ՚ի լսել համբաւոյս այս, զիին իւր և զորդիս և զկարասի իւր առողքեաց յՄզգբում. և ինքն ժողովեաց զամենայն Արացիսն, և պատուիրեաց նոցա պատրաստ լինել, մինչև տեսցու ոք՝ թէ զի՞նչ է լինելոց Խսկ Պարսիկքն՝ որ փախեան ՚ի Մովքաւէն, զնացեալ պատմեցին Ծահին: Յորժամ լուաւ զպատգամն զայս Ծահն, վունգայր, մանչէր, հնչէր և զուչէր որպէս ձադակորուստ առիւծ. և ապա հրամայեաց իշխանի միոյ, որ ասեին Ծոռչե-րաշի, ժողովեալ զզօրս, և ինքն լինել զլուխ նոցա, և զնալ ՚ի վերայ Արաց: Խւ նա արար զՀրամանս Ծահին. և չուեաց ՚ի կողմն Արաց: Կոյնովէս և Մովքաւն առեալ զզօրս Արաց և հասեալ մօտ զօրացն Պարսից՝ ախոյեան միմեաց՝ ՚ի վերայ զեւանդոյն՝ որ կոչի Վլլելթ. և ՚ի զօրացն Արաց էր այր մի յաղթամարմին՝ հաստատնձն, լոյնաճակատ և մեծազլուխ քաջ ՚ի ոպատերազմի. որպ անունն էր Եղայ-Թռանզի, նա եղեւ առաջընթաց ՚ի պատերազմի, որ ասեր ամենայն զօրս Պարսից ինձ լիցի բաժինն, բայց միայն է շեղ վարագէն զոյ ինձ երկիրւղ, այսինքն՝ յԱմիրզունայ Խանեն զոյ ինձ կասկած: Խւ ՚ի նոյն տեղին Վլլելթ հարան ընդ միմեանը սաստիկ և յոյժ բախմամբ՝ որպէս դարրինի հարկանել զերկաթս, և որդնձազործք ՚ի տոփելն զպղինձ. և այնպէս մարտեան ընդ միմեանս զօրն ող ջոյն. և ՚ի ձայնէ թուանքացն, ՚ի ձայթմանէ աղեղանցն, և ՚ի զումանէ արեանյն և չ ֆոնչելոյ երիվարացն, զամենայն բեռնակիր անասունքն Պարսից՝ թէ ուղաք, թէ ձիք, թէ ջորիք, թէ էշք, ամենն զլուխ առեալ փախեան ՚ի տեղիս իւրեանց: Խւ ասացին՝ թէ ՚ի նոյն զիշերի ուղաքն հասին ՚ի Ծիրազ, որ էր Տշմարիտ, զի ՚ի ճանապարհին՝ որոց

սատահեցան, 'ի նելքոյ խրեանց տաեալ սանին, և ննքեանք շատակա հասն 'ի աւեղիս խրեանց: Եւ 'ի նմին սպատերազմի պատահեցան մվանանց Ամբրդունա խանն և Ըղոյ թանիին. առեւ Ամբրդունա խանն, ու դաշ Ռաքոյ, -որ է քարեաց ըլուր մոք փախչիս. և առ ժամացն շարժեցին զթուրն ՚ի վերայ միմանց ՚ի միում քթթել ական: Կախ Աղայ թանիին բերեալ զթուրն ՚ի վերայ ձախոյ յուսոյն Արացւոյ, որ և հատեալ ընկեց յերկիր, և ննքն մնաց կախեալ ի ձիոյն. և եկեալ պատահայք նորա՝ տաեալ տարան առ ինքեանա, և մնուաւ անդին: Խոկ Ամբրդունա խանն եղեւ խոցեաւ, և էր որդի նորա թատհմաց ընդ նմա, որ եկեալ պատեաց զհոյրն իւր՝ և տոտքեաց յերեան. և ննքն մնաց անդին ընդ զօրս Պարսից: Եւ 'ի պատերազմի անդ անկան Շահանայ խանն և Ակիմ Առէթ թանն, և այլք 'ի մեծամեծացն Պարսից. և թէպէտ անկան նորա, սակայն Արացիքն կորեան և ոչնչոցան. և Առվառն փախեաւ յերկիրն Օսմանցւոյ. և Պարսիկք զօրացան և տիրեցին երկրին Արաց մինչ ցոյսօր:

Գ.Լ.Ա.Խ. Ժ.Բ.

Աղոյ բահելն Պատովին խանի:

Ա տանդի կամլցայ պատովի զզործո Պարսից, տաացից և զպցո ևս: Զի յորժում էստ Շահն զՊատութայ, եղ անդ իշխան զՊատութ խանն, ոչըն նանդաւոր և հարս, ննքհաւան և զռող. որ ոչ երբէք խոնարհիր ումեք ումենեին: Խոկ յորժում եթող Շահն զՊատութայ խանն ՚ի Արաց աշխարհն հնագանդիլ զնոսա, եթող անդ և Պատութ խանն, և ասաց, Ե՞ր խօսօքն Վատաղայ խանի, և կաց հնագանդ նմաւ Խոկ նաթէպէտ մնաց անդ, ոչ զնոս առ Վատաղայ խանն. և ոչ

բանոյն, և նստաւ 'ի վերաց նորա, և շնչարգել արար, և մեռաւ: Եւ ոմանկը ասե՞ն, իւրով մաշուամբն մեռաւ 'ի խստութենել վերին: Վանդի բժիշկք ո՛չ կարացին բուժել: Ա ամեղի որբա՛ն զեղ զնելին, վերն առաւելըյը, և 'ի կակծոյն մեռաւ: Ինէ, այսպէս և թէ, այնալէս՝ բարձաւ 'ի կենաց քաջն և արին Ամիրզունա-խան խարսხաշ առիւծն, և կալաւ զաեղին՝ որդի նորա թաւհմազ բէկն, և նստաւ խան՝ ծանր իշխանութեամբ: Բայց տարակուսութիւն է ինձ սակս սորա, քանզի Առոքեալ պատմազիր՝ ասէ, թէ՝ յորժամ խոցեցաւ Ամիրզունա-խանն, որդի նորա թաւհմազ-բէկն էր սու Ծահն, և յորժամ լուաւ Ծահն զլոցին Ամիրզունայ խանին, առօքեաց զորդին առհայրն, զի պաշեսցէ զերկիին: Խսկ 'ի լրաց համբաւոյն՝ այն էր՝ զոր զրեցաք, քանզի կարծեմ համբաւն յիրաւի դու: Ա ամեղի ես մանուկ էի՛ զի ասեին, ահա թաւհմազն եկն չ Ա բացանայ՝ և է Վրաացն՝ զոր ըմբռնեցին, շղթայեալ բերին 'ի Վանաքեռ պահ ետուն: Եւ մեղ ևս ետուն ոմն պահ Ակիլի անուն, որ զիտէր չայերէն, նա պատմաց մեզ վասն պատերազմին:

ԳԼՈՒԽ 1.0.

ԳՆԱԿՆ ՕՀԱՆԱԳԵՐ ՚ի ՀԱՅ ԲԱԿԱՀԱՊԱՅ:

1. ուաւ թագաւորն Օսմանցւոց Մուրաստ՝ թէ մեռաւ Ծահ-Արան, և նստաւ թռոն նորա Աաֆի, և է տղայ և անարի, վասնորդ զումարեաց զօրս, և ետ 'ի ձեռս Ա ազիր-Խոսրով Փաշային՝ զնալ 'ի վերաց Բաղդատայ՝ առնուլ զնաւ Եւ զնացեալ նստաւ 'ի վերաց նորա՝ բազում առուրս, և ոչինչ կարաց առնել. զարձաւ և զնաց յԱշկբատան՝ որ է Վրաման-Ծահն, և է Համազան, և 'ի Դարկազին, և ոչինչ կարաց առնել. զարձաւ և զնաց յաշխարհն Օսմանցւոց, և կամեցաւ

ձմեռել՝ ի թառւխաթ⁽⁴⁷⁾): Եւ լուսու թագաւորն Առուբատ, բարկոցաւ և առաքեաց զՄուլթուզայ Փաշային, և եհատ զպուխն Խոսրով Փաշային, և ինքն կալաւ զտեղին:

ԳԼՈՒԽԻ ՀԵՅ

ԳԼՈՒԽԻ ՈՆԿԱԳՈՅԻ ԽԱՆԻ Է Ա ՅՆ:

Խակ թագաւորն Պարսից Ծահ-Ասիի լուսու զարարեալն Առութան Առուբատին, և ինքն ևս կամեցաւ առնել՝ զոք նա արար, վանսրոյ ժողովել հրամայի, զզօրս և զնալ՝ ի վերայ Վանայ: Եւ կացոց զլուխ նոցա՝ Ոռուստամ խանն, որ եր իշխան թաւրիդոյ: Եւ իրեւ էսու նա զիշխանութիւնս զայս, հոգարտութեամբ առաքեաց յԱրեան առ Թաւհմազ-խանն՝ զալ առ ինքն, զի զնացեն՝ ի վերայ Վանայ: Խակ Թաւհմազ խանն խասութեամբ եւս պատասխանեի, և առէ, ևս ոչ եմ կարող զալ, նախ՝ զի ոչ ունիմ հրաման՝ ի Ծահէն, և երկրորդ՝ զի, ԳՏ կողմաննէ, թշնամիք զոն Երեւանոյ,՝ ի Արայ,՝ ի Քրտաց. և յՕսմանցւոց, զիանդ թողուցում զերկիրս անտեր, և զարմանել՝ է ծառայութիւն. և ոչ զնաց: Կան առաքելոցն ոչ ես շուք, և դարձան անարդեալ: Վասնորոյ անրժշկելի վերօք վերաւորեցաւ Ոռուստամն, և ոչ զիանդ զինչ արացցէ: Վանազի ոչ եղեւ բանն իւր, այլև արհամարհեցաւ՝ ի Թաւհմազին: Եւ ինքն առեալ զօրքն՝ և զնաց՝ է Ծամիրամակերտ, և նստաւ՝ ի վերայ նորա, սկսու պատերազմիլ բազում աւուրս, և իմացու՝ զի ոչ կարեր առնուուլ. խորհեցաւ փախչիլ. և հրամայեաց զօրացն սիմախիլ յերկիրն, և առար առնել՝ զօք ինչ կարացեն մինչև յերիս աւուրս, և յետ երից աւուրց դասնալ առ ինքն: Եւ զնացեալ զօրացն՝ զերփեցին զօք ինչ գտին, և դարձան առ

նառ Խոկ նա զաղտ կոչեաց զամենայն հաղարսովեաւ՝ և առէ, դուք կուշցքք զանխլաբար զՃ'ապեաս, և նորա զշիննապեաւովն, և յիսնապեարքն՝ զատանա թետսն, և նորա զօրաց իւրեանց, զի պատրաստ կացցեն յայս նիշ զիշերի փախչել միանգամայն, զի մի զիսասացեն Օսմանցիքն, և ելցեն ՚ի բերդէն, և պեղեսցին զինի մեր, և ոճիրս դործեսցեն։ Եւ արարին այնպիս թողեալ զՃրադնն ՚ի վաս, զի մի կարծիս առցին Օսմանցիքն։ Եւ այնպիս փախեան ՚ի միում ժամու։ Եւ ՚ի վաղին տեսին Օսմանցիքն զիսախուսս Պարսիցն, և զհետ մոխեալ ոչ կարացին հասանիլ, դարձան առ հանգրուանս նոցա, և ոչ զտին ուլուն մի բաց ՚ի ճրազացն։ Խոկ Ուուստամն զնաց ՚ի թառըզ, և զրեաց զանգատ ՚ի թահհմազէն, և առաքեաց առ Ծահն։ Խոկ Ծահն արհամարհեաց զնա, և զմզմարերն զանիւ արձաիեաց, և ակամի հայեր առ Ուուստամն մինչեւ ՚ի մահ նորաւ։

Գ. Ա. Ա. Խ. Լ. Բ.

Ա. առն Գ. Ա. Հ. Յ. Մ. Հ.

Մինչզեռ կենդանի էր Ամբրդունայ խանն, սոյր մի Մուրաս ԻՆէկ անուն՝ յազգին Օսմանցւոց, փախուցեալ ՚ի սպանմանե վասն զողութեան, և զայ առ Ամբրդունա - խանն, և մեծարի ՚ի նմանե, և երբեմն լինի առաջնորդ Պարսիցն, և տանի ՚ի վերաց Օսմանցւոցն, և այսպիս սիրեցաւ ՚ի խանեն վասն արիութեան իւրոյ։ Եղբայր մի էր սորա՝ Եսլան աղայ անուն, սոյրւու, թէ՛ եղբայրն իւր մեծարեալ եղե ՚ի խանեն, վասնորդ և ինքն ևս ապատամիեցաւ, և հատուանեալ ամենայն ընտանեօքն՝ և եկն առ եղբայրն, և նա առեալ տարաւ զնոս առ խանըն։ Եւ երկոքեանն կոյցին ՚ի միասին առաջի նորաւ։ Եւ յետ Ամբրդունայ խանին նատաւ թահհմազ - զուլի բէլն։ Եւ սոյ ևս սիրեաց զնոսաւ, և արար Մուրաստ բէկն՝ երկորդ իւր, և Ասրան

աղայն՝ վերակացու հարկացն։ Այս Ասրան աղայն առաքեաց յերկիրն, զի զբեսցէ զլուխս արանցն և ամենայն իրացն։ Եւ եկն նախ ՚ի Վանագիռ յառարա ձմերայնոց, և կոչեալ առաջի իւր զգեղականն՝ յուցանել զզլուխն իւրեանց, եկն նախ Վերիքն Պատիթ՝ և երեր Ռ որդին իւր, և զորդի զստերն, և եցոցց Գային ամենեքեաս որդւովք իւրեանց՝ և մտանելին ՚ի զիրն։ Խակ հայրն իմ Վկրտիչ շալակեաց զիս զօաքարիսյս, և զեղբայրն իմ զլուշատուր առաջի արկեալ գնաց, և իրրե եաես զմեզ փոքր և կաղ՝ և թիւր ոտամբ, բարկացաւ՝ և ամէ, զառողջ որդիսն քո պահեալ ես, և զանգամալոցձքդ բերեալ ես, և հրամայեաց արկանել յերկիր ՚ի վերաց երեսացն։ և բերեալ ջուր թաղեցին ՚ի վերաց անձինն, յոտաց մինչեւ ցզլուխն՝ ջրողող արարին, և նատոց այր մի ՚ի վերաց զլեսոյն և այր մի ՚ի վերաց ոտիցն, և հրամայեաց չորից զինուորաց՝ Ռ կողմամբ հարկանել, և այնքան հարին, մինչզի մօրթն ՚ի մարմնոյն ՚ի բաց ոտեաւ, և ինքն անշնչացաւ, և համարեցին զնա՝ մեռեալ, և ապա քարշեալ զնա թաղեցին ՚ի մեջ փայինի։ Եւ այր մի Բարսեղ անուն, և այր մի Վազար անուն՝ հանին զի եղնդունն, և այլ ուն Վարուդէ անուն Երեանցի կախեցին զմիոց ձեռանեն, և այնքան հարին, մինչեւ յօդուածքն ամենայն խախացան։ Եւ այսպէս ահ նորատիրեաց ՚ի վերաց ամենեցուն մեծաւ սաստիւ։ Ա ասնորոյ ոչ մնաց սանդեսյ մանուկ՝ զոր ոչ ցուցին։ Եւ եթէ ծերք զոյին, հրամայէր երթեւեկս առնել առաջի իւր, և աւսանէր, զի թէ զլուխն ՚ի կոր ունէր, և Բ ձեռքն զինի իւր տանիւր, ոչ զրեր, խակ թէ զլուխն ուղիղ ունէր, և ձեռքն առաջի տանիւր, զնա զրեր։ Եւ ոչ ոք իմացու զայս։ Խակ եթէ մանկունք զային, բերեր առասան, և շուրջ պատէր զպարանոցաւ պատանոյն, և երկոքին ծայրը սպարաննի զնէր ՚ի բերան մանկանն, և ամէր՝ ըմբռնել ատամամբ, և օղ արարեալ տանէր ՚ի վերաց զլեսոյն։ եթէ անցանէր զզլեսովն, թողյը զնասա զնալ, և եթէ ոչ անցանէր զզլեսովն, զրեր զնաւ։ Եւ

այսպէս զբեաց զամենն յոյժ ծշտիւ՝ զմարդ, զկով, զձի, զջորի, զէշ, զօխար, զջրաղաց, զձիթաղած, զարուեսաս, զըրնձաղաց, զայգիս, և զպարտէզս, և այլ որ ինչ զտաւ՝ զբեաց և 'ի ներքոյ հարկին արար: Եւ կարի ՚ի դիւան արքունի զամենայն զբեալսն:

ՎԱՀԱՆ ԸՆԹԱՊՐԵՏ ԸՆԴ-ՊՐԵՒՆ ԲԵԼՅՈՒՆ:

Վահան Ընթապրետ Ընդ-Պրեւն բելյուն:

Ծահ-Վահան թագաւորն պարսից՝ կարի սիրեր զբօսանս և զիներրունս: Յաւուր միում առեալ զամանս իշխանացն՝ զնաց 'ի բուրասատանն՝ ընթրիս առնել և ըմզել զինիք. և նստեալ 'ի ներքոյ խնձորենույ ՚ի վերսց խոտոյ, և հայեցեալ 'ի ծառն՝ և ասէ, որքան ունիցի պտուղ ծառս ոյս: Ամանք այսքան ասացին լիտր, և սմանք այնքան: Եւ առաջի կացեալ այր մի Ծահ-զուրի բէկ անուն, որ էր սպասաւոր խոհարանին, և ասէ, թագաւոր՝ ողջ լեր, զի այսքան լիտր խնձոր զոյ ՚ի ծառիս, հրամայեալ քաղել և կշռել, և թէ՛ մթխալ մի աւելի կամ պակաս լինի՝ զայս իմ հան: Եւ զայս իրրե լուա Ծահն, սոսկացու. և հրամայեաց երկուց արանց՝ ելանել 'ի ծառն, և քաղել զամենայն, և ոչ թողուլ մի բնաւ, և ոչ կորուսանել: Եւ ելեալ արքըն քաղեցին զամենայն՝ և իջուցին, և կշռեցին, և կշռան նորա որպէս և ասաց Ծահ-զուրի բէկն, մէտ մի ոչ աւելի՝ և ոչ պակաս: Վսէ Ծահն, իմաստութիւն քո միայն առ զա եղեւ՝ թէ ամենայն իրաց: Վսէ այրն, ոչ թէ դմա միայն, այլ առ ամենայն իրս. քանզի ծառայ քո է ՚ի տան խոհագործացն արքունի, և զոր ինչ զայ և զնայ, ոչ ՚ի չափ անկանի և ոչ ՚ի կշռ. և զոր ինչ ես ասեմ, այն լինի: Եւ հրամայեաց արքայն բերել խորքով ցորեան՝ և ասէ, որքան լիտր է սա: Վսէ այրն, այսքան լի արք է: Եւ չափեալ անսին՝ այն էր՝ զոր նա ասաց: Եւ հիա-

ցեալ Ը աշն՝ հբամայեաց վարել զնա յաշխարհէն. ասէ, աչք զորա չար է, զվեմա պատառէ, և զաղբիւրս խնու, և զըսյս չորացնէ: Եւ հանեալ զնա տամբ և ամենայն լինիք⁽⁴⁸⁾ և հալածեցին: Եւ զնալը եհաս Աշրեան, և ծանօթացաւ Ամիրգունայ - խանին. քանզի յառաջակցն զիտէին զիրեարտ Եւ խանն կարգեաց զնա 'ի վերայ արարելիցն՝ տեսանել որքանութիւն հինգերրորդացն, զոր բնիքեանք հառարձն⁽⁴⁹⁾ ասեն: Խակ նա ելեալ երկիրն առ 'ի հառչել, թէ զնայր 'ի վերայ արտի՝ ասէր, այսքան ցորեան զոյ աստ, և թէ 'ի վերայ զիզոյ՝ ասէր, այսքան խուրց է, և թէ զնայր 'ի վերայ սեղ ջն՝ ասէր, այսքան լիտը է, և թէ 'ի վերայ հօտից խաշանց զնայր՝ և կամ նախրաց անդէոց՝ ասէր, այսքան բառձոց⁽⁵⁰⁾): Է և ոչխար, և լինէր այնպէս, և ոչ վրիսպիւր բնաւ: Եւ անուանեցին զնա՝ Ամարդար - Ը աշ-Գուլի - Բնէկ: Եւ այսպէս եկաց նա ՚ի վերայ արարելիցն, և 'ի թուելոյ խաշանցն: Ի կենդանութեանն Ամիրգունայ - Խանին նու էր հառարձն և առարձն⁽⁵¹⁾): Եւ յետ Ամիրգունայ - Խանին՝ եղեւ խան թահհմաղ - զուլին: Գ Տաճիկ միարանեցան, և գազու 'ի մարդկանէ սպանին զնա, և ոչ ոք խմացաւ զմահ նորա. քանզի տեսին զզէշ նորա անկեալ 'ի վայրի՝ մերկ: Եւ այսպէս բարձաւ չըրն 'ի միջոյ:

Գ-Լ ՈՒ-Խ Խ.

Խ-Հ՝ Շըզիոն ու էլ Խ-անհմող - զուլի իսանն:

Այն ինչ՝ զոր զրեցաք 'ի սկզբաննէ պատմութեանս մինչեւ ցաստ, զամենայն 'ի համբառոյ և 'ի լրոյ՝ և 'ի պատմութեննէ զրոյ և 'ի յիշատակարանաց էր: Այսուհետեւ ականատես եմ

(48) Զգուշացուցիչ կամ հօկոլ:

(49) Վաւար, խաշն, անասուն, արջառ:

(50) Փորձիւ, քննիւ, զննիւ.

և ականջալուր մերձակայց իրաց. վասնորոյ դրեմ զամենայն անվրեալ: Եւախ՝ զայս, թէ՛ ո՞րպիսի այր գոյն Խռահմազ - Խանին: Եշ նա դեղեցիկ պատկերօք, մեծակն, յունակից, լայնաձակատ, թիկնեղ, փորբարերան և մանրատամն, քաղցրալըսց, և համեղախօսք: Խրաւարար և ուղղագատ, ճշմարտասեր և անաշառ, սիրօղ քրիստոնեից: Օք միշտ զնայր ՚ի տունս նոցա՝ ուտեր և ըմպեր, և ոչ խորեր ՚ի զէնլեացն քրիստոնեից, և ոչ յեփոցացն: Եշ ասեր, թէ՛ են Տաճիկք՝ զքրիստոնեից միսն ուտեն և զարիւնն ըմողեն, և ասեն թէ՛ քրիստոնեից զենեալն մի՛ ուտիցէք, զի մեղք է: Եշ զնացեալ ՚ի հարսանիս Գրիգորին՝ որդւոյ Դաւ-ւութ մելիքին, և ոչ տարաւ ընդ ինքեան բաղմութիւն Տաճ-կաց, զի մի՛ բազում ծախսք լիցին՝ ի տան մելիքին: Այլ տա-րաւ ընդ իւր զՄաւրատ թէկն, և զԷսլան աղայն, և զՄասում քալանթարն, և ծառայք ոմանք: Եշ յորժամ բաղմեր յըն-թրիս, յաջմե, և յաշեկէ խրոյ նատուցաներ զմելիք Դաւութին և Ալրքեցի Գոօղալ թէկն: Եշ յորժամ յառներ, յառնեին և նորա: Յորժամ ննջեր, ասեր, ննջեսցեն ամենեքեան, և ոչ ոք մնասցէ արթուն: Եշ այս էր սովորութիւն նորա: Եշ եղե՛ զի ՚ի նոյն հարսանիսն ՚ի տան Վելիքին՝ նստաւ յերեկոյէ մինչեւ ՚ի մեջ զիշերին՝ յուտել և յըմպել զուսանօք և երգօք՝ տպարուք և խնդութեամբ բաղմաւ: Եշ յորժամ եհաս զինին, յարեաւ ՚ի ննջել՝ և ասէ, երթայք ննջեցէք ամենքեան և մի՛ ոք մնասցէ արթուն: Եշ ինքն զնացեալ ննջեաց, և յագեցաւ ՚ի քնոյն յարեաւ և ելոյց լապտեր. և ետ ՚ի ձեռն գտեր մելիքին, որոյ անուն էր Ա արդայ խաթուն, և շըջէր տեսանել՝ թէ մի՛ ոք ՚ի Տաճկաց լիցի արթուն: Եշ եմուտ ՚ի ներքին մասանն, և ետես՝ զի ՀԱՅՐԱԿ³¹⁾ եղեալ էր ՚ի վերայ թուղրի, և սեղան արկեալ ՚ի վերայ քուրսոյն, և հաց և կերակուր ՚ի վերայ սեղա-նին, ողնակ զինւոյ և բաժակ ՚ի վերայ. և Ասլան աղայն ոտքն

(31) Աթոռ, գահ. 2) ամպիտն, բեմ:

պարզեալ՝ ի ներքոյ քուրսւոյն, և ձեռքն՝ ի վերայ միմեանց եղեալ, և զլուխն՝ ի վերայ ձեռացն եղեալ՝ ննջեր՝ ի վերայ քուրսւոյն։ Եւ տեսեալ զայն խանն՝ դարձաւ յետս, և ասէ ցաղջեկն, մի՛ ումէք ասիցես ինչ. և ե՛լ՝ ի մահիճն՝ և ննջեաց դարձեալ։ Եւ էին արք երկու՝ սպասաւորք հարսանեացն՝ անուն միոյն՝ Աւհասա, և միւսոյն թարխան։ սոքա արթուն էին՝ տեսին զայն, և երթեալ զարթուցին զլուան աղայն, և պատմեցին նմա զամենայն։ Եւ յորժամ ըսւաւ զայս, դողումն և սարսափումն անկաւ՝ ի վերայ նորա՝ և ասէ, զիտեմ զի սպաննէ զիս. սակայն թէ; հարցանէ; խանն, ես զնշմարիսն ասացից։ Եւ յարեաւ գնաց՝ ի տեղի իւր։ Եւ՝ ի վաղիւն կոչեաց խանն զտածկունս՝ ի միասին, և ասէ ցնոսա, յետ գնացոյն իմոյ աստի՛ ով մնաց արթուն։ Ասէ Ասլան աղայն, ես զնացի՝ ի ներքին մառանն՝ և տեսի սպասաւորքն ուրախանային քումդ մեծութենէ, և ես ես նստայ՝ ի ներքոյ քուրսւոյն, և բազում արարի սէր. և նիրհս կալսւ զիս, և ո՛չ կարացի յառնել, այլ նընջեցի՝ ի վերայ սեղանին։ Ասէ խանն, եթէ ոչ էիր ձշմարիսն ասացեալ, զզլուխ քո վերանայր՝ ի քէն։ Եւ այսպէս կայր աշարկութեամբ՝ ի վերայ Տաճկաց, և սիրելով զքրիստոնեայն

ԳԼՈՒԽԻ ԽԱ.

ԵՐԱԿԱՆԻ ԽԱՆԻՆ ՅԱՀԱՅԻՆ ՕՀՄԱՆՑ-ԵՎ:

Տեսեալ զանմիարանութիւնն Օսմանցւոյ՝ որք էին՝ ի Պարս քաղաքն, քանզի երկոքին մեծամեծ Պարսնայքն՝ որք ասէին՝ Աաղ-աղասի⁽³²⁾ և Աօլ-աղասի⁽³³⁾), որ է յաջ և յաշեակ պարոնայքն, սոքա անկան ընդ միմեանս սպատերազմաւ վասն

(32) Աջապահ, աջապետ,

(33) Զախարպահ, ձախարպետ։

իշխանութեան իւրեանց. և դնացին Արզում առ աւագ իշխանն, որ է մեծ Փաշայ, զի գասաստան արացէ նոցա. և մնաց Վարս առանց վերակացուի: Եռեւել զայս խանն, և ժողովեալ զօրս ետ ՚ի ձեռս Վճարանիթար Մասումին, և առաքեաց ՚ի գաւան Կարուց. և պատուիրեաց նմա, զի թէ քրիստոնեաց զերեսցես, խաղաղութեամբ բերցես. խել թէ Տաճիկ, զարս կոտորեսցես, և զեզմն զերեսցես, և զշենսն ոյրեսցես և աւերեսցես: Օչյս պատուիրս ետ նմա. և ինքն առեալ զմնացեալ զօրքն՝ զնաց զկողմանըն Կաղղուանայ, և զամենայն վայրմն զերեաց և աւերեաց: Եւ եհաս մինչեւ ՚ի հին քաղաքն Բագրեանդ, որ այժմ ասի՛ Օտուաֆիխանայ՝ ՚ի վերայ Արասխ զետոյ. զերեաց զբնակիչսն, և քակեաց զշենսն, և մնաց աւեր մինչեւ ցայսօր, և զգերին առաքեաց ՚ի Վաղարշապատ: Եւ զնալով եհաս մինչեւ ՚ի Կարնոյ զաւառ, և զերեաց՝ զոր ինչ եղիտ: Եւ զարձաւ ՚ի Բասենոյ վերայ, և ՚ի Պարտիզանորոյ, և եկն ՚ի զուռն Կարուց, և զոր ինչ մնացեալ եր ՚ի զերելոցն Մասումին, զայն ևս Խանն զերեաց: Վանզի Օսմանցիք ու կարացին զդէմ ունել. վասնզի եղուզակք՝ որ է ջաղարիք՝ բաղմացան ՚ի փոքր Կողնիխայ Ճայոց, այսինքն՝ Ծաղղարասար (Ծաղին - զարա - հիսար): Եւ հրամանաւ Մուրատ թագաւորին Օսմանցւոյ՝ զբնաց ՚ի վերայ նոցա Փաշայն Կարնոյ, և մնաց աշխարհն անտեր: Վանայսորիկ զօրացան Պարսիկք՝ և արարին զայս ամենայն:

ԳԼՈՒԽ ԽՈՅ.

Պատրիք Ծըն - Խուլամին Մահմետի:

Եպիսկոպոս մի Միքայել անուն՝ ՚ի Վանաքեռոյ. սյս՝ սյն Միքայել արեղայն է, զոր ՚ի պատմութեան Մեխլուին յիշեալ եմ. այր երկայնահասակ, պակասախելք, աղետ ՚ի զրոց, և ձարտար ՚ի խօսս աշխարհի: Ամա եղեւ թշնամի Պարսիկ մի. զի ա-

սեր, ես ազգական իմ քեզ, և զոր ինչ դոյ քեզ, զամենայն
ինձ սրատեհ է. զի ես Առողջաման (Ախովիման⁽⁵⁴⁾) եմ. և օ-
րենքն մեր այսպէս հրամացեն: Եւ բազում անդամ հայհոյեր
զԱպիսկոպոսն՝ + առքար (քեաֆիր⁽⁵⁵⁾) և Շնոր (ամնոփ⁽⁵⁶⁾) և
Էտիլ⁽⁵⁷⁾) ասելով: Եւ այսպէս կազ և կոխ եր 'ի մէջ եր-
կոցունցն: Եւ զնացին երկոքեանն առ զազին 'ի գատառտան.
և Պարսիկն կարծէր ինքն ճշմարիտ, զի պարծէր 'ի Թառը-
քութիւնն: Եւ զնացեալ կացին առաջի Ծխին: Ասէ Պարսի-
կըն, միրզաց ես ազգ եմ մահրամիտ, և եմ Տաճիկ, և զա-
պարանս խնդրեմ 'ի սմանե, ըստ օրինացն. և սա ոչ տայ:
Ասէ Ծէխն ցԵպիսկոպոսն, յիրաւի⁽⁵⁸⁾ ազգ է զա քեզ: Ասէ
Եպիսկոպոսն, ես զդա ոչ զիտեմ, և ոչ ճանաչեմ. այլ թէ
ազգ է զա ինձ, բերցէ վկայս, և հաստատեսցէ զազգակցու-
թիւն իւր առաջի ձեր, և ինքեանց լիցի զամենայն զոյսն իմ:
Ասէ Ծէխն ցՊարսիկն, ունին վկայս՝ որ ազգ ես զման Ասէ
Տաճիկն, վկայն իմ՝ հաւատու իմ է: Ասէ Ծէխն, բազումք
են այդմ հաւատով, բայց ոչինչ օդնեն. և թէ ունիս վկայս՝
բերցես. և թէ շունիս, մի աշխատ առներ զոր. զի առանց վկայի
ոչինչ շահիս: Եւ Պարսիկն ելեալ զնաց 'ի Քանաքեռ, զի 'ի
տաճկացն Քանաքեռյ բերցէ վկայս. և նորա ոչ եկին, այլ ա-
նարգեցին զնա: Խակ Պարսիկն զրեաց զիր, և ետ ցԵպիսկոպոսն՝
բազում տաճկաց վկայութեամբ և կնքով. և սուտ հանին.
զամաճիկն: Եւ Եպիսկոպոսն առեալ զԱպիսկոպոսն⁽⁵⁹⁾ և զնաց: Եւ
յետ ամսօրեայ առուրց՝ եկն Պարսիկն զարձեալ առ Ծէխն՝ և
ասէ, վասն միոյ անվարտի սեազինոյ զի⁽⁶⁰⁾ ամօթ արարեր և սուտ
հաներ զիս. արդ ես տաց քեզ այսքան արծաթ, և զու արա

(54) Տաճիկ, հազարացի, մահմետական:

(55) Մածկող, 2) հայհոյիչ, անսատուած, հեթանոս. 3) ապահուառ:

(56) Անհաւատ, անկրօն:

(57) Պ-ՌՀ: մատի, 2) պիզ, 3) տգետ, և ին:

(58) Պատակնիք, զատաւորական վՃիռ:

զբանս իմ ուղեղ։ Խսկ Վազբն լուսւ նմա. զի կաշառն կուրսացուցանէ, զայս դատաւորաց. և առեալ զկաշառն՝ ետ նմա զիր, և արար զնա ազգական Եպիսկոպոսին. և տաճիկն առեալ զթուղթն՝ զնացեալ նստաւ յայդի Եպիսկոպոսին։ Խսկ Եպիսկոպոսն զնացեալ առ. Ըէխն՝ և ասէ, զի՞նչ է ոյս, զի բազում արանց վկայութեամբ ետուր ինձ այս ֆաւլանյաց⁵⁹). և այժմ տուեալ ես նմա հրաման, և ահա եկեալ և նստեալ է յայգւոջ իմում։ Ասէ Ըէխն, ես ոչ էի ճշմարտութեամբ վերահասու եղեալ իրացն. և այժմ հաւաստեալ ծանեալ, զի ազգական քո է նա. և ըստ օրինաց մերոց զամենայն ինչքն քո նմա պատկանի։ Ասէ Եպիսկոպոսն, յորժամ ոչ էր տուեալ քեզ կաշառս, վասնորց ոչ արարեր ինձ ազգական. այժմ առեր զկաշառս, և արարեր ինձ ազգական։ Եւ բարկացեալ Վազբն՝ հրամայեաց ծառայիցն՝ հանել զնա արտաքս։ Եւ ծառայքն բթելով հանին ի սպառաէն։ Եւ նա զնացեալ զրեաց թուղթ զանգատանաց իշխանն, եղ ընդ նմա Վազբիամն, և ձեռամբ Մելքը Պատութին՝ առաքեաց առ Խանն։ Եւ իրեւ ընթերցաւ, կոչեաց Խանն դըպիսկոպոսն առաջի իւր, և ստուգեաց։ Եւ բարկացեալ Խանն, առաքեաց արա խստափիրաս՝ բերել զՎազբն՝ հետիսս և սրբնիթաց։ Եւ զնացեալ բերին, և կացուցին առաջի Խանին։ Եւ Խանն եցոյց նմա զՎազբիամն Եպիսկոպոսի. և ասէ, զո՞ւ ես զրեալ զայդ։ Ասէ Վազբն, այս Եպիսկոպոսին Եպիսկոպոսին առաջի Խանն։ Եպիսկոպոսի և ասէ, այս ի՞նչ է։ Ասէ Ըէխն, ինձ թիւր ծանուցին, և յետոյ իմացայ զիւաւն։ Ասէ Խանն, կաշառն ծառնոց քեզ իրաւն, որ դու զօրինազիրն քո սուտ առնես։ Պատահեցան անդ և յայնոցիկ՝ որք կնքեալ էին Վազբիամն՝ ասեն, մեր առաջի զրեցաւ թուղթդ այդ բազում հարցագիննութեամբ։

(59) Նցն է նշանակութիւնն ընդ Վազբիամն թէպէտ և զնապետավճիռ թարգմանի։

(60) Խնդիր, ազերս, թուղթ ազաւանաց կամ ինդրանաց։

Առեւ կանն, ամառ զի՞նչ պատասխանի ասաւ Եւլուցաւ Ըէին, և զոյն երեսացն այլափոխեաց: Եւ բարկացեալ կանն հրամայեաց առնել զնա թախուա +է-լսն՝ այսինքն՝ ասխտակեայ զըտակ. և բերին մեծ և ստուար տախտակ մի, և ծակեալ զայն անցուցին ընդ պարանոց Ըիին, և կախեցին 'ի տախտակին բժիմս, և զանդակս և ունկունս պուտկաց, և զմետս աղուեսոց և շանց, և սաստակեալ կատուս, և զըռ զանզս անամնոց, և զպատառատուն ևս զիին վարտիս կանանց, և կապեցին պարանաւ. 'ի պարանոցն, և ետուն 'ի ձեռն պառաւ տաճ'կի միոյ, որ զնայր առաջին և քարշէր զպարանն. և ծառայք կանին ծեծին զամաք⁽⁶¹⁾) և վարոցօք՝ ձայնել բարձր, թէ՛ ով ով կաշառօք առնել դաստատան, պատիւն նորա այս է. և զոշէր բարձր ձայնիւ՝ տաճ'կերէն. հառ +էմ դէ-անդայ ուստան ալս-ը, զապահ ուս-դու-ը ուշ: Եւ Եպիսկոպոսն անուանեցին Պապիոն⁽⁶²⁾): Իսկ Ըէին այսպիս նախատանօք շրջեցուցին դահու-զըք և զարօք⁽⁶³⁾ շվշվելով: Եւ առին 'ի նմանէ զիշխանութիւն Ծխութեանն, և եկաց այնտիւ արհամարհեալ մինչ կենդանի եր թաահմաղ - կանն: Եւ զսպանումն նորա յիւրումտեղին ասաացուք: Իսկ Եպիսկոպոսն հրամանաւ Փիլիպպոս Ատթուզիկոսին՝ նստաւ Առաջնորդ Յուշւոյ սուրբ Ապրդսին, և ապա հրամարեալ զնաց յանապատն Յօհաննու վանից, և անդ մեռաւ, և մեք 'ի նմանէ ուսսաք ըդպատմութիւնս, թէպիտ և մեք ևս տեսաք աչօք:

(61) Մառակ, խարազան:

(62) Կործանող զգինպետ:

(63) Թմբկօք.

ԳՅԱՅԻ ՈՒԽԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԴԱՏԱՆԻ ԱՇԽԱՏԻ ԿԱՐԱՎԱՐԱԳ:

Եմն 'ի ժամանակին ընդ այնու (այնմիկ) հին Աշուակոպոսունք անուանիք և լաւք, պարկեշտք և սրբասէլք. որոց անուանիք էին, Փիլիսպոս, Յովհաննես, և Մխիթար: Եւ ես կամիմ զվարս նոցա ուրոյն ուրոյն պատմել: *Եախ զՓիլիսպոսին, որ էր 'ի Քանաքեռոյ, և 'ի մեծ ազգէ, որք կոչին *Եռուկղարենք, և ծննդեան անուն նորա ես *Եռուկղար: Եւ էր 'ի մանկութենէ՝ պարկեշտ, սրբարերան, պահացօղ, ծոմակաց, աղօթասէր, հրաժարեալ 'ի տղայական շարժմանց, միշտ զնայր 'ի դուռն վանիցն, և ունկն զնէր արեղայիցն, և լսէր զբանս հողեռոս՝ և 'ի միտ առնորյ: Ա անորոյ ծնողքն նորա տեսին զնա յայնպիսի ջանս, և ետուն զնա 'ի վանս զեզ ջն յուսումն. քանզի արագամիտ էր և բազմաջան, վասնորոյ փութով ուստա Աաղմաս և Ծարական, և ժամանակարգութիւնն անթերի: Եւ եկեալ 'ի վանքն Քանաքեռոյ Աաթուղիկոսն Եռաքեալ, և տեսեալ զպարկեշտ վարս նորա, և օրշնեաց զնա կուսակրօն քահանայ՝ Ճ.Օ. ամաց, և անուանեաց Փիլիսպոս, որ թարգմանի բան ջահից՝ և բերան ձեռաց: Այնպէս պարկեշտ և առաքինի վարուք պատարագէր գ.Ք.թիստոս: Եւ կացեալ 'ի վանքն, և ոչ ելեալ 'ի վանիցն արտաքս բնաւ, մինչեւ յայտնեցաւ երկրորդ Առսաւորին Առվակ վարդապեան Տաթեացի. և զնաց Փիլիսպոսըն, և յարեցաւ 'ի նա. և շրջէր ընդ նմա՝ ուր և զնայր. և ոչ մեկնեցաւ 'ի նմանէ, մինչեւ եղեւ Աաթուղիկոս՝ Առվակըն, և օրշնեաց զՓիլիսպոսն՝ Աշխակոպոս, և առաքեաց 'ի վանքն Ռջնուոյ՝ իշխել նմա. ետ 'ի նա և զ.Ք.անաքեռ՝ 'ի որատիւ նմա՝ ձեռագրով, զի մինչ կենդանի է նա՝ լիցի նմա, և յետ նորա լիցի Քանաքեռ՝ վանքին իւրոյ. և ահա կայ զիլն այն: Եւ զընացեալ 'ի վանքն, և ժողովեաց զմիարանս աւելի քան զ.Օ.:

Աւզգեաց նախ զկարգս հոգեորս, զսահմանս աղօթից, և ապա
զմարմնաւորս: Կորոգեաց և զնոտխաւալ տանիս Աշկեղեցւոյն,
շինեաց և փայտեայ դաւիթ՝ ի վիրաց արեմանեան դրան Աշկե-
ղեցւոյն, և զանտեսատունն, և զիսցերն. շինեաց և ձիթաղացս,
և ջրաղաց, զգոմն անտանց, և զախոռս ձիուց, և զփարախս
խաշանց: Ճաղովեաց զբազում անսասունս, և զիսաշնս, և ոյլ
արզիւնս բազումս: Աշլե էր աղօթամէր և երեւնն երբեմն
աներեւութանայը՝ և զնայը՝ ի պրակս մայրեաց, և աներկրաց
մտօք աղօթէր առ. Վասուած՝ օր մի և կամ երկու, և ապա
դառնայը՝ ի վանքն, զայս արարեալ էր սովորութիւն ինքեան
միշտ: Կոյնալէս և յաւուր մի ևս աներեւութացաւ, և կարծէին
թէ՝ այսօր զայ. և յետ երից աւուրց եկն, ունելով ընդ ին-
քեան բուրվառ և մաշտոց. և հարցին ցնա, թէ՝ ուսամի՞ զաս,
զե՞նչ են այդպիիկ: Խակ նա ոչ ասէր զաբարեալն իւր: Աշ էր
ի վանքն պարկեշտ արեղաց մի Ատեփաննոս անուն՝ ի Առ-
տանգնուոզօլսէ. նա ասաց թէ, եթէ բազում միանձունս թա-
ղեալ է զա, և զիտեմ՝ զի այժմ ևս զնացեալ է, վասն այդմ
իրաց. զի ահա ունի մաշտոցն և բուրվառն: Աշ ազաւեցին
բազում թախանձանօք՝ և ասէ, օսար ոմն մեռեալ է՝ ի զլուխ
վանացս, և զնացեալ թաղեցի զնա, և մեք կրկին տղաւեցաք՝
զի ասիցէ զանունն, և ցուցցէ զտեղին. և ասէ, անուն նորա՝
Ո՞նաս է, և յայս ինչ տեղի Աշ մեք զնացեալ զտաք և համ-
րութեցաք զզերեզման երանելի Շ'զնաւորին. և դարձաք՝ ի վան-
քըն, և ասացաք ցԵպիսկոպոսն, թէ՝ քանի՞ ամ էր նորա անդ-
լինելն: Ասէ Աշպիսկոպոսն, Զ ամ էր, և ես յամենայն ուրբա-
թի տանեի նմա Ի՞ հաց, և այն էր կերակուր նորա մինչև ՚ի
միւս ուրբաթն, և ձմեռն զայը մերձ վանացս յայսնիշ տեղի,
և ես տայի հաց նմա. և յամարայնի ես զնայի առ նա: Զայս
ևս ազաւեցին նմա. որ և պատմեաց զամենայն: Աշ այսուէս բա-
րի վարուք կացեալ՝ ի վանքն՝ բազում ամս, և յետոյ զնաց
առ. Փիլիպոս Կաթուզիկոսն, և խնդրեաց՝ ի նմանէ զՄովսէս

փիլիսոփիայ վարդապետն, որ էր 'ի Առաքեած գաւառէ' 'ի Տաճարարակ գեղջէ, և բերմալ կացոյց վնա Առաջնորդ վանիցն. և ինքն հրաժարեալ շրջէր 'ի վանորայս և յանապատս՝ յաղօթից պատճառէ: Եւ յետ Փիլիսոփոսին եղև Ապթուղիկոս Յակովը ջուղայեցի, և տարաւ զՓիլիսոփոս Ապիսկոպոսն 'ի սուրբ Խջմիածին. և կարդեաց խոստովանահայր 'ի վերայ ամենայն միաբանիցն: Եւ կացեալ 'ի սուրբ աթոռն ժամանակ ինչ, և որկարացու սակաւ ինչ, և ասաց տանել պինքն 'ի բուն վանքն իւր 'ի Բջնի, զի անդ մեռցի: Եւ հասեալ 'ի հայրենի զիւղն իւր 'ի Վրանապեռ, և ժողովեցան զեղականքն առ նա, և ոչ թողին զնալ 'ի Բջնի. և մնաց անդ 'ի Վրանապեռ. և յետ երկուց աւուրց վախճանեցաւ. և թաղեցին առ զբանն սուրբ Յակովը Խկեղեցւոյն: Եւ 'ի զիշերին յայնմիկ ուրացեալ այր մի թաղեռս անուն՝ զնայր 'ի ջրազայն, և իրրե եհաս յԽկեղեցին, առե, երթամ և համբուրեմ զգերեզման պարոն Տիրին: Եւ իրրե մերձ եղե, ետես Գ. Ճրադ վառեալ 'ի վերայ գերեզմանին, և կարծեաց զզալի ճրադ լինել. և իրրե հուպ եղե, երեք ճրադքն միացան և մտին 'ի լուսանցս եկեղեցւոյն: Խսկ ուրացօղն Ծաղեռս բազում եհեղ զարտասուս 'ի վերայ զերեզմանի Ապիսկոպոսին: Եւ զզացեալ զչար զործն, և զնացեալ 'ի Անան կղզին, և եղե միայնակեաց. և ապաշխարեալ և անդ մեռաւ: Ապիսկոպոսն Փիլիսոփոս կացեալ 'ի վերայ երկրի բարի վարուք՝ և փոխեցաւ առ Վրիստոս շնօրհօք նորա, որում փառք յաւիտեանս:

Գ. Լ. Ա. Խ. Խ.

Ա առ և պատրիարքին Յակովաննես Եպիսկոպոսի:

Եր սա 'ի զիւղաքաղաքն Կարբույ 'ի մեծ աղջէ, որք կոչին թամօքենք, և այժմ ասին՝ Աահակեանք: Եւ էր արուեստիւ՝

ներկարար, բայց ուստիկեշտ, և բարեսէր Եւ զոր ինչ տային. զվարձս արուեստի՝ առնոցը, և ոչ հայեց՝ թէ շատ և թէ քիչ փոքր: Այլեւ էր աղօթառեր, և խանութիւն իւր մերձ էր Եկեղեցւոյն, և ի ժամ աղօթիցն գնացր Առկեղեցին, և մինչ ՚ի աւարտն ոչ ելանէր յեկեղեցւոյն: Ես և սիրեր զԱրեցոյս և զմիայնակեացս. և թէ պատահէր ՚ի նոցանեւ տեսանել հարցանէր զուսանն և զըրպիսութիւնն տեղեացն, և զկարդս աղօթիցն, և ցանկացր վարուց նոցաւ Եւ ՚ի սոյն ժամանակս յայտնեցաւ Առվան վարդապետն Տաթեացի, և Աստուածային բանս ուստացանէր: Եւ զնացեալ Յովհաննէն առ նա, և ՚ի նմանէ զԱստուածաշունն բովանդակ ՚ի սկզբաննէն մինչեւ ՚ի վերջն, զհինքն և զնորն զամենայն, նաև զպատճութիւնս՝ զոր ինչ և ետես՝ ուսաւ բովանդակ անպակաս: Եւ ապա հրամանաւ վարդապետին զնաց յանապատն Ամայ, և եզեւ կուսակրօն արեգայ. և խստակրօն վարուք ճգներ միշտ: Այլ նաև որ սկզբնաշարն է՝ և թշնամի ճշմարտութեան, նախանձեցաւ ընդ վարս նորա, և կամեցաւ՝ զի ոչ միայն չհոգի նորա կորուսանել, այլ և զմարմինն նորա սպատրել: Ա ամսորոյ կերպարաննեցաւ ՚ի կերպ հրեշտակի, և երեւեցաւ նմա, և համարձակեցաւ առել, թէ ես հրեշտակ Տեառն եմ, և առաքեցայ յԱստուծոյ, զի խօսեցաց ընդ քեզ, և միմիթարեցից՝ և զիւրութիւնն արարից վասն առաւել ճգնութեան, և հանապազ եզեց ընդ քեզ. և ծանուցից զամենայն եղեալսն ՚ի վերայ երկրի՝ իսկզբանէ աշխարհի մինչեւ ցայժմ: Իսկ Յովհաննէս թէպէտ և դիտուն էր Աստուածային պատուիրանացն, սակայն անփորձ էր սասանայական հնարից: Ա ամսորոյ հաւատաց նմա, սակայն (զյոյս) իւր ոչ երարձ յԱստուծոյ: Եւ այսպէս եկաց նա ամս Եւ դացր զեն խօսէր ընդ նմա, և ծանոց նմա զամենայն անցեալսն: Եւ ինքն Յովհաննէս զոր ինչ զիտէր՝ ՚ի զրոց զիտէր. և զոր ոչն զիտէր՝ զեն ծանոց նմա. վասնայսորիկ ոչ որ էր խմաստուն քան զնաւ Օսպոյ ոչ խմացան միարանքն անապատին, բայց Իւուց ոմանց

ինքն ծանոցը, որ էր արեղայ մի Մելքիսէթ անուն՝ ի գեղջէն
 Աժանոյ, և Մուղտեսի մի՝ ի Անն քաղաքէ՝ Մկրտիչ անուն՝
 սոցա յայտնեաց Յովհաննեսն: Դեն խօսէր ընդ Յովհաննեսին,
 և Յովհաննեսն պատմէր Մելքիսէթին, և Մելքիսէթն զրեր
 ի թղթի: Եւ զայս ես էր ասացեալ զեն, թէ զու Լուսա-
 ւորչի ցեղէն ես՝ այսինքն՝ Սրչակունի: և յազգէն քո պարտ է
 լինիլ միոյն՝ Առթուղիկոս, և միոյն՝ թաղաւոր, և ապա լինել
 վերջ աշխարհի: Եւ զքեզ՝ ի վերայ ծովուս տանեմք իրրե ի
 վերայ ցամաքի՝ ակներեւ ամենեցուն: Եւ յետ բազում՝ Ժամա-
 նակի խմացան և միարանք անսպատին, և բազում՝ նախասա
 նոր և զանիւք ասեին, ընդէր զերեւումն զիւին՝ հրեշտակի հա-
 մարես, և նա պնդէր և հաստատէր զբանս զիւին, և քարո-
 զէր զգեն՝ Հրեշտակ Կատուծոյ, և ասաց, յաւուր համբարձ-
 մանն զալոց են բազում՝ հրեշտակք, զի տարցեն զիս ի վերայ
 ծովուս, զի դուր տեսանիցէք զգնալն իմ, և հաւատայք՝ որ
 հրեշտակ Կատուծոյ խօսի ընդ իսր Օսյոս իրրելուան միարանքն,
 յարեան ի վերայ նորա, և կալեալ եղին՝ ի խուց մի, և եղին
 զշղմայս յոտս նորա, և պնդեցին զդուռն ի վերայ նորա, և
 ոչ զոք թողուին մտանել առ նա. և կարգեցին միայնակեաց մի՝
 յամենայն տւուր տանել նմա կերտկուր՝ զնել առաջի նորա,
 և դառնայլ: Եւ այսպէս եկաց նա ի բանտին բազում՝ Ժամա-
 նակս, և յամենայն օր դայր զեն, և խօսէր ընդ նմա, և ծանու-
 ցանէր նմա զանձանօթ բանս: Եւ ի նուլ Լ ամի խօսակցելոյ
 զիւին ընդ Յովհաննեսին, և յաւուրս Յինանց պատեքին՝ ի
 վեցերրորդ շորաթու՝ է չորեքշարաթին եկեալ առ նա զեն՝ և
 ասէ, պատրաստեալ զքեզ, զի վաղն ի Ժաման՝ Համբարձման
 Տեառն՝ զամք, և խորտակեմք զղբունս, և զշղմայսդ կորզեմք
 յոտացդ, և հանեալ զքեզ աստի՛ և տանիսմք զքեզ՝ ի վերայ
 ծովուս, և զրոհ տամք միարանիցն ամենեցուն, զի եկեսցեն և
 տեսցեն զփառս քու Եւ մինչզեռ մտախոչ լինիւր Յովհաննեսն՝
 թէ զի՞նչ արասցէ, ահա եկն սպասաւոր նորա, և բերեալ նմա

կերակուր և աղջ: Եւ ահա ողորմութեամբն Աստուծոյ եղե
նմա ազգութիւն, և առեալ զի՞ աղջ կերակուրն, և խառնեաց
ընդ իրեարս, և ասէ ցդեն, եթէ ծշմարիտ հրեշտակ Աստուծոյ
ես դու, բաժանեաւ զերկու կերակուրն՝ի միմևանց, զի կատա-
րելապէս հաւատամ քեզ: Եւ ապա չարն այն սատանայ յա-
րուցեալ կանդնեցաւ, և ղձեռն՝ի ձեռին հարեալ ծափէր ծի-
ծաղելով՝ և ասէր, Հաբան, Հաբան (5), ես այն դեն եմ, որ զԱ-
գամ խարեցի և հանի ՚ի դրախտէն, մի՛թէ դու քան զնա լաւ
իցես, որ ոչ խարիս յինէն: Եւ զայս ասացեալ անյայտ եղեւ:
Իսկ Յովհաննեան ՚ի միտս եկեալ՝ ասէր, առաջ կենաց իմոց,
թէ զիանդ եղէ այսին և նշաւակ աշխարհի: Արդ որպիսի՞ աչօք
հայիմ ես յերեսս մարդոյ, կամ զիանդ խօսեցայց ընդ մար-
դոյ: Ա այ և եղուկ մոլորեալ զերելոյս Եւ դարձոյց զերեսս
իւր յարեելս, և ասէր լալով, որպէսզի մեծ են զործք քո Տէր.
զու փրկեցեր զանձն իմ ՚ի մահուանե, զու արարեր զաքանչե-
լիս ՚ի վերայ երկրի. և զայս ասելով՝ ողբայր և արտասուէր:
Եւ ապա յուշարերեալ ձայնէր առ եղբարն: Եւ լուեալ միա-
բանիցն զձայնն, և զնացեալ բայցն զգուռն, և տեսին այլա-
գունեալ զէմք նորա: Եւ նա անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց՝
առաթուր, և զուէր բարձրաձայն աղաղատկաւ. Մեղաց յերկինս
և առաջի ձեր: Եւ սկասուեաց զպատրանս չարին, և ոչ դա-
դարիւր ՚ի լորոյ: Եւ ապա հանին զշղթայն յոտացն, և բե-
րեալ ջուր ջերմ՝ և արկին ՚ի վերայ ոտացն և ձեռացն՝ և զըլ-
խոյն, և հարթեցին զշէրան: Եւ զի մերձ էր ժամն երեկոյին,
և զզեստաւորեցան միարանքն, և բերեալ շուրջառ. և արկին ՚ի
վերայ նորա, և վառեալ լապտերօք առաջի անկեալ զնային՝
ասելով. “Եզդիցն նոքա որպէս փոշի առաջի հողմոյ: Եզդիցն
ճանապարհք նոցա ՚ի խաւարո:, , Եւ այնպէս տարեալ մինչ ՚ի
զուռնն Եկեղեցւոյն, և ասեն, “բայց մեզ Տէր զդուռն ողորմու-

թեան՝ որ ողբալով կարդամք առ քեզ։ „Եւ այնպէս մուծին զնա յեկեղեցին։ և արարեալ Հակումն մինչև ցառաւոտն պաշտմամբ և սաղմոսիք, և 'ի վաղին՝ որ եր Համբարձումն Տեառըն, հրամայեցին ն ևս պատարագել դՔրիտոս։ և հաղորդեցան 'ի նմանե ամենեքեան։ Եւ եկաց 'ի յանապատն Լմայ այլ ևս ամս ինչ։ Եւ ապա Ամբողեկոսն Փիլիպոս և հան զնա անտի, և պահեր առ ինքն, զի դաս առաջե միարանիցն։ Զոյս մեք ուսաք 'ի զրոյն, զոր Ա՞ելքիսէթն զրեալ է զպատմութիւնն նորին յաճախ՝ աւելի քան զաղմոսն։ Եւ եր զիլքն այն 'ի զըր բատանն չովհաննու վանից, և աշակերտք նորին խնդրեցին, և առեալ տարան։ և ոչ զիտեմ՝ զի՞նը արարին։ Եւ զմնացեալ պատմութիւն սորա, զմօրուաց փետումն, և զմահ նորա 'ի ուղղոջ իւրօւմ պատմացուք։

ԳՅԱՅԻՆ ԽԵ.

Պատուածնեան և Հայութ Ա՞յս կայութեանն։

Եյս Աստուածահամոյ և Արիստոսասէր այլոս Միսիթար՝ եր 'ի զաւառէն Գեղամայ՝ Օմակ կոչեցեալ, 'ի զեղջն՝ որ ասի Դալու զարտաշ, բարեբաշտ քրիստոնէից զաւակ։ Խ մանկութենէ խրմէ, երկիւզած և բարեսէր, և միշտ խոկայր Աստուածայինն պատուիրանս, և ցանկայր հոգեւոր գործոց՝ լինել միոյնակեաց։ Քանզի ուսեալ եր եկեղեցական կարգաղբութիւնս, ընթերցեալ եր զաղմոս և զշարական, և եր կարի ստեղ կալ յաղօթս, վասնորոյ կամեր լինել արեղայ. և զի զեղջն ոչ զոյր քահանայ, վասնորոյ ստիպէնն զեղականիքն զծնօղս նորա՝ ամուսնացուցանել զնա, զի օրհնեցին զնա՝ քահանայ զեղջն թակեպէտ Միսիթարն ոչ կամեր զուղաւորիլ, սակայն սակս խրնդրոյ զեղականացն՝ և 'ի թախանձանաց ծնօղացն մուծին զնա 'ի կարգ աշխարհի ըստ կարգի օրինաց։ Եւ եկաց նա այնպէս

պատուական ամուսնութեամբ՝ ըստ Պօղոսի՝ սուրբ անկողնօք,
ող ջախտհութեամբ որպէս՝ տատրակի, արդարութեամբ՝ որպէս
զարագիլ, և մնացին նոքա որպէս զառինս՝ ի միասին՝ ժամա-
նակ թնջ, և ապա օրհնեցին զնա՝ քահանայ՝ կամօք և հաճու-
թեամբն վասուծոյ, և առներ քահանայութիւն անաշառու-
թեամբ, և ոչ հայեր յինչո և ՚ի տուրս ժաղովրդեան՝ ոչ աղա-
հելով և ոչ ձնշելով, և եկաց նա ամուսնութեամբ և քահա-
նայութեամբ սակաւ ինչ։ Եւ մեռաւ ամուսնուն, և մնաց Տէր
Մխիթարն միայնացեալ։ Եւ խորհեցաւ զնալ յանապատ ինչ։
Խոկ զեզականիքն արգելուին, և ոչ թողուին զնալ, վասնզի սի-
րեին զնա յաղագս բարի վարուցն և պարկեշտ զործոյն։ Յանզի
խրատեր և մխիթարեր զուղեղմն։ Աստեր և յանդիմաներ զըս-
տահակն։ Եւ էր ՚ի զիւղն այր մի զաւառապիտ այնմ նա-
հանզի, որ ասէին Վելիք Փարագան, և էր կարի ազահ և յա-
փշտակող, հպարտ և զոռող։ Եւ Երեցն Մխիթար խրատեր
զնա, զի ՚ի բաց կացցէ յայնմ անիրաւ զործոյն, և մի կեղեքել
և զրկել զուամիկն։ Խոկ Վելիքն Փարագան փոխանակ զզջա-
նալոյն և զառնալոյն ՚ի չար զործոյն՝ յաւել ևս ատել զպատ-
ռական երեցն զՄխիթար։ Ախոյր և մախար, և կամլր ձգել
զնա ՚ի փորձութիւն։ Եւ երեցն Վխիթար խնդրեր պատճառ
ելանել ՚ի զեղ ջէն, և զնալ յանապատ. և ոչ զտաներ։ Յա-
ւուր միում լծեալ զերիս լուծս եզանց՝ և ծեծեր զորայն ՚ի կա-
լին։ Եւ մելիքն առաքեաց առ նա ծառայս իւր՝ և ասէ, առներ
զեզինսդ քո, զի կասեցից զորայն իմ։ զի ահա իջանե, անձրե,
մի զուցէ, զի թրջեսցէ զկալն։ Վսէ երեցն, եթէ զքոյդ թրր-
ջէ, ապաքէն զիմն ևս թրջէ։ Եհա տեսանեմք՝ զի կասեմ, զի
զոնեայ ՚ի չորս բարձից չկալս. վասնորոյ ոչ տամ զեզինս։ Եւ
զնացեալ ծառայն՝ պատմեաց Տեառն իւրում։ Եւ զարձեալ
առաքեաց կրիին անզամ։ և ասէ, եթէ, քումդ կամու առաքես,
բարի է. և թէ ոչ, զիտեալ լի չարիս զայ ՚ի զըսիս քո։ Վսէ
երեցն Վխիթար, ևս խմով կամովս ոչ տաց. խոկ թէ բռնու-

թեամբ յափշտակէ, կարօղէ առնել զի թէ սպանցէ զիս, սպանանէ, զի մելիք է մեծ իշխանութեամբ։ Եւ դարձաւ ծառայն և պատմեաց զայս ևս։ Եւ ապա խրոխտացեալ Մելիքն՝ և բարկութեամբ լցեալ՝ որպէս որդեկոտոր արջ, և զոյնն սևացաւ որպէս զածուղ, և զայրացմամբ առաքէ զերեքեան կամնավար ծառայն՝ և ասէ, զնացեալ բերջիք զեզինսն այնպէս լծեալ կամնասայլին և կամնավարաւն՝ և ամենայն որ ինչ ՚ի վերայ նորա է։ Եւ զնացեալ ծառայքն արարին որպէս և հրամայեաց նոցաւ Խսկ անցիշաչարն Տէր Միիթար՝ ոչ ըմբուտացաւ, ոչ ընդդիմացաւ, և ոչ ասաց բան խստութեան։ Այլ որպէս Պօղոսն արար, և ասէր, ասացիք ցմելիքն, զոհանամ զքէն, զի ազատեցեր զիս ՚ի հոգոց աշխարհիս, ահա տուն իմ և զաւակ իմ քեզ լիցի փոխանակ բարեաց՝ զոր արարեր առ իս Եւ զայս ասացեալ՝ ոչ զնաց ՚ի տուն իւր, այլ զնաց ՚ի դուռն եկեղեցւոյն, համբուրեաց. և զղեցաւ փոկակօշիկն, և եղ դտակ ՚ի զլուխն, զքծափն և զիօշիկն պատեաց ՚ի փիլոնն, և անկաւ ի ճանապարհ, և ուզողեցաւ դէալ ՚ի Ական. և ոչ ետես զընալ նորա. և ոչ ոք իմացաւ ուր լինեն, և ոչ ոք պատահեցաւ չ ճանապարհին։ Եւ զնացեալ եհաս ՚ի նաւահանդիսան Ականայ. և ձայնեալ բերին զնաւն, և եմուտ յանապատն, և աղաշանօք պատուիրեաց միաբանից՝ զի մի յայտնեսցեն ուրեք վասըն իւրի Խսկ զեզականքն ասեն ցմելիքն, ոչ ասպաքէն դու կորուսեր զքահանայն մեր, վասնորոյ զարիւն նորա ՚ի քէն իրնդրեմբ։ Եւ մելիքն առեալ զոմանս ՚ի զեզականացն և զնացին ՚ի Ական. զմեղանս յանձն առեալ բազում աղաշանօք խնդրէին դառնալ. և ոչ լուաւ նոցաւ, այլ մնաց անդ, մշտամատոց և մաքուր մոռ աղօթէր առ Տէր։ Եւ կաթուզիկոսն Հայոց Փիլիպպոս լուաւ զբարի համբաւս նորա, և առաքեաց և բերին զնա ՚ի սուրբ

Այժունն է ջմիածին, և օրհնեաց զնա՝ Եպիսկոպոս, և գարձեալ
առաքեաց 'ի Անան հովուել զմիարանսն։ Եւ զնացեալ վարեաց
զվերակացութիւն անսպատին բարուոք՝ կենցաղավարութեամբ։
և փոխեցաւ յանմահական կեանսն, և թաղեցաւ անդէն 'ի
մերում թուականիս ՈւՃ՛ՃԱ և 'ի փառս Քրիստոսի Աստո-
ծոյ։

1662

Գ.Լ.ՈՒԽԵ Խ.Օ.

Ա առան առէնքաց Զ աքար կուլոյին։

Էսորժամ կոտորեաց Թռահմազ - զուլի խանն զՄ.ուրսան
'ի գաշտին Վ ժանայ, ըմբանեաց և զոմանս 'ի մեծամեծացն,
և կնդեալ առաքեաց առ մեծ Ը ահ - Նքասն. և նա հրամա-
յեաց մերկացուցանել և արկանել առաջի առիւծուցն՝ արս
երիս՝ 'ի զբօսանս զօրաց իւրոց։ Եւ ապա հարցեալ վսան Զ ա-
ֆար փաշային՝ թէ ո՞ւր իցէ գէշ նորա, և ասացին՝ թէ 'ի թռաւ-
րէղ է։ Եւ առաքեաց հանել և բերել առ ինքն. և մանրեալ
զնա կացնաւ, խառնեաց ընդ դարւոյ. և աղացեալ արար ալիւր,
և եփեաց հաց, և մանրեալ էարկ առաջի շանց. և կերին։ Եւ
այսպէս ունէր նախանձ ընդ ազդին Օսմանցւոց։

Գ.Լ.ՈՒԽԵ Խ.Հ.

Գ Ն Ա Ն Ը Օ Ա Խ Ա Յ Ե Ա Շ Ա Ր Ա Մ Ա Խ Ե Ա Ն ։

Դարձան յԱրզըումայ պարոնայքն կարուց՝ որք ասէին Ասու
և Ա Յ Լ ա պ պ պ ք⁽⁶⁴⁾), և մեղաղիր լինեին Ը խիճան - փաշային, թէ
ընդէլո ոչ պատերազմեցար ընդ թռահմազ - զուլի խանին՝ յոր-

(64) Աղապահ և ձափապահ։

ժամ եկն նա 'ի սահմանս երկրին քու Ասէ Ը խիճանն, դուք
չելիք աստ, և զօրքն իմ ցիր և ցան էին, ևս որով ընդդիմանայի
զօրայն Պարսից, արդ այժմ պատրաստ լերուք՝ զի մեք ևս զը-
նասցուք 'ի վերայ նոցաւ Վանզի Ամբրգունայ խանն մեռեալ
էր, և որդի նորա թաւհմազ - զուլի խանն դնացեալ էր 'ի Ա ք-
րաց աշխարհն 'ի վերայ թաւմբազին: Ա ասնորոյ ժողովեցան
Օսմանցիք՝ և գնացին 'ի գաւառն Ը իրակոյ և Նորայ, և 'ի
հիւսիսոյ կողմանն: Արայ լերինն գնացին 'ի գաւառն Կոտէից.
և աւար առին զոր ինչ գտին, և եկին Ճշղուարդ զիւղ. և
պատեցին զամբոց նորա, և զեղականքն պատերազմեցան ընդ
նոսա քարամբ: Խսկ Օսմանցիքն տեսեցին մինչեւ սպառել քա-
րանց նոցաւ Եւ ասկա զիւրաւ առին զամբոցն, և կոտորեցին 'ի
նոցանէ արս Լ, և զերեցին զորս գտին 'ի նմա՝ մարդ և անա-
սուն. ըմբռնեցին ևս այր մի Օստառուր անուն, և կապեցին
զձեռս յետս, և ձաղէին գնա ցուցանել զինչ. քանզի աւագ էր
զեղջն: Եւ նա ցանցեալ և խղեաց զկապն, և յերթօքն սն-
կաւ 'ի տուն մի, և հնարինք ելեալ յառաստազս, և ոտամբ և
ձեռօք ըմբռնեալ զզերանն, և եկաց 'ի կախ. և Օսմանցիքն մը-
տին 'ի տունն, որոնեցին և ոչ գտին. ելին արտաքս և գնացին
փախստեայ. քանզի լուան՝ թէ թաւհմազ խանն դարձեալ է
'ի Ա քրաց աշխարհէն և զայ: Եւ շտապեալ Օսմանցիքն՝ և
կամբծօքն Աշտարակու գնացին 'ի վերայ թաւնոյ յաշխարհն
իւրեանց 'ի Պարս:

Գ. Լ. Ա. Խ. Խ. Խ.

Գ. Ն. Ա. Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ.


Եկն ասկա խանն յաշխարհէն Ա քրաց, և լուաւ զվնասն՝ զոր
արարին Օսմանցիքն ընդ Արարատ. և փղձկեալ որտիւ յոդւոց
հանէր, և մռնչայր որպէս առիւծ: Եւ ասկա հրամայեաց զօրա-

կանս առնել՝ ՚ի Հայոց, սյսինքն՝ Ռուսանով. և ժողովեցան աւելի քան զԱ, յԱշխարդայ և ՚ի Կանաքեռոյ, յԵրեմայ, է Երազագաւթայ, յԱշխածնայ, յՕշականոյ, յԵշտարակայ, է Կարբւոյ, և է Յովհաննուվանից, արք ընտիրք և կորովիք ՚ի զործս Ռուսանով¹⁵. զնոսա և զօրս իւրառեալ՝ ելեալ զնացեալ ՚ի հիւսիսոյ կողմն Մրագածոյ, և զտեղի առեալ անդ, և կարգեաց զլուխ զօրացն զԱ՛ռւրատ թէկն, զոր յառաջն զրեցաք. և ասաց զնալ պատահէլ զօրացն. Օսմանցւոց. որ ժողովեալ էին ՚ի Շիրակ գաւառ՝ առ ափին Վրիհա գետոյ, ոմանք ննջէին, ոմանք լողային, ոմանք գարմանեին զերիվարսն. և այսպէս կային յանհոգս: Խոկ Ա՛ռւրատ թէկն ելեալ ՚ի զլուխ ըլքի միոյ, և ձայնեաց առ. Օսմանցինս: Խոկ Օսմանցիքն շտապեալ յարեան վաղվազակի և հեծան ՚ի ձի, և ՚ի միւս կողմանէ ըլքին անկան ՚ի վերաց զօրացն Պարսից. և տեսեալ զնոսա Պարսիցն՝ փախուստ առեալ զնացն դէպ ՚ի խանն: Խոկ խանն նատեալ ՚ի տեղի ինչ երկոտասան արամբ ըմպէր զինի, և թուանկըքիքն Հայոց շուրջ զնովաւ. և լուեալ զիախուստն Ա՛ռւրատ թէկին՝ յարեան վաղվազակի. և զզեցեալ էր զզուշն երկաթեայ՝ որ է չէ չէ, և զսազաւարան եղեալ ՚ի զլուխն, և զկոնապանակն ՚ի թեն. և այնպէս ամբացուցեալ զինքն ամենայն պատրաստութեամբ. նոյնպէս և ուներ զզործի պատերազմին՝ զկապարճն լի նետիք, և զթուրն՝ որ ասէին զէի չպար, և լախոն, և զնիզակն, և արծաթեայ վահանն զթիկամբ, այսպէս և ագուցեալ էր զերիվարն՝ որ ասէին զառի չհէք, զկշտապանակն, զպտապանակն, և ոչ զոյր տեղի՝ որ ոչ էր ծածկեալ. և այսպէս զինեալ և մղեաց ընդ դէմ թշնամեացն: Խու Ա՛ռւրատ թէկն փախստեամբ եհաս առ խանն. խոկ խանն բարկացեալ նմա՝ և ասէ, ով սեաւ էշ, զեռ. ևս ունիս սիրտ առ ազզն քո. և եհար ՚ի զլուխ նորա նիզակաւն՝ և ասէ, գարձիք՝ զե զնատիք. և զնացեալ պատահէ-

ցան զօրացն Օսմանցւոց: Եւ էր զլուխ զօրացն Օսմանցւոց ոմն՝ զոր ասելին՝ Վաղարի (զուցէ Վաղ - Վար). որ եկեալ յառաջ՝ ասէ, խանին՝ խան է պիտոյ, պարոնին՝ պարոն, ծառալին՝ ծառայ. արդ ովլ իցէ խանն, եկեացէ՝ ի մօտ՝ զի տեսցուք: Խոկ խանն առաջ կացեալ՝ և ասէ, ես եմ խանն, եթէ ունիս ինչ ասել՝ ասա: Խոկ Վաղարին հայեցեալ ետես զեանն՝ զի ոչ գոյր տեղի բնւ բաց, բայց միայն բերանն, և գեղարին՝ որ ունէր ի ձեռին՝ եհար զբերան խանին, և զվերին շուրթն պատառեաց: Եւ խանն մորակեաց զերիվարն, և հանեալ Հինդութեալ թուրքն՝ և երեր ի վերայ ձախ ուսոյն՝ խոտորնակի եհատ մինչեւ ՚է ստիսնն, և եհատ աջ թեն, և զլուխն՝ ՚է մի կողմն կախ մնաց, և ձախ թեն ՚է միւս կողմն: Իրրե տեսին Օսմանցիքն՝ թէ անկաւ առաջնորդն իւրեանց, գարձան՝ ի փախուստ: Եւ Պարսիկք հնչեցին զիոզն պատերազմի. և երիվարին Օսմանցւոց անընտելք էին ձայնի փողոցն, խրանեցան և փախեան. և Պարսիկքն վարեցին զնոսա մինչեւ ՚ի դուռն կարուց: և եմուտ արեգակն, և զզիշերն օթեցան ՚ի դուռն կարուց: Եւ ՚է վաղիւն սփռեցան յերկիրն, զերեցին զոր դտին, և դարձան յԵրեան՝ ընդ ինքեանս ունելով բազում Օսմանցիս: Զայս պատմութիւնս ուսաք ՚է Վարիպ անուն Առողջեացոյ Խջմիածնեցւոյ յանապատն Յովշաննու վանից. զի ասէր, ես ես էի Շահան+չէ⁽⁶⁶⁾). և առաջի պատմութիւնն լուսոյ ՚է Յակովը անուն միայնակեցէ՝ յանապատն Ապամոսավանէց. և ինքն էր յԱղեարդ գեղջէ, ևս ինքն էր անկեալ ՚ի զերութիւն Օսմանցւոց:

E 42.7

584







Գ. Ա. Գ. Ա. Բ Ե Ա. Յ

Ա Ա Ր Կ Ա Խ Ա Գ Ի

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Տ Օ Ր Ե Ր Կ Ի Ր Ո Ր Դ

Ա-Ց-1870


Ի ՏՊԵՐԵԼԻ ԱՐԲՈՅ ԿԱԹՈՎԻԿԻ Է ՔՄԻԱՅՆ
Ի Ա Ա Ա Ր Ը Ա Պ Ե Տ

ՀՐԱՄԱՆԻ

Յ. Յ. ԳԵՐԵԳԻՆ Պ.

Այս հրամանը էլ Սրբազնութեան կատարութեան և պահպան առօս,

Վայր
584



Յ Ա Ն Կ

ՆՐԿՄԱԲԻ ՀԵՏՈՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ.

- Ա. Առաջարան և ծանոցութեան:
- Բ. Գան առանուտէր Ամիբճանին:
- Գ. Գայն Մուրաս թագաւորին յերեան:
- Դ. Սատակում Մուրաս լէ՛ին
- Ե. Էւպում կարրեցոց:
- Զ. Գայն Շահն Յերեան:
- Լ. Պատմութիւն կրապացաւ տան:
- Ը. Սատակում Շխ. Խոյամին:
- Թ. Առու մե Մարտաս բնըցին:
- Ժ. Գայն Թամբարին յերեան:
- Ժ. Ըմբռնու մե Ելիսադ խանին:
- Ժ. Փախուս Թամբարացն:
- Ժ. Քաջութիւն առն միզ:
- Ժ. Միւս քաջութիւն միւս առն աղբ:
- Ժ. Նահատակութիւն Բց ման կանց:
- Ժ. Նահատակութիւն Պ.զար կը նոց:
- Ժ. Ա.ան զալց երիվարին:
- Ժ. Հաշուութիւն Բուց թագաւորաց:
- Ժ. Աբանչեղիս Փիլիսպոս Կամուռ զիկոսի:
- Ի. Նահատակութիւն Գալուստ Երիցուն:
- Ի. Հակոսակութիւն է Ֆրուշներին:

- Խ. Թագաւորութիւն փորբ Շահ-Երասմին:
- Ե. Շինում եկեղեցւոյն Արտա-ւիդոյ:
- Ե. Գալուստ Խորով խանին:
- Ե. Սատակում Պ.ազայ զուուա-թի:
- Ե. Մահ և սպանում Թահմաղ-ղովի խանին:
- Ե. Վ.ան Խաւարման արեգական:
- Ե. Վ.ան Մահմատ խանին և չոր վարուցն:
- Ե. Մնացարդ բանիցն Յավշան-նէս Եպիսկոպոսին:
- Ե. Վ.ան սրբագրատա առն:
- Ե. Պատմութիւն միւս վիշապին:
- Ե. Վ.ան օձահար առն:
- Ե. Վ.ան զիւին կերպարաննեալ կին (կնոջ):
- Ե. Ելիսանութիւն Նահավ խա-նին:
- Ե. Վ.ան Յակովը Կաթուղիկո-սին:
- Ե. Վ.ան իջանելոյ լուսցն երկնից:
- Ե. Սպանում Յավշաննէս վար-գապեսին:
- Ե. Վ.ան չարին Օնոմիրիանուի:
- Ե. Իշխանութիւն Արտա խանին:
- Խ. Գնալն Ա.մժու զիկոսին իւ

Աստամպօյ :

Խը. Գարձ Կամուղիկոսին յէջ-
միածին և լինել ի գիւղահով;

Խը. Փախուստ Կամուղիկոսին և
կորուստ խանին:

Խդ. Թագաւորութիւն Շահ Սու-
լէյխանին:

Խդ. Կորուստ Օնոբրիանոսին:

ԽԵ. Իշխանութիւն Միւս+(Մուսա)
խանին:

ԽԶ. Մահ Տեսան Յակոբայ:

ԽԵ. Պատմութիւն յասն Վրաց:

ԽԸ. Պատերազմ Երկուց արանց:

ԽԹ. Ապստամբութիւն Գորկուն:

Խ. Իշխանութիւն Զալին:

ԽԱ. Վասն աչազին շարժին Երե-
ւանց:

ԽԲ. Գալն Եղիազար Կամուղիկո-
սին:

ԽԳ. Վասն Նշանացն Երկնից:

ԽԴ. Վասն միւս Նշանին Երկնից:

ՌԵ. Պատերազմ Օսմանցւոց լնդ
Քռանգաց:

ՌԶ. Պատուհան Զմիւռնոց:

ՌԵ. Անզգամն թիւն Հրեփցն:

ՌԸ. Սպանում տանուակը Ըւազին:

ՌԹ. Խահառակութիւն Բազրասար
պատանցն:

Կ. Խահառակութիւն Շնորհաւո-
րին:

ԿԱ. Խահառակութիւն Պատուա-
կան կնոջ :

ԿԲ. Խահառակութիւն Կառա-
րեալ կուրին:

ԿԳ. Պատմութիւն պարոն Այզա-
զին և տան նորսա:

ԿԴ. Իշխանքն յետ Զալին:

ԿԵ. Հարշարանք և մահ Ստեփան-
նոս վարդապետին:

ԿԶ. Քաշանք աղջկանցն:

ԿԵ. Հարց և պատահանի ԺԷ:

ԿԸ. Մանոցում մէջ Աշխառակաւ:

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Օքոր մինչև ասս զրեցաք զպատմութիւնս թաղաւորացն պարսից՝ որք կոչեն շխ-օղի, Առեալ սկիզբն՝ ի ջնան-շահ թագաւորէն ՚ի թուին ու մինչ ՚ի թագաւորն շահ-սափի և ՚ի թիւն ու և յէ քեզ ծանուցի թէ՛ սուտ թէ՛ իրաւ՝ զոր լուեալ էի ՚ի համբաւոյ: Եյսուհետեւ զրեցից զայն՝ զոր աւեսի աշօք և լուսոյ ունկամի ՚ի ներկայումն ժամանակի ՚ի կատարեալ արանց՝ Քաղ բանիւ յուշ արարից ապագայիցդ: Կ զայն մուրատ թաղաւորին օամանցւոց ՚ի յարարատ և առնուլն երեսն քաղաք. Ապա զայն ասթի թաղաւորին պարսից և առնուլն յիսո զնոյն երեսն Յիշեցուցից նաև զտառապանը մեր՝ զոր կրեցաք, զի դուք ՚ի միտ առեալ զդուշանայք, և զձերն աւեսանելով մեզ սղործիք, և լինիք ողջ յամենայնին:

Գ-Լ-Ա-Խ-Խ-Ի-Ր.

Ա ռան պահես-ուէր Ա միշտանին:

Եյր ոմն Եմիլման անուն, ոյր հպարտ և զոռող, ինքնահաւան և ծաղք առնող. քանզի ով ոք զնեին տանուակէր զեղջն իւրեանց Քանաքեռոյ՝ նա այպաներ և ծաղք առներ՝ առելով, առերող և քակող զեղջու Ա ամսորոյ միաբանեցան ամենայն գեղականքն՝ և ասեն, եկայք դիցուք զատ տանուակէր, թերեւս սանձեցուք զՀպարտութիւն դորաւ Եւ արարին այնպէս. և եղին զնա տանուակէր Քանաքեռոյ: Եւ Ակլատիչ ոմն ոյր ճարտար և ճռումարան, զիտող լեզուացն պարսից, ընթերցեալ էր և զաղմոսն՝ և ՚ի մասի ուներ, զնա կարգեցին նո-

տար նմա, զի զոր ինչ առեւտուր լիցի վասն զեղջն՝ ձևամբ
 Մկրտչն եղիցի, և զրեսցէ զամենայն, զի մի ինչ կորիցէ ընդ
 վայրու Եւ կացին այնպէս միարան՝ տանուտերն Սմիրնան և
 նօտարն Մկրտիչ՝ ամս զ։ և զոր ինչ ծախիւր՝ Մկրտիչն զը-
 րեր թռւականաւն և աւուրբը ամսոյն Եւ եղե՛ զի յաւուր
 միում ժողովեալ Են մեծամեծքն զեղջն, և խօսեն սակա
 շահու իւրեանց Եւ Մկրտիչն ևս խօսեցաւ բան մի վասն օդ-
 ափի զեղջն։ Խոկ տանուտերն ըստ հապարտութեան սրտին և
 ըստ զողովութեան բարուցն՝ ցատուցեալ՝ ի վերաց Մկրտիչն
 և ասէր, քեզ ո՞ւ ետ հրաման խօսել՝ ի հրապարակի։ Խոէ Մը-
 կրտիչն, զի՞նչ վնաս եղեւ խօսեն իմ, զի դու ցամսուս Եւ Ս-
 միրնանն կառկատեաց զի՞նկն ՚ի վերաց նորա՝ և հայհոյեաց
 զկին նորս՝ բող ասելով նմա Խոէ Մկրտիչն ոչինչ խօսեցաւ,
 այլ ելեալ լսելուցն և գնաց Եւին և բազումք ընդ նմին Եւ
 Մկրտիչն գնաց առ տաղը քէնւոյն իւրոյ Ազամ անուն, որ եր
 այր սրտառական և խաղաղարար, և զանգատեաց նմա ասեն
 բող կնոջ նորա։ Եւ Ազամն խրատ ետ նմա համբերել առուրս
 երկուս, զի զդանայ և կոչէ զքեզ։ Եւ նա համբերեաց Պ օր-
 իսկ Սմիրնանն ոչ կոչեաց և ոչ խօսեցաւ ընդ նմա խաղաղու-
 թեամբ, այլ առաքեաց առ նա բարկութեամբ և սպառնալիօք՝
 և ասէ, առաքեալ առ իս զթռւղթմն առեւարի։ Խոէ Մկրտիչն
 յետս զարձոյց զնոսա անարգանօք, և ասէր, ես նորա հրամա-
 նաւն ոչ եմ զրեալ, այլ հրամանաւ աւագաց գեղջու Զայս
 ասաց Մկրտիչն և ելեալ գնաց առ Ազամն. և Ազամն ասաց,
 այժմ դու զիտես, արա զոր ինչ զիտես Եւ նա գնաց առ հա-
 մախուհախեր, որք Են Պ արք աւագէ, անուն միոյն՝ Բարսեղ՝
 որ ասէին Բիստող, Երկրբորդն՝ Արզիս՝ որ ասէին Մածակ,
 երրորդն՝ Պաղար՝ որ ասէին Փալանտուղ. և միարանեցան ընդ
 այլ աւագնն, և գնացեալ ժողովեցան ՚ի մի տեղի, և առաքեալ
 կոչեցին և զտանուտերն, և ասեն ցնա, մեք ժողովեալ եմք վա-
 սըն քո, և դու տուր զհամար տանուտերութեան քո։ Եւ նա

լուեալ էր և ոչ խօսեր, և ասացին ցՄկրտիչն, ընթերցիր զդիր
 առեւտրի ձեր: Եւ նա ընթերցաւ զամենայն՝ զոր ինչ տուեալ
 էին ՚ի ձեռն տանուտեառն՝ մինչև ձու մի՝ զոր զրեալ էր. և
 կուտեցին ՚ի վերաց նորա Գ ամաց հարկն ՅԱՅ թուման, և
 խնդրեին զՀամար: Խակ Ամիրճանն շարժեալ ՚ի զիւէ՝ սկսու-
 հայհոյել զնոսա, և ասէ, դուք զի՞նչ շուն իցէք՝ որ ես ձե-
 րով բանիւ համարս տայցեմ, այլ զնացէք և բերէք ՚ի խանեն
 սատիկան, զի առաջի նորա տաց համարս, և ազա դարձաւ առ
 Մկրտիչն՝ և բազում զօղանջեր ասելով, զայդ ՅԱՅ թումանդ՝
 զոր տուեալ ես ինձ, քո կնոջ Ա արդյո զինն: Եւ ապա ցասեան
 և գեղականքն, և առաքեցին զնոյն Մկրտիչն առ խանն: Եւ
 նա զնացեալ խօսեցաւ ընդ խանենին բերան առ բերան. քանզի
 վաղու ծանօթ էր նմա վասն Պարսկաց լեզու խօսելոյն: Եւ
 առեալ սատիկան մի՝ Գուլ - Նազար անուն՝ բուն Պարսիկ, որ
 ոչ զիտէր լեզու տաճկաց, և առեալ պատուէր ՚ի խանեն առ-
 նուլ զՀամար տանուտերութեան, և թէ՛ մնացէ ինչ ՚ի վերաց,
 կախեցես զնա՝ և բածեծ արացես, և առեալ տացես գեղա-
 կանացն: Եւ եկեալ Գուլ - Նազարն, և կուեաց զտանուտերն
 յատեան հրապարակին՝ և ասաց, տուք զՀամար ՅԱՅ թումա-
 նին: Խակ նա զոր ինչ ասաց, նորա համեցան և ընկալան: Եւ
 մնաց Կ թուման, և ոչ կարաց զիտել՝ թէ՛ զի՞նչ է արա-
 րեալ. և ասէ Գուլ - Նազարն, արդ հատո՛ զԱ թումանն. և
 նա լուեցաւ. և ազա բերեալ կունդ եղ ՚ի պարանոցն՝ և կա-
 խեաց ՚ի բարձր որմէ, և Ը կողմամբ հարկանեին՝ ասելով,
 տուք զԱ թումանն: Խակ ազգայինք նորա անկան յաղերս առ
 գեղականսն՝ շնորհել մասն ինչ. և նորա շնորհեցին զԱ
 թուման, և զԱ պահանջեին, և կախեալ հարկանեին սաս-
 տիկ յոյժ: Խակ նա անձարացեալ՝ ասէ, ունիմ ես Գ որդիս,
 և զուստր մի գեղեցիկ, զնոսա առցէ խանն՝ և ազատեցէ զիտ
 Եւ Գուլ - Նազարն իջոյց զնա ՚ի կախաղանեին, և ետ ՚ի պահ-
 եղոր նորա Առաքեալ երիցու՝ և ասէ, պահեա՛ զզա, զի մի

փախիցէ՝ մինչև զնացից ես առ խանու Եւ երթեալ ծանոյց
խանին դրան Ամբոձանին Եւ խանն բարկացեալ՝ ասէ, միթէ
զի՞մ դրամն իցէ վասնեալ, զի ես զօրդիս և զղատերս նորա
տոից: Արդ տացէ քանաքեացոց՝ և զերծցի. և դու արա որ-
պէս անացի: Եւ նորա զնացեալ կախեաց զնա, և աստ անս
դու զշարքանս նորա, զի այնքան հարին զոտմն՝ մինչ ձ ե-
զնդունքն թափեցան, և շշուկն բարձրացաւ քան զծունին. և
յաւուրս Զ՝ այնպէս ձաղեին զնա սաստիկ: Եւ Էր յաւուրս
Զատակի Յմնանցն՝ ՚ի շորբորդում շարաթու. և յաւուրն եօթ-
ներբորդի նորուն պատժի ՚ի միջօրէ եղեւ ամոզ ՚ի ներքոյ արե-
գականն, և միժացաւ երկիր, և եղեւ որպէս զիշեր, և յամոյն
զոռումն, և ճայթմունք, և փայլատակմունք, և կայծակունք, և
անձրեւ և կարկուտ մեծամեծ ՚ի չափ ձուոյ հաւու: Եւ ամենե-
քեան՝ որք էին անգ՝ վախեան. և Ամբոձանն մնաց ՚ի կախա-
ղանին ՚ի ներքոյ կարկախն: Եւ ապա եկեալ կին մի խանովթան
անուն, որ Էր հօրեզքօր զուսոր Ակրատին, եղոյծ զկապս ոտին,
և եղ առաջն նորա զկօշեկն, և ասէ, երթ և վախիր: Եւ նա զը-
նացեալ ՚ի ջրաման տեղին՝ որ կոչի Ալունք, և անդ պատա-
հեալ այր մի Առաքեալ անուն, և ջարդեաց զկունողն, և զնաց
վախստեամբ մինչեւ ՅԵղանե, և զերծաւ:

Գ. Լ. Ա. Խ. Գ.

Գառն Առաջապահ Բահամազը յէշեւան:

Օպատմութիւնս Ամբոձանին նախ սկիզբն վասն այն եղաք՝
զի զզալն Խոնթկարին յէրեան՝ պատճառաւ նորա լինի:
Քանզի ՚ի թուին ԱԶԴՎին եկին վաճառականք յաշխարհէն
Յնունց, և ասացին խանին՝ թէ Օսմանցիքն զօրաժողովք են
եղեալ, ոմանք ասեն՝ երթամբք ՚ի Բաղդատ, ոմանք՝ յէրեան,
և ոմանք յիւով. բայց զՃշմարիան մեք ոչ խմացաք: Խակ խանն

ամէ, ցաւադանին, տեսէք դայը մի՛ որ առաքեսցուք լրտեստ
յաշխարհ՛ն Օսմանցւոց։ Եւ ասեն, թէ՛ տանուտեր Ամիրճանն
կարի հմուտ և տեղեակ է այնմ աշխարհին։ Եւ խանն ասաց
Վահագեռցւոց, զի երթեալ բերցեն զնա։ Եւ նորա առաքե-
ցին նմա թուղթ՝ և բերին, և առեալ տարին առ խանն։ Եւ
խանն ետ նմա թոշակ ճանապարհի՝ և ձի՛ և ամէ, զնա ի Ատամ-
պօլ, և խմացիր՝ թէ՛ ուր կամի գնալ Խոնթկարին, և բե՛ր մեզ
սպատգամու։ Եւ ել Ամիրճանն յերեսաց խանին, և ուղղեցաւ՝ ի
զնալ։ Խակ Առուրատ բեկն գաղտ ՚ի խանն տռեալ զնա և տա-
րաւ ՚ի կայանս իւր. և ետ ՚ի նա ՚ի թուղթ կնքեալ, և երես
թղթոյն զրեալ՝ մէն՝ յանուն խոնթկարին, մին, Ա ազրին⁽¹⁾), մին՝
Վաղասկարին⁽²⁾), մին՝ մեծ Ա վանտուն⁽³⁾), և զրեալեր ՚ի նոսա.
թէ ես լուայ դշարժին ձեր, զի կամիք երթալ ՚ի պատերազմ։
մի՛ այլ ուրեք զնայք, այլ եկայք յԱշրեան։ զի ՚ի ձեռիս խմում
է, յորում աւուր զուք աստ մտանէք, ես ՚է նոյն օր ՚ի ձեռս
ձեր ասց զԵրեան։ Եւ եկալ Ամիրճանն յԱշրեանց ՚ի զեկ-
տեմբերի մուտն, և ՚ի մարտի Ի՛ւ եմուտ ՚ի Բիւզանդիա։ յո-
րում աւուր հանդերձեալ էին նոքա զնալ ՚ի Ելովայ վերայ։
Եւ յորժամետ զթուղթն, յայնժամ հրամայեցին մունետկաց՝
ազազակել բարձր, թէ ամենայն ոք՝ որ լուիցէ զձայնս մըր,
պատրաստեցէ զմնիքն յետ երից աւուրց երթալ յԱշրեան։ Եւ
այսպիս բուռն հրամանու կազմեցին զնքեանս։ և ՚ի Եւ
մարտի ելին ՚ի Կոստանդնու պօլսէ, և յշոստոփ օ՞ն հասին
յաշխարհ՛ն Արարատեան, և Ամիրճանն ընդ նոսա. և էին ՚ի
Շիրակ գաւառի Ասէ, Ամիրճան, և առաջ զնացեալ՝ տաց
աւետիք խանին վասն զալւտեան ձեր. և եկեալ եմուտ ՚ի բերդն.
և զնացեալ առ խանն, և խանն հրամայեաց տալ նմա զինի.

(1) Կախարապագետ, մեծ եպարքու, փախարքայ։

(2) Հաշուրեց, ուշէ ասկէր, իամ ուշուրեց մեծ սպարապետ, սպայա-
պետ, ընդհանուր սպարապետ։

(3) Եղիշեով՝ աւր, իշխան, պիտ, վարդապետ։

և ապա եհարց, զի՞նչ պատղամ ունիս Եւասէ նա ի ոկիզըն խօսիցն, ահա Խոնթկարն ըերեալ հասուցի ՚ի Շիրակի Ասէ Մուրատ րէկին, մեք զքեզ առաքեցաք պատղամ ըերել, և դու զնացեալ և Խոնթկարն ըերիբ: Ասէ Վմիրճանն, ոչ ես ըերի, այլ չորեքին թուղթքն քո երեր: Եհարց խանն, որպիսի թուղթք եին: Եւ նա պատմեաց զամենացն մի ըստ միոջէ: Խոկ խանն բարկացեալ եհար ոստամբ զզլուխ Մուրատ րէկին՝ և ասէ, ով սեաւ էշ, ես ոչ զիտէի՛ զի շնութիւն քո զործեր շարութիւն. և զայս ասացեալ ելեալ զնաց: Խոկ Մուրատ րէկին ելեալ ինքնին եսպան զՎմիրճանն, և էարի ՚ի հոր աղբին: Եւ յետ երից աւուրց եկին խոնթկարն, և պատեաց զքերդն. և յետ Ու աւուրց էառ զքերդն՝ և աիրեաց. և ասաց ցՊարսիկսն, ով ոք զմեզ սիրէ մնացէ ասուն, և ով ոք ոչ կամիցի մնալ, զնացէ ուր և կամի: Եւ Ու պարսիկ+ ելին՝ զի գնացեն՝ ՚ի Գեանձայ. և զնացին մինչ ՚ի անդաստանն Քանաքեռոյ՝ ՚ի անդին՝ որ կոչի Վւանակոս, և աւեսին անդ իջեալք զօրք Օսմանցւոց, անկան ՚ի վերայ նոցա՝ և կոսորեցին, և աւար ասին զինչսն, մինչ խմանալ թաղաւորին և առաքել զօրս՝ ՚ի վերայ նոցա, նորա փախուցեալ զնացին զէալ ՚ի Գեանձայ: Խոկ Խոնթկարն եղ ՚ի բերդին Երեւանայ զքեռայցին իւր զՄուրթուզայ փաշոյն Եւ Ճան Ու արամբ, և ինքն զնաց ՚ի օճաւրէզ: Եւ եկն թուղթ ՚ի մօրէն, թէ Լատինք առին զաթոռ քո. և ելեալ ՚ի օճաւրիզ ՚ի վերայ Ու անեց, և զնաց ՚ի Կոստանդնուպոլիս:

Գ. Լ. ՈՒԽԻՆ Դ.

Առաջին Առաջար Բնէլին:

Եւ առնելոյ բերդին՝ կոչեաց զթառհմաղ - զուլին, և անուանեաց զնա Աւուրփ փաշայ, և Մուրատ րէկին՝ Մուրատ փաշայ, և առաքեաց ՚ի Ատամողու մինչ ՚ի զնան իւր: Եւ նորա

կլին առնեայն աշխատ իւրեանց՝ ծառայիւք և աշակմնեօք, զնացին ընդ նոռա Ուսպում թէին և Ասլան աղայն, և այլք անսնանք: Եւ յորժամ հասին 'ի սահման Օսմանցւոց, ելանեին մարդիկք աշխարհին տեսանել զնոսա, և ոմնեօք ծադր տանեին և հայհոյին, և մականուն եզեալ կատակմնօք խօսեին: Եւ այն անարդանս վարիալ ինքեան թաւհմազ - զուլին: Ժիշեր զմեծութիւն ժամանակին իւրոյ, և զանարդանս՝ զոր տեսաներ և լսեր, յոգւոց հաներ և փղձեր, և ոչ կորեր տանել ինչ. և կայր յահալ: Երթալով զնացին և հասին 'ի պանդոկ մի, զոր տանեին Վլաճա - խան, և անդին զետղ առին: Եւ ոչ միարանեցաւ ընդ Ուուրատ թէին՝ և ոչ եզրայր նորա Ասլան աղայ՝ և ոչ այլ ոք. այլ ամենեքեանքն ընդ թաւհմազ - զուլուն միտեցան հայակից և համակամ: Խակ Ուուրատ թէին կայր ուրոյն՝ իւր ծառայիւք, և կայր առ վրանաւ իւրով: Եւ յաւուր միում առաքեաց առ նա խանն զԱսլան աղայն՝ և առե, կոչեալ զսեաւ էշ զեզայր քո՞ զալ, զեռնիմ ինչ ասել նման Եւ զընացեալ Ասլան աղայն՝ և առե, կոչեզ զքեզ խանն:] Ասե Ուուրատ թէին, միթէ ծառայ իցեմ նմա, զե զնացից առ նա, փաշայ մի նա, փաշայ մի ես. և ոչ զնաց: Եւ եկեալ Ասլանն սպատմեաց խանին: Ասե, խանն, կըլին կոչեալ զնաց: Եւ զնացեալ դարձեալ կոչեաց: Եւ նա բարկացեալ՝ առե, Քուշն⁽⁴⁾) զե՞ կոչե զիս, ևս ոչ ունիմ ինչ ասել, զի զնացից առ նա. և թէ ինքն ունի ինչ ասել, եկեսցե, առ իսու Եւ զնացեալ սպատմեաց նմա զամենայն: Եւ առե խանն ցԱսլան աղայն, ան զթուրն քո՞ ընդ մէջ քո, և Եկ ընդ իս, և զոր ինչ ասեմ արա, և զնացին 'ի վրան Ուուրատ թէին: Խակ նորա ամբարտաւանութիւնն և կամասզաշութիւնն իւր 'ի կորուատ եզել ինքեան, զի ոչ յարեաւ 'ի տեսանեն զնա, այլ մնուի յուսով վքացեալ նատիւր: Ասե, խանն, սեաւ էշ՝ զու բերիր զՕսմանլուն 'ի վերայ իմ, զու աւերե-

ցեր զերկիր իմ. զու ետուր զբերդն իմ. զու արկեր 'ի զերու-
թիւն զիս և զաշխարհս Եղասց. և ահա լսեմ՝ զի ոմանք՝
Աճամբ⁽⁵⁾ ասեն, ոմանք՝ պէնող⁽⁶⁾), ոմանք՝ առջար⁽⁷⁾) ասեն, և սյլք
առջար⁽⁸⁾). և այս վասն քո շնութեանդ եկն 'ի վերայ իմ. և
այժմ այնքան մեծ եղեր՝ որ իսպ ևս կոչես զիս: Եւ ապա
ասէ ցԱսլան աղայն, մօւտառ շունդ այդ. և հանեալ զսուրն՝ և
պատառ պատառ արար զնա. և այնպէս կորեաւ 'ի փառս սա-
տանայի. և թաղեցին զնա անդէն. և կանզնեցին 'ի վերայ նո-
րա արձան բռեաց: Խոկ վարիչք նոցա՝ պատեցին զայս խոնթ-
կարին. և ասէ՝ Խոնթկարն, բարւոք արար, զի ծառայն իւր
սպան: Եւ ելեալ զնաց 'ի Ատամազօլ. և կոչեաց զնա թագա-
ւորն՝ և ասէ, ահա երկիրդ առաջի քո, և ուր հաճի սիրտ քո՝
անդ արև քեզ բնակութիւն: Եւ նա գնացեալ 'ի կողմն Վաղ-
կեզոնի՝ 'ի քաղաքն Ումկուտար, և անդ շնեաց բնակութիւն
ըստ շինուածոց Պարսիցն. և անդ եկաց մինչեւ ցօր մահուաննե
Եւ մահ նորա 'իտեղի նորա պատմեսցուք:

Գ-Լ Ա-Խ Ե-Ն.

Ա-Մ-Ք-Ա-Զ Կ-Ա-Ր-Ե-Մ-Ա-Ց:

Երբեւ լուաւ խանն Թահմազ - զուլի, թէ մօտեալ է Օս-
մանցին զալ⁽⁵⁾ յերկիրս Արարատեան, հրաման եհան ամենայն աշ-
խարհին Երեւանայ ցրուել և գնալ, ուր և կամիցին՝ վախիցեն,
զի Օսմանցին եկեալ աւեր տեսցէ. և ոչ կարգեաց նոցա վա-
րիւս և ասէ, ամենեքեանքն իւրեանց կամօքն զնացեն ուր և

(5)Ա-Հ-Ե-Ն. Պարսիկ:

(6) Տ-Բ-Ի-Ղ. անհաւատ:

(7) Գ-Ե-Ց-Ի-Ղ. անիրաւ:

(8) Բ-Ա-Ց-Ա-Ց Շ-Ե-Ց-Ց-Ա-Ց. Դասալիք. 2) Հերետիկոս. Հերձուածող. 3) Հեր-
ձուածուպես:

կառմին։ Եւ ելին՝ ի բնակութենէ իւրեանց՝ և ցրուեցան, ոմանք
 յաշխարհն Ա քաջ, ոմանք Ա դուանս,՝ ի Ա ակամ,՝ ի Գ և անմայ,
 ՝ ի Խաղէն,՝ ի Ա արանդ, և այլ ուր և կարացին։ Իսկ Կարրե-
 ցիքն ելին միահաղոյն՝ ի Ա արդավառի բարեկենդանէ շարաթի
 օրն՝ և զիմեցին գեպ յերկիրն Քաշթաղու, և հասին մինչ՝ ի
 զիւղն ծոչս. և անդ բնակեալ եին սեաւ վրանոք բազում
 տունք Ք.քացար, իրբե տեսին զնոսա, և ասացին, սոքա փախս-
 տականք են, եկացք կոտորեսցուք զնոսա, և կողոպտեսցուք
 զինչան Իսկ Կարրեցիքն իմացան զնորհուրդս Ք.քացան, զինչ-
 ան նոքա ընդ գեմ նոցա՝ ի պատերազմ. և անկան Քուրտքն
 ՝ ի վերայ Կարրեցւոցն սաստիկ բախմամբ, և սպանին Եւ այր,
 զտեր Մխիթարն, զՏաթլու- Բարն, զԴափիթն, զԳիլառն և
 Ա. յվազն։ Օի թեպէտ և Կարրեցիք ևս սպանին՝ ի նոցանէ,
 սակայն յաղթեցան, քանզի նոքա հանզիստ եին և անաշխատ,
 և սոքա վաստակեալք և անապատրաստ. և կողոպտեցին զնոսա.
 և զիանայս մերկացուցին, և հասուցին՝ ի վերջին թշուառու-
 թիւնն. և զերեցին զերիս մանկունս. և այնպէս կային մերկ և
 կողոպուտ. քանզի գեղականքն ևս ձեռնտու եղեն Ք.քացան։
 Վ անզի երկեան՝ ի նոցանէ զի մի՛ զուցէ և զնկեանս ևս թա-
 լանեցեն։ Իսկ Կարրեցիք մնացին անդէն հայելով՝ ի կատարա-
 ծըն։ Եւ էր այր մի՝ ի Կարրեոյ՝ որում ասէին Ճանառենց Միր-
 զայ, և էր նա յայնմ աւուր՝ ի թաւրեզ՝ վաճառականութեան
 աղազաւ. լուաւ զիողոպտումն զեղին իւրոյ, և կոկծայր յոյժ.
 լուաւ ևս թէ Ծ աշն հանդերձեալ է զնալ՝ ի վերայ Երեա-
 նայ. և զրեաց թուղթ զանզատանաց՝ ի Ք.քացան առ Ծ աշն։
 Եւ էր պատճէն այս Ծ աշի ստաց հողի յայտնի լիցի՝ ի Կար-
 րեոյ ողորմելի շինականացաւ Օի մեզ լուաք՝ թէ Օսմանլու է
 զալիս յաշխարհս մեր, մեք Պ զրաշի եմք սովոր, զեղով ելանք
 փախանք՝ թէ Օսմանցւոյն ծառայ չեմք կարօղ լինել. և ե-
 կաք գեպ՝ ի սահմանս քոյոյ տերութեանդ, զի՝ ի ներքոյ ստաց
 քոց կեցցուք. և հասաք ի ծոչս զիւղն. և անդ եկեալ Ք.ուրտք

կողոպտեցին զմել, և զբազումս 'ի մէնջ կոտորեցին. և զիանայս մերկացուցեալ խայտառակեցին, և զմանկունս մեր դերեցին. և զամենայն ինչս մեր յափշտակեցին. և մնացեալ կանայք մեր և մանկունք կան մերկ և ողորմելի: Այլ չունիմք ոք՝ որ օգնեմել մեզ՝ բաց յԱստուծոյ և 'ի քէն. զի տէրութիւնն քո խնամեացէ. մել՝ որք եմք հնազանդեալք ծառայք և կօխան ոսից Շահին. ողջ լի՞ր: Եւ առեալ զթուղթս սյս միրզայն՝ և զնացընդ առաջ Շահին. և ողորմութիւնն Երտուծոյ յօդնութիւնն եհաս. զի առեալ Շահն զթուղթն ընթերցաւ, և եհաս 'ի վերայ իրաւանցն. և առաքեաց բազում զօրս 'ի վերայ Վրաստըն. և ետ պատուեր առելով, մի ողորմիք նոցաւ. եթէ ուլ մի առեալ են 'ի ձայոց, առցեն ուզտս. փոխանակ հաւին՝ ձիս առցեն. և ամեն մի սպանելոց առցեն ձ թուման. փոխանակ խայտառականաց կանանցն՝ խայտառակեային կանայքն նոցաւ Արդ զօր ինչ և պատուիրեցի ձեզ՝ արասջէք անպակաս: Եւ Վրուրտքն այնոքիկ եին դաւանութեամբ Օսմանցւոց. վասն այն այսպէս ողնոդութեամբ պատուեր ետ Շահն 'ի նախատինս աղզին: Եւ ընկալեալ զպատուերս զոյս զօրականացն՝ զնացին նախ առ Արրբեցին. և նոքա եկեալ և անկան յոտս զօրականացն, լոյին զոռալով՝ և աղազակէին, և ցուցանեին զմերկութիւնս իւրեանց: Խակ զօրականքն զբեցին զամենայն՝ զոր ինչ վասակալ եին առ քրիստոնեայն: Եւ ապա եկեալ զնացին առ Վրուրտօնս Տեսէք այժմ և լուարուք՝ զի ոչ մնաց չարիս՝ զոր ոչ ընկալան 'ի զօրականացն՝ բազմապատիկն: Վանզի կալան զարսն Վրաստքն ամենայն, և կապեցին զձեռս յետս ամենեցուն, և ձաղէին անողորմ. և զկանայս նոցաւ ապականեցին խայտառականօք. յափշտակեցին և կօղոպաեցին զինչն և զըստացուածն, և թափուր արարին յամենայն: Եւ ապա կուցին զԱրրեցին, և բաժանեցին առ նոսա զինչս Վրաստքն, և զդերեալ մանկունս յետս զարձուցին, և զարեան զինսն սպանե-

լոց առին ինկեանք, այլև զաղջկունս զոմանս՝ զորս գեղեցիկ էին՝ ի հարացն զերեալ և ապրին առ Ծահն։ Առ այսպես եղե զբաւ զործոյն, և մեային անդին Ապրիկյիք՝ մինչեւ Էտո Ծահն զԱշրեան, և ասկա զարձան և եկին, և բնակեցան ՚ի զիւղն իւրեանց Ապրին։

Գ. Ե. ՈՒ. Խ.

Գ. Ա. Ը. ՀԱՅ

Եւ յորժամ եղեւ թուականն մեր ԱԶԵ, զօրաժողով արար թաղաւորն Պարսից Ծահ-Ամին իրրեւ Շ'Արաց. այլև արուեստաւորս և զվաճառականս աւելի քան զարատերազմոյ զօրսն, և ելեալ նորօք՝ և եկն ՚ի վերայ Արեանայ. և յաւուր չորեցարաթի սպահոյն սուրբ Յակովայ՝ սպատեցին զըերդն. և նստան ՚ի վերայ նորա երեք ամիս. և ողորմութեամբ Վաստածոյ ոչ եկն ձիւն և ոչ կաթ մի. և յամենայն կողմանէ զոր (զոյին) դարմանք և սիմոյք զօրացն. վասնորոյ անհոգ եին յամենայն կողմանէ, և խաղաղութեամբ նստին. և թագաւորն ասածկաց Առութան Առուրաս իրրեւ լուտ՝ եթէ յամեցաւ պատերազմն և ոչ առին զըերդն, առաքեաց յօդնութիւնս թերդին զոմն փաշայ՝ որ ասէին ՚Իօն-Խաղբնատար՝ բազում զօրօք. և իրրեւ եհաս յՆըզըում, յանկարծակի եկն ձիւն բազում սաստիկ յոյժ, և ոչ կարացին շարժել զօրքն Օսմանցւոց. և հրամայեաց ՚Իօն-Խաղբնատարն սուխրայ հանել սյսմիքն կռա առ ՚ի պեղել զձիւնն, և բանալ ճանապարհ զօրացն. և զօր ինչ ՚ի ցերեկի պեղեին, զիշերն (՚ի զիշերին) լնոյր հոսաննն. բազումը չարչարեցան, և ոչ եղեւ օգուտ ինչ։ Վաէ ՚Իօն-Խաղբնատարն, Վաստած է օգնական Պաղլաշին, և մարդ ոչ կարէ ընդդիմանալ նոցա. և դադարեցին ՚ի զործոյ. և ՚ի մ.ծ պահոց մինոց Պ. շաբաթին առին զըերդն ՚Իօնզի Առութանզա

Գաշայն՝ որ տեր էք բերդին, իրրեւ ետես՝ զե ոչ կարացին ընդդմայն կալ զօրացն Պարսից, առեալ զդեղ մահու՝ և մեռաւ. և որք է բերդին էին՝ ետուն զբերդն. և Պարսիկք տիրեցին բերդին: Եւ Ծահն հրաման ետ Օսմանցւոցն զնալ ուր և կամին: Եւ նոքա առին զդէջն Առուրթուզոյ փաշային, և ելին՝ ի զնալ: Իրրեւ զնացին կէս աւուր ճանապարհ, նենգաւոր ազգն Պարսից զնացին զինի նոցա, և կոսորեցին զնոսա, և յափշտակեցին զինչւն. և մնացեալքն առին զդէջն Առուրթուզին, և վախեալ զնացին յԱրզում: Եւ Ծահն ետ չերկիրն Երեւանայ Վալսպալի խանի. և ինքն առեալ զԾիբձան փաշայն, զՄայմուն փաշայն, զԽոզրա իմայ փաշայն, և զնաց յԱսպահան. և առաքեաց զփաշայսն յԱնուշ բերդն, զոր ինքեանք Պահայզալա ասեն. անդ մնացին, և անդ մեռան:

Գ. Լ. Ա. Խ. Խ.

Պատրիոտիզմն իւսուսուալ դանի:

Արեւ Ծահն յԵրեւան, հրաման ետ քակել զբերդն Առկուայ, և զբնակիչսն զեղին բերել յԱրարատ ՚ի գաւառն Առեւս, և բնակեցուցանել ՚ի զիւղն Գամրէզ. և արարին այնպէս: Եւ է նոյն զեղին Առկուայ՝ այր մի բարեպաշտ և երկիւած քրիստոնեայ՝ Աիրակոս անուն՝ Բորդւովքն Յովհաննիսիւ և Աաֆարաւ եկն ՚ի Վանաքեռ, և բարեկամացաւ տան հօր իմայ, և բնակիւր առ մեզ: Երբեմն երբեմն երթայր ՚ի վաճառականութիւն, և զայր. և էր ճարտարաբան և կարի խելք: Եւ յաւուր միում ժողովեալ էին ՚ի տան մերում արք զելականք, և խօսեին վասն սղութեան հացի: Խակ Աիրակոսն պատմեաց բան ինչ: Խակ ժամանակ մի եղեւ սղութիւն հացի ՚ի զիւղըն մեր Աակու. և ՚ի նահանգի մերում ոչ գտանիւր ցորեանտ Եւ ասացին մեզ, թէ յերկիրն Խոյայ ցորեան առաս է. և

մեք արք չորք ելաք դրաստօք և դրամօք՝ և զնացաք 'ի զիւղ
մի՝ և հարցաք վասն ցորենոյ, և ասացին մեզ, թէ՝ զոյ ցորեան
յայս ինչ տան, և մեք զնացեալ գտաք զտունն, և տուաք ող-
ջյն, և նոքա զողջյնն մեր ոչ ընկալան. և մեք հարցաք դտա-
նուակըն, թէ ունի՞ք ցորեան վաճառելրց: Վսէ այրն, ունիմք: Եւ
մեք ասացաք, տուր մեզ ցորեան 'ի զնոյ. և տուաք նմա զդրա-
մըն. և նա առեալ զդրամն և ելից զքուրցն մեր ցորենօք. և
ինքնին լարեաց: Եւ ապա եդ առաջի մեր հաց. և մեք ասա-
ցաք, օրհնեցէք զԱստուած: Խսէ այրն բարկացեալ սաստկու-
թեամբ՝ և երարձ զհացն՝ ասէ, զով կամիք օրհնել, զայն՝
որ ոչ առնէ բարի ումեք. և թափեալ զցորեանն իւր ետ 'ի
մեզ զքուրձն և զդրամն մեր. և ասէ, ելէք և կորէք 'ի դրա-
նէ մերմէ: Եւ մեք կարծեցաք, թէ զեղականքն ամենեքեան
այսպէս են. և ելեալ զնացաք լոելեցյն: Եւ յետ աւուրց դար-
ձեալ պակասեցաւ ցորեանն, և վշացաք 'ի սովոյ. և առա ա-
սացաք մեք, եկայք գարձեալ զնացուք յայն զիւղ՝ առ այն
սյր, և ոչ տացուք ողջյն. և թէ տացէ հաց, լոելեցյն կերի-
ցուք, և անուն Վստուածոյ մի յիշեսցուք. և առեալ ցորեան
և դարձցուք: Եւ մին յառաջին ընկերաց իմոց՝ և Բայլոք՝ և
ես ելեալ և զնացաք 'ի զիւղն, և հայեցաք զտուն առնն. և
ահա վիչ մեծ՝ սաստիկ խոր և լայն, և հիացեալ զարմացաք,
եթէ զի՞նչ իցէ այս: Եւ ապա հարցաք ցիին ոմն, թէ ա մայր,
կայր 'ի զիւղս այս մեծատուն ոմն՝ որ վաճառեր ցորեան, ո՞ր է
տուն նորա. և նա ձեռամբ ցուցեալ զվիչն՝ ասէ, այս է տուն
նորա: Եւ մեք հարցաք զտատճանն Վսէ կինն, դա Վստուած
մեր ոչ պաշտեր, այլ ուներ ինքեան Վստուած պղնձի, և զնա
սպաշտեր. և բազմացան զմա ամենայն ինչք՝ թէ շարժուն և թէ
անշարժուն. և տայր դա հարկս բազումն իշնանին. վասն այն
ոչ կարող էր ասել ինչ դմա. ոչ խօսեր ընդ ումեք, ոչ մը-
տաներ 'ի հրապարակս, ոչ առներ առետուր ընդ մեզ. և ոչ
տայր ողորմութիւն ումեք. և հայհոյէր զմեղ և զԱստուածն

միք։ Ասանորոյ բարկացաւ Աստուծն մեր 'ի վերաց Աստուծոյ նորաւ, և 'ի միում դիշերի եղեւ թեթև շարժ, և ոչ ումեզ եղեւ լինաւ ինչ և ոչ կորեաւ հաւ մի. և 'ի վաղիւն տեսաք կործանեալ տունդ, և ո՛չ մնաց զմա կինդանի և ոչ հաւ մի։ Եւ մեք լուեալ զայս վասու մատուցաք Աստուծոյ արդարադատին՝ ասելով, որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթող ՝ի դատել քում։

ԳԼՈՒԽԻ Ը.

Աստուծուն Ը էլո - Խուսան։

Որպէս յառաջն ասացաք, թէ Վիքոցէլ Ապիսկոպոսն քանաքեցին թախտա - քուլա՛ ետ առնել զը խ - խամին։ և զշրիսութիւնն հատանել, և այնպէս կայր արտաքրսեալ։ Եւ եղեւ գալ Խոնթկարին և առնուլ զլրեան։ Հրամայեաց զօրացն Պարսից զնալ ուր և կամին։ Խոկ Ը էլո - Վահմասս այս ոչ զընաց ընդ զօրացն Պարսից, այլ մնաց աստեն։ և զնացեալ առ զիխաւորան Օսմանցւոց, և էառ 'ի նոցանէ իշխանութիւն Ը ըխութեան։ Եւ յորժամ էառ Ը ահն զլրեան։ և եղ անդ իշխան գիւղպալի խանն, և Ը խ - Վահմասն վարեր զշեութիւններն, և եղեւ վլէճ ընդ երկուց տաճկացն, և զնացին նոքա առ Ը էլոն 'ի դատաստան։ և Ը էլոն առեալ զկաշասս 'ի նոցանէ ուրցին ուրցին, և թիւրեաց զգաստաստանն։ Խոկ Տաճիկքն միարանեցան, և ժողովեցին բազում Պարսիկս 'ի վերաց բնփեանց, և զնացեալ առ նա՛ և քարամբ և վայտիւ հարեալ սատակեցին զնաւ։ Եւ աղղականք նորա աղաղակ բարձին առ խանն։ և խանն կամեցաւ ըմբոնել զնոսա, և նոքա ասացին, սա սունը (սիւնչ) էր, վասն Օմարին և վասն Օսմանին ազօթս առներ։ և մեք վասն այն սպանաք զնաւ։ Եւ թոյլ ետ խանն՝ և ոչինչ արար. և այնպէս բարձին զնա 'ի միջոյ։

Գ. Լ. Ա. Խ. Խ.

Եռապատրին Յունաց Մօրիկ էր աղջու և այ՝ յԱրարատ

զաւատե՛ յՕշական զեղջե՛. և բարւոյ պատահեալ թագաւորեաց ՚ի կաստանդնուպօլիս ամս խօն Աս առաջեաց ՚ի հարենի երկիրն իւր ՚ի և այս այր ոմն և այ աղջաւ՝ Մաղաս անուն շնուր քաղաք մի յաշխարհին և այսոց յանուն իւր ։ Եւ նա երթեալ գտանե, տեղի մի ՚ի Շիրակ գաւառի մերձ ՚ի յԱնի հարաւակովմն՝ ՚ի վերայ Վետուրեան զետոյ՝ ՚ի մ.ջ երկուց լերանցըն է տափարակ տեղի, որ զա կողմն բարձր քարավիք էնն. և յարհմանեան կողմն փոքր ինչ զիւր և սակաւ ինչ զառ ի վայր. և հաւանեալ աեղւոյն՝ պարապեալ զայն, և կախեալ զուռն անուանեաց Մաղասարերդ: Եւ մինչ դոյր իշխանութիւն աշխարհիս ՚ի ձեռն քրիստոնեից, տիրեցին քրիստոնեայք Մաղաս բերդին: Եւ յորժամ անկաւ երկիրս ՚ի ձեռն Պարսից, տիրեցին և Մաղասայ բերդին մինչեւ յաւուրս մեր: Եւ ՚ի մերում ժամանակի տաճիկ ոմն զաւան և Նեամին Օսմանցւոց՝ կեղծաւորեալ ՚ի կերպ Կարմրազլեսց, զգեցաւ մորթ, և անուանեաց զբուքն օրինապահ, որ է Վ. Դ. Կամ Պատրիք երբեցն երթայր ՚ի Կարրի, և երբեցն զնայր ՚ի Մաղասարերդ: Եւ այսպէս երթեեկութեամբ ծանօթացաւ Առլթանին Մաղասայ բերդին. և հաւատարմութիւն ցուցեալ՝ մինչզի զբանալի բերդին հաւատացին տալ նմա: Եւ եղեւ զնալ Առլթանին յԱրեւան, որ էր ինքն աղջաւ Բօղալու, և եթող ՚ի բերդն զորդին իւր: Խոկ զաւրիշն ևս էր ՚ի բերդին. և յաւուր միում տուքեաց առ փաշայն Կարուց՝ և զեկոյց նմա: թէ յայս նիշ զիշերի եկոչք դուք ՚ի զուռն բերդիս, և ես տաց զառ ՚ի ձեռս ձեր: Հորժամ լուան զայս Օսմանցիքն՝ ինդացին, և պատրաստեցան ալք Ա, և ՚ի պայմանեալ զիշերին կազմեցին զբուքեան,

և ելեալ զնացին փութագնաց երիվալ օք մինչ ՚ի բերան ձորոյն։ և իջեալ կապեցին զերիվարսն անդ, և ննքեանք հետիօտա ընթացան անսմռունչ մինչ ՚ի դուռն բերդին։ Խոկ անիծեալ աւղալն կայր ՚ի վերաց պարապին և հայեր, և ետես զօրս Օսմանցւոցն. և զի ՚ի ձեռին ունէր զբանալի բերդին, երաց զդուռն՝ և եմյջ զնոսա ՚ի ներս, և կալան զորդի Առւթանին, և զերեցին զորս ՚ի նմա էին։ Խոկ կին Առւթանին իրրե ետես՝ զի ասին զըերդն, պատեաց զերեան իւր փակեզամբ, և ընկեց զինքն ՚ի բարձր քարանցն ՚ի վայր՝ և մեռաւ. և այսովէս անկաւ քարզն ՚ի ձեռս Օսմանցւոց մինչեւ ցայսօր։ Եշւ լուեալ զայս խանըն Երեանսայ, և կալեալ զսութթանն՝ եհան զմորթն ՚ի տիկ, և ելից խոտով, և առաքեաց առ Ծահն։ Եշւ ննքն առաքեաց զօրս առ կողմն Վրաստանսայ, և բերեալ բազում աւարս և զերիս թուռվ Շխ։ Այս եղեւ է ԱՌԱՇ թուին։

ԳԼՈՒԽ Ճ.

Գլուխ թագավորին յԵրեւան։

Յորժամ առին Պարսեցիք զԱշաղասարերդ, առաքեցին զաւետիս արքային իւրեանց Առւթան Առւրատին։ Եշւ հրամայեաց թագաւորն, զի տայցեն բերդն առողե նորին՝ որդւոց յորդիս. և է այնպէս. և կոչի Խաթուն - օղլի։ Եշւ ննքն Առւթան Առւրատ առեալ զզօրս իւր աւելի քսն զՀԱՌ, և զնաց ՚ի վերաց Բաղդատայ։ Եշւ առաքէ Ծ Թաթար ՚ի Վաֆայոյ յԵրզ զբում առ Վրանան փաշայն, և պատուէր ետ նմա ժողովեալ զմերձակայ փաշայքն զօրօք, և զնալ ՚ի կողմն Պարսից՝ առնել աւար և գերութիւն։ Եշւ նա ժողովեաց զամենայն՝ որպէս և էառ հրաման, զփաշայն կողմնիոյ՝ որ է Ծ ապղարասար, զփաշայն Պարունոյ՝ որ է Հասան - զալայ, զփաշայն Կարուց, զԱշՓար փաշայն Ախցիսոյ, և ժողովեցան աւելի քսն զիւ. և եկին


՚ի վերայ երկրին Արարատայ, և հասին մինչ ՚ի գաւառն Առողից, զերեցին և աւար ասին զոր ինչ զտին: Եշւ խանն Աշրեանայ լուեալ զայս՝ ժողովեաց զզօրս իւր յոյժ սակաւ, և ելեալ յառապարն հանդէպ ՚Քանաքեռոյ՝ անկոխ աւեզեաւ զնաց ՚ի վերայ զօրացն Խամսյելացւոց. և զնացեալ մինչ ՚ի զետ բռն և անցին պուրաստան զետ, որ ասի Յանկի. և երիվարք նոցա պապեալք էին ՚ի ծարաւոյ, արրին ջուր և ծանրացան. և զը նացին մինչ ՚ի վեր առերակ գեղջն՝ որ կոչի Պաղունս, և հարան ընդ միմեանս: Եշւ գուշեցին Խամսյելացիքն քաջաձայն աղապակաւ՝ և անկան ՚ի վերայ Պարսիցն, և ոմանք զշետ եղեն խանին՝ և հարին զնա լախտիւ՝ որ է թօփուղ. և փախեաւ խանըն և ամենայն զօրք իւր: Եշւ ՚ի փախտին խանին՝ վաստակեցաւ ձին և մնաց, և ոչ կարեր զնալ. ոմն Պարսիկ Ռախուղաթթ-բեկ անուն՝ էջ՝ ՚ի ձիոյն, և նստոյց զխանն՝ ՚ի ձի իւր, և փախոյց. և ինքն կալեալ զերասանսակ ձիոյ խանին՝ և քարշեալ ՚ի տեղի ինչ՝ թաքեալ. զերծաւ: Խսի խանն միով շանքաւ⁽⁹⁾ մազապուրծ եղեալ անկաւ ՚ի բերդն: Եշւ Հագարացիքն հալածեցին զկարմրագլուխսն, զոմանս սպանին, զոմանս զերեցին, և զոմանս կիսամեռ արարին. և ինքեանք սփուրցան զերկրաւն անահ և աներկիւդ:

Գ. Լ. Ա. Տ. Ա. Ճ. Ա.

Բ. Ա. Դ. Ա. Հ. Ա. Ա. Ա.

Այր ոմն ուժեղ և յաղթանդամ, լոյնաձակատ և հաստարազուկ, քաջասիրտ և յաղթող ՚ի պատերազմի: Եշիսազ-խան անուն, և կորովի ՚ի նետաձգութիւնս: Աս իրբեւ ետես՝ եթէ

(9) Հ-ՇԱՀ. Հ-ՇԱՀ. սպասաւոր, ծառայ, 2) Թիկնապահ 3) յառաջընթաց. ուղեցոյց



փախեաւ խանն, իջեալ՝ ՚ի ձիոյն՝ և թափեալ զկառպարձն՝ որ
է քեշն, և ձգեր նետ գեղ ՚ի Օմանցինն. և յեսա նահանջեաց
զնուամ մինչև փախեաւ խանն. և մի ՚ի նեաիցն յերկիր ոչ ան-
կառ, այլ հարաւ ՚ի մարդ և ՚ի ձի Եւ յորժամ պակասեցաւ
նեան, ձայնեաց ասելով, բերեք քեշն. յայնժամ կտրեցաւ
լար աղեզանն՝ և եղարկ յերկիր՝ և առէ, աղ և հաց զաց քո
ասցէ ՚Քալզալի խանն Օսոյս ասացեալ՝ կապեաց զնեռս ՚ի
սպանն, և առէ, արարեք ընդ իս օրպէս և կամիր Եւ ոմն անա-
նուն այր եկեալ՝ կապու զնաւ Եւ եկեալ օմն իշխան կամիր
խվել ՚ի նմանէ. և եթ կադ ՚ի մեջ նոցաւ Եւ զնացին առ փա-
շայն, և եհարց փաշոյն՝ և առէ յԱշխազն, թէ ովլ կարաւ դքեզ ։
Առէ յԱշխազն, այս Շնանուն այրաւ Եւ փաշոյն ետ ՚ի ձեռա-
նորա՝ և առաքեաց առ Խոնիմ կարն Եւ զնացեալ մնաց անդ, և
ոչ զիտեմք՝ զե՞նչ եզեւ

Գ. Լ. Ա. Յ. Ճ. Բ.

Փականաց թագավորացն։

Օկնի փախչելոյն Պարսից՝ սփռեցան Օմանցիքն զամենայն
երկրաւն. և փաշայն զնացեալ զօրօքն մինչ ՚ի զիւզն ՚առք,
և անզուստ հայենն ՚ի բերգն, զրօննուին Եւ առզս ընտրեցին
Շամիթար և Յ Օմանցի՛ Ի զլաւորօք, և առաքեցին
՚ի զաւան Գառնւց, և պատուիրեցին նոցաւ, թէ այսօր և
փազն տար առէք զերկիրն, և ՚է վաղուեան երեկոյին զոցք
մերձ ՚ի բերգն՝ ի տեղին՝ որ կոչի Տաշ-քեսան, որ է ՚Քարա-
հանք, և մեք ևս զամք անդ, մնացուք ՚ի զաշտն Շարուրաց
՚ի Աստարակ և ՚ի Ահմէթի, և ամիս մի շրջեսցուք յաշ-
խարհիս Շրարատեան։ Եւ զնացեալ նոցաւ ըստ պատուիրելոց
փաշոյնն, և ինքն ՚Քանան փաշայն մնացեալ զօրօքն սփռե-
ցան և տարածեցան զերկրաւն. և զնացեալ ՚ի վերաց զալթա-

կանացն Քանաքեռոյ՝ ՚ի զլուխ ամրոցին՝ որ կոչե սուրբ Աստ-
գոի այր, և ըմբռնեցին զԱստղիս երեցն՝ և Ռ արք Աւարդան
և Ամհակ, և այսպէս կային անհողութեամբ: Խակ նախախնա-
մօցն Վսառաւած ոչ ետ թոյլ խաղառ աւերել երկրիս: Քանզի
Եր այր մի ՚ի մշջ զօրացն Հազարացւոց՝ Պարսկադին, և անուն
նորա Մասում աղայ: Աս ան Մասում աղայն է՝ որ Եր յԵ-
րեան Քալանթար, զոր՝ և Յաւհմազ - զուլին ընդ խր առեալ
պել եցան և գնացին է Ատամազօլ, և այժմ Եր ընդ Քանան փա-
շացին: Աս իրրե ետես զՀայրենի երկիրն իւր՝ զի աւերելին,
կսկսայր և մրմանյը և ոչ զիսեր՝ թէ զբնչ արասցէ: Եւ ահա
օգնութեամբն Վսառաւածոյ ըմբռնեաց նա այր մի քրիստոնեաց
՚ի Առաջ գաւառէ, և ուրախ եղել յոյժ. և եդ՝ ՚ի բերան նորա
բան՝ և ասէ, ևս տանիմ զքեզ սան փաշայն, և զու ասան նմա,
թէ Աստամ խանն Ճ-Ճ-Ջ արամի եկն՝ ՚ի զուռն բերզին, և
ահա զան՝ ՚ի վերաց ձեր, զայս սան և մի երկնչիր Եւ առեալ
տարաւ առ փաշայն. և ՚ի Հարցանեն փաշացին, զնոյն պատաս-
խանեաց՝ զոր ուսոյց Մասում աղայն: Եւ ապա Հրամայեաց
զօրացն փաշայն, թէ ամենեքեան զլուխ ձեր զերծուցէք. և
որք լուանն՝ թոպին զառ և զաւար՝ և փախեան յիւրաքանչիւր
զէմն իւր՝ ուր և կարացին: Եւ ապա զքեաց Մասումն թուղթ
մի այս ինչ. Ո՛վ խան, զոր ինչ ասիցէ քեզ Հայդ՝ լուիցես:
Եւ կոփեալ ետ զթուղթն ցՀայն. ասաց և զանուն իւր. և
պատուիրեաց նմա, թէ ահա յայսմ երեկոյիս ՚ի մթանալ՝ Շ-
Յամթար զան՝ ՚ի Տաշ - Քէսան տեղին, սան ցխանն, թէ որս ձեր
են նոքա. ջանացարուք և մի երկնչիք, զի անկար են: Եւ ար-
ձակեաց զնա՝ և ասէ, փութան և տուր զթուղթդ՝ և ասան նմա
զոր ինչ պատուիրեցի քեզ: Եւ առեալ զթուղթն, սրբնթաց
եհաս ՚ի բերդն՝ ՚ի մտանել արեգականն. և ետ զթուղթն ցխա-
նըն Պարսից, և (ասաց) զպատուեր Մասումին և զփախուստ
Օսմանցւոցն: Եւ իրրե լուաւ զայս, Հրամայեաց մոնետկաց
աղաղակել, թէ ամենայն ոք՝ որ լուիցէ զՀայնս մեր՝ զզեցցի

զգեստ պատերազմի հանդերձ զինուք, և հեծցի ՚ի ձի, և զնացէ ՚ի ՚Քարահանքն. զի յայսմ երեկոյ պատերազմ մեծ է ընդ թափառաբն: Եւ որ ոք ոչ զայցէ զիրս կատարել, զլուխ նորին հատանի: Եւ աղաղակեցին ՚ի մ.ջ բերդին և զրանն. և որք լուանն՝ ելին յարևելեան դուռն բերդին, և խումբ առեալ զընացին ՚ի ՚Քարահանքն: Եւ էրնսեմացեալ օքն. և զի (զուցէ ո՛չ) տեսանելն զլիմեանս, բայց ճանաչին զիրեար. զումարեալ ելին անդ և զօրք՝ թափառաց. յորժամ հուազ եղեն միմեանց, կար ծեցին թափառք՝ զօրք (Օսմանցւոցն գոյ. և ձեռամբ արարեալ ձայնեին՝ զնալ առ նոսաւ Եւ էր Օսմանցի մի հատուածեալ տամբ իւրով ՚ի Կարուց, և անուն նորա Աւզուն-Վլի, և էր սցժմ ընդ խանին. սա ետես զթափառքն՝ և ասէ, երթիցուք և անկցուք ՚ի վերայ նոցա, զի⁽¹⁰⁾ են մեզ: Էսէ խանն, զուցէ բազումք իցեն, և ոչ կարիցեմք յաղթել նոցա: Եւ բարկացեալ Աւզուն-Վլին՝ ասէ, այդ անուամբդ առնես խանութիւն Երեա նոց: Եւ զնացեալ ըմբռնեաց Ի՞ թափառ, և բերեալ առ խանին՝ ասէ, աշա քեզ նշան զզօրութենէ թաթարացն: Եւ ապա սրտապնդեալ խանն հրամայեաց հնչեցուցանել փող պատերազմին, և անկան ՚ի վերայ թափառացն. զորս կոտորեցին, զորս ըմբռնեցին, և զորս հաշածեցին. կալան և Ի՞ զիստորս նոցա: Եւ այսպէս եղեւ զրաւ զործոյն. կարծեմ թէ ի Շիցն՝ Շ հազիւ զերծեալ փախեան:

Գ.Լ.Ա.Խ. Ճ.Գ.

ԴՐԱՅՆ-ՌԵ-Ն առն Բոյ:

Փախեան Օսմանցիքն ՚ի սուտ համբաւոյ Հայուն. և որք երեք ոչ իմացան զփախուստ նոցա, այլ զնացեալ անկան յայ-

դիքն Առինջ զեղջն, և ժողովելին վասն ինքեանց միրգս. և զերնաւ ոչ էր անկեալ՝ ի ձեռս նոցա աւար ինչ, և տեսանեն՝ զի այր մի երթայր միայն՝ ի ճանապարհս իւր դես ի Զագավանք զիւղ, և երեքեանն տեսին զնա, և ելեալ յայգեացն ծագեցան զինի առնն, և այրն տեսեալ զնոսա՝ փախս էառ. և տաճիկըն երիվարօքն զինի նորա վարելին զնա, և այրն ոչ զտեալ տեղի փախստեան և զնացեալ եմուտ՝ ի ներբոյ ջրաղացի մի՝ որ ասեն Յըրտօն: Խոկ նորա եկեալ՝ ի ներբուստ նիզակաւ խթէին, թերեւս նիզակն՝ ի նա հարեալ վիրաւորեցէ, և ՚ի կոկծոյն ելցէ արտաքս, և նիզակն ոչ հարաւ՝ ի նա, և ոչ ել արտաքս: Խոկ նորա զնացեալ թողին զջուրն՝ ի վերս նորա, զի վշտացեալ ելցէ, և ոչ նովաւ կարացին հանել զնա: Եւ դարձեալ հատին զջուրն՝ և զմի մինքեանց առավեցին՝ ի ներբոյ՝ հանել զնա: Խոկ Հայն քաջացեալ յարեաւ՝ ի վերս նորա, և ըմբռնեալ կոխեաց զնա՝ ի ջուրն, և նստաւ՝ ի վերս սրտին՝ և խեղղեաց: Եւ ապա բարբառէր նոցին լեզուաւ, և ասէ, ընկեր մի՝ ի ձէնջ ևս եկոցք. զի ստ ուժգնակի զոլու՝ և ես ոչ կարեմ յաղթել սմա, և եմուտ մինն ևս: Եւ զնա ևս կալեալ և խեղղեաց՝ ի ջուրն, և եղ քարինս՝ ի վերս սրտից նոցա. և հանեալ զմի՝ ի թեոց կնդոյ ջրաղացին՝ և եկեալ արտաքս և եհար թեոմի զզլուխ տաճէին՝ որ պաշէր զերիվարսն, և խելազարեալ՝ եհան զսուսերնորին, եհատ զզլուխ նորա. և մաեալ՝ ի Յըրտօնն, և զդէշս նոցա քարշեալ արտաքս՝ և եհատ զզլուխ նոցա. և մերկացուցեալ եղ՝ ի վերս միմեանց զդէշն. և առեալ զզլուխս և զերիվարսն՝ և զնաց առ խանն: Խոկ խանն զամենայն ինչն տաճկացն ետ նմա. և զնա ազատ արար մինչ ինքն խան էր:

ԳՎԱԾԻԽ ԺԵՒ.

ՄԵՇԻ ՀԱՅ-ՌԻ-ՆԻ ԲԵՐ Ա-Ն-:

Միւս ևս քաջութիւն այլում առն պատմեցից օքիյորժամ վախեան թագթարբն, ամենայն ոք՝ որք ժողովեալք էին 'ի զուռն բերդին յահե Օսմանց ոցն, գնացին 'ի տունս իւրեանց ընդ որս և այր մի 'ի Փարագար զեղջէ՝ ասէ ցընտանիս իւր, զուք առ սակաւ սակաւ եկեսջիք, և ես Ճեպով գնացից զի զրունք տանց մերոց 'ի բաց թողաք, մի՛ զուցէ ոք մտանէ 'ի տունն մեր, և զշաւերն տարցէ: Եւ գնացեալ մտանէ ի տունն, և ահա զայ ձայն շշնչանց. և որոնեալ զտունն՝ ոչ տեսանէ զոք: Եւ բացեալ զխուփ թոնրին՝ տեսանէ թ Օսմանցի 'ի մշջթոնրին. և արձակեալ զդօտի իւր կապեաց զձեռս նոցա յետս 'ի մշջթոնրին, և եհան զնոսա: Եւ տաէ ցնոսա, ուր են երիվարք ձեր: Ասէն նոտա, վաստակեցան և ոչ կարացին զալ, թողաք 'ի բաց: Խսկ այրն առաջ արկեալ զնոսա՝ և զնաց 'ի բերդն: Եւ ահա խանն ելեալ 'ի բերդէն զնայր 'ի զարիվայրն կամրճին. անդ եկեալ այրն հանդերձ տաձկօքն՝ պատահի խանին. և յետ բազու հարցանեմը լոյն՝ ասէ, զուք ուստի՞ էք: Ասէն, 'ի Կարուց: Խրբե լուաւ՝ թէ 'ի Կարուց են, հրամացեաց սպանանել զնոսա. և զշատումն զլենց նոցա ես տեսի աչօք իմովք:

ԳՎԱԾԻԽ ՊԵՇ.

ԱՅ ՀԱՅ-ՌԻ-ՆԻ ԵՐԵՎԱՆ ՀԱՆՔԱՆՑ:

Չե ևս էին փ սկսուցեալք Օսմանցիքն 'ի սուտ համրաւոյն, ըմբռանեալ էին երկուս մանկունս 'ի Աստեից. և 'ի փախչելն իւրեանց կապեալ զմանկունս (մանկանց) զձեռս յետս՝ և առաջի արկեալ վարեին զնոսա. և հասեալ 'ի զիւզն Սրծնի՝ 'ի զլուխա բարձր քարանցն՝ որ ասի Դժուարագիմ, աւեն մանկունքն

ցվարիշան, արձակեցէք զձեռս մեր, զի մի նեղիցուք. քանզի
փախչիլ ևս ոչ կարեմք. վասնզի մին կողմն քարտին է և մի կող-
մբն դուք: Եշւնոքա արձակեցին զձեռս նոցա: Իսկ մանկունքն
միարանեալ գնացին մինչ ՚ի զլուխ քարին, յիշեցին անուն Աս-
տուծոյ, և անկան ՚ի քարանցն ՚ի վայր՝ և մեռան: Յաղագս Ի՞ց
իրաց ընկալան կամաւ իւրեանց այնպիսի դաւն մահ. նախ՝ զի
զերծցին յանառակ սղծութենէ. երկրորդ՝ զի քրիստոնեու-
թեամբ մեռցին՝ քան թէ ուրացութեամբ կեցցեն: Ա ամսորոյ
ոչ վարկարիդի համարիմ զմահ սոցա: Ա. Ալ պսակակից Ա իլոնի
Եպիսկոպոսին, որ անկաւ ՚ի բարձանց՝ և մեռաւ վասն այնպիսի
գործոց. և Ա կուսանքն՝ որք անկան ՚ի զետն վասն Քրիստոսի,
և մեռան: Այնպէս և սոքա կատարեցան երանելի մահուամբ
Եշւ Եին ՚ի ձոր անոր արք թագուցեալք, և տեսին զանկանել
մանկանցն, մնացին մինչև ՚չ միւս վաղիւն. և եկեալ բարձին
զնոսա, և տարեալ ՚ի զիւղն Աբծնի թաղեցին:

Գ. Հ. ՈՒԽ Ժ. Զ.

Կանոնադասարան Պատու անուն Շահը:

Ե փախչերն օմաթարաց յերեսացն Պարսից՝ Ի օմաթար գը-
նոցին փախստեամբ մինչև ՚ի զիւղն Կորագաւիթ. և եր մթա-
ցեալ օրն: Եշւ Պ զլարս այս ելեալ ՚ի տանէ իւրմէ: երթայր
առ դրացին՝ բերել ճրագ ՚ի տուն իւր. և պատահի երկուց
թամթարացն, որք իջեալ ՚ի ձիոցն՝ կալան զինն և հանին ՚ի
ձին. և նա անկաւ ՚ի վայր. և դարձեալ հանին ՚ի ձի. և նա զար-
ձեալ անկաւ. և երրորդ անգամ նստուցին զնա ՚ի ձի. իսկ սըր-
բասէր կինն դարձեալ անկաւ: Իսկ տաճիկքն ձանձրացեալ,
քանզի և երկիւղ կրէին ՚ի Պարսիցն, վասնորոյ սրախողեսող ա-
րարին զերանելի կինն Պ զլար, թողին կիսամահ և փախեան:
Եշւ Պարսիկքն պատահեցան նոցա, զմինն սպանին, և մինն կա-

լեալ տարին։ Եւ կինն մնաց աւուրս Եւ, և եկեալ քահանայք հաղորդեցին զնա, և յետ երկուց աւուրց հանգեաւ ՚ի ՚Քրիստոս Այս կին էր առն միոյ՝ որ ասեին Աեւաւ - Օպքարիա, ՚ի նոյն դեղջէն ՚Եորադաւթայ, որ գայթ՝ ՚ի վաճառականութենէ, և աւազակքն սպանին զնա Ի ընկերօք ՚Մուշաղբիւր զիւզ։

ԳԼՈՒԽԻ ԺԷ.

Ա առ ժակոյ Երեւանին։

Օսմանցիքն մինչդեռ կային խաղաղութեամբ, և աւար առանեին զերկիրն, տւար առին և զզիւղն Ըրծնի. թէպէտ մարդիկիքն զաղթեցան, սակայն անասունքն ամենայն աւար առին, և ոչ մնաց ուշ մի Եւ էր ՚ի զիւղն այր մի՝ Դաւիթ անուն՝ որ էր տանուտէր գեղջն, և ունէր նա աղնիւ ձի մի՝ կապուտ զունով, բարձր հասակաւ, լայնասմբակ, երկայնապարանոց, փոքրագլուխ, և արագաքայլ, ուսուցեալ էր և լեզու, և անուն եղեալ էր նմա ՚Վաւանն. և զոր ինչ Դաւիթն ասէր, ձին իմանայր Ծյս ձիս ևս տարին, և անկաւ ՚ի ձեռն ՚Վարսեցւց միոյ. և էր տուն նորա արտաքոյ բերդին, և յամենայն օր հեծնոցը այրըն զձին, և զնայր ՚ի զնին, և ուրախանայր վասն արագընթացութեանն։ Եւ յաւուր միում ըստ սովորութեանն հեծաւ զձին, և եղեալ ՚ի զրօսանս, և դարձաւ ՚ի տուն, և եմուտ ՚ի բակն իւրեանց. իջեալ ՚ի ձիոյն՝ էարկ զերասանակն ընդթամբօքն, և մտեալ ՚ի տուն՝ ասէ ցծառայն, երթ առ զթամբ ձիոյն։ Եւ ելեալ ծառայն ետես՝ զի ձին եղեալ ՚ի բակէն՝ և զնայր խաղաղիկ Խակ ծառայն ընթացաւ, զի կալցէ. և ձին փախս առեալ զէպ յարենլո, և ծառայն երթեալ պատմեաց տեառն։ Եւ այրն հեծաւ յայլ ձի՝ և զնաց զկնի նորա. խակ ձին արագացոյց զընթացն՝ և ոչ կարաց հասանել նմա. դարձաւ յետս։ Եւ իմաստուն ձին յայնմ զիշերի զնացեալ Զ.

առուր ճանապարհ եհաս ՚ի զիւղն Արծնի, և եմուտ ՚ի բակն իւրեանց: Եշ մայրն Դաւթի ելեալ ՚ի զիշերին՝ զի երթիցէ յեկեղեցին առ ՚ի յաղօթել, և տեսեալ զնա ձին՝ վրնջեր՝ և զոտսըն հարկաներ յերկիր. և կինն դարձաւ ՚ի տուն՝ և պատմեաց որդւցն: Եշ Դաւթիթ ել արտաքս, և ձին որպէս բանական արկեալ զպարանոցն ընդ ուսով Դաւթին՝ անդադար վրնջմամբ աղաղակեր: Եշ ՚ի լուսանալ առաւօտուն ժողովեցան ամենայն գեղականքն, և ասեն ցԴաւթիթն, տա՛ր զձիգ առ խանն, և պատմեան նմա: Եշ առեալ զձին՝ տարեալ եցոյց խանին, և ասաց պատմառն: Խսկ խանն ասաց, քո արդար վաստակն եկն ՚ի ձեռքս քո, առեալ զնացես: Եշ մի՛ որ ծաղը առացէ զմեզ, զի վասն այն զրեցաք, զի անասունք սիրեն զտածիւս և զուրս իւրեանց, և մարդիկ ոչ խմանան զերավստաւորս իւրեանց, որպէս ՚ի մերում ժամանակի եղեալ արեղայքն: Վանզի յետ երկուց ամսոցն յիւրում զերութեան փախեաւ ձին՝ և եկն առտեր իւր. խսկ մեք Ռ օր ոչ պահեմք ՚ի մտի զերախտիս տերանց մերոց: Խսկ տաճիկն՝ որ զձին տարեալ էր, յետ աւուրց ինչ եկն յԱրծնի, ետես զձին, և տեղեկացաւ՝ զի ՚ի նոյն զիշերն որ փախեաւ՝ եկն ՚ի զիւղն Արծնի: Ըյսուհետեւ եղեն սիրելիք միմեանց Դաւթիթն և տաճիկն:

Գ. Լ. ՈՒ. Խ. Ժ. Բ.

Հայուսուն երիսոց նահաւորոցն:

Սուլթան Մուրաստ թագաւորն տաճկաց զնացեալ էառ զԻազգատ ՚ի ձեռաց Պարսից. և մինչ էրն ՚ի Բազգատ, անդուստ առաքեաց դեսպան առ թագաւորն Պարսից Ծահ-Ասֆի, զի արասցեն խաղաղութիւն՝ մեջ իւրեանց: Եշ Ծահն ևս առաքեաց դեսպանս առ Խոնթկարն՝ սյր մի՛ որ ասեին Զազաթա-Քթօթուկ-Մահմատ խան. և արարին հաշտութիւն և

խաղաղութիւն։ Եղին պայման ամս 1. Թեալ խաղաղութեամբ։ Աշ իսկոյն մեռան երկոքին թագաւորքն։ Յետ Առողջան Վուրատին՝ թագաւորեաց եղբայր իւր Խաղահիմ։ Եւ յետ նորա որդին Մահմատ։ Եւ յետ նորա որդին Խորան (զուցէ Անոլէ յման Ի. կամ Ա. Հ. մէտ Ի.)։ Եւ յետ նորա զեղբայր նորա Վուրատաֆոյ, որ կայ այժմ, և վարէ զժագաւորութիւնն։ Յետ Շահ-Արքուն՝ թագաւորեաց որդին իւր Մրաս։ Եւ յետ նորա Ասֆի։ Եւ յետ նորա Առողջյման։ Եւ յետ նորա Հիւսին։ Ասցին պատմութիւնս յետոյ արասցուք։ Ա. յաքան թագաւորացս ժամանակ խաղաղութիւն է ՚ի մէջ Պարսից և Տաճկաց։ Օ. ի ՌԶԲ թուէն մինչ է ՌՃ՛ԽՆ։ թիւս՝ յորում եմք այժմ, և հաշտութիւն և խաղաղութիւնն։ Օ. ի Կոստանդնուպօլսէ մինչ ՚ի Ասպահան երթեեկութիւն է առանց երկիւղի և աշու։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Առանձիւ Փէլլուու Առնուղիւնն։

Փիլիսպոս Աաթուղիկոսի վարքն և զործքն զամնայն զրեալ է Առաքեալ պատմագիր։ Խսկ մեք զնացաք ՚ի Աարնոյ քաղաք, և անդ պատմեցին մեզ պանչելիք ՚ի նմանէ՝ որք ականատեսք էին այնմ սքանչելեաց։ Եւ մեք կարեոր և պատշաճ համարեցաք զրել աստեն։ Մեծ և առաքինի Աաթուղիկոսն՝ և երկրորդ Լուսաւորին Մովսէս ետ զաւազան վարդապետական Փիլիսպոսի, և օրչնեաց զնա Խաղակոպոս։ և առաքեաց զնա ՚ի Նուիրակութիւն յաշխարհն Յունաց։ Եւ զնացեալ մինչեւ ՚ի թէկողոսուպօլիս՝ որ է Արզուում, և էր ՚ի քաղաքին անդ վարդապետ մի Մինաս անուն՝ կարի և յոյժ ուսեալ զարուեստ երաժշտական։ և էր կարի հպարտ և զուռղ, յանգուղն և ինքնահաւան, և ոչ երբէք խոնարհէր ումեր։ Եւ ՚ի զիշերի միում երդեին ժամ, և յաւարտել զՄԵծացուցէ վուխն, ԱՄինասն ըս-

կսեաց զշարական Աւագ Օրհնութեան յիտին աներն ասել։ Եւ Փիլիպոսն ասաց, այդ մի՛ ասեք, զի անպատշաճ է։ Իսկ Մինասն ոչ ետ ունին, այլ բատ գոռող բարուցն արար որպէս կամլր։ Եւ յաւարաել աղօթիցն, Փիլիպոսն քարոզ սկսաւ աւուր պատշաճն՝ է Տէ՛ ենէ ունանշն սկսեալ՝ մինչ ՚ի Անծառացացէն յայտ արար քաղցը և համեզ ոճով։ Եւ սակաւ ինչ ծանոյց վասն Անծառացէ շարականին, և մեզադրեաց Անինասին՝ թէ ոչ գիտէ զեսորհուրդն, այլ ինքնահաւանութեամբ առնէ։ Իսկ Անինասն արտաքոյ դրանն լսէ զսացեալն Փիլիպոսի, և նախատինս վարկաւ ինքեան։ և լցեալ չար նախանձու՝ և գնացեալ առ իշխանն շարախօսեաց ՚ի Փիլիպոսէն։ ասէ, Արեզայ մի եկեալ է ՚ի Պարսից աշխարհէն, և ՚ի մեր աշխարհէս բազում դրամ է ժողովեալ, զի տարեալ տացէ Պարսիցն, զի եկեսցն և աւերեսցն զաշխարհս մեր. ոյլեւ անիծանէ և հայշցէ զազգն ձեր, և Օմարին և Օմանին հաւաքն⁽¹¹⁾ ասէ։ Եւ բարկացեալ փաշայն՝ առաքեաց արք Պ. Ենկիչարի՝ ասէ, ՚ի վերայ երեսին քարշ բերէ՛ք զնաւ։ Եւ զնացեալ արանցըն՝ տեսին զի բազում վաճառականք և քաղաքականք կային առ նաւ։ Եւ ասեն, ուր է կակառ⁽¹²⁾) որ ՚Ն Պ. զրաշեցն եկեալ է, ելցէ և եկեսցէ առ փաշայն, զի խնդրէ զնաւ Իսկ սուրբ վարդապետն յարեաւ, և ամենայն արքն՝ որք կային անդ՝ յարեան և նոքաւ Ասէ վարդապետն, ելք արտաքս, և ինքն երաց զպատուհանն, և հանեալ անտի Ի. մոմ սպիտակ, որ չեւ եր լուցեալ, այլ ՚ի զլուխն ուներ զպատրյին, առեալ զայն ՚ի ներքոյ վիլոնին՝ և զնաց. զնային և ամենայն արքն ընդ նմաւ։ Եւ մտեալ առ փաշայն՝ խոնարհութեամբ ողջոյն ետ։ Ասէ փաշայն, զո՞ւ ես՝ որ եկեալ ես՝ ՚ի մեր աշխարհէս դրամ ժողովես և առաքես առ Ծահն, զի դրամով մեր զօրս ժողովէ և զայ ՚ի վե-

(11) հաւաքն. անէծք.

(12) Պ-ի-ւ. քահանաց.

բայ մեր 'է պատերազմ': Խոկ երանելի վարդապետն ոչ կարեր ուղղակի խօսել տաճկերէն. և խօսի թարգմանաւ՝ և ասէ, ես իւղավաճառ եմ, ովք ոք զնէ յինէն իւղ՝ դրամով զնէ. և ովք ոչ զնէ, ոչ տայ դրամ: Ասէ փաշայն, եթէ վաճառական ես, ապա ընդէլը հայշոյիս և անիծանես զմեզ: Եշւ առ այս բան ասէ վարդապետն, ոչ է այդ գործ իմ: Եշւ ապա հանեալ զի՞ւ մամբն՝ ի ներքուստ փիլոնին՝ և սպարզեաց առ փաշայն: Խոկ փաշայն ձգեալ զձեռն էառ զմումն. յայնժամ շնորհօք սուրբ Հոգւոյն լուցան մոմք՝ և վառեցան՝ ի ձեռն փաշային: Եշւ սոսկացեալ փաշայն՝ և սարսափմամբ ասէ ցվարդապետն, երթ զնա՞ի տեղին քու: Եշւ երանելի վարդապետն խոնարհութեամբ երկիր եպագ, ել արտաքս: Եշւ փաշայն ասէ ցարսն, զի՞նչ է այս զարմանքս: Ասեն ալքն, պահնելիք բազում լինին զովաւ. վասնզի սուրբ է և արդար: Եշւ հրամայեաց փաշայն դարձուցանել ըզվարդապետն՝ և ասէ, Բաբոյ⁽¹⁵⁾ տեսանն՝ զի երաշտութիւն է, և ոչ զայ անձրեւ, և չորացաւ ամենայն երկիր. եթէ կարող ես՝ բե՛ր անձրեւ: Ասէ վարդապետն, ոզորմութիւնն Աստուծոյ բազում է. բայց տաճիկք ոչ թողուն զմեզ աղօթել ըստ օրինաց մերոց: Ասէ փաշայն, ես տաց քեզ վերակացուս, և ովք հակառակեցի՝ սպանցեն զնա. և զու աղօթեան ըստ քում օրինաց: Եշւ եղ ընդ նմա Ճ զինուորս, և պատուիրեաց նոցա՝ թէ ովք ընդզիմակաց լիցի զմա՝ սպանե՛ք զնաւ: Եշւ ապա ելեալ յերեսաց փաշային՝ զնաց յեկեղեցին՝ որ ասի Միաբանից Աստուծածին. և հրամայեաց ամենայն եկեղեցականաց զգեստաւորիլ. և ինքն ես զգեցաւ զգեստ Պատարագին. էարկ զիւրեաւ զի՞մի փորոնն և եղ իդլուխն զիթապն, և էառ ի ձեռն զիսան, և ելեալ յեկեղեցւոյն՝ խօսիւ և Աւետարանաւ, ծնծղայիւք և զանդակաւ, և սկսան շարական ասել, Առ-ը Առ-ութ Հոգու անոնքն: Եշւ գրո՛հ տուեալ քաղաքն ամենայն՝ ելին՝ ի հիւսիսոյ կողմն քա

դաքին՝ որ ասի Առւրբ Կւշտնի բլուր. մինչ զնացին երգելով զշարականն, սկսաւ ամպել օդն. և մինչ հասին՝ իսահմանեալ տեղին, սկսաւ ցողել. Եւ իրրել ընթերցան աւետարանն՝ Օձ ուղղութայլուն, զ» (Երիցո) զռոաց ամսն. Եւ յորժամ սկսան թափօր, սահանք երկնից բացան, և իջն անձրեք յորդ. և մինչեւ աւարտել թափօրին՝ եղել զաշտն իբրեւ զծով. Եւ ապա զարձան յեկեղեցին՝ ասելով. ., Յառաջայէ ոյէ ունեցան, Եւ բոեալ յեկեղեցին՝ ասաց, Խնդրէացուն համ.՝ Պլահունեալ.՝ Եւ յորժամ զայս Ռ սքանչելիքս ետես Փաշայն, կալաւ զշարախօսն Մինաս, և էսո.՝ ի նմանէ Ռ Մառշել⁽¹⁴⁾՝ ասէ, Խրատ լիցի քեզ զի մի այլ շարախօսութիւն առնիցես. Զայս սպատմեաց Յովհան վարդապետ Կարնեցի՝ որ Երաշակերտ նոյն Մինասին:

ԳՏԼՈՒԽԻ Ի.

Յառաջայէ ոյէ զառաւութ երեցան:

Յորժամ եղել հաշտութիւն՝ ի մեջ երկուց թագաւորացն Պարսից և՝ Տաճկաց՝ երթևեկութեամբ Յաղաթայ - Վօթուկ - Մահմատ խանի, թագաւորն Շահ - Ամիրի ետ ՚ի պարզենմա զնանութիւնն Երեանայ. զի մեռեալ Եր Վալպալի խանն ՚ի թուին Ուջի.՝ Ի սորա երկրորդ ամին եկն այր մի կնաւ իւրով ՚ի Խասենայ, և բնակեցաւ ՚ի Կոտէս գաւառ.՝ ՚ի զիւզն Երախուս. Եւ կինն այն ծնաւ որդի, և ետուն զնա մկրտել Գալուստ երիցուն. որպէս ծնունդ քրիստոնէի մկրտեաց, և ոչինչ էառ.՝ ՚ի նոցանէ վասն աղքատութեան նոցա. այլ ետ նոցա Ճիշտը ցորեան, զի հաց արասցեն ինքեանց. Եւ յետ աւուրց ինչ եկին հայր և եղբայր կնոջն՝ և ասեն ցայր նորա, դու զադ-

(14) Մի մասչիլն է մի դահնեկան, որ է իր 6 $\frac{1}{2}$ կոպէկ:

ջիկն մեր առևանգ արարեալ՝ փախուցեալ եկիր աստ, պահանջմանը՝ ընդէր զողացաք Նբերիք ընդ ձեզ Եւ նոքա ուրացան և ասեն, ոչ զիտեմք զոր ասէքդ: Եւ ՚ի բազում ասելն և ՚ի լսելն՝ և նոցա ուրանալն, ձանձրացան արքն, և զնացեալ զրեցին զիր դանդատանաց ՚ի փեսայէն և յաղջկանէն իւրեանց, և ետուն խանին: Եւ կուեալ զնոսա՝ ասէ, տուք ՚ի զոսա զինը իւրեանց: Խսկ նոքա՝ զի վատնեալ ենն, ոչ կարացին հատուցանել, ասձ կացան այրն և կինն, և յաւելին չարիս՝ մատնել զգալուստ երեց, թէ մեք վաղուրեմն կամեաք տաճկանալ, Գալուստ երեցըն ոչ եթող, այլև մերտեաց զորդին մեր, և ետ մեղ կոշառ՝ ցորեան, և ասէ, ևս պաշեմ զձեղ, և զուք մի՛ տաճկանայք, զի մի՛ կորիցէ հոզի ձեր: Եւ խանն առաքեաց արս խիստ՝ և բերին զանմեղ քաշանայն, և կայուցին առաջի նորաւ Ասէ խանըն, զու ընդէրը մերտեալ զորդի թառւրքիս: Ասէ երեցն, ևս զնոսա ոչ զիտեի՛ թէ թառւրք իցեն, զի նոքա աղաչեցին ինձ, և ես որպէս օրէն եր մեր՝ արարի առ նոսաւ: Վահնդի բազումք ՚ի Քրիստոնեից տաճկանան, նոյնպէս և զոքա տաճկացան, և մէջ զի՞նչ մեղաք: Ասէ խանն, ապա ընդէր ևս տուեալ զոցա ցորեան և կաշառս: Ասէ երեցն, մի՞թէ ողորմութիւն տալն կաշառ իցէ, զի սովորութիւն է քրիստոնեից՝ տալ ողորմութիւն ամենեցուն ըստ հրամանի Աւետարանին մերոյ Ասէ խանն, զայդ տսելով կամիս զերծանի՛ յինէն, ոչ է այդպէս. կամ տաճկացի՛ և կամ չարչարանօք սպանանեմ զքեղ: Ասէ երեցն, Աստուած մի՛ արասցէ թողուլ ինձ զշաւատն իմ. բայց թէ առանձ յանցանաց սպանանես զիս, պատրաստ եմ ՚ի մեռանել: Ասէ խանն, զի՞նչ յանցանք իցէն մեծ քան զայս՝ որ ծընունդ տաճկին քրիստոնեայ արարեր: Ասէ ամէր Գալուստն, ասացի՛ թէ ես ոչ զիտեի՛ զնա տաճիկ, և թէ՝ զիտենայի զնա տաճիկ՝ ՚ի զալ նորա ՚ի զիւզն մեր՝ ոչ թողուի մատնել մո-

ըրելոյն այնմիկ առ ուղիղ հաւասն մեր: Եւ բարկացեալ խանն՝ հրամացեաց ձագանօք տանել զնա՝ի բանու: Եւ առաքեաց Ի Մամանայի⁽¹⁶⁾՝ և ասէ, խրատ առք՝ թերեւս կարիցէք դարձուցանելը Եւ զնացեալ խօսեցան ընդ նստաբաղում մարմնական բանիք: Իմ երանելիք քահանայն Գալուստ տղէտ էր՝ ի պրոց պիտութենէ, այլ աշխարհօրէն բանիւ յանդիմանեաց զնոստ՝ և ասէ, առաջնորդն ձեք՝ ի դժոխս ամենայն համախոհնեք խրովք ընդ սատանայի, և զի՞ս ևս հրաւիրէք առ նա զնալ: Եւ բարկացեալ Ֆանայքն⁽¹⁷⁾՝ և ելեալ հարին զնա ոտամիր. և զնացեալ պատմեցին խանին: Եւ առաքեաց խանն զօրականս, զի կապեցես զնեռն նորա յետս, և տարիք՝ ի դուռն արեմուեն՝ և քարկոծ տրարէք: Եւ գնացեալ չար զնեւորքն՝ և հանին զնա՝ ի բանտէն, և առաջի արկեալ տանելին զնա՝ ի տեղի սպանմանն, մերթ՝ ի քարշ, մերթ՝ ի յոտին, ոմանք հարկանելին, և ոմանք կուփահարելին, ոմանք ձաղէլին և ոմանք խթէլին, ոմանք փետելին զմօրուսն և ոմանք զգանդուրն, ոմանք թքանելին զերեսսն, և ոմանք հայհոյէին, ոմանք նախատելին և ոմանք չար խրատ տային, վասնորոյ ձանձրացեալ սուրբ քահանայն Գալուստ՝ սկսաւ նախատել զտապշնորդութունոցու տակլիք, անիծեաւլ լիցի նա՝ և ընդունալ զնորդին, և ով ոք զնա մարդարէ գաւանէ: Եւ ազա ասսացին բերել քրիստոնեաց, զի քարկոծեացէն զնա. և վախեան ամենոցն քրիստոնեայք: Եւ նորա կալան այր մի՛ Իօսոյ ազգաւ, և ասացին նմա, հօճ զգա քարտմի՛ զի մեռցի: Եւ նա ոչ եհար: Եւ եղին՝ ի ձեռն նորա զծայր չուանին՝ և ասեն, քարշեալ զդա. և ոչ կարա զչուանն. և հարին զլաօշայն այնքան՝ մինչեւ եղեւ կիսամահ. և թողին զնա: Եւ յարեան՝ ի վելայ երիցուն՝ որպէս զայլք մարդախանձ, և քարկոծեցին զերանելին Տէր Գալուստ. և կատարեցաւ բարի դաւանութեամբ՝ ի Քրիստոս. և էր մթացեալ զօրն, թողին զնա՝ ի միջ քարանցն՝

(16) Կարդացոյ, օրինագետ.—(17) Մուշտ, օրինակա, օրէնսդրութեամբ:

և զնացին։ Եւ պահապահով պարսպաց բերդին Տաճկունքն տեսին՝ ի վերայ մարմնոյ սրբոյն որպէս կայծակունք հրոյ, և կարծեցին՝ թէ նենդաւոր տաճկունք այրեն զմարմինն նորա, և ձայնէին առ խանութպանս՝ և ասէին, զի՞նչ է՝ զոր առնեք։ Եւ նոքա ասեն, լոյս է և ոչ հուր։ Եւ ի լուսանալն՝ գնացեալ բերդապահացն՝ և պատմեցին խանին։ Եւ ասաց խանն, ես ըրունութեամբ առաքեցի զերէցն յարքայութիւնն Աստուծոյ։ Եւ հրամայեաց քրիստոնէից բառնալ զնա և թաղել ըստ օրինաց իւրեանց։ Վասնորոյ եկին բազում քահանայք և ժողովուրդք, բարձին զմարմինն՝ և զքարինս և զշողն արենաշաղախ, և տարեալ թաղեցին յանապատն Երևանայ մերձ Անանիա առաքելոյն։ Կատարեցաւ սուրբ քահանայն Գալուստ ՚ի թուին Ուշիմ՝ յաւուրս ՚Քառասնորդաց պահոցն, յաւուրս Տեան Փիլիպպոսի Կաթուղիկոսի Հայոց։

Գ. Լ. Ա. Ի. Խ. Ի. Բ.

Հայութական գործունեութիւններ։

Մեծ և առաջն թագաւորն Պարսից Շահ-Երաս քշեաց զաշխարհս Հայոց, և տարեալ բնակեցոյց յաշխարհին Պարսից Շայց ըստ հաճոյիցն առներ ազգին քրիստոնէից։ շիներ եկեղեցիս յամենայն տեղիս, և սահմանեաց յամենայն ամի յառաջի իւր Զքօրհնեք առնել։ Այսպէս ուսան ամենայն խանորայք՝ ուր լիներ՝ քրիստոնեայք, բերէին առաջի իւրեանց, և օրհնեին ջուր։ Ըստ սոյն սարասի և այս ՚Քօթուկ խանս հրամայեաց Փիլիպպոս Կաթուղիկոսին, զի արասցե Զքօրհնեք հանդիսաւոր առաջի իւր։ Եւ զրեաց թուղթ մեծ Հայրապետն Փիլիպպոս։ և ժողովեցան ամենայն վանօրէից Առաջնորդք և միարանք, և զիւղորէից երիցունք, զի ամենայն պատրաստութեամբ գայցեն ՚ի կատարել զհրամանս իշխանին։ Եւ ըստ հրամանի մեծ Կա-

թուղեկոսի ժողովեցան՝ի խնկելոյ Զոր գեղ, որ այժմ ասի. Զոր բագեղ: Եւ մտին՝ի պատարադ. և խանն էարկ վրան՝ի ներքոյ կամրջին. և նստեալ մնայր զալստեան ֆլորհնեքին: Եւ ահա ժողովեցան վայրենարարոյ Պարսիկքն՝ որ կոչեն թամթար, արարին և նոքա հանդէս՝ի նմանութիւն ֆլորհնեքին. և պատրաստեցին զննքեանս՝ի մշջ բերդին. և կացուցին դէտ արատքոյ դբանն՝ և ասացին, յորժամ մերձենան Հայք ելանել արտաքս յեկեղեցւոյն, ազդ արասջիք մեզ, զի և մեք ընդ նոսա ելցուք: Եւ ունեին ինքեանց առաջնորդ ոմն՝ ուրացեալ եպիսկոպոս՝ որ ասեին Շամբին: Խոկ Հայք՝ի յաւարտել պատարազին ելին՝ի գնալ՝ի տեղին՝ զոր սահմանեալ էին՝ի ներքոյ կամրջին: Եւ Օաքարիա վարդապետն՝ որ էր Առաջնորդ սուրբ ուխտին Յօվհաննու վանից, հեծեալ՝ի ջորւոջ՝ և Ռ սուրհանդակիք առաջի նորա՝ և գնայր: Եւ յորժամ տեսին զետքն, ազդ արարին թամթարացն. և ելին արտաքս զօղանջելով և բարրանջելով՝ դաշուլով՝ զուռնայով՝ և շրվուելով և ծափելով, և ուրացեալ Շամբինն առաջի նոցա: Եւ իրեւ ետես Օաքարիա վարդապետն զայն, զտեղի էառ, և հրամայեաց՝ զի զգեստաւորեալքն յետս դարձին: Եւ ինքն իջեալ՝ի ջորւոյն՝ հրամայեաց փայեկացն ըմբռնել զուրացօղն Շամբին՝ և կոխել. և հանեալ զկօշեկ իւր՝ կալեալ զզլուխ ուրացողին՝ և բեւոք կօշկին հարկաներ, մինչեւ վիրաւորեալ արիւնաշաղախ արար: Եւ պիղծ ուրացօղն աղաղակէր, միթէ հաւատոք տաճկաց յերկիր խորտակեցան. զի Հայս այս սպանանէ զիս: Եւ զայս լուեալ թամթարացն՝ յարեան՝ի վերայ Օաքարիային, զի սպանցեն գնա: Եւ մեծամեծ Տաճիկքն հանին սուր՝ի վերայ նոցա՝ և ասեն, զուք կամիք զամենայն ազզս մեր տալ ջընջել. սոքա հրամանաւ Ծահին առնեն առ՝ի զրօսանս մեր. և ահա խանն պատրաստեալ մնայ սոցա. և զուք հակառակ Ծահին և խանին գործէք: Եւ զայս լուեալ զադարեցին: Եւ ազա ծանուցին խանին զդառնալն յետս ֆլորհնեքին. և խանն ա-

ռաքեաց բազում միջնորդս, հազիւ հաւանեցան զնալ և օրհնել զջուրն, և յաւարակին ջրօրհնեքին՝ հրամայեաց խանն և բերին երկու պատուական պատմուձան, մին Ամթուղիկոսին՝ և մին Օքքարիային։ Եւ խանն կալսւ զնամիտարանարս 1, որք զհակառակն ալ արին, և էառ ՚ի նոցանե տուգանս Յ թուման։ և զպիդ ուրացօղ Շամբինն եհան յերեսաց՝ և աքսորեաց ՚ի բերդէն, և եկոց սեերես յԵսաուծոյ։

ԳԼՈՒԽԻ ՔԲ.

Թագառարքութիւն է առ Ծահ-Եբամէն՝ և Հաշուց։

Իթուին Ո.Պ.Ա. մեռաւ Ծահ-Ասիի թագաւորն Պարսից։ և էառ թագաւորութիւնն որդին իւր Սբաս, այր խելօք և զիտուն, և ՚ի թագաւորելն իւրում հաստատեցաւ զործ նորա Քանզի հայր սորա Ծահ-Ասիի մինչ էր յԱրևան, Հնողիկք առին զԴ անտահար, և այս Ծահ-Եբաս զնայեալ պատերազմեցաւ ընդ նոսա մեծաւ զօրութեամբ, և էառ զնա բազում հնարիւք, և դարձաւ յԵսպահան։ Եւ խորհեցաւ զնալ ՚ի վերայ Բաղդատայ՝ առնուլ զնաւ Խակ իշխանիքն և մեծամեծքն ոչ թողին՝ ասելով, հայր քո հաշտութիւն արար ընդ նոսա երդմամբ և անիծիւք, և ետուն պայման ամս 1 մնալ հաշտ։ Եւ ահա Եւ և Օ ամ չե է հասեալ պայման ուխտին, և գու լնզէր լինիս ուխտազանց՝ և դաշնաւէր՝ և անիծահարս Եւ իրրելուաւ զայս խոհեմ ալքայն, դադարեցաւ ՚ի խորհրդոյն, և եկաց հանդարդութեամբ։ Եւ էր սիրօղ քրիստոնէից։ Եւ յորժամ առնէր ընթրիս մեծամեծաց և նախարարաց իւրոց, կոչքը և զաւագանին ջուղայու զխօճայ Աաֆուազն և շխօճայ Պըտումն Ս.յլ և զնայր ՚ի տունս քրիստոնէից՝ և ՚ի հարսանիս՝ և ՚ի պատիւս, և ոչ խարէր Ս.յլ էր ուղղաղատ և իրաւարար։ Եւ այսպէս եկաց նա ՚ի կենդանութեան իւրում։ Եզրի և

զրամ անուան իւրոյ մեծ քան առաջին թաղաւորացն, և ան-
ուանեաց Ահապ - Պատակ:

Գ. Լ. Ա. Խ. Խ. Տ. Վ. Հ.

Ը լուս է լուս այս:

Որպես բազում անդամ ասացեալ եմ մեծ և առաջին
Ըահ - Արասն քշեաց երկիրս Հայոց, և տարեալ բնակեցոց
յաշխարհն Պարսից, նոյնպէս և 'ի Արտաւիլ քաղաքն ընակե-
ցոց սակաւ քրիստոնեայս, և շնուրցին փոքրիկ եկեղեցի մի հը-
րամանաւ. Ըահին՝ մերձ 'ի մզկիթն իւրեանց՝ որ առեն Ը խ-
Ամֆի, փայտակերտ ըստ թուականին իւրեանց: Առ սակաւ
սակաւ բազմոցան քրիստոնեայքն, և եկեղեցին փոքր էր և ոչ
բաւէր ժողովրդեանն, և տառապէին յոյժ: Ա անորու խորհե-
ցան՝ զի զարեւմտեան որմն եկեղեցւոյն քակեսցեն և ընդարձա-
կեսցեն փոքր ինչ ըստ բաւականին: Եւ խմացան Վուղրիքն և
Վուլոյքն, և զրոհ տուեալ ժողովեցան, և միարանեալ քա-
կեցին զեկեղեցին 'ի հիմանց: Եւ քրիստոնեայքն զնացեալ ա-
ղաղակ բարձին առ զուռն իշխանին. և իշխանն ոչ կարաց խա-
փանելի Եւ ասէ խանն, աշա նոքա արարին ըստ կամաց իւր-
եանց՝ և ոչ լուան ինձ. վասնորոյ զրեմ ևս թուղթ առ Եհամի-
մալ - Տօլուաթին, և զուք զնացէք առ նա. և նորին հրամանա-
ւըն արդ արարէք Ըահին, թերեւս սցց լիցի ձեզ: Եւ զրեաց
թուղթ կարի օգուտ նոցա: Եւ էր 'ի քաղաքին երեց մի՛ լեզ-
ւաւ ճարտար և ճոռոմարան, զնա հաստատեցին՝ զի զնացէ:
Եւ ժողովեցին զրամ բազում՝ և ետուն նմա. և առեալ զզիրս
խանին՝ և գնաց. և եհաս յԱսպահան. և զնաց նախ առ Խո-
ճաց Աամբուազն, զի նա էր աւագ Զուղայու. և նա առեալ տա-
րաւ զնա առ Եհամիմալ - Տօլուաթին՝ որ ասէին Աարութալի,
և ցուցին նմա զթուղթն խանին: Եւ իրեւ լնթերյաւ՝ ասէ,

երեց դու զբեան արզ՝ որպէս և զիտես, և տուր խօճայիդ ընդ
 խանին թղթին, և յորժամ գնամք առ թագաւորն, անդ տա-
 ցէ ինձ, և ես ցուցից Ծահին: Եւ զբեաց արզ լալադին դի-
 մք, և ետ ցիօնայն. և 'ի պայմանեալ աւուրն ետ ՀՀտիմալ-
 Տօլուաթին, և նա ետ Ծահին զԲ թուղթն: Եւ աստ տես
 զողորմն թիւն Աստուծոյ, զի որպէս քաղցրացաւ սիրան Ար-
 տաշէսի առ Վուրթքէ, այսպէս և սիրա թագաւորին Արա-
 սայ 'ի վերայ երիցուն, և ասէ, բերէք առիս զտէր արզիսւ
 Եւ կոչեցին զնա, և գնացեալ երիցուն և անկեալ 'ի վերայ
 երեսաց՝ և առաթուր զնաց և համբուրեաց զոտս արքային՝
 և յարեաւ: Եւ ասէ արքայն, զու ես զրեալ զարզս այս:
 Ասէ երեցն, այս տէր իմ արքայ: Ասէ Ծահն, ասա և բե-
 րանով, զի զիտայից: Եւ նա պատմեաց զամենայն: Եւ Ծահն
 ունին եղեալ և լսէր: Եւ ապա կոչեաց նոտար՝ և ասէ, զրեա-
 առ խանն և առ մօնայքն Արտաւիլոյ, թէ դուք՝ որ քակեալ
 էք աղօթանոցն քրիստոնէից, և զյիշատակ հաւոյն իմոյ ջըն-
 ջեալ էք, վնասու ձեր մեծ է և արժանի մաշու. սակայն նե-
 րումն լիցի ձեզ յայսմ նուաղի, վասնզի ծառայ էք Ծխ-Ատ-
 ֆուն: Այլ հրաման է 'ի մերոյս թագաւորութենէ, զի դուք
 ձեղէն և ձերով զրամով և զործավարօք, արուեստապետօք և
 ծառայիւք՝ վերակացութեամբն Հայոց՝ շնոր զեկեղեցի նոցա,
 ուապէս և ինքեանք կամին, նոյնպէս շինեսցեն եթէ մեծ և եթէ
 փոքր, զի յիշատակ ազգին իմոյ մի կորիցէ. զի աղօթեսցեն անդ
 վասն Ծխ-օղոյ օճաղին: Եւ ինքեալ զմուղթն ետ ցերեցն՝
 և ասէ, երթ զնա: Եւ ելեալ երեցն յետս յետս զնաց: Իրրե-
 հեռացաւ փոքր մի դարձոյց յետս, և ասէ, զիտեմ զի ոչ ու-
 նիս 'ի ճանապարհի հացագին. և ասէ ցգանձապետն, տուր զմա-
 ժամանական, զի հացագին արասցէ ինքեան 'ի ճանապարհի.
 և ասէ, փութա զնալ: Եւ ելեալ երեցն՝ և զնացեալ յԱր-
 տաւիլ, և եցոյց զոաղամն խանին: Եւ իբրեւ ընթերցաւ զոա-
 ղամն, ետես՝ զի սաստիւ էք զըեալ. և կոչեայ զշեսն և զմուղ-

րիսն՝ և ասաց զհրաման թագաւորին: Եցոյց և զթուղթն
Ըահի՞ որ զրեալ էր, թէ՛ զուք զայդ առնելով թշնամի եղաք
Ծխ-Ապիու օձաղին: Եւ իբրև լուսն զայս, սասանեցան ամե-
նեքիանքն: Ա տանորոյ տացին, հրաման թագաւորին՝ի վերայ
զլեց մերոց: Եւ իսկոյն կազմեցին զուսուցիս և զորմաղիրն և
զաղիւսարարն, և հրամայեցին ձայոց՝ զի զտեղին չափեցին:
և ազա սկսան զնել՝ չ հիմունս քարինս միծամեծս և անասշս,
և՝ի վերայ նոցա եփեալ կղմինդր. և՝ի բազմութենէ զործա-
ւորաց փութով աւարտեցաւ աղիւսաշեն, հոյակապ և գեղեց-
կայարմար: Եւ եղեւ յորժամ հաստատեցաւ եկեղեցին, կոյին
քահանայք Պ. և կացուցին ժամկու մի կարի հնարաւոր, որ
յամնայն գիշեր երթայր և հարկաներ զդրունս և զերդս քրիս-
տոնէիցն, զի եկեցին յալոթու: Եւ՝ի գիշերի միում՝ որ էր
ուրբաթ, և մօնայն ելեալ՝ի տանիս Վզկթին՝ և առաջն⁽¹⁷⁾) զո-
շեր, և ահա շունք քաղաքին ոռնային ընդ նմա. և յորժամ
լուր մօնայն, շունքն ևս լուին: Եւ յորժամ կոչեր մօնայն, շուն-
քըն ևս ոռնային: Եւ լուեալ ժամկուն զունալն շանց, առէ
ինքն ինքեան, արդ շունքն ոռնան ընդ մօնայիցն. և թէ՝ ես ևս
ոռնացից, զի՞նչ վնասիցիմ. և սկսաւ բարձր ձայնիւ դոչել,
Օքնէալ է Ասուսած. Օքնէցէ՛+ Ալսուսած: Եւ լուեալ
Վուղրոյն զձայն նորա՝ լուեց, և զնացեալ եմուտ՝ի սուզ. և
եկին աղօթողքն և ասեն, ընդէ՛ր խափանեցեր զկանչելդ: Ասէ
Վուղրին, կորեաւ հաւատն մեր: Վաեն տաճիկքն, ընդէ՛ր: Ասէ
մօնայն, վասնզի ձայոց բանիզն⁽¹⁸⁾) այնքան բարձր կոչեաց, մինչ զի
մերն խափանեաց: Եւ առեալ զմօնայն՝ և զնացեալ առ խանն՝
և աղաղակ բարձին: Խսկ իշխանն ետ կոչել երեքեան զերիցուն-
սըն՝ և առէ ցնոսա, զուք այնքան լրբեցայք՝ որ զեկեղեցին ձեր
տաճկացն ետուք շինել. այժմ զորմէ՛ առիք հրաման ժամ կո-

(17) Գ-Ն+Ց, ձայնող, ալսուսակալ (ժամկու):

(18) ԱՒՀ- երգ, նուազ առաւասեան:

չեղոյ Ասեն երիցունկըն, մեք չեմք ժամկոչ, և ունիմք ծառայ մի
թերեւս նա իցէ ձայնեալ: Հրամայեաց իշխանն՝ և բերին զնա:
Եւ խանն(ասէ), զո՞ւ ես ազօթիու քաղաքիս: Ասէ ժամկոչն, այո՞ւ:
Ասէ խանն, հրամայեմ՝ զի արկցեն դքեզ առաջի շանց. զի շար-
րաչար լավեացին դքեզ: Ասէ ժամկոչն, ընդէ՞ր: Ասէ խանն, ո՞ւ
ետ հրամանն քեզ՝ որ ձայնիւ կոչես՝ և մեր մօլայի ձայնն խափա-
նի: Ասէ ժամշարն, ընդ իշխանն, ես աւսի մօլայն բանն⁽¹⁹⁾: տայր,
և շունք քաղաքիս ոռնային ընդ նմա, և յորժամ լուեր մօլայն,
լուեին և շունքն, և յորժամ կոչեր մուղրին, ոռնային և շուն-
քըն, և ես ասացի, արդ շունքն ոռնան, նոցա ոչ զոյ պատիժ
և ոչ տուղանք. և ես եմ մի 'ի շանց անափ, ես ևս ոռնամ. թէ
շանց պատիժ և տուղան լիցի, ինձ ես լիցի: Օսյոյ իրրե լուան
տաճկունքն՝ ծիծաղեցան և ասեն, զուք ձեզէն զձեզ շուն ա-
րարիք. արդ երթեալ ոռնացէք որպէս զշուն: Եւ յայնմ օրէ
մինչեւ ցացսօր բարձրաձայն կոչէ ժամկոչն, և ձայն նորա անկանի
'ի մզկիթն՝ որ ասեն Ծ խսափի, և ասեն Հայոց շունքն ոռնան:
Երդ մի' ոք համարեացէ զրանս զայս՝ մեզ նախատինս և անար-
գանս, այլ պարծանք և վառք: Օհ ասէ սուրբն Պօղոս, զի թէ
պատճառանօք և թէ ձշմարտութեամբ վԲրիստոս քարոզի:

ԳՆԱԼՈՒՔԻ ԽՐԱ.

ԳՆԱԼՈՒՔԻ ԽՐԱՅՐՈՒ ԽԱՆԻՆ:

Զաղաթայ- Քօթուկ- Ամահմատ խանն կարի ազահ էր,
և ոիշտ, և յափշտակօղ. քանզի զոռճիկս սպայիցն ըստ սո-
վորութեանն արդելոյր և ոչ տայր. և երարձ զիշխանու-
թիւն զօրացն, և ոչ տայր ումեք զործ ինչ, և ոչ առաքէր
հարկահան ոք 'ի նոցանէ, այլ տայր այնոցիկ՝ որ ընդ իւրն էին
եկեալք. վասնորոյ ձանձրացան ամենայն զօրքն, և միաբանեալք

զբեցին թուղթ ամրաստանութեան, ետուն և կնքել Փիլիպ-
պոս Կաթուղիկոսին, և առաքեցին առ Ծահն։ Եւ լուեալ
զայս Ծահն՝ առաքեաց այր ոմն Խոսրով անուն՝ ազգաւ Արա-
ցի, և պատուիրեաց նմա իշխել Երեանայ, և զՄահմատն ա-
ռաքել առ ինքն։ Եւ գնացեալ Խոսրովը Երեան՝ և նստաւ
խան, և առաքեաց զՄահմատն Ասպահան։ Եւ էր Խոսրովն
այս՝ այր լու և բարեսէր, և բարեկամ քրիստոնէից. զնայր 'ի
վանորայս, և տայր պարզես և ընծայս վանորէիցն։ Եյլե էր
սղօրմասիրա և առատաձեան. և թէ որ տանէր նմա ձու մի, և
նու ադուցանէր նմա պատմուման մի։ Ընեթեացոյց և զՀարին
քրիստոնէից։ Երարձ և մաքսն 'ի ճանապարհաց։ Եւ էր առա-
տութիւն և լիութիւն ամենայն իրաց, և թեթեազին ամենայն
ինչք ընչից։ Եզր և ինքն գուսան և երաժիշտ, երգեցիկ և յօ-
րինօդ երգոց։ Յորժամ երթայր 'ի վանորայս, կոչէր զմանկունս
գոլրոցաց, և տայր երդել զշարական և տաղ, և այնողիսի վա-
րուք կայր բարեձեռութեամբ։ Յորժամ բազմը յուտել և ըմ-
պել, նստուցանէր զմենծամեծս Նայոց ընդ իւր։ Եւ 'ի դաստա-
տանս ու զզադատ և իրաւարար. և այսպէս կայր նա Երեան,
և գնալն նորա յետոյ ասասցուք։

Պ. Ա. Ա. Խ. Ե. Ե.

Ասորական Պատրիա - Աստվածաշնչն

Պատրայ - զուպաթս այս էր ազգաւ Պարսիկ՝ 'ի տուշմէ մելիք
Ապահնեաց։ Եւ մինչ էր Ծահ - Ասֆին 'ի վերայ բերդին Երե-
ւանայ, Պատրաթս այս շրջէր 'ի դրունս իշխանացն, և բազում
կաշառօք էառ զքաղանթարութիւն երկրին Երեւանայ, որ ասի
Պարսիկրէն՝ Ծահը իւրի, և Նայերէն ոչ զիտեմ զի՞նչ ասի,
սակայն ինչ և իցէ հաստատեցաւ 'ի վերայ զործոյն։ Եւ էր
գործ նորա այս զի զոր ինչ հարկ տան իշխանին, սա ոլե չա-

ւառապետացն, և զաւառապետքն զրին զեզօրէիցն. և ժողովեալ ձեռամբ ոստիկանաց՝ և ասհինն իշխանինն Խոկ Վալունթարն Վարայ - Վուսպաթ՝ զոր ինչ փոքր հարկն էր՝ զրէր զաւառապետացն, և զօր ինչ մեծ լիներ՝ ինքն զրէր ներհակ և հակառակ. զի զրէր յէջմիածին՝ ածուղ, և յԵպարան՝ եղեգ, իՔանաքեռ՝ գերան մայրեաց, և 'ի ՅՕՄզկունեացձոր՝ ազդիր Եւ այսպիսի վասնդօր տառապեցուցաներ զումիկնն Եւ կաթուղիկոսն Փիլիալոս բազում անդամ յանդիմաններ զնա. և նոու լսեր նմա: Եւ էր նորա ծառայ մի՛ որ ասէին Վաս - Եհմաա. սա առաքեցաւ 'ի Վալանթարէն (ի) զործ ինչ ի զիւղն Գրանկանոց, և նեղեր զզիւղականնն. և նոքա եկին առ կաթուղիկոսըն՝ և գանգառակցին 'ի Վահմատէն: Եւ կաթուղիկոսն զրեաց թուղթ առ նա սիրով: Խոկ սիրովն այն Վահմատ եթուք 'ի վերայ թզմին՝ և պատառեաց, և բազում հայ հոյանս ասաց կաթուղիկոսին: Եւ լուեալ զայս քալանթարն՝ և ծիծաղեցու: Եւ եկեալ սրատմցին կաթուղիկոսին. վասնորոյ 'ի խորխոցեցաւ 'ի չափ մահու, և առաքեաց հրատիրակս, և ժողովեցան ամենոցն զտառապետքն և տանուտեարք, և արարին քննութիւն վասն իշխանական հարկացն. և կուտեցին 'ի վերայ նորա անշափ և անհամար: Խրբե ետև նա՝ թէ բարդեցաւ 'ի վերայ իւր՝ և ոչ կարէ տալ համարս, այնուշետե սկսաւ աղերս արկաննել, և աղաւէր միջնորդս արկեուլ, զի հաշտութիւն արասցէ ընդ նա. և ոչ եղեւ Ա ասնորոյ յուսահատեալ եղեւ յանենայն կողմանց, քանդի ճշտիւ սրահանգեին տալ համարս: Եւ ապա զրեաց ձեռամբ իւ բով մուրհակ այսպէս. թէ ես Վուսպաթս զիր ետու Ճայոց ալզին, թէ ես, և կամթէ (որ) յազդականաց իմոց եթէ քալանթարութեան ցանկամք կամ մասնեմք յայն զործ, ԵԱ թու նան տամբ յաբրունիս, և զլուխ մեր հատցի: Զայս թուղթս զրեաց և ետ կաթուղիկոսին, ահա կոյ զես ևս 'ի սուրբ յէջմիածին: Եւ զՎարայ - զուսպաթ սքսորեցին. և կայր որպէս մի 'ի ռամկոց: Եւ յետ այսորիկ եղեւ չարախօսու-

թիւն՝ ի խոսրով խանէն առաջի թաղաւորին Մբասայ Աւ թաղաւորին առաքեաց յԱշրեան այր ոմն Վահմատ անուն՝ նըստիլ անդ տեղապահն, և զխոսրով խանն առաքել առ ինքն Եւ զնայեալ խոսրով յԱշպահան, և Վահմատն նատաւ տեղապահն Եւ Պարայ-գուպաթուայս և իշխան մի՛ որ կարդեալ Եր յազգունուստ հարկահան, սոքա երկոքեանս միարանեցան ընդ Վահմատին, և առեւալ զնա և տարեալ 'ի տուն խոսրով խանին՝ և ցուցին նմա զիանայս նորա: Խոն՝ թէ Վահմատն բանութեամբ շնայաւ ընդ առաջ կնոջ խանին, և յղացոյց զնա: Խոկ խանն փութով զարձաւ և եկն յԱշրեան. և Վահմատն լուսու զգալն խանին, առաջազոյն ելեալ փախտեայ զնաց երկուցեալ 'ի խանին: Եւ եկն խանն, եմուս 'ի բերդն, և պատմեցին նմա՝ զօր ինչ արարին Պուպաթն և իշխանին: Եւ բարկացեալ հրամայեաց ըմբռնել զնա, և դնել կունդ 'ի պարանցն, և շղթայ 'ի յոտան, և արկանել 'ի մթին և 'ինսեմ' և 'ի զարշահոտի բանադի, և 'ի ոջլն և աղստէն և 'ի բազմութենե, որդանցն՝ և յերկայնանալ հերացն՝ վիրաւորեալ սատակեցաւ: Եւ ապա կալեալ ընկեր նորա աքունական ծառայ՝ և կախեալ ընդ շան՝ և ըարաւար հարուածով էսպան. և ապա խոշտանեկեր զիին իւր, ազդի ազդի դանիւք և հարուածովք նեղեր և վշտացուցաներ զնա: Եւ եր եղբօրորդի մի կնոջ նորա, որ զրեաց առ հաւն իւր՝ որ հայր եր կնոջ խանին, և ձեռամբ պնդաղեապանաց ծանոյց նմա զտառապանս դստերն: Եւ եր նա մեծ առաջի Ըահին, զի եր սեղանապետ, որ ինքեանիք առ բանակ էտէն ասեն. որ այլ իմն կերպիւ ծանոյց թաղաւորին: Լուեալ եր և զսպանումն ծառային, վասնորոյ բարկացեալ առաքեաց զնոյն Վահմատն՝ իշխել Երեանայ, և զխոսրովն աքսորել: Որ զնացեալ ոչ ետես զերեսս Ըահին, այլ մտեալ 'ի կերպ առ բանակ (այս է ապթալ), և փախեալ 'ի ձնդիկս, և անդ մեռաւ:

ԳՅԱԼԻՒԹԵ Կ.Օ.

Մասն և աղաւանութեան թաւահմազ - պաշտիկ խանին:

Գյրեցաք զգերութիւնն թաւահմազ - զուլի խանին, որ ՚ի ժամանակս Մուրաստ թաղաւորին Օսմանցւոց մնաց է Ստամբուլ. և յիտ Մուրատին նստաւ Խալիթհմ եղբայր նորաւ Եւ յիտ Ծահ. Ասվածւն նստաւ Արաս որդի նորաւ Խորս ժամանակին թուղթ աղաւանաց զրեաց թաւահմազն առ Եշիախմալ - տօրուառ թըն, զի ծանուացէ Ծահին վասն իւր, զի խնդրեացէ զինքն ՚ի խոնթկարեն, զի եկեացէ ՚ի հայրենի երկիրն, և անդ մեոցիւ Եւ Եշիախմալ - Տօրուաթին ծանոց Ծահին Եւ Ծահն ՚ի ձեռն զեսպանաց խնդրեաց զնա ՚ի խոնթկարեն, և խոնթկարն բնքն ետ հրաման զնալոյ նորաւ Խոկ Առոստամ խանն՝ որ եր իշխան թաւրիզու, ոչ զիտեր զայս ամենայն Եւ յորժամ լուաւ, ՚ի խոր խոցեցաւ ՚ի շափ մահու. քանզի թշնամի եր նմա, և ոչ կամեր զալ նորա աստ, զի զիտեր նա՝ թէ յորժամ թաւահմազն լիներ աւագ և զըուխ ամենայն զանորիցն, և ինքն փոքրանայր քան զնա. և կայր չ վասնզիւ Ա ամենույ զրեաց թու զթ առ վազիրն Օսմանցւոց, թէ որով իմաստութեամբ թողուք զդա զալ այսր. զի յորում աւուր եմուտ նա յաշխարհօ Պարսից, Աստամպօլ տեսանեք ելեալ ՚ի ձեռաց ձերոց, վասնզի ելեւ մուտ աշխարհիդ ձեր իմացաւ, և զիտաց զամենայն Եւ իրեն եհաս թուղթին Առոստամին տո վազիրն, Գ. առուրր առաջ ելեալ եր թաւահմազն ՚ի Առոստանզնուալսէւ Եւ առաքեցին զինի նորա հեծեալս, և հասին նմա ՚ի քաղաքն Նիկոմիդա, որ այժմ ասի Խզնիմուտ, և սպանին զնա. և անդ թաղեցին Եւ շննեցին ՚ի վերայ նորա զուպայ: Եւ որք ընդ նմա են եկեալ՝ պատմեցին Ծահին, թէ հրամանաւ Առոստամիսանին սպանին զթաւահմազն: Եւ բարկացեալ Ծահն՝ առաքեաց և անգամ անդամ յօշտ տեցին զնա՝ և արկին շանց. և տյնովէս կորեաւ: Արով շափով

շափեաց, շափեալ եղեւ, զոր ինչ արար նա ընկերին, անձամբ
էաւ զվոխսարինին

Գ. Լ. ՈՒԽԵ ԵԽԵ.

Ա շառն իստութեան առջեպահուն:

Ի թուին ՈՒՃՇ և Գ. յօդոստասի ԲՆ յաւուր ԴԱՀԻ Աստուա-
ծածնի բարեկենդանին էի ես 'ի մայրաքաղաքն Պարսից 'ի Օմաւ-
րէզ, և 'ի Էշերրորդ ժամու աւուրին խաւարեցաւ արեգակն, և
եղեւ տիւն որպիս ամսով ծածկեալ զիշեր, և խաւար կապու-
զափեզերս, և աստեղքն ճառագայթեալ երեւեին այլակերպ. և
ամենայն արուեստաւորք և վաճառականք աղխեցին զղբունս խա-
նութից և կրտպակաց իւրեանց, վասնզի 'ի նոյն ժամն բաղմացան
գողք: Եւ թռչունեքն՝ որք կային 'ի քաղաքն՝ սասանեցան, և
ահ և երկիւղ անկաւ 'ի վերայ ամենայն մարդոյ: Եւ մնաց այն-
պէս խաւար 'ի շափ կէս ժամու, և ապա ծագեաց զլցուն: Իսկ
իշխանն քաղաքին՝ որոյ անուն էր ՏԱՅԱՆ թէկ՝ ժողովեաց զա-
մենայն զիտունս Պարսից, զի քննեսցեն՝ թէ զէ՞նչ էր պատ-
ճառ խաւարման արեգականն: Ամանք ասացին՝ թէ թագաւոր
մեռանի: Ամանք ասացին՝ պատերազմ լինի և հեղումն արեան:
Ամանք ասացին՝ մահ անկանի: Եւ այլք՝ այսպէս և այնպէս: Իսկ
իշխանն ոչ հաւատաց ասացելոց նոցա. այլ առաքեաց յեկեղեցին
Նայոց, զի քահանայք նոցա քննեսցեն: Եւ էր անդ վարդապետ
մի: Զաքարիա անուն՝ 'ի զեղջէն Աստապատու, և մեք ևս ընդ
նմա, և քննեցաք տօմարական արշեստիւ՝ և զտաք՝ զի լուսինն
Եւ օր ոչ կատարէ զգնացս իւր, այլ Իմծ օր և կէս ընթանաց, և
այն մնացեալ կէս օրն ընծայումն առնու. և այն է՝ օր յորժամ
Նայոց տօմարի Ախասկ առնեն, Իմծ և կէս երթան յերեսնիցն,
և մնայ կէս, և այն է կիսակ ամսոյն: Նոյն յայս խաւարման
Իմծ լուսնին կատարեալ էր զընթացս իւր, և 'ի կիսոյ աւուրին

Եմ, և կես առնոցը լուսինն ընծայումն յայնով դօտող, որ ուներ և արեգակն, և 'ի նոյն զօտում 'ի ներքոյ արեգականն՝ ընծայումն էառ լուսինն և եկաց ընդդեմ արեգականն և խաւարեցոց զնաւ: Եւ զի մնաց խաւար կես ժամ, այն կեսն երեսնիցն պակասն էր, զի անցեալ լուսնի պակասն էր և նոր լուսնի սկիզբն որպէս ի մասնել, արեգական ցերեկին՝ աւարտ լինի և զիշերին սկիզբն: Այսողես և յայն կես ժամուն՝ որ լուսինն ընծայումն առնու՝ ոչ կատարեալ թէ և ոչ իմն, ոյլ կես ժամ: Այս կես ժամքս և կես աւուրջու ժողովին, և առնէ թէ զի տարբին՝ Գմբ լուսին: Եւ այս խաւարումն պատահչեցաւ է Գմբ լուսնին՝ է սկիզբն ընծայմանն լուսնի: Զայս պատմեցաք մեք ծառայից իշխանին, թէ ոչ զց վնաս 'ի խաւարմանէ արեգականն. քանզի լուսինն 'ի ներքոյ կալով՝ խաւարեցոյ զնաւ: Եւ զնացեալ նոյա՝ պատմեցին իշխանին, զոր և լուսն 'ի մէնջ. և նա սրատագնոեալ ճրշմարտեաց զմեզ, և զմօլուսյն իւրեանց ստեաց և արհամարհեաց, և առաքեաց մեզ բազում միրդ և շամիչ:

Գ. Լ. Ա. Խ. Ի. Բ.

Ա առն Ա ահմատ խանին՝ և լուր վարսոցն նորա:

Այս Ա ահմատ - զույլի խանս որդի էր մեծի իշխանին՝ որ Լար - բէկ կոչենին. որ էր աւագ առաջի մեծ և առաջին Շահ - Արասին. և փոքր Շահ - Արասն և խանութիւնն որդւոյ նորա Ա ահմատի, և առաքեաց յերեան՝ իշխել նմա, որ եկեալ մեծաւ զօրութեամբ և փառօք՝ և եմուտ յաշխարհս մեր՝ խրոխտալով՝ և հպարտութեամբ, զի զուռղ էր և ինքհաւան և աղոհ: Ա ասնորոյ և քայքայեաց զամենացն ուղղութիւնն՝ զոր եղեալ էր խոսրով խանն: Ա ասնզի ծանրացոյց զհարկն. և հաստատեաց զմաքսն ծանսազարհաց, և զոր ինչ վաճառիւր ծանրագնի թէ ցորեան և թէ ոյլ ինչ: Ա յլ և յամենացն ամի

առաքեր քննիչս արտորելից զբել, և զշնգորդն ամ յամկ յաւելուին։ Եղնապէս զմուօզս խաշանց, զշափօզս այգեաց, և զզլապիրս. և այսէս ՚ի ներքոյ հարելի եղ զամենայն. և զորինչ Խոսրովն թեթեացոցեալ էր, սա ծանրացոյց և մեծազին արար։ Եւ եղել թշնամի և հակառակ ազգիս մեր։ Գնաց ՚ի սուրբ Աջմիածին ՚ի պատճառս զրօսանաց. և տեսեալ զվայելութիւն և զփառս նորա՝ զչարեր. և ապա ասաց, հրամանէ ՚ի մմնջ՝ զի մինչ աստ եմ ես՝ ոչ հարկանել զանդակ, և ոչ կոչնակ, և ոչ այլ ինչ ձայն։ Եւ ՚ի զիշերին այնմիկ եկեալ ՚ի գուռն պարապին ոմն Զուղացեցի հարկաներ, զի երթիցէ աղօթել։ Խոկ պիտի խանն բարկացեալ՝ ասէ, ոչ ասայի ոչ հարկանել ինչ, և զուք ահա հարկիք դառնաքուն. և կալեալ զայրըն՝ կառ տուգանս Դ թուման։ Եւ ՚է վաղիւն ելեալ շրջէր զիսոհանոց վանիցն, և Զաքարիա վարդապետն ընդ նմա, և ծանուցաներ զբազմութիւն ծախուցն, և սակաւութիւն մտիցն։ Եւ ՚ի զբօննուշն ետես սամեծ կաթսայ մի, և չարակնեաց ՚ի միտրս իւր, և կամեր առնուլ զայն. սակայն ՚ի ժամուն ոչինչ յայտնեաց։ Եւ Զաքարիա վարդապետն էր ՚ի աան իւրում ՚ի Յօհաննավանքն, և ծանուցին նմա զքաշանս կաթսային։ Եւ նա ելեալ զնաց ՚ի բերդն. և ՚ի զրան խանին բարձր ձայնիւ զուէր, թէ երկիրս Նրարատեան աւերեցեր, այժմ արկեալ ես զձեռն քո ՚ի վանորայսն, և կամի՞ն ես քակել. արդ առեալ զամենայն միարանք վանորեիցն՝ և զնամք առ ոտս Շահին. և թէ զուզիս սպանանես, Ա Զաքարիա ես զոյ, զնոսա ոչ կարես սպառել։ Զայս այսպէս զուէր բարձր աղաղակաւ։ Եւ լուեալ զձայն նորա խանն՝ ասէ, ահա խայտառակ արար զմեզ. արդ տուք զզինս պղնձին. և Զ թուման լցին ՚ի դաստառակ, և տարեալ ետուն վարդապետին։ Եւ զայս ոխս պահեալ ՚ի սրտին, և կամեր պատճառանօք որսալ զվարդապետն, և ոչ կարաց. վասն զի

մեծամեծ տաճկունքն՝ բարեկամք էին վարդապետին։ Եւյլի
Ուստամց խանն թմիւլիզոյ եղբայրացեալ էր նմա, և հանապազ
տուաքէր նմա աղերս, և զրէր թուղթ առ խանն, թէ եղբայրդ
իմ յանձն լիցի քեզ. վասն այսորիկ ոչ կարեր առնել ինչ։
Եւ ապա սյլ իմն կերպիւ կամեցաւ արկանել յորոգայթ։ Վանդի
Փիլիպպոս Կաթուղիկոսն շնէր զօնանդակատուն սուրբ Էջ-
միածնի. և Զաքարիա վարդապետն նորոգէր զեկեղեցին
Յօհաննու վանից, իսկ պիտի խանն երբեմն առաքէր պատգամն
թէ որոյ հրամանաւ շնէր զեկեղեցիսդ, երբեմն զարուեստա-
ւորքն տաներ ՚ի զործ իւր, և այսու պատճառաւ կամեր որո-
գայթ արկանել զտէրն մեր, և ինքն անկառ ՚ի զուր իւր։ Վան-
դի էր իշխան մի կարգեալ հարկահան ՚ի Շահնշան՝ Վիրզայ Խո-
րահիմ անուն։ Առ եկեալ պահանջէր ՚ի խանեն զշարկե ար-
քունի, իսկ խանն արգելոյր և ոչ տայր, և էր կազ անհնարին
՚ի մլջ նոցաւ Եւ յաւուր միում մինչդեռ ասեին և լսէին, և
բարկացեալ խանն՝ հրամայեաց զօրականնացն արկանել զՎիր-
զայ Խորահիմն յաւագան ջրոյն, և հարկանել սաստիկ։ Եւ
հանեալ ՚ի ջրոյն, և արտաքսեցին յերկրէն Երարատեան։ Եւ
նա զնացեալ առ Շահնշան՝ զանկատեաց զիսանէն, և պատ-
մեաց զտառապանս երկրին Երևանայ, և զփետումն մօրուաց
Յօմշաննէս Եպիսկոպոսին, զոր յառաջեկայդ պատմելոց եմ։
Զկնի ամենեցուն աւաց և վասն նահատանաց իւրոց։ Եւ լը-
ւեալ Շահնշան՝ բարկացու, և հրամայեաց նոյն Վիրզայ Խորա-
հիմին՝ զնալ և կազել զիսանն, և զնել շղթայ յոտսն՝ և
կունդ ՚ի պարանոյն, և աւար առնել զամենայն ինչս նորա, և
զինքն առաքել յԱնյուշ բերդն՝ որ ինքեանք ՚Ապիսայ-զարժ
տան։ Եւ առեալ զշամանս ոյս Վիրզայ Խորահիմն, և ա-
ռեալ ընդ իւր ՚ի հաւատարմաց իւրոց, և փութանակի հասին
յԵրևան, և մտին ՚ի բերդն, և փակեցին զդրունս քաղաքին։
Եւ խանն նստեալ էր ՚ի զատաստան, և եկեալ Վիրզայ Խո-
րահիմն հանդերձ ընկերօքն՝ և ըմբռնեցին զօձիսն հանդերձին՝

և քարշեցին յամթռողին՝ և արկին՝ ի վայր, և առամթռուր արարեալ հարկանելին՝ ասելով, մօրուս փետե՞ս, ահա ընկալեալ զպատիւ փոխարինին. և եղին շղթայ յասան, և կնդեալ արկին՝ ի տուն ինչ: Բայց յետ երից աւուրց հա՞ին զիունցն՝ ի պարանոցին, և ոչ թողին ոք (ումեք) մտանել առ նա: բայց պատանի մի տանելը նմա հացա: և ոչ թողին հարթել զզլուխն: Եւ յորժամ աճեցին հերքն, և տեսին զի սպիտակ էին հերքն: Եւ յետ աւուրց առաքեցին զնա՝ ի պայմաննեա տեղին յԱնցուշ կոչեցեալն ըերդ, անդ եկաց, և անդ մեռաւ:

Գ. Լ. ՈՒԽԻ ԴԻՅ.

Ա՞նաշոքք + Էանէց ՀՅԱՀԱՆՆԵԱ ԵՇԱՀԱՀԱՊԱՔՆ:

Որպէս խոստացաք առնել զպատմութիւն Յովհաննես Եւ սպիտակոպոսին՝ գրեսցուք զամենայն: Կանդի յետ սպառեազմելոյն ընդ զիւաց՝ ի յանապատն Լ մայ՝ և յաղթելոյն՝ եկն նա՝ ի սուրբ Եջմիածին. և Կամթուղիկոսն Փիլիպպոս ձեռնադրեաց զնա Եւ սպիտակոպոս. և առաքեաց՝ ի սուրբ օւխտն ՀՅՕՀԱՆՆԱՎԱՆԻՌ՝ լինել Բռաջնորդ, որ եկաց ամս երկու: Եւ թագաւորն Օսմանցւոց Մուրատ եկեալ էառ զրերդն Երեանայ, և ամենայն երկիրն Երեանց ցրուեցան ուր և կարացին զնադ՝ զնացին: Նոյնպէս եկեալ Յովհաննես Եւ սպիտակոպոսն ՀՅՕՀԱՆՆՈՒԺԱՆԻՌ աշակերտօք իւրովք և զնաց յաշխարհն Աղուանից՝ ի վանքն Գրանակերոյ: Եւ ի նոյն ամի ձմեռն եկն Ծահ-Աստի թագաւորն Պարսից, և յետ էառ զրերդն Երեանայ, և որք ցըրւեալք էին՝ ամենեքեանքն եկին՝ ի տեղիս իւրեանց: Եկն և Յովհաննես Եւ սպիտակոպոսն՝ ի տուն իւր՝ ի ՀՅՕՀԱՆՆԱՎԱՆԻՌ, և ետես ամայի: և ժողովեաց զրազում միարանս, և ուղղեաց զկարդ վանիցն. և կարգեաց ոմն վերտկացու վանիցն, և բնքն առեալ ընդ իւր զ՞և աշակերտաց իւրոց՝ և զնաց՝ ի զաւան

Օւաղկունաձորոյ առ ՚ի ժողովել ցորեան վասն վանիցն։ Եւ պատուիրեաց աշակերտացն՝ մի՛ ինչ ասել վասն իւր՝ թէ ո՞ ոք իցէ. և էր ընդ նմա միակեաց մի հակոր անուն Կարբեցի՛ պակաս ՚ի խելաց. և վասն պակասութեան խելացն ամեննեքեանքն ճանաշեին զնա, և ծաղը առնեին և ծիծաղեին զնովաւ, և ասեին Գիրժ - Հակոր։ Եւ զոր ինչ ժողովեր Եպիսկոպոսն, Գիրժ - Հակորն Ի իշով տաներ՝ ՚ի վանքն՝ և դառնայր, և ուր և լինիւր Եպիսկոպոսն՝ երթեալ գտաներ։ Եւ ըստ սովորութեանն գնաց Գիրժ - Հակորն ՚ի վանքն։ Եւ Եպիսկոպոսն զնալով եհաս ՚ի զիւղն՝ Եպիսամարք. և էին անդ Ի երէցք, մինն ՚ի Աեւառուց՝ և միւսն ՚ի նոյն գեղջէն՝ Եպիսամարուց, և անուանք նոցա Աահակ. և զնացեալ Եպիսկոպոսն անդ՝ ետ նոցա ողջոյն։ Եւ նորա տեսին զնա գծուծ հանդերձիւ՝ և հետիօտա՞ և կաղ ևս, ոչ ետուն նմա պատիւ, այլ նստուցին զնա ՚ի վերայ մորթոյ. և ինքեանք սկսան խօսել՝ ՚ի զրոց՝ վայրապար և սուտ Եսկ Եպիսկոպոսն ասաց մի բան, թէ ոչ է այդպէս՝ զոր ասէքդ. և նորա նախատեցին զնա, և ասեն, դու այր միակեաց ես և մուրացիկ, ո՞իցես դու՝ զոր ոչ հաւանիս խօսից մերոց, լուռ լեր։ Եւ ոյլ ոչ խօսեցաւ բնաւ Եւ մինչ խօսեին նորա, ահա եկին Գիրժ - Հակորն՝ և եմուտ ՚ի ներս. և տեսին զնա երիցունքն՝ և ողջունեցին զնա, և կատականօք ասէին, բարի Եկիր Վղակեսի։ Եւ հայեցեալ Հակորն՝ ետես զլ; պիսկոպոսն այնպէս անպատիւ. և ըստ բարբառոյ իւրոյ ասէ ցերիցունսն, հօ՛ հօ՛, զիտէ՞ք՝ թէ ովէ է դա։ Եւ Եպիսկոպոսն սաստէր նմա չխօսիլ։ Եսեն երիցունքն կատականօք, ովէ է դա՝ ոչ ճանաշեմք։ Եսէ Հակորն, դա այն Կարբեցի Պարոն Տէր Յովհաննեսն է, որ ՚ի Լ մայ անուպատն Եւ տարի կռուեալ էր ընդ զիւաց։ Դանզի երիցունքն լուեալ էին զհամբաւն. վասնորոյ զամօթի հարան՝ և զամաշեին. և անկեալ առ ոտս նորա խնդրեին զժողութիւն. և ըստ արժանոյն պատուեցին զնա։ Եւ ՚ի վաղիւն առաջի անկեալ՝ շըրջեցան յերկիրն, և ժողովեցին բազում ցորեան, և ինքեանց

զրաստովն առաքեցին 'ի վանքն։ Եւ յետ երկուց ամաց կամաւ
 իւրով հրաժարեցաւ 'ի վանացն։ և զնաց յանապատն Աաղ-
 մոսավանից, և նորոգեաց զնա, և ամենայն կարդ և կանոնք հաս-
 տատեաց։ Եւ ժողովեցան անդ միաբանք աւելի քան զի։ Իսկ
 կաթուղիկոսն Յակովը յանձնեաց 'ի նա և զԱռաջնորդու-
 թիւնն Աաղմոսավանից, զի անապատն և վանքն տիրեսցէ։
 Եւ գաւառն աիդ էր ընդ իշխանութեամբ Աաղմոսավանից։
 Եւ էր անդ երեց մի գաւառապետ, զոր ասեին մելիք - տէր - Յովա-
 սափի։ Եւ Եպիսկոպոսն Յովհաննէս խրատէր զնա՝ և ասէր,
 ծերացեալ ես, բաւական է քեզ այսքան՝ զի զործեցեր զմար-
 մաւոր իշխանութիւնդ։ Երդ թող զդա որդւոց քոց։ և դու-
 հրաժոր' ալ եկ յանապատ, և կեցն զշոգի քո։ Եւ բազում
 անգամ խրատէր զնա։ Իսկ անազորոյնն այն փոխանակ լսելոյն
 և առնելոյն՝ յաւել չարիս 'ի վերայ չարեացն իւրոց։ Եւ զնա-
 ցեալ մատնեաց զնա խանին՝ և ասէ, սեազուխ մի անիծանէ
 զիս, և զքեզ հայհոյէ, թէ ընդէր է արարեալ զքեզ Մելիք։
 և այլ բազում չարախօսութիւնս արարու Եւ բարկացեալ իշ-
 խանն առաքեաց զնուուրս։ և տարան զԵպիսկոպոսն առաջե
 իւրու Վաէ իշխանն, դու ես Յովհաննէս Եպիսկոպոսն Պատաս-
 խանէ, այու ես եմ։ Վաէ խանն, զի՞նչ մնաս հասոյց քեզ մելիքն՝
 որ անիծանէս զնա և յանդիմաննես, և զիս հայհոյես։ Վաէ Ե-
 պիսկոպոսն, ես ոչ ունիմ հրաման 'ի Տեառնէ անիծանել ոք՝
 կամ հայհոյել այլ որք անկարգ են, զնոսա խրատեմք ըստ մե-
 րում օրինաց, եթէ լսէ՝ բարի է, եթէ ոչ՝ արիւն իւր 'ի զլուխ
 իւր եղեցի, նոյնպէս խրատ ետու և մելիքին, և նա թէ ոչ լը-
 ւիցէ, ինքն լիցի պարաւական ինքեան։ և մեղ ասել պարտ էր։
 Վաէ խանն, և դու զնա խրատեցեր՝ և նա ոչ լուաւ քեզ, մեք
 զի՞նչ չար արարաք՝ որ զմեզ հայհոյես։ Վաէ Եպիսկոպոսն, ես
 չունիմ սովորութիւն հայհոյել զոք, զի մեղք մեծ է առ մեզ։
 Վաէ խանն, դու զքեզ անմեղ ցուցանելով կամիս զերծանիլ
 յինէն։ Եւ հրամայեաց երկուց արանց փետել զմօրուսն և

զմոռուղսն, զթարթափսն և զունսն, և արարին այնպէս Հրամայեց զնել՝ ի դուխ նորա քաղեթիթ խաւա՞ց՝ և շըջեցուցանել է քաղաքն ամենայն, բայց ոչ արարին զայն, և թողին, զի զնաց՝ ի տունն իւր Աազմոսավանք։ Եւ բարկութիւն Վասուծոյ և հատուցումն արգարագատին փութօվ եհաս առ նոսաւ Ա անզի ի նոյն ամի անկառ ախտ շարաչար ցաւոց՝ ի վերայ երիցուն, և ծակատեալ մարմինն եղե որդնալից, և աղաղակիր առելով, Պարոն Տէր, Պարոն Տէր Եւ ապա չորեքին որդիք նորա դնացին առ Պարոն Տէրն, բազում աղաշանօք և լալով խնդրէին թողութիւն վասն հօրն իւրեանց։ Եւ զրեայ պարոն Տէրըն թուղթ, թէ Վասուած թողցէ զյանցանս քո, արձակեալ լիցիս ի մեզաց։ Եւ առեալ տարան զդիրն, և ընթերցան ի վերայ հօրն իւրեանց, և եղին ի վերայ աչաց նորա, և առ ժաման մեռաւ։ Խակ պատիժ խանին այն էր՝ զոր կրեաց՝ ի Ծահնեն՝ ի նոյն ամի։ Եւ ինքն Յովշաննես Եպիսկոպոսն իւրով կամաւ ետ Վաաջնորդութիւն վանիցն եղբօրորդւոյն իւրոյ Գաարինել վարդապետի, որ գեռ եկեալ էր՝ ի նուիրակութենէ սուրբ Եցմիածնի. և մնաց յանապատին աւուրս ինչ։ Եւ եկին մուշտեսիք յԵզեղաձորոյ ի Ծատիկ անապատէն, աղաշէին և ասէին, մեք ոչ զիտեմք զկարգ և սահմանօք անապատի, զու եկ և կարդաւորեալ զմեզ։ Եւ ըստ աղաշանաց նոցա ելեալ զնաց. և ըստ կարդի անապատի կարդաւորեաց զնոսա ուղղութեամբ և ամենայն բարեձեռութեամբ։ Ա անորոյ մախաց սատանայ ընդ բարի վարս նորա. և յարոյց փորձութիւնս ի վերայ առն Վասուծոյ. զի միակեաց ոմն Ծամախեցի՝ Աահակ անուն՝ նիւթեաց մահացու զեղ, և խառնաց՝ ի կերակուր նորա։ Եւ նորա առեալ պատառ մի եկեր, և ազգեցաւ նմա զՀնարս չարին. և ասէ ցսպասաւորն իւր, ոտ զկերակուրդ լւելեայն՝ և թափեալ արտաքս Եւ եկեալ աղուաք և անծեղք կերին, և առ ժաման կոտորեցան։ Խակ երանելի այրն ոչինչ յայտնեաց նոցա. այլ զանիսլարար եկեալ

անտի միարանօք իւրովք եկն՝ ի սուրբ աթուն Եցմիածին, և հրամանաւ Յակովը Արթուղիկոսին առաքեաց զմիարանան իւր յանապատն Արգմասավանից. և ինքն մնաց անդ աւուրս ինչ ասել դաս միարանից, և սկիզբն արարոք զԱստուածատշունը մինչև ցՄակարայեցւոց աւարտն։ Եւ ասոս ելեալ ինքըն ևս գնաց յանապատն, և անդ կացեալ վախճանեցաւ։ Եւ եղբօրորդին նորա տարաւ զմարմին նորա՝ ի Արգմասավանք, և եղ յԱստուածածնի եկեղեցին է հիւսիսոյ կողմն։ Եւ զիաելի է, զի Գ փորձութիւն կրեաց նաւ ։ Կախ մաքառելն ընդ Դիւաց յանապատն Լմայ. երկրորդ՝ մօրուաց փետումն. երրորդ՝ մահու գեղն։ Բայց մահն նորա եղև ՚ի թուին Ո՞՛ և Պ։

ԳԼՈՒԽ 1.

Ա տան ուսուածուածուածուածուածուածու։

Գնացի ես՝ ի Խնկելյանոր՝ որ սյժմ ասի Զորագեղ, ՚ի տեսութիւն քեռն իմայ։ Եւ մինչգեռ խօսեաք, և ահա եկն երիտասարդ սյր մի՝ և նստաւ մերձ սու մեզ. և քոյրն իմ ասաց ինձ՝ ՚ի ծածուկ, հայեաց յերեսս առնդ։ Եւ տեսի՝ զի սեացաւ որպէս հնդի, և եկաց սակաւ մի, և տեսի՝ զի սպիտակացաւ որպէս ձիւն, և յետ սակաւու միոյ կարմրացաւ որպէս բոց, և ՚ի միում ժամու Ճ գոյնս փոխեաց։ Եւ ես հիացեալ զարմացայ. և ասացի ցայլն, եղբայր, ուստի՛ ես զու։ Ասէ սյրն, ՚ի յերկրէն Ախնեաց։ Եւ ես՝ հարցի, թէ սյդ ի՞նչ է, զի գոյնզգոյն փոխի երես քու։ Ասէ սյրն, Աստուած զիտէ զիս։ Եւ ասացի, ազէ պատմեա։ Ասէ սյրն անուն զեղջին իւրոյ, բայց ՚ի մտաց իմաց անկեալ է։ Զի եր ՚ի զեղի մերում կոյս մի զեղեցիկ և ազնիւ, և սիրեցաք զմիմեանս ես և աղջիկն. և ասացաք ծնօղաց մերոց՝ զու-

գալցել զմեզ. և ոչ կամեցան. քանդի թշնամութիւն էր 'ի
մլչ նոցաւ Եւ մեք իբրև տեսաք՝ թէ ոչ լինի կամք մեր,
և ապա միաբանեալ առևանդ եղեալ փախեաք՝ բարձեալ ընդ
մեզ հաց՝ և սփառի՞ և վերարկու, և գնացնալ հեռացաք 'ի
դեղէն, և մտաք 'ի ձոր մի, և էր այր մի' և մտաք անդ,
և զործեցաք զւար գործն մեր. և մնացաք անդ զդիշերն: Եւ
կամեցաք՝ զի ցերեկն ևս անդ կացցուք, և զմիւս զիշերն ե-
լեալ զնամք յԱշրւան. և վաստակեալ էաք՝ ննջեցաք զդիշերն,
զի մերձ էր լուսոյն՝ և զցերեկն մինչև կէս օրն. և էի ես 'ի
մլջ ծանր քնոյ, և աղջիկն ելեալ զարթոյց զիս լալով. և
զարթեայ ես և տեսի՝ զի վիշապ մի ահազին կալեալ Ի ոտք
աղջկանն՝ և 'ի բերան իւր առեալ կլանէր: Ասէ աղջիկն,
հա՛ր նահանչան²⁾) զզլուխ դորա՝ և սպան: Եւ ես յա-
մառեցեալ ոչ կարացի յառնել: Եւ ասէ աղջիկն, տուր ինձ
զնամախո՞ և ես հարից զդա. զի դու անկար յարիւն իմ, և
հաներ զիս 'ի ծնօղաց իմոց. արդ զի՞արդ թողուս զիս այսպիսի
մահուամբ մեռանել: Կա այսպիսի ողորմելի զիմօք լսյր և ազա-
շէր. և ես յամառեալ և յապուշ կայի, և ոչ կարէի շարժել.
և վիշապն եկուլ զաղջիկն մինչև ցանդն: Խոկ աղջիկն պար-
զեաց զբազուկն, թերեւս ոչ կարիցէ կլանել Եւ վիշապն ժո-
ղովեաց զտուան, և կծկեալ³⁾ սաստիկ բացեալ զբերանն՝ և
քարշեաց զաղջիկն առ ինքն, և ջարդեաց զթեսն աղջկանն,
և եկուլ զաղջիկն. և գնաց և եմուտ յորջ իւր: Եւ ես մնացի
որպէս մեռեալ անշարժ: Եւ յետ պահու միոյ դարձեալ եկն
արտաքս վիշապն՝ և հայէր յիս. և պատառեցաւ սիրտ իմ,
և 'ի բերանոյս ել բազում արիւն, և ամենայն զգայարանք
խափանեցան, և միայն զալս մնաց 'ի բաց. և տեսի՝ զի ե-
մուտ վիշապն 'ի յորջ իւր. և ապա յուշարերեցայ. և զի
շդոյր կարողութիւն ոտից իմոց ելանել արտաքս, և սողալով

ելի մինչ ՚ի լոյս առաւտօտուն ՚ի դուռն այրին. մնացի ՚ի դը-
րան այրին. և ՚ի լուսանալն հազիւ կարացի կանգնել և զնալ
Եւ ոչ զնացի ՚ի զիւղն մեր յահէ հօր աղջկանն. այլ զտի
ծանօթ մի յայլում զեղջէ, և պատմեցի նմա զտմենայն. և
ես եկի առ Փիլիպովու հոգեոր տէրն, և խոստովանեցայ նմա.
և ահա այս է պատճանն, զի դոյնզոյն փոխի զերես իմ:
Եւ մեր լուսք ՚ի նմանէ, և վառս մատուցաք Աստուծոյ:

Գ. Ա. ՈՒԽԻ Լ. Վ.

Պատման համար Աշու Ա Հ Հ Ա Յ Ա Յ :

Պատմեցին մեղ թէ ՚ի գաւառն Աղասեայ ՚ի մշջ ոլբակաց մայ-
րուն է քարայր մի բարձր յերկըէ քան զլն մարդաւափ, և բու-
նեալ էր անդ վիշտու մի ահազին, և ՚ի միջօրէի տունջեանն
կախիւր յորջոյն՝ և հայեր այսր և անդը. և եթէ առաներ ինչ
կենդանեաց՝ իջաներ և յառներ ՚ի վերայ նորա, զիթէ կարողա-
նոյր՝ կլաներ. և թէ ոչ կարեր՝ դառնայր յորջ իւր: Եւ ո՛չ ոք
կարաց սպանանել զնա, զի բարձր էր այրն: Երեց մի հնարիւք
եսպան զնա: Քանիզի շինեաց երեքժանի ծանկ, և առ ծայրն
բունոյ ծայրն՝ օդ, և կապեաց առասան ընդ օդն: Եւ եղեն ուլ,
և եհան զմորթն ՚ի տիկ, և եղ ՚ի Ա. թովին զձանկն, և ելից
խոտով զտիկն, և զլուխն և ուղն ուլին հնարիւք կապեաց ընդ
տիկն. և ՚ի զիշերի զնացեալ մերձ յայրին, և կանգնեաց անդ
զտիկն. և կալեալ զծայրն ուարանին, և զնացեալ ՚ի բացեաց
նստաւ ՚ի ներքոյ ծառի միոյ, և ոյր ոմն ընդ նմա: Եւ ՚ի հա-
սարակել աւուրն, ելեալ վիշտու և կախեցաւ յայրէն, և ետես
զուլն մերձ ՚ի դրան այրին. և իջեալ եկուլ զուլն՝ և կամր դառ-
նալ յայրն. և երէցն քարշեալ զպարանն՝ և եմու տ Շան ՚ի
մորթ վիշտու այրին, և Շէր, և տտամին ժողով' ը զբոյս և դիսու՝ և
զոր ինչ պատահէր. և երէցն քարշեր զայ ասանն, և վիշտուն

դառնայր դեպ յայլըն, ճշեր ւաստիկ, և զալարեր, և տուտն հարկաներ այսր և անդր, և այնքան չարչարեցաւ՝ մինչեւ սատակեցաւ։ Խոկ երեցն եհան զմորթն 'ի տէկ, և արար աղ 'ի վերայ, և արար առ իշխանն իւրեանց։ և շափեցին զերկայնութիւնն Ժ.Պ. թիզ, և զբայնութիւնն Գ. թիզ։ Եւ ապա լցին զմորթն ցօգունաւ, և առաքեցին առ Ծահն, և զապանման պատմութիւնն դրեալ ընդ մորթոյն առաքեցին առ Ծահն։ Խոկ նա զերեցն արար աղատ 'ի հարկէ արքունական, և կարգեաց զնա Աւագ գեղջին իւրօւմ։

Գ.Լ. Ա. Խ. 1. Բ.

Ա. առան օյահար առան։

Արկիրն Արտաստեան պարարտ է և առաստ յամենայն իրաց՝ և թեթեազին։ Ա ասնորոյ յամենայն կողմանց դան Արեան, և զնեն զօր ինչ և կամին, և դառնան 'ի տեղիս իւրեանց։ Արյնպէս եկին և 'ի ծաւարիզոյ բազում կարաւան, և զնեցին բրինձ, բամբակ, իւղ, սբանիր, ճրագու, ձեթ, կաշի, մորթ, և այլ զոր ինչ կամեցան՝ առին. և 'ի զիշերի զնային զճանապարհն վասն հովոյն. և 'ի ցերեկն իջանեին վասն շողոյն. և զնային մինչ 'ի զաշտն Ա. թմոյ, և իջին 'ի տեղի ինչ զօրն ողջոյն. և յերեկոյն կամին բառնալ։ Եւ ոմն 'ի նոցանէ զնաց առ ջուրն, և մերկացոյց զոտս իւր՝ զի լուասցէ. և ահա պատահեալ օձ մի՛ և եխած զոտն։ Եւ այրն աղաղակեաց առ ընկերսն. և եկեալ տեսին զնա, և զտին զօձն՝ և սպանին։ Եւ զի բառնային կարաւանն՝ զի զնասցեն, իսկ այրն օձահար լսյր և աղաղակեր, զի ոչ կարեր հետեահ զնալ, և դատարկ զբաստ ոչ զոյր՝ զի հեծուսցեն զնա. և տասցին ընկերըն, կա'ց մնա՛ զու աստ՝ մինչեւ մեք զնացեալ թափեացուք զբեռինս, և բերցուք քեղ դրաստ, և տարցուք զըեղ 'ի զիւղ, թերեւս բուժումն ալասցեն քեղ Եւ 'ի նելքոյ

Ճնկանն կապեցին պարանաւ, և եղին քար 'ի ներբոյ ռախն, և պարզեալ ռան 'ի վերայ՝ զի շշուկն զնասցէ 'ի յոտն՝ և մի անկցի ընդ մարմնովն. և 'ի վերայ քամակին անդեալ, և արկեալ երեսոքն դաստառակ' և ննջեաց: Եւ ահա պիթակք թափեցան 'ի վերայ ռախն, և կրծեցին այնքան՝ մինչ զի քարչեցին զմոյն օձին և զուռոյցն. և բժշկեցաւ այրն: Եւ պիթակքն որք կրծեցին՝ սատակեցան. և նա ժաղովեաւ 'ի դաստառակ' որպէս թէ, ի կուց, և զգեցաւ զպնդակօշեկն, յարեաւ և վաղէր զինի կարաւանին՝ որպէս թէ, բնաւ չիցէ լինաւեալ: Եւ իրքեւ գնաց զիւս ճանապարհըն, և ահա մի ոմն յընկերաց նորա հեծեալ 'ի ձի՝ և զայր. և պատահին մի մեանց. և օձահարն պատմէ նմա զբանչելիսն, և գնացեալ առ կարաւանն՝ ցուցանե, նոցա զպիթակսն փակեզամբ: Եւ լուեալ նոցա՝ փառս եառւն Խսունծոյ, զի յանարգ իրաց բժշկութիւն եղեւ ցաւոց: Արպէս թրի ազն 'ի յօձէ և զեղ օձահարի է. և զլեզի արձանյ՝ բժշկութիւն ձիոց. և իրան աղութոյ՝ ցաւազնեալ ականջաց: Վմօթ այնոցիկ՝ որք ասեն, ընդէ՞ր ստեղծան այսպիսի անարդ կենդանի:

Գ. Ե. Ա. Խ. 1. Գ.

Ա Հ Ա Ն Դ Ի Շ Խ Ա Ր Ա Կ Ա Ն Ե Ա Լ Ա Յ Ա :

Գրեալ է (զուցէ 'ի մէջ) պատմութեանց, թէ յետ ջրհեղեղին ծնաւ 'եոյ որդի մի Մանիսոն անուն, և զուստր մի Խսոյիկ անուն. սա՝ ասեն՝ խառնակեալ ընդ դիւաց՝ և ծնանի՝ զոր ասեն՝ Հաւերժահարաւնք: Ոմանք յառասպելս համարին զսա՝ և առաւ: Բայց ինձ ձշմ. ըիտ թուի և իրաւ. զի ի բազում աեզիս զրեալ է խառնակումն նոցա ընդ մարդկանց: Վանդի 'ի վարս հարանց գրեալ է, թէ դեք 'ի կերպարանս միայնակեցի եղեալ՝ իջեալ 'ի ըստն զնային 'ի քաղաքն, շնորհն ընդ կանայ՝ և զառնային 'ի ըստն: Եւ 'ի պատմութիւնս Ամրակոս վար-

դասպետի գրեալ է, թէ ի Գողթան գաւառ դեն եղեալ ՚ի կերպարանս կնոջ՝ և խառնակիւր ընդ այր մի: Աոյնպէս և յաւուրս մեր եղեւ, զի տաճիկ մի՝ ազգաւ Բայցաթ՝ ՚ի ցեղէն որ ասի Խշեղամարլու, և անուն նորա Ապաղ, ո՛չ որպէս միւս տաճիկս լիրը և հայշոյիչ, այլ ամբարերան և լաւ. աս յաւուր միում զնայր երիվարաւ ՚ի դաշտին Աաղ ըշապատու. և հասեալ յակունս Մեծահօր էետոյ՝ որ այժմ ասի Աեաւ-ջուր, և տեսանէ նստեալ կին մի ՚ի վերայ աղբերն՝ զարդարեալ ազնիւ զգեստիւք և զարդուք. և ոչ խօսեցաւ Ապաղն, և անցեալ գնաց: Եւ իրրե հեռացաւ սակաւ մի, և տեսանէ նստեալ ոնն զինի իւր ՚ի վերայ ձիոյն: Ասէ Աոպաղն, ո՞վ ես դու: Ասէ դեն, ես այն կինն եմ՝ որ նստեի ՚ի վերայ աղբերն, և դու տեսեր զիս՝ և ոչ խօսեցար ընդ իս: Ասէ Աոպաղն, արդ զի՞նչ իննդրես յինէն: Ասէ դեն, ես կամիմ լինել քեզ կին: Ասէ Աոպաղն, ես ունիմ կին. եթէ տեսանէ դքեզ կին իմ, դքեզ և զիս սպանանէ: Ասէ դեն, ես ոչ երեխմ կնոջ քո, և ոչ այլ ումմէք՝ բայց միայն քեզ: Եւ ձայնն իմ ըւիցեն, և զիս ոչ տեսանեն. ուր և կամիս դու առաքել զիս, երթամ և բերեմ քեզ պատղամ: Պահեմ անմինաս զշաստ քո՝ և անցեայս և զերամակս մատակ ձիոյ քոյ, որ ոչ գող և ոչ զազան կարիցեն մերձենալ, և ոչ անկանիլ ՚ի տեղի վնասու: Ազդ առնեմ քեզ՝ զինչ որ լինիցի ՚ի վերայ երկրի: Օսյս ամենայն և այլ այսպիսի բանիւք մոլորեցոց զայրն. և հաւանեալ նմա, և առեալ գնաց ՚ի տուն: Եւ էր ընդ նմա միշտ, և չնայր ընդ նմա հանապաղ. և սպահէր զերամակս ձիոցն: Եւ յաւուր միում մատակքն ալ անէին, և մինն որոշեցաւ ՚ի հօտէն. և ահա գոյլք Ի յարեան ՚ի վերայ նորա՝ և կամէին սպատառել. և վընջաց մատակն՝ և եկեալ դեքն կալան զդայլսն, և տարին ՚ի մէջ երամակացն, և յարեան ՚ի վերայ զայրոցն երամակքն, և ոտամբ և ատամամբ կոծելով և սքացելով սպանին զդայլսն: Դարձեալ յայլում տւուր գնացեալ էր Աոպաղն

ոյլուր. և զողք ե բամակաց ձիոցն մասն ինչ զողացան. և ծառոցին կնոջ Ապաղին. և նա ասէ, ոչ կարեն վատնել նորս զձիսն մեր. զի թէ իմանաց կին Ապաղին՝ երթեալ բերէ զնոսաւ Եւ յետ Բռուց աւուրց եկին ամենայն ձիքն՝ և ընդ նոսա խրոխտ երիվար մի: Եւ այսպէս կայր բարեկամացեալ ընդ դիւին: Եւ եղեւ զի կալանս արարին Ապաղն, և կապանօք առաքեցին յաշխարհն Պարսից. և մինչդեռ անդ եր, երթայր զեն առ նա, և տայր զըսց նմա ՚ի տանէ նորա. և ՚ի նմանէ բերեր պատգամն ՚ի տուն նորա: Եւ եղեւ գառնալ նորա յաշխարհն Պարսից, և զալ ՚ի տուն իւր. և տկարացաւ կին նորա. և բերին ՚ի սուրբ ուխտն Յօհաննավանք: Եւ շնորհօքն Աստուծոյ բժշկեցաւ. և զնացեալ պատմեաց առն իւրում զաքանչելիս սուրբ Աստապետին. և վասն այնորիկ ծանօթացաւ Ապաղն վանքին. և արար բարեկամութիւն երթեեկութեամբ: Եւ մլք ՚ի նմանէ ուսաք՝ հարցանելով. իսկ նա պատմեաց մեզ զամենայն ստուգութեամբ:

Գ. Լ. Ա. Խ. Ե. Դ.

Եւ առանձնանուած Աստուծոյ կունդն:

Օ, ի որպէս զրեցաք զըմբռանումն Արահմատ խանին որդւոյ Լալա բէկին՝ և կապանօք տանին յԱսպահան, և Ծահն փոխանակ նորա առաքեաց յԵրեան զոմն ՚ի հարազատ ծառայիցըն իւրոց՝ Կաճաղ անունն Աս եկեալ տիրեաց տանս Արարատեան մեծաւ զօրութեամբ. քանզի սիրեր զնա թագաւորն Ծահ-Արաս, և եր կարի խրոխտ և ահարկու ՚ի վերաց ամենայն զօրաց իւրոց: Աս զրեաց թուղթ գանգատանաց ՚ի մեծամեծացն, և առաքեաց առ Ծահն: Իսկ Ծահն զրեաց նմա թէ ովք որ զիտես՝ ըմբռնեան և արած է կալանս: Եւ յորժամ էատ զըրամանս զայս, իսկոյն առաքեաց զօրս, և կալեալ արս

Ժ. ՚ի մեծամեծացն, և եղ կունդ ի պարանոց նոցա, և եղ ի
բանափ, և անուանքն նոցա զբով սնդակն ու զիտեմ, այլ է մի-
ոյն՝ որք են այս. Գ եղբարք՝ Դաշու- Ետաղի, Դաղու- Օօհ-
բար, Դաղու- Առուլեյման, Ետաղ վերոյդրեալն, Թակդահ, Է-
զիլ, Մուրատի, և այլ Ճ ևս Եւ յետ առուրց առաքեաց
վնոսա յաշխարհն Պարսից՝ ի քաղաքն՝ որ կոչի Մովթը Եւ
մնացին անդ որբան Նամամին յերեան էր Այս Նամամիս և-
զե բարեկամ Օաքարիս վարդապետին վասն խօսելոց Պ սրաիկ
լեզուաւն. և Իր Կ թուղիկոս Աշմիածին պս տու տկան Տէլն
մեր Յակովը Թուղարեցի, որ զնացին առ խանն ի մրասին և
գային Առեռաւ. Օաքարիս վարդապետն ի թուին ԱռՌին:
Եւ առաքեաց խանն ի վասն Յօհաննու և ի սուրբ Էշմիածին,
զի կնքեացին զզրունս մատանացն և տանցն, մինչե դայցէ Կա-
թուղիկոսն. վասնզի զնացեալ Եր նա յերկիրն Գռողթան: Եւ
ապա ծանուցին նմա, թէ ի կենդանութեան իւրում եղեալ է
ի տեղի իւր Առաջնորդ, և ոչ է անտէր տուննու Եւ ապա հրա-
մայեաց բանալ զզրունս տանցն՝ զըր կնքեցն: Եւ էր խանս այս
անարի և երկւտ. քանզի զնացը սա յամառան եղանակին ի գա-
ւառն կոտէս ի յակունս բազմութեանց աղբերացն՝ որ առին
Խըռիս - Պ ւլադ, որ է Խ աղբեւրը Եւ անդ գովեցին զ կունս
Կասադ զետոյն՝ և զբարութիւն զաւառին Նզաց: Եւ հրա-
մայեաց ասնել զինքն անդ բանակաքն, զի անդ անցուսչէ
ամառն. և մնացին անդ առուրս ինչ: Եւ լուաւ, թէ ահա (Օս-
մանցիքն՝ որք են ՚ի Կարս՝ ժողովեալ են, զի յանկարծակի
անկցին ի վերայ քու Եւ իրրե լուաւ զոյս՝ և հաւատաց ճըշ-
մարիս լինել վանորոյ երկւտ, և հրամայեաց՝ զի վախիցին ուր
և կամին, և ինքն հեծեալ ի ձի՛ և փախեաւ ի Կարրի. և բա-
զումք թողին զդամբարս իւրեանց և զկարասի՛ և փախեան ընդ
խանին: Խսկ խոհարարքն եղեալ էին կաթսայ ի վերայ հրոյ՝ և
եփին կերակուր վասն խանին. և իրրե աեսին՝ թէ փախեաւ
խանն, նոքա թափեցին զկիսեփեաց կերակուրն, և առին զկաթ-

սայսն՝ և փախեան։ Եւ լուեալ զայս Օսմանցիքն՝ ծիծաղեցան, և անուանեցին զնա Փլատ - թօքեան - իս ան, և ասի մինչեւ ցայսօր Խակ Օսմանցւոց ժողովումն այս երւ Օճի լուան նորքա՝ թէ խանըն եկեալ է մերձ ի սահմանս իւրեանց, երկեան թէ ստութեամբ է անդ նատեալ, մի՛ զուցէ չ յեղակարծումն ժամու եկեսցէ յերկիրս մեր և աւար առցի։ Կորա այս կասկածս ունեին։ և սա ի նոցանէ երկուցեալ փախեաւ։ և եղեւ ծաղր և առաջի Եւ լուաւ Շահն՝ և կամեր պատուհասել զնա, այլ ինայեաց, զի ծառայ եր նորա։ Եւ առաց, թէ Երեան շատ մերձ է Օսմանցւոց երկիրն։ վասն այն երկեան։ Կամացի խանն՝ թէ մի՛ զուցէ Օսմանցիքն գերեն զինքն։ Մրդ առաքեցից զնա չ մնջ երերատեղիս, զի Օսմանցիքն ոչ կարացեն գերել զնա։ Եւ հրամայեաց նմա ելանել յԱշրեանայ՝ և գնալ ի Շամախի տմնայն ընչիւք իւրովք. և եկեալ գնաց։ Իսաց յիշեր զօարելի երկիրն Մրարատեան՝ և ոգւոց հաներ։ Մրդարե բարելի է երկիրն Մրարատեան՝ ծառովք և անկովք, պաղովք և սերմանեօք, ծաղկովք և բուսովք, լերամիք և դաշտիք, զետովք և աղբերօք, այզեստանեօք և բուրաստանեօք, թռչովք և չորքոտանեօք, երեխովք և որսովք, և ամենայն բարութեամբ լի և առասու Օայս ամենայն զմտաւ ածեր Համացի խանն, զքօսանաց աեղիսն՝ և ամենայն վայրքն՝ յիշեր և զովեր։ Ա ասնորոյ զովիչքն ողքս երզեցին վասն հեռանալոյն նորա յԱշրեանայ՝ և օտարանալոյն ի աւար աշխարհ, և բնակելոյն յանբարի և նուաստ երկիրն։

ԳԼՈՒԽ ԵՎ.

Ա այս Երանելի կանոնակիրն։

Աս այս Երանելի Հայրս մեր և պատուական Հայրապետը Յակոբ եր յԱստղաշանայ՝ ի զիւղաքաղաքէն Քուղայու,

որդի բարեպաշտի, և աշակերտաւցաւ Խստառուր վարդապետին Աեստրացւց, որ էր Առաջնորդ Ք Ֆուղայու, և ուստի ի նմանէ զամենայն վարս առաքինութեան՝ և զամենայն զիտութիւնս Եստուածոյին զրոց. և եղե կուսակրօն քահանայ: Եւ յետ մահուան վարդապետին Խստառոյ եկն ի սուրբ Եմուսն Եջմիածին, և Կաթուղիկոսն Փիլիպպոս ետ նմա իշխանութիւն վարդապետութեան, և առաքեայ յաշխարհն Յունաց է նուիրակութիւն: Եւ գտրձաւ անտի՝ և եկն ի սուրբ Եջմիածին: Եւ կացոյց զնա Կաթուղիկոսն Եմուսակալ և Հրամանատու. և կացեալ բազում ժամանակս ի գործն այն՝ բարեզք կառավարելով զհողեոր և զմարմնաւոր կարգաւորութիւնն: Եւ յետ բազում ժամանակաց մնալոյ նորա ի սուրբ Եջմիածինն՝ զնաց ի սուրբ Կախավիկայի վանքն՝ որ է ի Ծամբի - Ճորդեղ. և քակեալ զհին և խարիսալեալ եկեղեցին, և շնուաց գեղեցիկ յօրինմամբ. զպարիսպն՝ զխոհանոցն՝ և զիցերն շնուալ աւարտեաց: Եւ մինչ էր նա անդ ի սուրբ Կախավիկայի վանքն, մեռաւ Փիլիպպոս Կաթուղիկոսն ի սուրբ Եջմիածինն է Ու՛ԴՌ թուին: Եւ առաքեցին սուրհանդակ, և բերեալ զնա՝ և օրհնեցին Կաթուղիկոս ի Օռաղկազարդի կիւրակին: Եւ նա այնուհետեւ սկիզբն արար բարեգործութեան. և բազմացոյց զմարանս սուրբ Եմուսոյն: Եւարտեաց և զշինութիւն Օանգակատանն: Ծըջէր և ի վանօրայն, և զոր ինչ պակասութիւն տեսանէր վանիցն՝ թէ հողեոր և թէ մարմնաւոր կարփս լցուցանէր: Հաստատեաց՝ զի յամենայն տարի տացեն ամենայն վանից մալիք մեթ վասն եկեղեցւոյն լուցոներոյ. ևս Ի լիտր զինի ի պէտս երթեւեկողացն: Եւ ապա զնաց յԱսպահան ի տեսութիւն փոքր Ծահ - Երասին, զի առցէ հրաման վասն Կաթուղիկոսութեան իւրոյ: Կախ ետես իշխանաց Իշխանն, զոր Եշտիմալ - Պայտագթ ասեն, և ծանոյց նմա զխորհուրդ իւրի: Եւ ասաց իշխանն, յորում աւուր ազդ արարից քեզ, եկեսցես: Եւ զնացեալ պատրաստեաց պատշաճաւոր ազերս և Յ ոսկի ըստ

սահմանի առաջին Կաթուղիկոսացն Գյորեաց և զիրս մաղթա-
նաց, որ է արդարութեան Աշու կայր զգուշութեամբ՝ մեծաւ յուսով
ազօթելով առ Եստուած վասն աջողելոյ դործոյն: Եւ յա-
ւուր միում Դշաբաթի եկն հրաւիրակ նմա գնալ ի կոն ար-
քունի: Եւ կոչեալ առաջի նորա, և ընձայեաց զաղերսն: Եւ
հայեցեալ ի նա ալքայն՝ ասէ, զու տաճիկ ես՝ թէ կաս-
պաշտ: Ասէ Կաթողիկոսն, Եստուած մի արացէ, ոչ եմ
կասպաշտ, սակայն և ատճիկ ես չեմ: Ասէ Ծահն, ապա
զի՞նչ ես: Ասէ Կաթուղիկոսն, քրիստոնեաց եմ: Ասէ Ծահն,
դուք Քրիստոսի զի՞նչ ասէք: Ասէ Կաթուղիկոսն, զի՞նչ որ
զրեալ են մարդարեքն, մեք նոցա բանիւն կամք, թէ բարի է,
նոքա վարձս առցեն. և թէ շար է, նոքա պատժեացին: Ասէ
Ծահն, դուք Եստուած ասէք՝ Քրիստոսի: Ասէ Կաթուղի-
կոսն, այո՛: Խակ տաճիկըն ակն ունեին՝ թէ աչա պատառ
պատառ առնէ զնաւ Քանողի որպէս ասէ Առղոմնն, թէ սիրաք
թաղաւորաց ի ձեռին Եստուածոյ են: Եւ ինքն Ծահ դար-
ձոց զերեսն առ մեծամեծսն՝ և ասէ, Պարսիկ բարրառով,
թէ մեք ևս ասեմք նմա Եստուած՝ զի՞նչ մնաս իցէ. և ապա
հրամայեաց Կաթուղիկոսին՝ և ասէ, նիստ Խալիֆայ: Եւ
զի զիտեր լեզու Պարսից, յորժամ լուաւ զբարբառ Ծահին,
ուրախ եղե կարի առաւել: Ասէ Ծահն ցԿաթուղիկոսն, ասա
զվկայութիւնս մարգարեիցն՝ որ վասն Քրիստոսի: Եւ ապա
սկսաւ Կաթուղիկոսն ասել, սկսեալ ի Վավսիսէ մինչև ցՔրիս-
տոս մեկնել զամենայն. և լսեին մեծամեծքն զոր ինչ Կաթու-
ղիկոսն ասէր: Եւ յաւարտելն ասէ Ծահն, աչա սա վկայ բե-
րէ զմարգարեան, առ այս դուք զի՞նչ պատասխանէք: Եւ ի բազ-
մելոցն ոչ ոք ասաց ինչ: Դարձեալ ասէ Ծահն, արդ զի՞նչ
է կամք քո՝ զրեաւ արդ, և ես կատարեցից զի՞նզիրս քո: Եւ
երկիրագեալ արքային՝ ելեալ գնաց. և զրեաց թուղթ առ
նա, թէ հզօր և մեծ թագաւորի ոտաց հողէն յայտ լիցի, զի
հրամայեցեր՝ թէ թղթով ծանո՛ մեզ զի՞նզիրն քո. և ծա-

ոսց քո ոչ խնդրէ վասն իւր ինչս, այլ խնդրէ յիշատակ ՚ի տերութենե, քումմէ մնալ յաւիտեան յաղագս կենաց քոց և զաւակացդ ազգէ յազգ, այսինքն զտասանորդս գեղին Եջմիածնի շնորհել վանիցն, վասնվե ի ընէ վանիցն լեալ է, և ի թուլութենե, Առաջնորդացն մերոց՝ խանենին յափշտակեալ են՝ առանց զիտելոյ թագաւորաց՝ ինքեանք վայելենու Իսկ թագաւորն իբրև ընթերցաւ զիթին, հրամայեաց որոնել զտաւթարն. և քննեալ զտաւթարն՝ և ոչ զոյր, և ծանուցին Ըահին Եւ հրամայեաց արքայն զրել արքունական հրամանաւ ՚Աօմոն՝ որ է սազամ, և տալ նմա, զի թէ կոյր պատաւ մի ևս նստից յԱջմիածին, տիրեսցէ նմա, և ոչ ոք յիշխանաց կամ չ թագաւորաց մի իշխացեն հպիլ կամ մերձենալ տասանորդացն այնմիկ (այնոցիկ). և ո՛վ ոք հ ՚կառակի՛ թշնամի է Ծխ-Աւագու օձաղին: Եւ զրեալ զայս և զռաղամ՝ հրամանաց Աալթուզիկոսութեանն, և կնքեալ ետուն ցնաւ: Օոր և առեալ եկն ի սուրբ Ամեռոն Եջմիածին: և սկսաւ րուսն հարկանել բարեկործութեան: ՚Աախ զտասանորդ գեղորեկիցն զնել, այսինքն զթասախուն՝ որ է ի ՚Աիդ զաւառ, զիւեզնեացն, զլանացին, զլեւառեր, զլորք, զեորագեզ, զլաղուինմ, զլիւրական, և այլ բազում տեղաց, որ է այժմ ընդ իշխանութեամբ սուրբ Եջմիածնի: Այլև ի ներքոյ երկրի նոպ²¹⁾ արարեալ՝ յի՞ տեղով է հանեալ ջուր, մինն հետի ի զեղջին Եջմիածնայ՝ տարեալ յանդաստանս ի յոռոգանել զարտորայսըն. և մինն բերեալ ի զիւղն, զի ի ձմերանի արրցեն անասունք: Եւ ի վերայ այսմ ջոյ շինեաց ջրաղացս և բընծահանս. և արար ծով՝ և ելից ձկամբ: Տնկեաց և տունկս առափամբ ծովակին. և սերմանեին բազում սերմանս, և այլ բարութիւնս բազումս: Օինչն ասացից և վասն հոգեոր զործոյն՝ և բազմացուցանելոյ միաբանիցն: Եւ այլ բազում

(21) Լ-ՂԵՇ, ական, փառ. ծակ. 2) առու աղբանոցաց, կոյանոց:

են բարութիւնք սորա, և մեք ոչ զբեցաք, զի մի՛ զայթակ-
զեսջէք. և զմնացորդս բանիցն և զմա՞շն նորա զբեցուք ի տե-
զի խըլում:

Գ. Ա. Ա. Խ. 1. 9.

Վասն իշտնելոյ ըստոցն յէլինեց:

Օսյս պատմութիւնս պարտ էր սոսաջ զբէլ ի թուխն
Ա. Զ. 1., բայց ի մոռացմանէ աստ զբեցաւ: Քանիզի մինչ մոռ-
նուկ էի ևս ի տան մերում ի մանաքեռ, և յաւուր Խաչ-
վերային գնացաք ընդ հօր իմաւմ յայդին մեր, որ մերձ է ի
զիւզն Կարմիր-բերդ կոչեցեալ՝ առ ափն Նուրաստան գետոյն՝
ի ներքոյ կամրճին: Եւ ի մասնել արեգականն, հոյրն իմ
ազօթէր յերեկոյեան ժամն, չե ևս էր մթացեալ, այլ լոյս
ու որն զեռ ևս կայր, յանկարծակի պատառեցաւ կապուտակ
եթերն յարեւելից կողմն, և էջ լոյս սաստիկ և ահազին, լոյն
և երկայն, և էջ մինչեւ մերձեն ոլ յերկիր, և լուսաւորեաց ճա-
ռադայթ նորա զտիեզերս պայծառ առաւել քան զարեգակն.
և սկիզբն լուսոյն ճախր առնոյր՝ որ դէս անիւ երթայր զետ
ի հիւսիս՝ հանդարատութեամբ և մեզմոյ, և ճառագայթեալ
լոյսն կարմիր և սպիտակ, և առաջի ը ւսոյն որպէս թէ ասող
ի չափ արուսելին ընթանայր բացազոյն թշվասի մի, և հայրն
իմ թողեալ զժամ ազօթիցն՝ սկաւ լառլ երդել զշարական
էի: Լոյսդ որ ընդ լուսով Վատուածութեան: Օ շարական
աւարտեալ՝ մինչ երեխոր լոյսն, և ապա հեռացաւ և եղեւ ա-
ներեցիմ: Եւ լուսք՝ թէ մինչեւ Ալոցիս, աեւեալ են զամ-
ուածային և հրաշափառ լոյսն:

Գ. Ա. Ա. Ա. Ա.

Ապանուն է Յանձնանես Հարդարիւն:

Այս Յավշաննես վարդապետս էր ի Կոր - Թուղարյու, որդի
Լշդկարին՝ որ ասի Վթուեց, որ էր աշակերտ վարդապետին
Կեսարացւոյ, որ էր Առաջնորդ Թուղարյու: Եւ հրամանաւ
վարդապետին Խաչատրոյ գնաց Յավշաննես ի Թուանզատուն
ի քաղաքն Աեւոնայ, և ուսաւ զտպազրութիւն. և դարձաւ
յԱսպահան առ վարդապետն Խաչատուր, և հաստատեցին
անդ ի Թուղաց զտպարան. որ և տպեցին զզիրս բազումն: Եւ
ապա եկն վարդապետն Յավշաննես ի սուրբ Եջմիածին: Եւ
կաթուղիկոսն Փիլիպակոս արար զնա Եպիսկոպոս, և առաքեաց
ի Հեմ - Թուղաց, զի նստցի Առաջնորդ վանիցն: Եւ նա զնա-
ցեալ կուր անդ և հովուեր զշնազանգեալմն իւր: Եւ այր մի ի
նոյն զեղ ջեն Թուղարյու, և էր նա սրբաւտական ումեմն տաճկի,
որ ազգաւ Վանկառլու, որ եկեալ առ քրիստոնեայն՝ և խնդ-
րեաց զտպարտս իւր: Եւ նա ոչ կարաց հատուցանել: Ա ասնո-
րոյ բարկացեալ տաճիկն՝ և բռնութեամբ քարշեալ զդուսար
նորա՝ և առբաւ ի տուն իւր. և ասէ յայրն, եմէ յայս նիշ
աւուր զդրամն իմ ոչ տացես, և ես զդուսարն քո ոչ տաց
քեզ: Խոկ այրն անձարացեալ՝ ոչ դիտեր զի՞նչ արասցի: Եւ
ապա ելեալ զնաց առ վարդապետն, աղաւեր ցնա, և ասէր,
վասն Աստուծոյ մի կորուսաներ զհողի զստերն իմց, և զու ա-
զատեան զնա ի ձեռաց անօրինին, և փօխանակ նորա որդին իմ
կացցէ քեզ ի ծառայութեան: Եւ ըսեալ վարդապետն զա-
ղաշանս նորա՝ ետ նմա դրամ ըստ բաւականին. զոր և տա-
րեալ ետ տաճկին, և առեալ զդուսար իւր, և զնացեալ խըն-
դութեամբ, և տարեալ զորդին յանձնեաց վարդապետին. և
ասէ, այնքան կացցէ առ քեզ, մինչ ես առ սակաւ սուկաւ հօ-
տուցից զդրամն քո: Եւ արարին այնպէս: Խոկ անիծեալ տաճի-

կրն լուաւ, թէ վարդապետն է եղեալ սպատմառ ազատերց աղքանն, վասնորոյ ոխացեալ ընդ վարդապետին, և հնարեր թէ զիարդ հանցէ զոխն: Եւ զի ուներ ծանօթութիւն ընդ վարդապետին, և յաւուր միում գնաց ի վանքն սիրոյ աղադաւ. և ի սրաի իւրում մթերեալ ուներ զոխն, և զննեալ իմացաւ ելեմուտ վանիցն, և որբանութիւն միարանիցն: Եւ գնացեալ միարանեցոյց ընդ իւր արք չորք չարագործք քան զինքն, և զիազօղ աւուր զտեալ գնացին այլում ճանապարհաւ ի վանքն. և հարին զդուռն վանիցն, և ձայնեին բանալ: Եւ նոքա արկեալ էին սեղան չ զրան եկեղեցւոյն, և կտմին ճաշակել. և իրրե դիտացին, թէ ծանօթն իւրեանց է, բացին զդուռն, և տեսին գնոսաւ, զի սպառազինեալք էին. և սկսան թաքչել ի մջ վանիցն. և վարդապետն եմուտ յեկեղեցին՝ և աղեսեաց զդուռն, և բերեալ զզրքակալն՝ նեցուկ արար դրանն. և անկեալ ի վերաց զզրքակալն՝ և խօսեր ընդ նոսա: Խակ տաճիկքն արտաքուստ հարին թուանքով զդուռն, և էանց ԳԱ-Ա-Ն-Հ⁽²²⁾) և ծակեաց զդուռն և զզրքակալն, և ի սիրտ վարդապետին անցեալ և բեկուցաւ յորմն բեմբին: Եւ սպանին զամենացն՝ ով ոք էին ի վանքն. և մանուկն՝ որ փոխանակ քեռն իւրոյ էր, փախեալ թաքեաւ ի մջ քակորացն. և որոնեալ զտին և սպանին: Կողոպտեցին զվանքն և զեկեղեցին թէ հոգեոր և թէ մարմնաւոր՝ մինչեւ հացահան երկաթն ես: Եւ ելեալ արտաքս՝ հնարիւք փակեցին զդուռն պարսպին, և այլով ճանապարհաւ գնացին ի անդիս իւրեանց: Եւ յատ Ի-ուց աւուրց՝ իրրե տեսին գեղականքն՝ թէ ոչ ոք զայ չ վանականացն ի զիւղն, և ասացին, արդեօք նեղացեալ իցեն վանականքն ի վերաց մեր, վասն այնորիկ ոչ զան: Ես որա աւագ երեցն և Ի արք պատրաստեցին կերակուր և զինի, և առեալ գնացին ի վանքն. և ծեծեցին զդուռն պարսպին, և ոչ զոյր ձայն. և

Հայեցան ի վեր՝ և տեսին՝ զի ազուաք ելեէջս առնեին. և
ասեն, թէ պանչելիք իմն է: Եւ ապա ելին ի զլուխս բարձր
քարանցն՝ որ ի վեր քան զվանքն, և տեսին փայտեայ սեղան
ի դրան եկեղեցւոյն, և ի վերայ նորա հաց և խորտիկ, և պնակ
զինոյ և բաժակ, և արք Տ անիկեալ յերկիր, և ծանեան թէ
սպանեալք են: Եւ ազդ արարին զեղջն. և զրոհ տուեալ զեղ-
ջն՝ և եկին բազումք բերկելով ընդ ինքեանս սանդուխս, և
կապեցին Տ և Գ ի մի, և ելին ի պարիսապն. և ոմն իջուցին ի
մշջ պարապին, որ երաց զգուռն, և մտին ի ներքս, և տեսին
կոտորեալ զամենայն բնակիչս վանիցն, և աւար արարեալ զա-
մենայն բնչն: Եւ ազդ արարին իշխանին Կախչուանայ. և
հրամայեաց թաղել զսպանեալմն. և ապա որոնեցին զգողոն՝ և
զահն. բայց ոչինչ կարացին առնել, զի հաւատարիմք բազում
ունեին. այլ փոքր ինչ յանօթոց Եկեղեցւոյն գարձուցին յետու,
և այլն ամենայն կորեաւ: Եւ այսպէս եղեւ մահ Յամիանեաւ
վարդապետին: Բայց ասեմ, թէ ընդ մարտիրոսս ընկացի մահ
նորա. քանզի վասն ազատելոյ զշողի քընսոնեին եղեւ մահ
նորա:

Գ-Լ. Ա-Խ. 1. Բ.

Ա-Խ-Ա-Ն Հ-Ա-Յ-Ա-Ն Օ-Խ-Ա-Բ-Ա-Ն:

Եթէ զշարութիւն սորա զամենայն պատմեմք, բազում են, և
լսողքն գայթակղին, և մեք Ճ-Ն-Է-Ն զմինն զրեմք համառատ
Եր նա յերեան քազաքէ. մինչ մանուկ էր, հայրն նորա խա-
չեկ տարեալ զնա ի սուրբ Աթոռն Եջմիածին, և ետուն ի զըս-
րատունն: Եւ իրեւ զարդաց աւ, ըստ կախարդական բարուցն՝
խոնարհութիւն ցուցաներ՝ մինչ պատրել զամենեսեան. և
հրամանաւ Փիլիպպոս Կաթուղիկոսին արարին զնա արեղայ,
և առաքեցին ի Աւան կղզին՝ լինել այր ան սպատին: Եւ կա-

ցեալ ժամանակ ինչ, և գարձաւ ի սուրբ Աջմիածին. և կեղծառ որեալ զինքն ցուցանելը որպէս թէ զմի ոք ի կատարելոցն, մինչեւ հաւանիլ Յակոր Կաթուղիկոսին, և ետ նման իշխանութիւն վարդապետական, և առաքեաց զնա 'ի Առիբակութիւն ի քաղաքն Տիգրանակերտ: Եւ զնայեալ անդ՝ և եցոյց զինքն առաքինի և պարկեցա, մինչզի զողացաւ զիրտս ամենեցուն, և հաւանեցոյց զնոսս խնդրել զինքն Առաջնորդ ինքեանց: Եւ ժողովեալ նուիրակն այն, և առեալ քահանացս և զոմանս ի պատուաւոր արանց, և եկին ի սուրբ Աթոռն Աջմիածին. և ցուցին զթուղթն Համբեցւոց՝ և զինդիրս նոցա: Խակ մեծ Կաթուղիկոսն Յակոր թէպէտ դիտեր զանզամութիւն նորա, ոյլ վասն խնդրոյ նոցա արար զնա Խափսկոպոս, և ետ և զաւազան մեծ, և կոնդակաւ առաքեաց զնա ընդ խնդրականացն: Եւ նորա զնացեալ ի Յամիթ, և խնդրեաց ի քաղաքացեացն բերել նօմնս արքունի: Եւ նոքա զնացեալ բերին: Խակ նա այնուհետեւ յացանեաց զշարութիւնն իւր ըստ զրեցելոյն, անհնար է օձի թողուլ զթոյնն, և Եթովպացւոց՝ զթխոպութիւնն, և կարճ ի զիսյթոցն: Բատ նոյն սարսափ ուներ և սա մթերեալ զշարութիւնն ի սրափ իւրում. և ժայթքեաց ի գարշ սրտե, իւրոյ զպիզծ մազձիւր: Եւ առեալ թուղթ բաղում և կցեաց ընդ իրեար, և զրեաց առ սուրբ Աթոռն Աջմիածին, և առ Կաթուղիկոսն Յակոր՝ և առ միարանք Աթոռոյն՝ և առ ամենայն վանորացս՝ և առ Առաջնորդս նոցա՝ բազում հայհոյանս, և զինոսս անարգս, բարբանջմունս և զօղանջումն սուտ և զուր, վայրապար հաշմունս որպէս շուն կատաղեալ ընդ Տեառն իւրոյ: Եւ յաւարտ հաշմանն զրեալ էր, թէ ես զձեր զործն զրեցի յայսմ թղթի, և թողի ես տեղի թուղթ զրելոյ, զի դուք զրեցէք առ իս ի վերայ այդմ թղթի՝ զոր ինչ և զիտէք յինեն: Եւ առաքեաց զթուղթն ի սուրբ Աջմիածին, և ընթերցեալ զթուղթն, և լուան զհաշմունս նորա, և եղին ի զրատուն ի պահ, զի զիտացին որ ի կորուստ անձեն իւրոյ զրեաց զայն: Եւ

տողա սկսաւ ընդ քաղաքացինն հաւել, և առնել անզդամութիւն, զօմանս հայ հոյելով, զօմանս անիծանելով, ոմանց զուր ասելով, զոմանս ընդ իրեարս ձգելով քամսական բանիւ: Այլ ունիք զործս զաղը և զարշ. և վերառեալ տաղակացոյց քաղաքացինն ամենայն վասնորոյ կամեցան մատնել զնա ի ձեռս իշխանին Եւ իմացեալ ծանեաւ՝ զեւաէիք զալոց էր ի վերայ իւր, և ի զիշերի զաղտ ելեալ փախեաւ հեծեալ ի ջորի, և ճամբար իւր եղեալ յաւանդ. և այսպէս ճողովը եալ ի նոցանէ՝ զնարվ եհաս մինչ ի սուրբ Խջմիածին. և էր յաւուրս Հիւնանցն Օստակի, և վասն հակարառութեան իւրոյ՝ ոչ զնաց յողջոյն Կամեռու զէկոսին, այլ յերեկոյին կացեալ անգէն, և ի զիշերին կամեցաւ զաղտ փախչիլ, և զնալ յԱշրեան. զոր և իմացեալ Այիարանիցն՝ ազդ արարին Կամեռու զիկոսին. և առաքեաց զինի նորա արս, և հասին նմա ի զիւզն Կաւակերտ. և կամեր զերծանիլ ի նոցանէ, և ելեալ ջորւով ի տանիս մի, և ըլու տունն, և անկաւ ինքն և ջորին ի տունն. և զնացեալ կալան զնա և կազեցին. և նստուցին ի վերայ ջորոյն, և առեալ տարան ի սուրբ Խջմիածին՝ և արկին ի բանաւ Եւ զրեաց Կամեռու զիկոսն թուղթ ի վերայ ամենայն Առաջնորդաց վանորեից՝ զալ ի դատաստան դատապարտելոյն Օնոփրիոսի, և եկին ամենքեան հանդերձ իշխանաշուք արամբք: Եւ անդ և Կամեռու զիկոսն Աղուանից Տէր Պետրոսն՝ և արք փառաւորք Քուղայեցիք. և յետ երից աւուրց հանին ի բանտէն զչարազործն Օնոփրիոս շղթայեալ, և կացուցին ի մէջ բազմութեանց. և բերին զգարշելի զիրն՝ որ զրեալ էր չ Յամթոյ, և ետուն ի ձեռն վարդապետի միոց ընթեռնուլ ի լուր ամենեցուն: Եւ ի ծագիլ արեգական մինչև ցերրորդ ժամ աւուրն ընթերցան, և ոչ աւարտեցաւ վայրահաչութիւնն նորաւ Եւ ասէ Պետրոս Կամեռու զիկոսն, այլ զի՞նչ պիտոյ են ընթեռնուլդ և լսել զարչելի և աղտեղի խօսս, ահա լուաք ամենեքեան զհայ հոյութիւն և զաղտեղի զրոյցս զորա, և ննացեալն թղթին իրեւ զնոյն իմար-

ցարուք, և թէ ունիք դատաստան ինչ՝ արարէք Եւ ապա
առէ Խաչատուր վարդապետն՝ որ էր առաջնորդ Գողթան գա-
ւառի, ով լիբր և անզգամ՝ յորոնմժամանակի տեսեր սցդպիսի
զործ ի Վիարանիցս, որ այդպիսի ազք թափեցեր ի հոտեալ
ունէդ⁽²³⁾): Եւ էր անդ ոյր մի ֆուղացեցի, որ ունէր հերձուած
ինչ, որում ասէին Աեւաւ-Պիտրոս, ասէ, յորժամ եկն Փիլիպ-
պոս Կաթուղիկոսն ՅԱսպահան, և սա Արքաւագ էր նմա.
յառուր միում երթայր դերձակն օնումիկ ի քաղսքն, և սա
զինի նորա բացազոյն երթայր և՝ հայշոյէր. և ես զինի սորա
զնայի՛ և ասացի սմա, ընդ ում խօսիս սարկաւագ: Եւ սա
ասէ, ովէ և սա որ գնայ առաջի մեր: Ասացի, ուստահ⁽²⁴⁾) օնումիկն
է: Ասէ, սա՞ է հերձուածօղ օնումիկն: Ասացի, այս: Եւ ասէ,
ահա տեսանեմ, զի հրեշտակ բարձր ի վեր քան զզլուխն կայ,
և ի՞ զի ի վերայ երկուց ուսոյն նստեալ են, և դա խօսի ընդ
նոսա: Եւ զարձաւ առ նա՞ և ասէ, որ յայնմ առուր տեսեր
զհրեշտակս և զդես, այսօր ընդէր ոչ տեսեր՝ թէ զի՞նչ էր զա-
րց ի զլուխ քո: Եւ զայս լուեալ ծիծաղեցան ամենեքեան: Եւ
ասէ Պիտրոս Կաթուղիկոսն, զի՞նչ ասես, տուր պատասխանի:
Ասէ Օնոփրիոսն, թէ այսպէս և թէ այնպէս՝ եկեալ եմ առ
ուս ձեր, մեղայ: Ասէ Խաչատուր վարդապետն, զիանդ իցէ դա
մեղայ. զի յայնմ առուր՝ յորում եկիր այսր, ընդէր ոչ զնացեր
յողջոյն Կաթուղիկոսին, այլ ի դիւրի փախտական եղեալ,
քակեցեր ևս զառւն ողորմելի քրիստոնենն. և այժմ պատիր բա-
նիւ կամի՞ս վերծանիլ ի պատժոց. այր անօրէն չարիք իւր որ-
սան ի կորուսատ: Եւ ելեալ Կաթուղիկոսն՝ առեալ մլրատ և
խուղեաց զգանգուրն՝ և ասէ, ձեռս այս՝ որ եղի ի զլուխ քո,
սա պատժեսցէ զքեզ, բերանս՝ որ բացաւ ի վերայ քո, սա ա-

(23) Բերան կամ սիրտ:

(24) Արուեստագէտ, ճարտար, ձեռագէտ. 2) քալ, փորձ, լարժ, կի՛զ.

5) աւուցիչ, վարժապետ:

Նիծեսցէ և նզովեսցէ զքեղ։ Օսյս արարեալ տուքեցին զնա
և եղին չ մահահու և խաւարացին բուրդ մի։ Եւ կարգեցին
ծառայ, զի հաց տացէ նմա, և կացցէ անդ՝ և աղօթեսցէ վասն
մեղաց իւրոց։ Եւ կացեալ անդ աւուրս ինչ, և վասն գարշա-
հու լինելոյ բանաբն՝ տիարացաւ, և ծանուցին կաթուղիկոսին։
և հրամայեաց հանել զնա անտին և զնել ի վերնատուն ցամաք։
Եւ առաքեաց յԱշրեան՝ և քերին զքոյր նորա ԱՌՈՒՂՈՒՄ՝ և պա-
տանի մի ընդ նմա, զի ծառայեսցէ եղբօրիւրոց։ Եւ կացեալ անդ
մինչեւ ողջացաւ։ Բայց յորժամ զայր ոք առ նա, և նա մաս-
ներ ի ներքոյ մահմի, և վռչայր. և յորժամ ելանեին, նա նրա-
տեր յուտել և ըմակել։ Եւ յաւուր միում առաքեաց զքոյրն
յԱշրեան, և առե, յայս ինչ աւուր առաքեան զջորի իմ յայս
ինչ տուն ի զիւղն յՀջմիածին, և այս ինչ այր ընդ նմա։ Եւ
ինքն ուներ բարեկամն ի սուրբ Աթոռն, և աղաւանօք միարտ-
նեցոյ ընդ ինքեան։ և ի զիւերի միում ընդ խազաղանալ ժա-
մուն՝ կախեցին զինքն ընդ պարիսպն, և պատանին ընդ նմա։ և
եր ջորին պատրաստ, և նստաւ ի վերոյ նորա, և ի զիւերին
այնմիկ զնաց յԱշրեան։ բայց կայր երկիւղեւ։ Եւ ոչ կարաց կալ
անդեն, այլ կալեալ վարձկանս, և զնաց մինչ ի Կախիջևան, և
անափ ի թառուրելու և ի Վաղուին, և զնաց մինչեւ յԱսպահան։
Եւ զնացեալ ի տուն խօճայ²⁵⁾ Արդանին, և բաղում միջնոր-
դութեամբ բարմաց հաշտեցաւ ընդ կաթուղիկոսին։ Եւ եկեա-
ի սուրբ Աթոռն յՀջմիածին, և շրջեր այսր և անդը՝ խորհելով
չարիս։

Եղիշեան Աբով Խաչին:

Հրաման եղեւ ի փոքր Ծահ-Աքաս թագաւորէն պարսից առ Կամամի խանն՝ որ էր իշխան Նըրեանայ՝ զնալ ի Ծամախի. և փոխանակ նորա առաքեաց զՄասս խանն՝ որ էր որդի Ամիր զունաց - խանին, այր ծեր և պակասեալ ևս ի լուսոյ. որ արտր բարեկամութիւն ընդ Յակովը Կաթուղիկոսին, ոչ կարի ազահ, այլ չափաւոր Աս ետ այզին՝ որ ի հօրէ նորա անկեալ էր Աշխիածին՝ մերձ ի սուրբ Առիփսիմէն՝ Կաթուղիկոսին Յակովոյ Եւ հանապտղ երթայր ի սուրբ Աշխիածին՝ զըսանաց տղագաւ. և ի ժամ աղօթիցն գնայր յեկեղեցին, նստէր աթոռ ոով, և տայր երգել քահանոցիցն, և ինքն ունին դնէր Եւ սրասուէր տայր զօրացն, զի յինքենէ կերեցին, և ոչ զոք մի խացիցին: Եւ յուժամ ելանէր ի գնայր, տայր պարզեւ վանիցն: Երան ի զատաստանն՝ իրաւարար և Ճշմարտակը զամենացն ժամանակու: կենաց իւրոց: Եւ ի սորա ժամանակին շրջէր Օնոփրիոս ի վանարաց, և արծարծէր զըսրութիւն իւր, և միշտ զըսրին իւր, որպէս հուր թագուցեալ ի ներքոյ յարդի, և կամ իժ ծրաբեալ ի վարշամակի. այսպէս և սու զծածուկ չարին իւր յիշէր տա այնուիկ, որք իրքն զինքն էին անուղիղ և յանդինանեալ ի Կաթուղիկոսին, այժմ մի պահնեցոց ընդ ինքեան, և զրեցին բացում հայ հոյանօք սու տա ի Կաթուղիկոսին առ Եւ զիազար վարդապետն, որ Պատրիարք(էր) Նըրուսաղէմի, թէ զանեկ ի սուրբ Ամեռուս, և մեք քեզ տամք Ղաթօւղիկոսութիւնն Աշխիածնի ալքունական նօմուխոք: Եւ ահա առաքեցաք առ քեզ զՕնոփրիոս վարդապետ, զի զք'զ փառաւորապէս բերցէ ի սուրբ Ամեռուս: Զայր զրեցին, և ընդ հաւատարմոց իւրեա՞յ առաքեցին յառաջադադոյն. և յեաց զնաց Օնոփրիոսն զի՞ի թղթոյն: Եւ եղեւ զի Կաթուղիկոսն Յակոբ բերեալ դձեռնա-

սուն աշակերտն իւր Խսահակ վարդապետ Մակուեցի՞ արար Եղիսկոպոս, և եղի ի անդի իւր Աթոռակալ և Տեղապահ։ Ենքն ելեալ զնաց ի սուրբ Երուսաղէմ։ Եւ այնոքիկ՝ որք միաբանեալ են ընդ Օնոփրիոսին՝ սկսան չարիս առնել Խահակին և սուրբ Աթոռին։ Եւ եհաս համբաւս այս առ Կաթուղիկոսն յԵւդոկիա քաղաք՝ որ է Թառխաթ, և դարձաւ անտի, և եկի դարձեալ ի սուրբ Եջմիածին։ Եւ նոքա՝ որք կամին չարիս առնել Աթոռին, յորդորեցին զՕնոփրիոսն՝ և տուգրեցին հրաւիրակ Եղիազարին։ և ելեալ զնաց մինչ ի Կարին։ Խսկ Եղիազարն իրրե լուաւ զգառնազն Կաթուղիկոսին, քամահանս վարկաւ ինքեան՝ և ի խոր խոցեցաւ ի սրտի իւրում։ վասնորոյ ժողովեաց զամենացն Եղիսկոպոսուն յայնմ նահանգի ի Բերիա քաղաք՝ որ է Ճալապ, և օրհնեցաւ Կաթուղիկոս ինքնազլուխ։ Եւ իրրե լուաւ Օնոփրիոսն, վազվաղակի զնաց առնա խնդութեամբ։ և միաբանեցան ի միասին, և զնացին է ըլլտամզօլ, և առին արքունական նօմոս, որ է ի կողմանց Պարսից սեազլուխ մի անցցէ ի կողմն Օսմանցւոց։ Ըցէն ետուն զիր՝ թէ յամենացն ամի յաւելումք ի գտնձս արքունի Մ մարշել։ Եւ այնպէս կային նոքա խնդութեամբ ի վերայ չար արարմանց իւրեանց։

Գ. Ն. ՈՒԽԻ Խ.

Գ. Ն. ՈՒԽԻ Եպիստական և Արտահղութեան:

Յորժամ եղեւ Եղիազարն Կաթուղիկոս, էր յայնմ ժամանակին վարդապետ մի Կաֆայեցի Մարտիրոս անուն, որ էր Պատրիարք ի Կոստանդնուպոլիս, և բարեկամ էր սա Եջմիածնաց, զի ի Յակոբայ էր ձեւնազլուխ Եղիսկոպոս։ Աս զնացեալ առ վաճառականս՝ որք են ի կողմանցն Պարսից, և են անդարք Բ, անուն միոյն Միլիզայ, և միւսոյն Կոստակ՝ ի Ճահուկ

գեղջէ, Կախըուանսց, արքերիելիք և մեծանուն, և սոքա ընդ-
դիմանացին Եղիազարին, և նա ուներ Արքո անուն ուն բարե-
կամ. և ինքն Եղիազար էր յոյժ ճարտարախոս և ծոռոմարան,
ատենազրոյց և բաղդաւոր, պատերես և աներկիւղ. որ և ճար-
տարութեամբն իւրով ամենեցուն սիրան առ ինքն ձգեաց՝
զքրիստոնեաց սրատիր բանիւ և զտածիկսն կաշառօք. քանզի
փարթամ էր ընչիւք, և այսպէս զողացաւ զմիստ ամենեցուն,
և դարձոյց զսիրսո նոցա առ ինքն: Խակ բարեկամք Եջմիածնին
ու կամեցան առնել ինչ առանց Կաթուղիկոսի, վասնորոյ միա-
բանեցան ամենայն բարեկամք Եջմիածնի, և առաքեցին զնոյն
Մարտիրոս վարդապետն հրաւիրակ առ Կաթուղիկոսն: Եւ ե-
կեալ նա ի սուրբ Վմբռան Եջմիածնի յաւուրս պահոց Յայտ-
նութեան, և ժողովեցան ամենայն Առաջնորդը վանորեից, Ե-
պիսկոպոսք և վարդապետք, և հարք, և անապատականք, և
աշխարհական արք երեւելիք, և մեծաւ փառօք ուղարկեցին
զկաթուղիկոսն ի Կաստանդնուպոլիս: Եւ ժողովեցան առ նա
ամենայն բարեկամք նորա՝ որք ի կողմանցն Պարսից՝ որք ի
կողմանցն Օսմանցւոց, և առաքեցին զկաթուղիկոսն յԱն-
դրիանուպոլիս՝ որ է Անտրանա (Ետիլնէ կամ Ետրէնէ), զի տի-
րէր թագաւորն Առևլթան - Մահմատ: Գնացին ընդ նմա Խոս-
րովն և Միրզայն: Եւ կայր այր մի մեծ առ թագաւորն, որ բազ-
մեր ընդ թագաւորին ի սեղան, որոյ անունն էր Պայմաղ խան.
սա էր բարեկամ Խոսրովին, և միշտ զնոյր առ նա Խոսրովն,
և բերերնմա էս-մա⁽²⁶⁾ հանդերձս, վաճառէր նմա՝ և առնոյր զգինն
լիով. և այսպէս հաւատարիմ լինելով՝ սիրէր զնա Պայմաղ
խանն՝ և ունին զնէր նմա, և լսէր զբանս նորա: Այս Խոսրովս
ծանոց նմա վասն Կաթուղիկոսին. և առեալ տարաւ առ նա,
և ծանօթացոյց նմա: Եւ դահկատեաց նմա զամենայն ինչ, և
ծանոց որ ինչ ի ընէ լւալ էր: Այլև եցոյց զթուղթն Մահ-

մաս թաղաւորին՝ որ տուեալ էր Փիլիպոս Ապօլովեկոսին։ Եւ իմացեալ ծանւեաւ զամենայն Պայմաղ խանն, և առաջնութարն իւր, զոր ինչ ասիցէ քեզ Քարդ, զու զրեա՛ արշակունակ⁽²⁷⁾), յոյս ինչ աւուր երթայ թաղաւորն է մեծ Չափն⁽²⁸⁾) աղօթլք ի կես աւուրն, և զու առ զամենայն միարանս քո իւրեանց հանգեցիւն և կանքը լարչն⁽²⁹⁾), և զնացեալ ի զլուխ պողոսային՝ յորժամ զայ թաղաւորն և տեսանէ զձեզ, և թէ, վասն ձեր հարցանէ մեզ, մեք տամիք նմա պատահանին։ Եւ թէ ոչ հարցանէ, զուք առ սակաւ մերձ եկայք, և ասացիք, սապահը վաստի լուսաւ արշամաւագ ճառապահ է յլաւանի և յլաւանի⁽³⁰⁾)։ Եւ յոյնժամ զոր ինչ Սատուած կանացին զայն լիցին Զայս տասց' Պայմաղ խանն, և հրամաց զնալ ի տեղի իւր, և պատրաստ լինել՝ զոր ինչ պատրաստցի առնել մեծաւ զգուշութեամբ։ Եւ ի պայմանեալ առուր ուրբաթու կես աւուրն զնացին ի զլուխ բուն պողոսային՝ որ եր ուղիղ խոկըքն մինչեւ աւարան, և կանգնեցան միարանութեամբ։ Եւ ահա ելեալ թաղաւորն բաղմութեամբ երթայր, և եմուտ ի պողոսայն, և հայեցեալ տեսանէ զսեաւ ժաղովն՝ և տեցնացմաղ խանն, Ասլայ՝ դի՞նչ են սեաւքն՝ այնոքին։ Ասէ Պայմաղ խանն, լուեալ է իմ թէ Պատրի ոնն եկեալ է յԱճամատանաց, և կամի համբուրել զսաս քո։ Եւ առոքեաց Պայմաղ խանն սուրհանդակ մի՛ զի ընդ առաջ դացցեն։ և ուներ Կաթուղիկոսն յաջոյ ձեռին զեամբ իշարիմին Փիլիպոս Ապօլուղիկոսին, և ի ձախոյ ձեռն զարչն, և հա թորձեա զձեռն՝ և լայր կոկծանոք և զառն հեծանոք։ Եւ հրամացեաց արքայն սունուլ զմուղթան. և խոնարհեցոց Հայրապետն զզրուին՝ և տեէ, ուխտեալ է իմ համբուրել զսաս թաղաւորին, և իմ վ

(27) Ազերսագիշ, խնդրազիր։

(28) Ճ-Ճ. ժողովարան, աղօթարան։

(29) Կ-Կ. Հ-Հ. Հրովարտակ, զիր արքունի։

(30) Բարեկամատ արքայ, քաղցրացո՛ զշնարհաղ իմում ինքաղին։

ձեռամբ տալ ի՞նտ զթուղթներուն Եւ կոչեցին զԱմբուղեկոսն
առ արքայն, և ետես զնա՞ զի բայր, առէ, մի՛ լար ըհովետէ⁽⁵¹⁾). և
Եսու զթուղթներուն Եւ Կաթուղեկոսն կալեալ զուա՞ և քոէր զէ-
րեսն: Խոկ թագաւորնեալ խոնարհեալ և կաշտ զմօրուաց նորա՝ բար-
ձրացոյց՝ և առէ, մի՛ լար բարնյ, զի զնեղիր քո կատարեցից: Եւ
բացեալ զեսամիշարիցն՝ առէ, իմ է առւեալ աս, և ով է որ
ընդդիմանայ սմա. և բացեալ և արդն ընթերցեալ՝ առէ, յո-
րում աշխարհի է Աւէքիլիսայն: Վաէ Վայմաղ խանն, ի կողմն
Պարսից է: Վաէ արքայն, ընդէ՞ր ոչ երթաց առ թագաւորն
Պարսից ի դասաստան: Վաէ Վայմաղ խանն, թշնամի սորա ի
մերում կողմանց է: Վաէ արքայն, զի՞արդ կարսից: առնել նա
իշխանութիւն յաշխարհին Պարսից՝ եթէ ի մերում կողմանց
իցէ: Վաէ Վայմաղ խանն, ընթ Ասպարեւուն⁽⁵²⁾): Օ,ի Ի զլխաւոր
անդի աղօթից գոյ շայոց, մինն ի քում իշխանութեան է, որ
կոչի Երուսաղէմ՝ ի կողմն Երապստանայ. և յամենայն ամի
գան ուխտ անդ ի կողմանցն Պարսից բազումք և անթիւք, և
առն մաքսս բազումն ի ճանապարհին. և Երուսաղէմի անթիւ-
տան դրամն, և յաւելու ի գանձ արքունի: Վ. յլեցի ամինն միան-
դամ առաքեն յԵրուսաղէմայ յերկիրն Պարսից՝ և ժողովն
զրազում ուկի և արծաթ և զղիպակ հանգերձս, և բերեն յԵ-
րուսաղէմ, և է նա օգուտ աղզի մերում: Խոկ է մերս կողմանէ:
ոչ զնան բազումք յԱջմիածին. և թէ զնան ևս, ոչ տան նոցա
պինքան՝ որ իւրեանց կերածն և ըմարածն վճարէ: Եւ նորա ևս
առաքեն յԳի ամինն միանդամ՝ Կուիրակ ի մերս կողմ, բայց ոչ
տան օրպէս նորա տան, այլ սակաւ, մեր Ճ տունն՝ նոցա մի
տանն չափ ոչ տան, և զայն ևս Եցիազարն կամի չտալ: Եւ
զայս ծանուցանեն Շահին. և նա պնդապահս տայ առնել աշ-
խարհին իւրոյ չզնալ յԵրուսաղէմ, և զնուիրակն ևս արգե-

(51) Ծեր, Հինաւուրց:

(52) Աւուրելիւն. բազումուոր, երջանիկ, երանելի, բաշերաշտ

բւն, և այն պակասութիւն մեծ լինի թագաւորութեան մերում, նա թէ, և խռովութիւն ևս անկանի ի մջ բռուց թագաւորութեանց Խրքելուաւ զայս խոնթէկարն Աշահմատ, սոսկացաւ յոյժ՝ և ասէ ց' Այմաղ խանն, հրամացեաւ քեզ հոգալ զամենայն դործ դորա, և զղլուխ թշնամույ դորա ի մօտոյ բերէ քառիս: Օսյս ասացեալ զնաց յաղօթանոցն: Եւ Պ' Այմաղ խանըն արար զամենայն՝ զոր ինչ հրամացեաց արքայն, երարձ ի դիւնենքն Շ' մարչի Տուշադայն⁽⁵⁵⁾): Եհան խաթիշարիվն՝ և ետ ցկաթուղիկոսն. հրամացեաց՝ զի ամենայն հակառակք նորա հարածեացին ի դրանէ իւրոյ: Եւ ապա եկեալ Եղիազարն առ նա՝ և արարին հաշտութիւն ընդ միմեանս: Եւ զնաց Կաթուղիկոսն յԱրուսաղէմ. և զարձաւ և եկն ի սուրբ Աթոռն Եջմիածին փառաւորապէս, և վարէք զԼԿաթուղիկոսութիւնն, որպէս արժան եր առներ զամենայն:

Գ-Լ ՈՒԽ ԽԸ.

Դարձ Աստվածաշնչին յԱշխատին՝ և լինէլ է ոչողահող:

Ահնէ եր Կաթուղիկոսն Հակոր ի Կոստանդնուպօլիս, միւս Արաս խանն եր յԱշրեան, և եկն փոխանակ նորա Աաֆի խանն՝ ազգաւ Լակղի: Աա ի զալն իւրում՝ երեւցոյց զննքն լաւ յաջս ամենայնի. բայց յետոյ եղեւ չար. և յաւուր միում ելեալ դնաց ի զրօսանս, և եհաս մինչեւ ի ծովն՝ զոր Կաթուղիկոսըն արարեալ եր, ետես զծովն և զայդին, և զգեղեցկութիւն վայրացն, ցանկացաւ նմա. և առաքեաց առ Աթոռակալ Աատթէոս վարդապետն, և խնդրեաց զտեղին: Խակ Աթոռակալն պատասխան արար, թէ ոչ կարէ մ տալ. զի աեր դորա է յԱշ-

(55) Մ-Հ-Բ-, անշառումն, ըաժանումն, 2) մաքտ, հարի, մուտք, 5) վարձ:

խարհին շայոց, գուցէ եկեսցէ և անարդանս և նախատինս արկցէ մինչեւ լինիմք կատակի Զայս իրրել լուաւ, ի խոր խոցեցաւ, և որպէս զալսոք եմուտ ի սիրտն նորաւ Եւ եղե գալ Յակով Ամեթուղիկոսին յԱմեթուն իւր ի սուրբ Խջմիածին, և զընացեալ առ խանն, և տարեալ ընդ իւր աղերս ըստ պատշաճին, և խօսեցան բազում վասն աշխարհին Օսմանցւոց պատերազմին և վասն այլ բազում իրաց Եւ եղե դարձեալ գալ խանին յԽջմիածին, և գնացեալ ի գննին առ ծովն, այժմ ևս խնդրեաց խանն զծովս Ասէ Ամեթուղիկոսն, զիարդ տաց զնաքեզ, քանզի կեանք մեր և կենդանութիւն՝ նա է ի տեղի սերմանելոյ, և հանգստարան միաբանից մերոց Ասէ խանն, փոխեած զնաընդ արարաք Խջմիածնի, այլ ո՛չ զոյ հնար ելանել նման դրանէն նորաւ Եւ աստ ևս խոցեցեաւ խանն. զի Ի անզամ արհամարհեալ եղե բան նորաւ. և հնարինք կամիք յորոգայիշտ արկանել զԱմեթուն Եւ ասպա յետ աւուրց զնաց Ամեթուղիկոսըն առ խանն՝ և ասէ, ես կամիմ զնապ առ Շահն, և առնուլ հրաման ի նմանէ վասն իմ Ասէ խանն, գու մի զնացես, մեք աստի հոգացուք զբանն քու Ասէ Ամեթուղիկոսն, զոյ պարտսի վերայ մեր բազում, զնամ ժողովել անտի և հատուցանեմ ըզ պարտսն Ասէ խանն, աստ առցուք ի վաճառականացն՝ և տացուք զպարտս քու Ասէ Ամեթուղիկոսն, եթէ առնուլք ի վաճառականաց, ուստի հատուցանեմք նոցա. քանզի զոն և գործք մեր ի դրան արքային, և վասն այնոցիկ ևս զնամ հոգալ Զայս ասացեալ ելեալ զնաց. և յետ աւուրց ել և զնաց, և եհամինչեւ յԱստաղատ Խոկ իշխանն խորհեցաւ ի մտի իւրում և ասէ, ես բազում անարդանս ասացի նման, մի գուցէ երթեալ զանկատեսցէ յինէն առ Շահն ընդ այլ դանկատաւորացն, և փորձութիւն բերցեն ի զլուս իմ Եւ վաղվազակի առաքեաց զինի նորա զինութորս և ասէ, ուր և իցէ նա՝ գտեալ ածէք առ խու Եւ զնացեալ զօրականացն յԱստաղատ, և բռնութեամբ բե-

բեալ հասուցին յԱրեան, և ծանուցին իշխանին, Եւ կոչեաց
առ ինքն՝ և ասէ, ես ասացի քեզ մի՛ գնալ, զի ասաի հոգամք
զգործն քո. արդ երթեալ նիստ յԱնապատն Երեանոց, և ես
հասուցից զպարտս քու Եւ այսպէս է զիսպահոջ արար զնա. և
ես պահապան նմա Երաս-անուն ոմն առձիկ, և պատուիթեաց
նմա զգուշութեամբ պահել՝ զի մի՛ փախիցէ: Իսկ Աաթուղի-
կոսն առաքեաց առ նա պատզամն խիստ՝ և ասէ, ես երթա-
յի առ ոսս Ծահին, և դու կալանաւոր արարեր զիս որպէս
մահապարտ: Երդ թէ արժանի եմ մահու՝ սպա՞ն զիս, ապաթէ
ոչ՝ ընդէ՞ր կամ ի բանափի: Իսկ իշխանն առաքեաց առ նա՝ և
ասէ, ոչ սպանանեմ զքեզ և ոչ արձակեմ, այլ այդր կաց
մինչև մեռցիս: Եւ ինքն ժողովեաց զամենայն փարթամ՝ և մե-
ծատուն մարդիկ, և էառ ՚ի նոցանե: Ո՞չ թուման դրամ. և
պատճառ եղ՝ թէ աթոռին պարտն տամք, և յետոյ ձեզ հա-
տուցեն Լաճիածնի նստօղքն: Եւ պատրեաց զամենեսեան, և
ինքն լափեաց, և ոչ ետ նմա փող մի: Եւ այսպէս արար զԱաթո-
ղիկոսն կալանաւոր, և ինքն կայր սնուտի յուսով:

Գ. Լ. Ա. Խ. Խ. Բ.

Փակուած Աաթուղիկոսն և յուրաքանչիւն:

Օոր ինչ արար նա ընդ Աաթուղիկոսն՝ ոչ իմացաւ թէ ի
կորուստ անձին իւրոյ արար: ՚Բանզի զըամատեալբն՝ յորոց
առեալ էր խանն՝ յոմանց Ճ թուման, յոմանց Կ՝ որպէս զքե-
ցաք, սոքա զային առ Աաթուղիկոսն՝ և խնդրէին զդրամն. զա-
յին և զնային, և ոչ էր հնարս առնլոյ: Եւ ասէին, զու ջանա
ելանել այտի, և մեք դատ առնեմք Ծահին ի խանէն, և դրա-
մըն մեր առնումք շահիւն ի դմանէ: Իսկ Աաթուղիկոսն թէպէտ
էր ի զիսպահոջ, այլ յամենայն օր ելանէր և զնայր ուր և կա-
մք: Եւ եղև՝ զի Յունաց աշխարհէն զայր կարաւան ի յԱ-

բարատ: Ասէ Աաթուղեկոսն ցԱպաղն՝ որ էր պահապան նմա,
եկ զի երթիցուք ընդ առաջ կարաւանին: Ասէ Ապաղն, զո
ինձ զործ ինչ ես ոչ կարեմ գալ, երթ զու: Եւ էր օրն այն
Համբարձում Տեսոն: Եւ Հայրապեան զամենայն կարափ
իւր Ռ աւուրբք առաջ առաքեալ էր յԵրաւեիլ, և յայնմ
աւուր զիարափի իւրոյ անձինն Ռ բեռն առաքեաց յԵղեարդ
զիւղ, և ասաց մնալ առ ափն ջրոյն՝ և հայել ինձ. և ինքն ի
կէս աւուրըն հեծառ զջորի իւր՝ և առաջի արկեալ զԱ արդան
սուրհանդակն, և յիշեաց անունն Յիմառափի Վրիստոսի բարե-
խօս արարեալ ղՑօնն, և ել ի ճանապարհ: Եւ ի վերայ Կորա-
գեղց զնաց աւապար ճանապարհաւ, և մերձ ի մտանել արե-
գականն եհաս յԵղեարդ. և առեալ անտի Ռ արս քաջախրտու
և աներկիւղը թուանքով, և ընդ նոսա զնացեալ ի զաւառն
Կիդ ի զիւղն Չորոյրերան, որ այժմ ասի Գուլաւտի, և անտի
ևս առեալ բարեպաշտ այր մի՛ Եւարի անուն, և անցեալ ի
Տաշիր, և զնաց ի Լոսի ի զիւղն Դսեղ: Եւ անտի ևս առեալ
արս երիս, և եղեն բաղումք. և անցեալ զնացին ի կողմն ԱՇ-
ուանից ի Բարկուշատ և մինչեւ ի ստհմանս Պարսից, և հասին
յԵրաւեիլ, և էառ զՃամբարն իւր՝ զոր առաքեալ էր առա-
ջաղոյն, և ելեալ անտի՝ և զնաց եհաս յԵսպահան. և այսպէս
զերծաւ, և կայր նայ Ապաղնան: Խակ տաճիկն՝ որ պահէր զնա՝
եկն յանապատն, ետեւ՝ զի ոչ էր անդ, գնաց ի սրանդունի մեջ
կարաւանին, և ոչ ետեւ զնաւ: Գնաց յԵշմիածին, եհարց, և
ոչ ոք զիտէր զնաւ. դարձաւ և եկն յանապատն Երևանայ, այլ
և ոչ զոյր: Եւ էր անդ Ապաղն մի Յակովը անուն Քու-
զայեցին մականունն Իշտամ, տաէ, ահա նա փախեալ (է),
եկ զի մեք ևս փախիցուք, զի մի նեղեսցեն զմեղ: Ասէ Ապաղն,
զու միայն ես, եթէ փախիցես՝ կարող ես, ես զիաղդ փախեայց,
զի տուն իմ առար տոնեն, զնացեալ ասացից խանինն Եւ էր
խանն ի Առաք զաւառի ի վերայ ականց աղբերայն՝ որ ասի
Պռի - պուլաղ, որ է Խ աղբիւր, անդ յապահովս լմնիւր: Ա-

գնացեալ Ապադն պատմեաց խանին։ Եւ նա դիտէր՝ որ կորուստ
եղև ինքեան վախուստ նորա, և բարկացեալ ի վերց Ապազին՝
և էառ ի նմանէ, տուղանս 1 թուման, և ապա թողեալ անդ
զհարձնն, և ինքն միաձի ելեալ զօրօքն զնաց յլչրեան, և առա-
քեաց յամենայն վանորայս և անապատա՝ զիւզ՝ որոնել, և առ-
նել զիր ամենայն ումեքէ, զի ով ոք տեսցէ զնա՝ կալեալ բեր-
ցեն առ ինքն։ և շրջեցսն յամենայն երկիրն, և դարձան ունայն։
Ապա առաքեաց դեսպանս փութագնաց ընդ ամենայն կողմանս
աշխարհի՝ ի Արացտուն, ի Գանձայ, ի Խաւրէզ, ի Կախ-
չուան, ի Խոյ, ի Կարս, յԱխցիսէ, և յայլ կողմանս, զնացին՝ և
ոչ տեսին զնա. և թէ տեսին ևս, յորդորեցին զնա ի զնալ։
Յետ այսորիկ ժողովեաց ամենայն վանորէից Առաջնորդս, և
զեզորէից տանուտնարսն, և զդաւառապետսն, և զամենայն
մեծամեծսն՝ ի քաղաքն Երեան. և ինքն զրեաց բազում ամ-
բաստանութիւնս, և զոր ինչ չարիք՝ զոր ինքն գործեալ էր,
զայն ամենայն յօդեաց ի վերայ Կաթուղիկոսին. և ձեռամբ
պնդագեսպանի առաքեաց առ Հաճն, և պատուիրեաց՝ զի մի
տեսցէ ՀՀտիմալ - Տօլուաթն, զի թշնամի իմ է ասէ։ Եւ զը-
նացեալ դեսպանն՝ այլում ձեռամբ հասոյց զթուղթն առ Հա-
ճն. մինչդեռ ընթեռնոյր Հաճն զթուղթն, եմուտ ՀՀտիմալ
Տօլուաթն ի ներս, և ետ ի նա զթուղթն. և ընթերցաւ զկէս
թղթին՝ և ասէ, Ասֆի - զուլի խանն քակէ զերկիրն, և ինքն
զիւր վնասն զնէ ի վերայ սեադլիոց. և պատառեաց զթուղթն,
և էարկ ի հուր՝ զոր պատգարակօք եղեալ էր վասն ծաւխ ըմ-
պելոյ։ Խսկ Կաթուղիկոսն յորժամ եհաս յԱսպահան, նախ
զնաց առ ՀՀտիմալ Տօլուաթն, և ասաց նմա զամենայն՝
զոր ինչ կրեաց նա ի խանէն, և զզործս Յունաց աշխարհինւ
Խսկ ՀՀտիմալ - տօլուաթն ասաց, զրեա՛ արզ, և զոր ինչ
կամիս, և ես տաց զնա Հաճին։ Խսկ նա զնացեալ նախ
պատրաստեաց յիսուն ոսկին՝ որ սահմանեալ էր առաջին
Կաթուղիկոսացն տալ Հաճին վասն իւր ուղամին։ Եւ ապա

պալստեան իւրոյ ի նորոգ թագաւորէն՝ քահեքա-
չեաց⁽⁵⁴⁾) զալստեան իւրոյ ի նորոգ թագաւորէն՝ քահեքա-
չեաց⁽⁵⁵⁾ մոման, և մաշնանեաց⁽⁵⁶⁾ պատկեր մարդոյ, ժական ոսկի,
Ժ հան⁽⁵⁷⁾ ոսկի, և այլ ինչ պատշաճաւոր, զրեաց և զիր զան-
գատանաց ի խանէն, և էր պատճէն այս. թէ ի բնէ է ամենայն ազգ
Նայոց՝ ուր և իցէ թէ յաշխարհին Օսմանցւոց, թէ ի Յուանցաց,
թէ Նոգկաց, թէ Մոսկովաց, և ուր և դտանի յազդէն Նայոց, ա-
մենեքեան հնազանդին Խջմիածնի՝ որ է ի ներքոյ տերութեան
քում. և ըստ օրինաց մերոց հարկս տան բնակչաց Խջմիածնին,
և նորա զարգունական հարկն տան: Եւ ի մերում ժամանակի
յաշխարհին Օսմանցւոց բարձին զայն՝ և ոչ կամին տալ. և
թագաւորական հրամանաւ հատին զայն: Եւ մեք յուսացաք ի
Ը խ- Աաֆու օձախն, և զնացաք առ խոնթկարն բազում պար-
տօք և չարչարանօք, թագաւորի խաթիշարիֆովն, և հազիւ կա-
րացաք զարձուցանել առ ի ներքոյ տերութեան քում: Եւ յոր-
ժամ եկաք ի մերս յաշխարհ, և զոր ինչ արժան էր՝ աշերսեցաք
խանին, և առաք ի նմանէ հրաման՝ դալ և համրութել դշողս
ոտից քոց. և եկաք Օ աւուրց ճանապարհ. և խանն առաքեալ
զարձոց զմեզ յետս, և եղ ի բանտի. և յաղալս մեր՝ զամե-
նայն մեծամեծան կալեալ տուգանեաց, և զերիիրն ամենայն զը-
նացին ի կողմն Օսմանցւոց վասն ազահութեան նորաւ Եւ մեք
զերծեալ փախստեայ եկաք առ ոտս քո. և եթէ արժանի եմ
մահաւ, արիւն իմ շանց քոց լիցի կերակուր: Օ այս և այլ զոր
ինչ պակասութիւն արարեալ էր՝ զրեաց զամենայն. եղ ընդ
Նմա զիսաթիշարիֆն խունթկարին, և ձեռամբ Խախիմալ- տօնոց
ւաթին՝ որոյ անունն էր Ծ խալի խան, առաքեաց առ Ծ ահն: Եւ
Ծ ահն տեսեալ զիսաթիշարիֆն, ասէ, եթէ խունթկարն

(54) Դժուարացաք իմանալ զբառս զայս՝ և զնշանակութիւնն:

(55) Քեհեքութեաց. սաթեաց, բազմազունի ակնեաց:

(56) Մեշնանեաց. կորաղիոնեաց, բուսանեաց,

(57) Աահամթ. ժոմացցց:

զմերն սիրէ, մեք ընդէ՞ր ոչ սիրեմք, (զի) Աաֆի խանն այլքան չտրէքը բերէ ի զլուխ նորաւ Յիշեցուցին նմա և այլ զանգատառաց բանքնու Եօր անդ և Լակղաց խանն, և նա ևս ասաց, Աաֆի խանն այնքան ապրանք առաքեաց ի տուն իւր, զի ես չի թուման մաքս առի, թուղ զրեռանցն: Լուաւ զայս Շահն, և հրամացեաց զրել առ Միրզաց Խալրահիմն՝ ի Խաւրէզ, որ առէին Նատրի Ճան Ա աղրի, զի զնացէ Աշրեւան, և զԱաֆի խանն և զորդի նորին Վհէհուոգ-ալի անուն ըմբռանեալ կապեցես, և զտուն նորաւ աւար առցես, մինչև ցկանանց ուսաց շորն ևս հանցեն, և զինքն և զորդի իւր առաքեցեն կապանօք ի բերդն Գալայ ի Գառլասի, որ էր բերդ Ա արդաջրի: Եւ կապեալ զնա՝ ետ ի ձեռն Բայցադ Շաբաղին՝ զոր առաջն զրեցաք զեւ կնոջաւն: Եւ ոմն Աարու խան առաքեալ ի Շահնէն՝ նստոյց անդ Տեղապահ մինչև խան եկեցէ: Բայց յորժամ եհաս հրաման Շահն առ Միրզաց Խալրահիմն, էառ ընդ իւր Ե այր ևս, և զնացեալ հասին մինչ ի դաշտն Շարուրայ. և լուան՝ թէ խանն ի Կոսայս է ի վերայ բազմութեանց աղբերացն. և ի վերայ Գառանոյ զնացին թագնարար, և ելին ի զլուխ բըրի միոց. և հայեցեալ նշանեցին զվրանն: և նիշ արարեալ զնացեալ մտին ի վրանն, և ոչ զոյր ոք անդ, բայց միայն փոքրիկ մանուկ որդին իւր խաղայր ընդ նմա: Եւ Բ եքին նոքա բարձրացուցին զլախտն՝ այսինքն թօփուզն, և կարկառեցին ի վերայ նորա՝ ասելով, կալանաւոր ես Շահն, մի շարժիր: Եւ նա ասէ, բարի է, ցոյց ինձ ռազամ Շահն: Եւ նոքա հանեալ ետուն ցնա. և առեալ համրուրեաց՝ և եղ ի վերայ զլիոցն: Եւ իրբե ընթերցաւ, եղ զձեռն ի վերայ ձեռացն՝ և ասէ, կապեցէք: Եւ նոքա մատուցեալ մերկացուցին զնա՝ և կապեցին զձեռս յետո, և եղին շղթայ յոտսն. և մանուկ որդի նորա լայր. և ասեն, մի լար. և մնաց մինն անդ, և Ե զնացին ի վրանս կանանցն, և հանին զնոսա արտաքս՝ ճիճվալով, ճղճղալով, ճղալով, ոռնասվ, հայհոյելով, աղաղակելով: Խոկ թուրքերն մերկացուցին

զազնիւ հանդերձս նոցա, և զգեցուցին այլ հանդերձ, և եղեալ ի վերայ ուղառու՝ առաքեցին յԵրեան։ Եւ ը տաճիկ փութացան ի բերդն, և փակեցին զղբունսն, և զբեցին զամենայն ինչս նորա շաբթունիս։ Եւ այն արարին այնպէս՝ որպէս և զբեցաք։

Գ.Լ.Ա.Խ. ԽՊՀ.

Թագավորական Ը ահ Առ-Ալյովանին։

Զինի փոքր Ծահ-Մրասին թագաւորեաց որդի նորա Ծահ Ալավի՛ մի ամ։ Զինի սորա՝ եղբայր նորա Ծահ Ալուկէ յման ի Ա-Ճ-Ժ-Ճ թուին։ Բայց ասեն վասն սորա՝ Ծահ-Ալավին ինքն դոլ, և ուներ անուն այլ, և յորժամ թագաւորեաց՝ անուանեցին անուն հաւուն իւրոյ Ծահ-Ալավին։ Եւ ի թագաւորելին իւրում խակոյն տկարացաւ, և ասէ, անունս այս ոչ եղել ինձ ուղեղ, և փոխեցին զանունն, և եղին Ալուկէ յման։ Եւ ոմանք ասացին, ոչ է սա Ծահ-Ալավին։ Եյլ յորժամ Ծահ Ալավին եղել Ծահ, սկասւ դործել շնութիւն պղծութեան, և բանութեամբ տայր բերել զիանայս մեծամեծ իշխանացն՝ և շնայր ընդ նոսաւ Յաւուր միում տարաւ բռնութեամբ կին ուրումն իշխանի, և ոչ կամեր կիննն Աանորոյ առեալ կնոջն զանակ փոքրիկ՝ և եղ զայն գաղտ ի ծոց իւր՝ և զնաց։ Եւ յորժամ հուզ եղել Ծահն առ կիննն, նա զՅուղիթայն արար ընդ երկրորդ Առղեփեռնեայ, հարեալ զդանակն ընդ կոկորդն, և այնպէս սատակեցոյց, և ինքն ելեալ* արտապս՝ ասէ ցնելիքինիս կանանց, արդ պատուեցի Ծահն ձեր ըստ արժանոյն իւրոյ, զայս ասացեալ՝ ել և զնաց աներկիւդ։ Եւ ներքինեացն մըտեալ տեսին՝ զի թաւալէր ի մէջ արեանն. և զաղտ կորուսին զնաւ։ Եւ բերեալ զեղբայր նորա Ալուկէ յման թագաւորեցուցին։ Երդ թէ սուտ և թէ իրաւ, մեք արապէս լուաք որպէս և զրե-

ցաք: Ահա այս Շահ Առուլէյմանս է՝ որ ըմբռնեաց զլլաֆի խանն, և պատուեաց զէՅակոր Կաթուղիկոսն: Առ սա եկե բակլ թուն թւամրազի, զոր պատմեսցուք յետոյ: Այս Շահ Առուլէյմանս ուներ որդի մի՛ կարի քո՞ջ և ուժեղ, և կարի ի նետաձգութիւնն, և պահէր զնա հայրն վասն թագաւորութեան, և ուր և զնայր՝ տանէր և զօրդին, արկեալ զիւրեաւ զթուրն և զիսպարձն նետիցն, զաղեղն: Եւ յաւուր միում մտեալ Շահն ի բուրաստանն՝ և զօրդին առաջի իւր, և հանեալ զնետն եղ ի յաղեղն, և եհար զծառն. և էանց նետն թափանց յայն կողմն ճանտարի ծառոյն: Եւ զայն տեսեալ հայրն՝ ոխացաւ ընդ որդւոյն, և կամեցաւ կորուսանել զօրդին. բայց ոչ յայտնի: Այլ գաղտ ասէ ցներքինսպետն, յորժամ գայ նա ի մէջ հարձին, ի ննջելն իւր հարէք և սպանէք զնա՝ և զաղա կորուսէք: Եւ ծանուցին մօր նորա. և զնաց մայրն, աղաւէր առ սկեսուրն իւր՝ որ մայր էր Շահին, և ասէ, որդին քո կամի սպանանել զորդի իմ, աղաւէմ զքեղ վասն Աստուծոյ և արևշատութեան իւր՝ մի՛ տայք կսկիծ սրտի իմոյ մահւամբ նորա. ոյլ տարեալ հեռացուցէք իւրով մահուամբ մեռնել: Եւ զնացեալ մայրն աղերսէր որդւոյն մի՛ հեղուլ զարիւն, և լիցի մեզ սուզ: Եւ Շահն ասէ, արարից զնա ըստ կամաց քոյց: Եւ ասէ ցորդին, երթ ի Յահրասպատ, և անդ կացջեր մինչեւ կոչեցից զքեղ. և պատուիրեաց տանողացն, թէ յորժամ հասանէք ի տեղին՝ սպանէք զնա, և զզուին բերէք առ իս: Եւ առեալ զնացին. և ի միում աւուր եմուտ Շահն ի մէջ կանանց, և ընդառաջ եղեւ նմա մայրն իւր՝ համամայր քոյրն և մին ի կանանց հօր իւրոյ. և ոչ իմացաւ թէ քոյրն իցէ, և էարի զզաստառակն ի զերայ նորա՝ որպէս թէ զնացէ ընդ նմա ի զործ մեղաց: Ասէ մայրաթիւն, քոյր քո է դա. և բարկացեալ առ այն, և հանեալ զթուրն, և եսպան զքոյրն և ըզմոյրաթիւն. և ելեալ զնաց: Եւ իսկոյն բերին զպատղամ սպանման որդւոյն, և ապաշաւեաց զմահ երիցն. և ի կսկծոյն զի-

Հայարեալ խելագարեցաւ, և խօսեր վայրապար. և բանացը
զտունացի անդամն՝ և քսէր ընդ որմունսն, և անկեալ յերկիր
թաւալիւր: Եւ նիբբինապետն ծանոց ՀՀամալ-Տօլուաթին.
և կորուսին զնա ծածկաբար. որ թաղաւորեաց ամս Իւ: Եւ ե-
ղին ի տեղի նորա միւս որդին Հիւսէին ի թուին ՈՒԱՇԽԱ:

ԳՅԱՌԻԼ ԽԵՂԱ.

ԱՐԵՎԱԿ ՕՆԿԻՆԻՆԻ:

Որպէս և զբեցաք՝ թէ Եղիազարն եղեւ Ամթուղիկոս, և
Օնոփիրիոսն զնաց առ նա, և միաբանեցաւ ընդ նմա ամենայն
սրտիւ. և քարոզէր ճարտարութեամբ. և անուանեաց զլշզիա-
զարն երկրորդ սուրբ Առևսաւորիչ. և վասն ճաշտ սրախօսու-
թեան և ճռումարան արագ արագ զրուցելոյն՝ անուանեցին
զԾնոփիրիոսն՝ Ապրիուտ. և եր ընդ Եղիազարին համալուհի: Եւ
յորժամ զնաց մեծ Ամթուղիկոսն Յակոր ի Կոստանդնուպօ-
լիս, բազումք եկին առ նա. և իրրե զիւտաց Ապրիուտն՝ թէ ու-
կարէ զիմամարտել ընդ արեգական, արար կագ ընդ համախո-
հին խրոյ Եղիազարու, և կեղծաւոր'ալ՝ ասէ՝ զինքն որպէս
թէ զզջացեալ, եկին առ Ամթուղիկոսն Յակոր, անկաւ յուս
նոյա, և ասէ, ահա ծանեայ զանօրէնութիւն իմ՝ և զբարե-
բարութիւն քո. մի յիշեր զար'ա իմ: Իսկ մեծ Հայրապետն
հաւատաց սուտ և նանիր բանից նորա, և ետ նմա թուղթ, և
առաքեաց ի սուրբ Ամթոսն Հաջմիածին՝ լինել անդ Ամթոսակալ:
Եւ եկեալ նստաւ վրացեալ Արդ անհնարին է հրոյ թողուլ
զայրեցողութիւնն. և հողմոյ՝ ցրտութիւնն, և առն ամբարշալ՝
զչարութիւնն. Քանզի յորժամ եկին սա ի սուրբ Ամթոսն Հաջ-
միածին, սկսաւ նոր չարիս զործել. և եհան մուրհակ սուտ՝
այսինքն Բամասունչ վասն Զաքարիա վարչապետին, թէ Յթու-
ման պարտի ինձ: Ոիւս ևս չար մուրհակ, թէ ես Զաքարիա

վարդապետս ունիմ՛ Ա՝ թուման է Յօհանավանք՝ թէ ղրամ և
թէ այլ ինչ, զայն ամենայն ետու ի ձեռն հոգեւոր որդւոյն իմց
Օնոփրիոս վարդապետին, զի՞նչ որ նա հաճեսցի՝ այնպէս ա-
րացի՛: Աթէ որ հակառակեսցի նմա, զամենայն ինչ իմ յար-
քունիս լիցի՛: Հոռցեալ զայս Ի զիրս, և պահանջէր Յ թումանն
խստութեամբ: Խսկ Յովհաննէս վարդապետան՝ որ նատեալ էր
ի տեղի Օաքարիսյն Առաջնորդ է Յօհաննավանք, ի տարակու-
սի լեալ, և անձարացեալ ոչ զիտէր՝ թէ զի՞նչ արացի՛, զի ոչ
ունէր նա լեզու հրապարակախօս լինելը Ա անորոյ ողորմու-
թիւնի Տեառնէ եհաս նմա: Վրանդի եկն յԱսպահանաց այր մի
Ֆուղայեցի Աղամալ անուն, և էր նա բարեկամ Օաքարիս
Վարդապետին, և յոյժ սիրելի Յօհաննավանից, որ ունէր մուր-
հակ բազում վաճառականաց, որ արարեալ էին զնա յինքեանց
տեղի՝ տէր ընչիցն իւրեանց, զի ուր իցեն սպարատելը՝ նորա-
տացեն զպարտս իւրեանց Աղամալին: Եւ էր ի մէջ Ֆուղայու-
մեծ ոմն Աամբուաղ անուն, որ էր աւսդ Ֆուղայու, և եղ-
բայր Օնոփրիոսին Պօղոս անուն: սա պարտ էր խօճայ Աամբու-
զին Ը թուման ձեռագրով իւրով. այժմ եկեալ Աղամալն
խնդրէր զը թումանն: Լուաւ և զսուտ մուրհակն՝ որ վասն
Յօհաննավանացն արարեալ էին. կարաւ Աղամալն Պօղոսն, և
եդ կունդ ի պարանոցն. և կախեալ ի զրան բերդին՝ պնդան
հարին փայտիւ զոտսն՝ մինչեւ առին զսուտ մուրհակն, և պա-
տառեցին: Իսայց . . .⁽⁵⁸⁾ թուման անցին ի Պօղոսէն Ը թու-
մաննէն: Եւ յետ զնալոյ Աղամալին՝ արար միւս ևս շարութիւն
Օնոփրիոսն. զի զարձեալ արծարծեաց զէ թումանն Յօհաննա-
վանից, ասէ, բանութեամբ առիք զմուրհակն իմ. վասնորոյ
տանք զէ թումանն իմ. և ճշտիւ սպահանջէր: Եւ ի նոյն աւու-
րըն, եկն Աամբուղիկոսն յաշխարհէն Յունաց, և սաստեալ լու-

(58) Կ բնապրին եղծեալ դուռվ թուապրին չէ յայտ թէ արդիօք Շ.
Կ կամ Խ. Եցէ:

ցոյց վնաս Եւ զի համառօտ պատմեցից զգատմութիւն նորա
շարութեանն, և յորժամ ի զիսպահոջ եղեւ Աաթուղիկոսն,
եւ նմա Կոռիրակութիւնն գաւառին Գեղամայ: Հորժամ փա-
խեաւ Աաթուղիկոսն, եթող զԿոռիրակութիւնն, և եկն՝ եղեւ
բարեկամ խանին. և խորհելին զշարիս վասն Աաթուղիկոսին.
ամենայն օր նոր համբաւ հանեին՝ թէ վասն Օնոփրիոսին կա-
թուղիկոսութեան ռազմամ է զալիս: Եւ յորժամ կործանե-
ցաւ խանն, Ապո՛ու ոն անկաւ ի տարակուսանս. վասնորոյ
անձարացեալ՝ և ինքն ելեալ զնաց յերիբն Փարսից, զի դո-
նեա՞ հաշտեցի ընդ նմա Աաթուղիկոսն: Եւ հասեալ ի զիւզն
Կիզրայ, և ահա եկին ի զիւանապետէն արք՝ և ըմբանեցին
զնա, և եղին կունդ ի պարանոցն, և առեալ տարին մինչեւ ի
Զանիկան քաղաք. և անդ եկին զնա ի ուահս, և ինքեանք զը-
նացին ի Վաղութիւն. և ծանուցին Աաթուղիկոսին, և նա բար-
կացեալ ասէ, որոյ հրամանաւ արարիք զայդ, զի ես ոչ զիսեմի
Նսեն, հրամանաւ զիւանապետին արարաք: Եւ ապա հրամա-
յեաց Աաթուղիկոսն արձակել զնա՝ և բերել առ ինքն. և ե-
կեալ առ նա՝ և արար սեր ընդ նմա. և ետ ի նա վերակացու-
թիւն դործոց տանն. և միամտութեամբ սեր առներ ընդ նաւ
Եսկ չարն այն այլ ոչ զաղարեր գաղտնի առնել զրբութիւնն:
Քանեզի առանց զիսելոյ Աաթուղիկոսին արար պարտա բազում,
և հոգայր չարութիւն, զոր յետոյ զըեցից: Իսկ Աաթուղիկոսն
միւսանգամ պատրաստեաց աղերս. և զրեաց արդ, և առեալ
զնաց առ Ծահն, և մատոյց աղերսն և արզն: Եւ Ծահն ա-
սաց, ես վաղութեմն ետու զմա հրաման, դեռևս մետ է զա:
Նսեն մեծամեծքն, ոչ զոյ զմա ռազմամ, վասն այն ոչ կարէ
զնալ: Եւ հրամայեաց Ծահն տալ ռազմն: և զարբունական
խիլայն ըստ սովորութեանն, զեղեցիկ պատմուճան ուկեն'ար, և
գօտի պատուական, և սամուր վերարիու, և զինոյ քծափ՝ որ է
մանատիլ, և երիվար զօրեղ. և ի պատիւ երեսաց նորա արար և
լշեան զԱսաֆի խանն՝ որ եր որդի Առաստամ խանին թաւրիզոյ,

և առաքեաց յԱշրեան. և ի նա յանձնեաց զԱթմուղիկոսն Եւ մեք ելեալք ի Պաղումնոյ Կարկուախին(և)ընդ գեսպանացն Քռանգաց՝ և եկաք ի Խաւրելզ: Եւ Կաթուղիկոսն գնաց ընդ խանին ի Արտաւիլ, և անտի ի Խաւրելզ ընդ խանին. և յետ առուրց ելեալ խանն գնալ յԱշրեան, և Կարկուան ևս գնաց: Յետ երկուց առուրց գնաց և Կաթուղիկոսն. և ի Յայտնութեան Շրագալուցին Օնոփրիոսն եմուտ յԱշրեան, և վաղիւն Կաթուղիկոսն: Եւ Կարկուան զղեսաւորեցաւ առնել Զ. Ք. Հ. Ն. Ք. առաջի խանին: Եւ հանին զգեստն, և զղեցուցին Կաթուղիկոսին: Եւ արարին մեծահանգէս Զ. Ք. Ո. Հ. Ն. Ք. առաջի խանին. և յերկրորդ առուրն հրաման էառ ի խանէն, զի գնացէ ի սուրբ Լշջմիածին, որպէս և կամի առնել ընդ Կարկոսին՝ արասցէ: Եւ ելեալ գնացին. և ի ճանապարհին աղղեցին Կարկուախին զկորուսան իւր. և սցլազունեցաւ զեղ նորա որպէս ածուխ. բայց ոչինչ կարաց առնել: Յորժամ մտին ի սուրբ Լշջմիածին, ի մեջ եկեղեցւոյ առեալ մկրատ: Կաթուղիկոսն և խուզեաց զղլուխն, և ապա զմօրուսն. և ասէ նա, աղաչեմ վանն Խստուծոյ՝ զղլուխս խուզեցեր, մօրուսս մի՛ խուզեր: Ասէ Կաթուղիկոսն, ով ատելի Խստուծոյ՝ զու աւացեալ ես, թէ ես հատանեմ զղլուխս Կաթուղիկոսին, և հաստատեմ զնա ի վերայ Խջման տեղին, և առնել ի վերայ նորա սպասարագ: Խքդ մե՞ծ իցէ մօրուս քո քան զղլուխս իմ, ընկալ զմօրսարէնն. և խուզեալ զամենայն հերթն, և տարեալ ար՛ին զնա յառաջին ուղանն⁽³⁹⁾)իւր շղթայիւք: Եւ ապա յուղել սկսան զինչը նորա. և զտին մի բեռն զղեստ կանանց, կեռկեռ կօչիկ, և կերպաս ոտնաշոր, և ոսկետառուն լազակս, և ոսկեզարդեայ քող երեսաց, և այլ այսպիսի զարդարանքս կանանց: Եւ ապա ասացին նմա, ուր թաղուցեալ եքն զռաղամսն, և զիլքերոյ⁽⁴⁰⁾) իսպա-

(39) Խառարշաբին տեղի, բանտ:

(40) Կալուած, երկիր, ժառանգութիւն ելու:

լոյքն: Եշւ նա ուրանոյց՝ թէ ոչ զիտեմ, և տպա եղին կոճդ ի յոտս նորա, և այնքան բրածեծ արարին զնա ի բանալին՝ մինչև առաքեաց զքեռողջին իւր յԱրեւան քաղուք, և ետ բերեւ զամնայն, և ի մեջ թզթոյն զիրս արքունի՝ մին վասն Ամէժու զիկոսութեան, Ի՞ վասն հնազանդ լինելոյ նմա ամենայն եկեղեցականաց, Գև վասն մեղքութեան աղգաց իւրոց: Եշւ ասկա առաքեցին զնա ի Աեան կղզի՝ գնել իսենեկի, և ոչ թողուլ մոտանել զոք առ նա: Կացեալ անդէն առուրս ինչ, ի տրամութենէ սրտին և ի բազում վշտացն՝ հեծեծանօք մեռաւ և բարձաւ ի միջոյ, և ոչ եղն արժանի օրինաւոր մահուամբ մեռանել:

Գ. Լ. ՈՒԽԻ ԽԵ.

Ի ՀՅԱՆՆ-ԱՌԵՆ ԲԵՐ ԱԿԱՑԱՆ:

Ըետ կործանման Լակզի Առաջի խանին՝ ասկա առաքեցաւ յԱրեւան Տեղապահ՝ ոմն Աարուխան բեկ անուն՝ ամս Ի՞, և Աաջի-զույի խանն, որ էր որդի Առաստամ խանին Խաւրիզու: Աա եկեալ նստաւ յԱրեւան, և սկսաւ նորարոյս չարիս գործել: Առաքեաց ի Խաւրիզ, և ետ բերել անստի բող կանայս, որ ո՛չ էր ընաւ սովորութիւն մերս շնարհի՝ պահել բող. սա այժմ հաստատեաց զայն ևս: Եշհան հրաման՝ թէ յաւուր անձրեւու քրիստոնեայք արտաքս մի՛ ելցեն ի տ անց, զի հոտ զարշելանէ ի նոցանէ, և զտածիկն ապականէ: Վ. յլի պնդապահու արար, այսինքն զատազայ, թէ ո՛վ ոք ի մեծատանց և կամ յօտարականաց մեռանի՝ թարց հրամանաց իմոց ոչ թաղել՝ ոչ քրիստոնեայ և ոչ տաճիկ: Վ. յլ և բազմացան աւազակք ի ճանապարհի, և զողք ի շնոս, վասն այս պատճառի ո՛չ ոք կարեր զնալ ի ճանապարհ, զի կողոպտեին: Եշւ ՚ի բազում եկեղեցիս մաին զողք, և աւար առին: Եշւ այսովէս կայր երկիրս ամենայն ի մեջ բազում տառապանաց: Ա ամնորոյ ժողովեցան ամենայն

տաճիկք, և արարին երրհուրդ, և եղին զվաւոր բնիքեանց զոմն կամթալի անուն, և անուանեցին զբնքեանց Դարախաշայ: Եւ խորհեցան զկորուստ խանին՝ ասելով, սա երեր զօռդս աստ, և ամենեքեան գնան առ նոսա, և օրինաւոր կանայք արհամարչեալ լինին: Ասէ, յաւուրս անձրեի քրիստոնեայք մի՛ ելցեն արտաքս, մեք ահա դրացի եմք քրիստոնէից, և խառն ի խուռն կամք ընդ նոսա, առեւտուր ի միասին լինի, և շահս բազումս ունինք ի նոյցանէ, և սա կամի զրկել զմեղ ի շահից մերոց: Եւ զի ասէ, յաղօթարանս քրիստոնէից Մուսրման մի՛ մացէ, որդ զտմենայն ցաւաղարս մեր եկեղեցիքն բժշկն, այլ և տեղի զբասանաց մերոց եկեղեցիքն են. զմեռեալս թարց հրամանաց իմաց՝ ասէ ոչ թողել, ապա ուրեմն հարկս կամի առնուլ ի մեռելոց: Եւ զգողս ո՛չ պատժէ, այլ առնու տուղանս՝ և թողու. և նոքա դարձեալ առնեն գողութիւն: Զայս և այլ բազում չարիս նորա դրեցին, և ձեռամբ թագաւորական ծառայի առաքեցին առ Շահն. և ինքեանք յարեան ի վերայ խանին, և մուծին ի տուն, և ո՛չ թողին ելանել արտաքս: Վ.յլ և կնքեցին զտմենայն դրւնս ամբարացն, և շափով տային զիերակուր նորա: Եւ այսպէս տառապանօք պահեցին զնա, մինչեւ եկն այլ խան, և զնա հալածեցին, և եւալ զնաց յԽապահան, և երկիրս մնաց խաղաղ:

Գ.Լ.Ա.Խ. Խ.Օ.

Մահ Տեսան ՀՅակովայ խանութիւնն:

Մեծ հայրապետն Յակոր յորժամ զարձաւ է Դաղբնոյ՝ և եկն յաթուն իւր ի սուրբ Խջմիածին, և խանն՝ ես եկն յերեան, և ընթերցան զնապամ խանին. զի զրեալ ի նմա, թէ՝ առանց Կաթուղիկոսին մի՛ ինչ արացես, և դժուարին թուեցան նմա, և ակամբ հայէր: Վ.յլ և պարտասուքն՝ որ զրամեկն

տուեալ փոխ Ապրկտին, և թասկինակ⁽⁴¹⁾ էին առեալ յանուն
սուրբ Խջմիածնին, նորա զային և խնդրեին զպարտանու Խսկ
Ամժուղիկոսն ձանձրացաւ ի բազում պարտատուացն, վասնա-
րոյ առանց զիտելոյ խանին՝ ելեալ զնաց ի Տփիսի քաղաք Ա ը-
րաց, թերեւս կարասցէ ժողովել զդրախ, զի օգնութիւն լիցի
պարտուցն Խսկ խանն իրեւ զիտաց վերթաննորա, երկիաւ՝ թէ
մի զուցէ երթիցէ առ Շահն և դանզատեացէ յինէն: Ա ամնո-
րոյ առուզեաց նմա Հրատիրակ Ճաթամը բէկ անուն, և զնացեալ
ի Ֆափլիկ, և բազում աղաշանօք աղերսէր զառնար: Եւ Կա-
թուղիկոսն ասէր, ես ահա ունիմ բազում պարտս, և եկի աստ
գոնեա՝ Հնարեցից զերծանիլ այլ զու զարձիք՝ և ող ջոյն մասոն
յինէն նմա: Եւ կացեալ անդէն աւուրս ինչ, և սակաւ ինչ
վճարեաց ի պարտուցն: Եւ ասզա ելեալ զնաց՝ ի ծովիզերն, և
նատեալ ի նաւ, և զնաց ի Ծիւզանդիայ, և անդ ես վճարեաց
ի պարտուցն փոքր ինչ: Եւ տկարացաւ, և կամանեալ հան-
գեաւ ի Տէր յայնմ ամի ի թուեին Ու՛ԴՌ' իմ յօզոստոսի Բ., և
տարան զնա ի քաղաքն Պալաթայ՝ ի հասարակաց զերեզմանն
ի աեղին՝ որ կոչ Պակողլիք, և Պ., տակ Եմոսո. հասաւաեցին ի
վերայ, և առնէ սքանչելիս և բժշկութիւնս, զոր մի ի բազմացն
պատմեցից, զոր աեսի աչօք իմովք: Վանդի յաւուր՝ յորում
հանզուցեալ են զնա ի տապանի, Բշարաթի պատահեալ,
վասնորոյ յամենացն Բշարաթի առնեն պատարագ քահանայ-
քըն Պալաթու, և զնան ի զերեզմանն՝ այրապետին, զի ժողո-
վուրդք գ ան յուխտ, և օրշնեն զզերեզմանն, և տաշ Խաչչամ-
րոյը: Եոյնպէս և ես զնացի անդ, և ետու պատարագ առնել. և
յետ պատարագին առի երեց մի Յակոր անուն՝ որ էր աշակեր-
տըն իմ, և զնացի ի զերեզման սրբոյն Յակովայ, և ասացի
քահանայիցն առնել պաշտօն. և էր տաղաւար մի շինեալ հան-
դէպ զերեզմանի նորա՝ երեսրաց, և զծուծ այլ մի երեր զշուր-

ջառն՝ աւետարանն և բուրվառն, և խօսեր տաճկերէն։ Եւ ես
կարծեցի զնա Ճոռոմ գոլ, կամ Ասորի, և կամ թէ Ճայ՝ որ
ոչ զիտէ խօսել Ճայերէն։ Եւ յետ օրհնելոյ գերեզմանին ետու
դրամ Հակոբ երիցուն՝ զի բաժանեսցէ, քահանայիշն։ Եւ և
զծուծ առն քանի մի ստակ, և նա տարեալ ետ ցքւոյ, և
բերեալ ետ ըմպել երիցանցն։ Եւ մինչ կամէի հարցանել զո՞վն
և զուստին զծուծ առնն, ահա եկն փառաւոր տաճիկ մի՛ և զ-
կին ընդ նմա։ Եւ բերին վասն զծուծ առնն ձիթապտուղ, և
քաշախ, և հաց իւղով որ ասի սէնն, և խաշեալ բալլա, և
սիսեան, և պանիր, և պնակաւ զարեցուր՝ որ է բառայ, և եղ ի
տաղաւարն, և ինքեանք վառեցին բազում մոմն ի վերայ գերեզ-
մանին, և շուրջ դային զշերեզմանաւն աղաշելով։ Եւ ես հար-
ցի Յակոբ երիցուն, թէ ո՞վ են սոքաւ։ Վաէ երեցն, դոքա տա-
ճիկ են. և է փառաւոր երիտասարդն որդի աղքատին. այս մին
կինն՝ կին սորա է, մինն՝ նոյն է սորա և կին որդւոյն, մինն զուա-
տըր սորա է, և մատամբ եցոյց ինձ։ Խակ զծուծս այս եր իշխան
մեծ առաջի Ա աղբին. և յանկարծակի տկարացաւ սա, և եղե-
անդամարդ, և ուրին կցան ընդ ծունին ի ներքոյ նստոյ աեղին.
և բազում բժիշկ եկեալ ո՛չ կարացին բժշկել զդաւ։ Եւ է տուն
դորա մերձ ի ծովին ի լուսամնով քաղսոք։ Յաւուր միում տեսա-
նե, դա, զի բազում արք և կանայք մտեալ ի նաւ՝ անցանեն
յայն կողմն ծովուն, և հարցանէ դա՝ թէ ո՞ւր երթաննոքա. և
առեն, յԲ ճամստանայ Պատրի մի եկեալ և վախճանեալ է աստ,
և դոքա զնան յուխա ի գերեզման նորաւ։ Խակ դա ասացեալ է
աղքմանըն Աստուծոյ, արդ առեալ տարեք զիս ի գերեզման նո-
րաւ, և յուսամ առ Աստուծած որ աղօթիք նորաւ ողջանամ,
և այլ ոչ մեկնիմ ես ի ասազանէ նորաւ։ Եւ ստիսկեաց զորդին
իւր, որ առեալ եղին ի կուր, և անցուցին յայս կողմն. և եղին
ի շալակ համալիք⁴²), և բերին աստ. և ի զալն պաղատանգք բողոքէր

առ Աստուած. և յորժամ իջուցին՝ եղին մերձ առ զերեզմանըն. և լալով ասէք, չէ՛ Եւազուսկ՝ յուսով և հաւատքով դիմեալ եկի առ քեզ. կամ տուր մահ, և կամ բժշկեա՛ զիս, երկուցն զմինն շնորհեա՛ ինձ։ Օսյս ասաց պաղտատանօք, և իվերայ նստոյ տեղին շուրջ եկն զգերեզմանաւն։ Եւ ահա ողորմութեամբըն Աստուածոյ պարզեցան ուղն, և ապա նստաւ իվերայ ծնկացըն, և շրջեցաւ դարձեալ զգերեզմանաւն, և ահա կանգնեցաւ յոտին, լայր և պաղատէք, և կալեալ զիւրին քար գերեզմանին, և ի վերայ ոտին շուրջ եկն դարձեալ. և ահա արձակեցտն ամենայն յօդուածքն, շրջէք ուղեղ որպէս էրն առաջադոյն։ Եւ ապա անկեալ ի ներքոյ տապանին, և այնքան եհար զջակատն ի քարն՝ մինչեւ այտուցեալ ճակատն՝ և բարձրացաւ քան զըլլուին. ահա յայն օրէ մինչեւ ցայսօր ոչ մեկնի զա աստի, տիւ և զիշեր աստ է. և շինեաց զաղաւարդ այդ, և բնակի ի դմա. ոչ ուտէ միս և ոչ ըմպելի ինչ. և կերակուր դորա այդ է՝ զոր և աեսանես։ Եւ լուաւ թագաւորն զդմանէ, առաքեաց առ զա՝ թէ ընդէ՞ ծառայես զիսաւորի զերեզմանին, զի զու հառար' անհ) ես։ Խսկ սա պատասխանի արար, թէ սա բժշկեաց զիս, վասն այն ծառայեմ սմա, և զշաւատս իմ պահեմ։ Եւ ետուն թոյլ՝ և ասեն, որպէս և կամի՞ կացցէ, և զշաւատն իւր պահեացէ. և ահա այս պատմութիւն նորա՝ զոր լուայ և տեսի։ Իսաց յորժամ դարձայ ես յերկիրս մեր, լուայ թէ ի ներքոյ հարկի եղեալ են զգերեզման նորաւ Յետ ոյնորիկ եկեալ են զեսպանք ի Գրանգաց, և խօսիք յանդիմանեալ զթագաւորն, թէ դուք ի մեռելոց հարկս առնուք. յայսմ պատճառէ թողեալ են հարկն։ Այսքան և այսպէս եղեւ մահ Տեառն Յակոբայ։

Գ. Լ. Ա. Խ. Խ. Խ.

Ա. Ա. Խ. Խ. Խ. Խ. Խ. Խ.

Օպատմութիւնս Ա. քաց սակաւ զրեցից Փանզի առաջին
և մեծ Շահ-Աբասն քակեաց և աւերեաց Երկիրն Կախեթու,
և զթամբազ որդի թագաւորին Եղէքսանդրի տարաւ ընդ իւր
ի Պարս. և պահեալ անդ ժամանակ ինչ, և ապա ետ նմա իշ-
խանութիւն. և առաքեաց ի Կախեթի ի Հայրենի Երկիր իւր՝
տիրել նմա, և կալ հնազանդ Շահին. և նա կայր անդ ըստ
պատուիրանաց Շահին Հետ Շահ-Աբասին եղեւ թագաւոր
թոռ նորա Շահ-Ասֆի. և յետ նորա որդի իւր փոքր Շահ-
Աբաս: Խորա ժամանակին Երիշխանի Տփխիս Առուտամ, աղբաւ-
թագրատունի: Առ թշնամի եղեւ թամբազին. և կամքը Երկիր
նորա յափշտակել, և զնա հնազանդեցուցանել ընդ իւրով իշ-
խանութեամբն: Խակ թամբ աղ ոչ հնազանդ Եր նմա, և ոչ թո-
զոյր իշխանութեան նորա մտանել ի տերութիւն իւր: Խակ
Առուտամ զրգուեցաւ պատերազմիլ ընդ նմա: Եւ թամազն ևս
զինեցաւ ընդ զէմ նորա մարտիւ պատերազմի: Եւ որդի մի Եր
նորա Պատիթ անուն ծնեալ ի Փարի կողմէ իւրոյ, որ Եր զուա-
տրը Պարկի թագաւորին թափել զոյ, և քոյր Լաւարսափին Այս
Պատիթ խնայեաց ի ծերութիւն հօրն: և ոչ եթող մտանել
ի պատերազմ: Այլ ինքն մտեալ ի զգեստ պատերազմին՝ զինե-
ցաւ ընդ զէմ նոցա: Խակ զօրքն թափելու Եին Ելտաերաւ: Եւ ի
զօրացն Պարսից առաքեցին ի կողմն Արիւանել քէմին: Եւ յոր-
ժամ խմբեցաւ պատերազմն, և Պատիթ մեծաւ քաջութեամբ
եմուտ ի մէջ բազմութեան զօրացն Առուտամին: Խակ Պարսիկքն
որք կային ի քմին, իրրե լուան զձայն փողոց պատերազմին,
յայնժամ ելին նոքա ի միւս կողմանէ զօրացն Կախեթոյ, և ի
մէջ առեալ զզօրսն Ա. քաց՝ պատահեցան Պատիթին, հարեալ
սպանին դարին Պատիթ: Եւ տեսեալ զօրացն զմահ Պատիթին.

թողեալ և փախեան, և Պարսիկք հայածեցին զնոսա մինչե ի
սահմանս կախեթոյ: Խոկ թամբազն կայր հեծեծանօք և դառն
կակծանօք: Խրբե ետես նա՝ թէ ոչ կարէ զիմանարտել նոցա,
և ուղեաց զենքն գնալ առ Ծահն, ասէ, բարուոք է թէ
Ծահն սպանանէ զիս՝ քան թէ ծառայակիցն իմ: Եւ յորու-
ցեալ զնաց, և թազաւորն Ծահ-Արաս ընկալաւ զնա սիրով,
և պահեաց առ ինքն ժամանակ ինչ. և ապա ետ նմա թուղթ
և իշխանութիւն տիրել երկրին իւրոյ: Եւ զրեաց սաստ Առո-
տամին, մի ունել իշխանութիւն ի վերայ թամբազնն, և արձա-
կեաց զնա գնալ ի տեղի իւր: Եւ նա ելեալ յերեսաց թազաւո-
րին՝ զնաց. և ոչ եհաս յեթիր իւր, այլ մեռաւ ի ճանապար-
հին: Խոկ թուն նորա Ներակլ՝ որ էր որդի որդւոյն նորա
Դաւթի՛ իրբե լուաւ զմահ հաւոյն իւրոյ, երկեաւ նա մնալ
անդ ի կախեթ, այլ ելեալ ի կախեթոյ՝ և զնաց ի Մոսկով,
և անդ լինեթ: Եւ Ծահ Արասն բազում անզամառաքեաց առ
նա հրաւիրակ՝ գալ առ ինքն: Եւ նա ոչ եկն՝ երկուցեալ ի
մահուանէ: Յետ Ծահ Արասին եղեւ թազաւոր՝ որդի նորա
Ծահ Առույթիման, սա առաքեաց այր մի ջուզացեցի. Գրիգոր
անուն՝ թղթով և երդմամբ, որ զնաց երեր ընա ի քաղաքն
Խողիրան, որ է Վաղուին. քանզի անդ էր Ծահն, ի թուին
Առնեան յապրելի կոչ: Ենդ էր և մեծ կաթուղիկան Յակոբ,
և մեք ևս ի ծառայութիւննորաւ:

ԳԼՈՒԽԻ ԽՐ.

Պատրիա-Ռին երիսոց արտնշն:

Առստա՞ր խանն՝ զըր զրեցաք՝ աղդ՝ է Բաղրատունեաց. զե
յետ անկանելոյ թազաւորութեան նոցա՝ և աւերմանն Անոյ՝
մնացեալքն յազգէն Բաղրատունեաց զնացին յաշեարհն Ալ-
բացր Եւ յորժամ վերացաւ և թազաւորութիւնն Ալբաց,

անկաւ երկիրն ի ձեռս Պարսից. և նորա ետուն իշխանութիւն Բագրատունեաց՝ տիրել ամենայն սահմանացն Արաց: Եւ սերեցան Բագրատունիքն որդւոց յորդիս մինչև յայս Ուստամա-
որ ծնաւ որդի մի ի Մարիամայ կնոջէ իւրոյ, որոյ անունն էր
Լաւարսափ, որ պահէր փոխանակ իւր լինել իշխող Արաց:
Եւ յաւուր միում առեալ զորդի իւր բազում զօրօք՝ և զնա-
ցին յորս էրէօց՝ ի աեղին որ ասի Վարա-եազ, որ է Եեաւ զա-
րուն: Եւ եղեւ զի զշետ եղեն որսոցն, և ամենեքեան փութա-
յին սպանանել զորսն: Եւ ի խուռն արձակմանէ թուանքացն՝
հարին զորդի թագաւորի զԼաւարսափն՝ և սպանին: Եւ Ուս-
տամ երկեաւ յինքենէ, փախեաւ և գնաց ի քաղաքն Յժիվլիզ:
Եւ արար խնդիր սպանողաց որդւոց իւրոյ, և ոչ կարացին իմա-
նալ: Եւ ասկա դատապարտեցին Ի այր, միոյն անուն՝ Բայան-
տուր Հայի ի Մամիկոնեան ազգէ՝ որ ասեն թուամանեցի, և միւսոյն
անուն՝ Ծիցուշ՝ Արացի՝ ազգաւ Բարաթեցի, զսոսա դատա-
պարտեցին՝ Եթէ դուք Եկիք մերձ նմա՝ յորժամ սպանին զնա,
կամ զիտէք դուք զսպանող նորա, և կամ դուք էք սպանեալ
Եւ բարձրացաւ բարբառս այս, Հայքն ասէին՝ Արացին է սպա-
նեալ, և Արացիքն ասէին՝ Հայն: Եւ ասկա ասացին Ասմա-
նէի՝ այսինքն՝ դատաստանաւ մենամարտիլ, ով ոք յաղթի՝ նա
է սպանեալ զորդի թագաւորին: Եւ հաստատեցաւ բանս այս
ի մէջ նոցա, զի ելանիցեն երկուքն միայն: Եւ կազմեցին զին-
քեանս, զդեցան զգեստ պատերազմի, և զինեցան զինուք, համ-
բուրեցին ծունկի թագաւորին, անցին յայն կողմն Կուր գետոյն՝
յարեելից կոյս քաղաքին: Խոկ նենդաւոր ազգն Արաց հրապա-
րակաւ խրատ ետուն երկոցունց, թէ յորժամ յասպարեզն մը-
տանէք՝ մի մարտնչէք յառաջազոյն, այլ արշաւեցուցէք զերի-
վարս այսր և անդր, թերեւս ողորմեսցի թագաւորին, և ոչ թո-
ղու պատերազմել: Զայս խրատս Շմարիտ իմացաւ Բայանդու-
րըն: Խոկ կայէնանման ազգն Արաց զաղտնի խրատ ետուն
Ծիշուշն՝ թէ դու փոքրահասակ ես և անզօր, և Բայանտու-

ըլն յաղթամարմին է, և զօրեղ, զու ոչ կարես զիմամարտել
նմա. այլ յորժամ նա խաղս առնէ, երիխարաւն, զու ջանա
հարկանել զնա նիզակաւն, թերես կարասցես արկանել զնա
յերկիր: Եւ ապա երկոքեանն ևս մտին յասպարեցն: Եւ խանն
եդ ընդ նոսա Գ տաճիկ՝ և ասէ, ո՞վ ոք ի նոցանէ, անկանի
յերկիր, զուք անկերուք ի վերայ նորա, և մի՛ թողուք սպա-
նանել: Եւ Տայանդուրն յառաջեաց քան զը իշուշն, և նա
զինի նորա եմուտ ի մեջ թամրին, և նիզակն ուղղեաց դեպ ի
Տայանդուրն, և եհար զգեղարդն ի փոր Տայանդուրին, ի
ներքոյ պորտոյն թափանցոյց ի միւս կողմն, ի մեջ մոյն և մօր-
թոյն էանց զեղարդն: Խսկ Տայանդուրն ցանցեալ փրթոյց ըդ
զեղարդն ի ձեռանէ Ծ իշուշն, և եդ ի վերայ Հայանի (թամրին, և
լախթովն եհար և երեկ զնիզակարունն, և էարկ յերկիր, և մը-
նաց զեղարդն ի փորն: Եւ Ծ իշուշն փախուստ առեալ զնայր:
Խսկ Տայանդուրն մտրակեալ զերիվարն՝ եհաս նմա շեշտակի,
և եհար լախթովն զպարանցն նորա՝ և կախեցաւ ի ձիոյն. և
կամեր միւսանգամ հարկանել. և զի բուռն լախտին շաղախեալ
եր արեամբ, փրթաւ ի ձեռանէ նորա. և եհան զթուրն՝ զի
հարցէ զնա. զի խելազարեալ եր Ծ իշուշն, անկաւ յերկիր, և
Տայանդուրն երեր զթուրն ի վերայ և հարաւ, զձետ ձիոյն ե-
հաս ի բնէ: Եւ տաճիկքն անկան ի վերայ Ծ իշուշն, և ոչ
թողին սպանանել զնա: Եւ ապա Այք և տաճիկք խուռն ե-
լին և . . . (44) ցեալ բարձրացուցին զԲայանդուրն՝ և բերին առ-
իշխաննն. և պատռեր ետ բժշկաց՝ բժշկել զնա, և սիրեաց քան
զշափն աւելի: Արամացեաց՝ զի առ վաղեւն հանցեն զԾ իշուշն,

(44) Դ-ՆԵՐԵ. Տաճկոց թամրի:

(45) Կ բնազրին՝ սրակես յայլ բաղում տեղիս՝ յոյժ մաշեալ և զրեմե՛
ցեցակիր զուու թղթին՝ գմուարացաք ընթեռնուլ զըառս ինչ, թողուք
զի և ի տեղիս տեղիս քերեալ կամ զծեալ էին բանք ինչ. այլ առա մա-
շեալ էր թուղթն և քերեալ դիրն, ուստի և ոչ զտաք զբուն բառն:

և յօ՛դ յօ՛դ մանրեսցե՞ն՝ և արկցե՞ն շանց։ Եւ էր նորա եղբար մի արեղայ՝ Վը թատախոր անուն, որ էր խոստովանահայր թագուհւոյն, որ զնացեալ աղաւեաց նմա վասն փրկութեան եղբօր իւրոյ, և նա աղաւեալ առ այր իւր, և ոչ սպանին զնաւ Աակայն զոր ինչ զոյր Ծիռւշին, թէ, ծառայք և թէ, աղախինք, թէ գեղ և թէ այզի, թէ անասուն, և այլ ամենայն զոր ինչ զոյր նմրա՝ հրամայեաց զրով տալ բովանդակ Բայանդուրին, և արարին ըստ հրամանի նորաւ Յայսմ վայրի Ա իրք փոքր ինչ խոնարհեցան ի գոռոզութենէ իւրեանց։ Հայք երգս նախատանաց յօրինեցին լեզուաւ նոցաւ, և ամենայն տան յաւարաւ ասէին։ Ծիռւշ ծատի, Բայանդուր մօռւայ, որ է Ծիռւշ փախիր, Բայանդուրն զալիս է։ Եւ յերգելն զայս մանկանց Հայոց, Ա քացիքն ամօթ կրեինւ Լոււաւ զայս թագաւորն Աանի-Երաս, այսինքն փոքր Ծահ-Երաս, և կոչեաց զԲայսանդուրն, և ետ նմա իշխանութիւն մեծ Տիկիս քաղաքին։ Եղեւ այս Է ՈՒ Յօ թուին։

ԳՅԱՍԻՆ ԽԹԱ.

Եղասին Անդան Պատրիք էանին։

Իրեւ ետես Առուտաֆն՝ թէ մեռաւ որդին իւր, և այլ ոչ ոք ունի յիշատակ՝ որ ժառանգ լինի թագաւորութեան իւրոյ, կուեաց զոմն յազգէ Բաղրատունի՝ Ա աղթանկ անուն, և արար զնա որդեզիր, և ասէ, յորժամ ես մեռանիմ, դու լեր թագաւոր փոխանակ իմ։ Եւ յետ սահաւուց մեռաւ նա իսկ Ա աղթանկն առեալ ընդ իւր բազում աղատ որդիս՝ և զնաց առ Աանի-Երաս թագաւորն Պարսից՝ որ է փոքր Ծահ-Երաս, ընկալաւ ի նմանէ զիշխանութիւնն, և անուանեցաւ Ծահ-Եամփաս, որ է Ծունչ արքայի։ Եւ կացեալ բազում ժամանակ, և յետ Երասայ թագաւորեաց որդի նորա Աուլէ յ-

ման. և առաջի սորա չարախօսեցին զբահակն: Եւ եւ իւրով կամաւ գնալ առ թագաւորն՝ և ցուցանել զմիամտութիւն իւր: Եւ ուներ նա բաղում որդիս, զետղարակի, զԴօրկի, զՊատառայ, զԲէժօ, և զԼէոն. և առեալ զորդի իւր զԳօրկի՝ և գնաց: Խրբե մերձ եղեւ Եսպահանայ, ըւառ թէ յաւուր՝ յորում տեսանէ զքեզ Ծահն, արկանէ առաջի առիւծուց: Ա ասնորոյ առեալ դեղ մահացու՝ և վճարեցաւ ի կենաց: Եւ որդի նորա Գօրկի տարեալ ցուցին թագաւորին: Բայց ոմանք ասեն վասն սորա, թէ անդ պատանդ էր, ոմանք ասեն, ընդ իւր տարաւ Ծահն-նավասն. և ոմանք ասեն, աս աի գնաց յետ մահու հօրն: Աակայն ինչ և իցէ, տեսեալ զնա թագաւորն Աուլէյման՝ ետ նմա տեղի հօրն, և մեծաւ փառօք առաքեաց ի Ամիմիլիդ. որ եկեալ տիրեաց Արաց աշխարհին բաղում ժամանակս: Յետ Աուլէյմանին նստաւ որդի իւր Աիւսեին: Խժամանակի սորա ապստամբեցաւ Գօրկի: Գանգի ասեին, թէ էր սորա դուստր մի չքնաղ և զեղեցիկ, աղնիւ և աննման. և Գօրկին առաքեաց բաղում աղջկունս թագաւորին յաղգէն Արաց. և նորա զովեցին առաջի թագաւորին զդուստր նորա: Եւ Ծահն առաքեաց ի խնդիր նմա: Խակ Գօրկին ոչ առաքեաց զդուստրն, այլ զնախատինը ևս ասաց, թէ զուք Պարսիկքդ սպառեցիք զաղզս մեր, ոմանք բռնութեամբ և ոմանք խարեւութեամբ, ոմանք պատրանօք և ոմանք կեղծաւորութեամբ: Հայրն իմ մեռաւ վասն ձեր. և խստութեամբ հանիք ի հաւատոյն: Եւ զեզբայրն իմ արդելեալ էք այդր. զդուստրն իմ ևս խնդրէք: Երդ զի՞նչ վնաս կրեցիք զուք ի մինչ, որ յաքան տառապանս հասուցանէք մեզ: Եյս՝ և այլ բաղում նախատինս ասաց, և զիտաց՝ զի արհամարհանք և նախատինք մեծ եղեւ Ծահն: Գանգի և բաղում չարախօսութիւնս ևս արարեալ էին զնաւնէ, յաւելաւ ևս զայս ի վերայ նորա, և եղեւ կատարեալ թըշ նամութիւն. վասնորոյ զամենայն ինչո իւր ծածկաբար առա-

Քեաց ի Խորին. Ա յրա. և ինքն ևս առեալ զշամախոհս և զհո-
մանիսն իւր՝ փախեաւ և գնաց՝ ուր և կարաց, ի մեջ մայրեաց
թագեաւ: Խոկ Շահն իրրե լոււաւ զիտիսուստ նորա, առա-
քեաց ի գաւառն՝ որ ասի Խունսար, որ է Եղեան - զլուխ, և ետ
ըերել անտի զլուռն թամբազի զւերակը, և ետ նմա խանու-
թիւն թափլիցոյ, և անուանեաց զնա Ա ալի - խան, և մեծաշուք
փառօք առաքեաց ի Տփիսիս: Եւ ինքն հրամայեաց զօրս զու-
մարել ի վերայ Գորկուն, և ժողովեցան բազում զօրք ի բա-
զում տեղեաց՝ յԱրեանայ, ի Նախըուանայ, ի Գանձայու, ի
Թափլիցը և յայլ տեղեաց, և զնային ի վերայ նորա. և նա
թագուցեալ կայր ի մեջ մայրեացն Յորժամ զնացին Պար-
սիկքն ի վերայ նոցա, նոքա մտանեին ի մայրին, և ի զիշերի
անկանեին ի վերայ զօրացն, կոտորեին զնոսա, և աւար առ-
նեին զինչն. և յորժամ յառնեին տաճիկքն, նոքա մտա-
նեին ի մայրին Ա բացիքն հմուտ են վոյրացն, և նոքա
ոչ. վասնորոյ բազում չարիս անցուցին ի վերայ տաճկա-
ցըն: Ա չ թէ միանդամ և երկիցս եղեւ այս, այլ բազում
անդամ. որքան նոքա զնացին ի վերայ Ա բաց, Ա բացիքն
զօղեալք ի ցերեկի, և ի զիշերի անկանեին ի վերայ նոցա,
և առնեին որպէս զրեցաք: Եայց երկիրն Ա բաց դարձաւ
աւերակ. զի Պարսիկքն ի զնալն իւրեանց՝ ուր և պատա-
հեին՝ կողոպտեին, աւար առնեին ինչն, և զշենան ոյրեին՝
և ասեին, զնացեալ պատգամ տարեք Գորկի խանին,
թէ այսպէս առնելիք զամենայն երկիր քո: Խոկ Ա բացիքն
նոյնպէս աւերեին՝ և ասեին, ասացէք Ա ալի խանին, տես
թէ զինչ արարաք երկիրն քո. և այսպէս երթևեկութեամբ
երկուց զօրացն աւերեցան Ոուխրան և Գորկի: Եւ յոր-
ժամ գեսպանքն Պարսից զնացին առ Գորկին, և նա միամ-
տութիւն ցուցաներ՝ ասելով, ևս ոչ եմ թշնամի Շա-
հին, այլ ծառայ ստրուկ եմ Շահին, և հող ստաց նորա:
Ես թէե վասն հակառակութեան եկեալ եմ աստ, այլ ի

մահուանէ փախեալ եմ։ Օսյս խօսէր միշտ՝ մինչև հաւատալ Ծահին, և միջնորդութեամբ Երաս խանին Գանձակայ՝ որ եր բարեկամ Գօրկուն, արար հաշտութիւնընդնմա։ Քանզի զրեաց թուղթ սիրոյ և երդման, և (յղեաց) խլայսյոտից մինչև ցղւուխ, և երիվար զօրեղ՝ և քաջալերութիւն՝ գնալառ նա աներկիխող՝ և ոչ երկնչել Եւ վասն այսց քաջալերանացս ելեալ գնաց մինչև ցլերեան, և զետղաեալ անդ մինչև եկին ի Գեանձայու արք ի խանէն՝ ուղղեկից նմա։ Եւ ապա եղ ընդ նմա խանն Եւրեանայ ուղղեկիցս, և առաքեցին զնա փառաւորապէս, և եհ հաս յԱսպահան, և ասացին Ծահին զդալուստն նորա։ Եւ Ծահն առաքեաց ընդառաջ նորա, բերեալ իջուցին ի փայելու ապարանս արքունի։ Եւ ապա խնդրեաց զնա Ծահն՝ զընալ առ ինքն։ Խոկ Գօրկին առեալ առասան եղ ի պարանոցին՝ և կախեաց ի թիկանցն, և զթուրն կախեաց ի վերայ սրբաթին։ և այնպէս եմուտ առ Ծահն։ Եւ տեսեալ զնա Ծահն՝ ասէ, զի՞նչ է այդ Գօրկին խան։ Պատասխանեաց Գօրկին՝ և ասէ, ես մահապարտ և յանցաւոր զտայ առաջի քո, արդ՝ կամ պարանաւս այս կախեան զիս, և կամ թրովս այս սպան։ Խոկ Ծահն, ոչ թրով սպանանիս և ոչ պարանաւ կախիս, սյլ կա ընդ իս՝ և իրատես զիս։ Եւ պատուեաց զնա՝ և սիրեաց յոյժ։ և է ընդ նմա միշտ, և այժմ կայ այսպէս ի թուականս այս՝ որ կամք յայժմումն ՈւՇԽԵՆ։ Բայց Վալին յորժամ զնաց ի Խճիֆլեղ, սկսաւ շարիս, զի հրաման եհան՝ զանդակ ոչ հարկանել և ժամկոչ ոչ կոչել, և առաջի մեռելոց խաչ ոչ բարձրացուցանել, և այսու պատճառաւ կամեր զհաւատս քրիստոնէից բառնալ։ Վասնորոյ միարանեցան քրիստոնեայքն՝ Հայք և Վիրք, և զրոհս տուեալ գնացին ի գուռն նորա, և աղաղակերով պախարտիկին, և այսպանէին՝ ասելով, զու ուրացար զհայրենի հաւատն քո՝ և եղեր ուրացօղ Քրիստոսի, և զմեղ ևս կամիս հանել ի հաւատոց մերոց, արդ լռեան յունայն խորհրդոցը, եթե ոչ՝ քարկոծ առնեմք զքեղ։ Օսյսիր

թե լուաւ՝ երկեռւ, մի՛ զուցէ ապատամբեսցին, և անկանիցինի կողմն զօրկուն, և յարիցեն ի վերայ իմ առ ի սպանանել զիս։ Եւ ապա գաղարեցաւ ի սնուաի զործոյն. և այս եղեւ այսպէս յայսմ ժամանակի, և ապագայն Նստուած զիտէ։

Գ. Լ. Ա. Խ. Ռ. Յ.

Եղեռնաբան Օ. ալին:

Օք որպէս ասացաք՝ ամենայն զօրքն Երեանայ յարեան ի վերայ երկրորդ Աամի խանին, և մուծին զնա ի ծակ, և ոչ թողին զնա ելանել արտաքս. և ինքեանք զրեցին առ Ծահն. որ և բազումք զանգատեալք՝ որպէս և առաջ զրեցաք։ Աասնորոյ կոչեաց զՄիրզայ Խալրահիմն, որ ասէինն ատրբեան - վաղրի, և եդ ընդ նմա Աալի խանն, որ էր ազգաւ Արացի, և փեսայ էր Սրաս խանին՝ որ էր իշխան Երեանայ. և Օալս այս ընդ նմա եկն յԵրեան։ Աա վարեք ամենայն զործն իշխանութեան, որ և հմուտ և տեղեակ էր ամենայն իրացն Երեանայ, և զիտէր և ձանաչեր զամենայն արսն Երեանայ, թէ ով ոք էին վնասակարը և աւերիշք Երեանայ։ Եւ եին ի սահմանն Սրարատեան, ոչ ծանուցին զգացուսան իւրեանց ումեք, զի մի՛ ելցեն բազմութիւնք ընդ առաջնորա, որ ինքեանք (առողութէ⁽⁴⁶⁾) ասեն, որպէս սովորութիւն էր Դանորեիցն առնել, սա ոչ արար այնպէս. ոյլ ի զաղսնի եմուտ ի բերգն. ետ բերել զզուքսն՝ որ է Ծխ-Խալրամ, և ոմանք ևս ի մեծամեծացն. և առաջի նոցա ընթերցան ռազմամ թագաւորին։ Եւ որք անդ էին՝ համբուրեցին զծունին. և մունեամին ելեալ աղաղակիէր, ահա Օալ խան եղեւ տէր Երեանայ. սուհէ չէ օլոսոն⁽⁴⁷⁾)։ Եւ ի նմին ժամու

(46) Կամք, յօժարութիւն, փայաք.

(47) Երկարեցին կեանք նորին. Դամ' կեցչէ ի բազում ամս

Հրատաց ըմբռնել այր մի ազգաւ Պահապ' ի ցեղէն որ ասի
Քուրտ, որոց անունն էր Նիմոթ - բէկ՝ Պարզւովքն, որոց ան-
ւանքն էին՝ Խառ - խան, Օշաման - խան, Ալզա - խան, Պահիմ-
խան, զի նորա էին վեստակարք աշխարհին. զնոսս ըմբռնեալ՝
ետ կունդ ի պարանոց նոցա, և եղ ի բանտի. և յետ աւուրց
առաքեաց առ Շահն. այլ ոչ ես կարացին կալ հաստատ՝
թէսդէտ և արձակեցանու Յօհանոցա ըմբռնեաց այր մի Եւյրում-
լու Տաշտամուր անուն, վասն զի յառաջին զանորէիցն ապս-
տամբեալ էր, և Օշալս այս այլ հնարինք իմն ըմբռնեաց զնա,
և կախեալ ի ուսանեն՝ բրածնեծ արարին աշխարքն մինչև մերձ ի
մահ լինել. և առա արկին ի բանտ. և բազում տուգանս առին,
և արձակեցին. և զնաց ի առւն իւր ի Շիրակ. և ի բազում
հարուածոց անտի մեռաւ: Խայց վասն այս խանիս ոչ կարեմ
ասել վաս ինչ. վասնզի ծնունդ քրիստոնէից էր, զթայր ի
քրիստոնեայու Յառաջին ամիր սորա եղեւ աշաղին շարժն Երա-
բատեան երկրին. զոր յառաջիկայս պատմեոց եմ: Առ հրամա-
յեաց շնուր զամենայն տերեալ եկեղեցին. զոր և շնուցին
բազում եկեղեցի՝ ի բազում տեղիս: Եւ յառուրս այստիկ ե-
լւալ զնաց ի Առահս գուասն լեռնանալ, և ի Վանաքեռ զիւղն
ելեալ ի բլուր զեղջին՝ և հայեր յառերեալ տեղիսն, և ափսո-
այր Եւ դարձաւ ի թիկանց կողմն՝ և եռեւ զեկեղեցին, և ե-
հարց՝ թէ զի՞նչ է այս. և ասեն, թէ եկեղեցի էր: Ասէ խանն,
ընդէր ոչ շնուր զզաւ Առեն զեղականքն, քանզի ոչ ունիմք
կարողութիւն: Ասէ խանն, այնքան ոչ ունիք կարողութիւն՝
զի փայտիւ ալ-Ռայ⁽³⁾ առնել, զի սրառաւոնք ձեր աղօթեսցեն.
ահա ես շնորհեցի Ճռուման ի հարկէ ձերոյ, և դուք շնուցէք
զեկեղեցիս Եւ ի նոյն օր սկսան շնուր զշողն. և ծածկեցին
ըստ հրամանի խանին: Եւ այսպէս կայր սիրով ընդ քրիստո-
նեայս՝ մինչ էր նա յլուրեան:

ԳԵՂԱՔԻՆ ԿԸՆԿԵՐԸ.

Վ առաջն ահագին շարժին Երեւանոց:

Ի թուին ԱՌԴԻԲ է յունիս ամսոյ Գ՝ աստուածասատ բարկութիւն եղեւ ի վերայ երկրին Սրարատեան, զի հայեցաւ աստուած բարկութեամբ յարարածու իւր. յետ Համբարձման Գ շարաթի աւուր յԱշերորդ ժամուն յանկարծակի գոռաց երկիր որպէս ամսղըն, յետ գոռալրյն ահազին թնդմամբ շարժեցաւ. երկիրն Սրարատեան առհասարակ գողացը և երերիւր, ըստ ասացելցյն, ո՞հայի երկիր, և տայ գողալ նմա. և թէ հիմունք երկրի տատանեին, և եկեալ շարժու այս ի կողմանց Գառնուոյ՝ և փլան առենայն շննուածք և զեղեցկացարկ բնակութիւնք, և վանորացք, և եկեղեցիք: Ե. յարիկ են աւերեալ եկեղեցիք, Եղջոց - վանք, Ե. յրի - վանք, Հաւուց - թառ, Տրդակերտն (Տրդատակերտն), Խորվիրտապն, Ֆ. բլեղ, Չադավանք, երեք եկեղեցիք յԱշեան, Կորագաւիթ, Կորագեղ, Չորագեղ, Կորլք, Գամբեղ. և բերդն Երեւանոց ի հիմանց տապալեցաւ. մկնիթ և մնաբայք⁽¹⁹⁾). ի բազում տեղիս աղբիւրք բղենցին, և բազում աղբիւրք խցան: Եւ փլան քարափունք, և լցան առուքն, և արգելին զգնացս ջուրց: Եւ բազում զեղորայք քակեցան: Եւ է Վանաքեռ զիւղ ոչ մնաց բուն մի հաւու. և էր զարմանք, զի ի նոյն Վանաքեռ ի տուն մի անկան չորեքին որմունք, և տանիքն ի վերայ չորս սեանցն եկաց անշարժ որպէս թէ կախեալ զօդոյն: Եհաս շարժն մինչ ի զիւզաքաքաղաքն Կարրի, և Գ արք մեռանու Եւ ի սուրբ ուխտն Յօհանավանք փլան առենայն զեղեցիկ ապարանքն, և եկեղեցին խախտեցաւ. և մեք հազիւ զերծոք ի մահուանէ: Եւ նոքա՝ որք

(19) ՄԲ-Եւ բարձր տեղի ինչ կունց զետահատուանս յաղօթանոցն իւրեանց—աշտարակ մաքթաց—:

մնացին ի տակ հողոյն, զոր ինչ կարացին հանել հանին, և զոր ոչ կարացին՝ եղեւ զերեզմանք նոցա տունք իւրեանց։ Եւ մեռեալքն յողովք էին քան զիւնդանիս։ Օք թեպետ յամենայն տեղիս ոչ կարացի խմանալ զմեռեալն, այլ ի հայրենի զիւղն իմ քանաքեռ թուեցին զմեռեալն ԱՄԵՐԻԿԱ, ոչ մնաց շուն, ոչ կատու և ոչ հաւ։ Եւ յամեաց շարժն մինչև ի հոկտեմբեր ամիսն։ Եւ յամենայն օր գոռայր երկիրն, օր ԳԻ, օր ԴԻ, օր ԵՇ, և ապա գոյր շարժն, բայց վնասն յառաջի օրն եղեւ, որը մնացին կենդանի՝ կապերտավրանոք բնակեին յայզին՝ և ի պարտեզը՝ և յանվայր տեղիս, և յառաջին օր շարժին եկին դեռպանք յՆըզբումայ՝ և աեսին զշարժն։ Խակ խանն ի նոյն օր առաքեաց դեսպանս առ Ծահն, և ծանոյց զաւերութն շարժին, և դեսպանացն Օսմանցւոց ոչ եթող զնայ՝ մինչ ի գալ պատպամաց Ծահն։ Եւ յետ Եժան առուր եկն փութադնացն, և հրաման շնորհյ բերդին և եկեղեցեացն։ և մունեաիկն դուեր, թէ հրաման է Ծահն, զի քրիստոնեացք շնուցեն զեկեղեցիորն՝ զոր քակեալ է, և յայաց պատճառէ շնեցաւ ի բազում տեղիս եկեղեցիք թէ ի նորա ժամանակին և թէ յետնորա, և ապա արձակեաց զգեսպանսն։ Եւ ապա եկն մեծ իշխան ԱՄԵՐԻԿԱ - Խալքահիմն, զոր ասեին Հատրեհման - Ա ազրի, նստաւ յԵրեան, և կոչեաց զմերձակայ Պահորացս, զւախչուանայ, զՊարաւայ, զՕակամայ, զԼոռոյ, և զԽուլթանսն, զՄակուայ, զՄկուայ, զԽւտարակայ (գուցէ զՄշտարակայ), զՕարայ։ Եւ եկին սոքա՝ և շնորհին զերերդն երեքորմեաց ամրագոյն քան զառաջինն։ Եւ զկամուրճն՝ որ ի ներքոյ բերդին էր ի վերայ Հուրաստան զետոյ՝ որ ասի Զանկի, զնա ևս շնորհին ամրագոյն։ և զառուքն՝ որը խափանեալ էին, նորոգեցին, և բերդին զջուրըն ի քաղաքն Երեան։ Եւ ապա հաստատեցաւ կարդն Երեանայ ամենայն պիտոյիւք մարմնաւորօք՝ որբան և իշխեր առ Երեանայ։

ԳԱՐԺԱՄ ԿԱՐԺԱՎԱՐ

ԳԱՐԺԱՄ ԿԱՐԺԱՎԱՐ ԱԿԱԴԵՄԻԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ասրժամ վախճանեցաւ մեծ Հայրապետն Համկոր ի Առատանգնուզօխս, Մարտիրոս վարդապետն Ասթայեցին՝ որ բարեկամ էր նմա, և էր Պատրիարք յԵրուսաղէմ, սա զրեաց թուղթը միսիթարական ի սուրբ Խջմիածին, և ծանոց նոցաթէ մի դուցէ թարց հարցանելոց այսց կողմանց առնեք Արթուղիկոս Այլ զրովք ձերով ը հարցեք սոցա, սցսինքն՝ Խղիազարին, որ Բնքնագլուխ եղեալ էր Աաթուղիկոս, և կոյր լսեալ, և նստեալ ի Քերիսա՝ որ է Ապագա: Առ որ ժողովեցան ի սուրբ Խջմիածին ամենայն վանորեից Առաջնորդք, և Խպիսկոպոսք, և վարդապետք, և իշխանացոք մարդիկք, և զրեցին առնա. և ի մէջ թղթին զրեալ էին, թէ՛ սրբութիւն քո Արռողջայեցի զոլով՝ արժան ես ի շարս նախնաց ունելի Խւընտրեցին զոմն վարդապետ՝ Պիտրոս անուն՝ որ էր Խպիսկոպոս Գոռղթան զաւառին, այր ճարտար և բանիրուն, և առաքեցին առնաւ Խւ զնաց Պետրոսն. առեալ ածէ զնա ի սուրբ Խջմիածին Խթուին Ո-Շ-Ա. յօդոստոփի Ճ-Ղ. ի փոխանն Աստւածածնին նստաւ յԽթոս Աաթուղիկոսութեան ի սուրբ Խջմիածին: Առ էր այր ճոռամարան և ճորտար, բաղդաւոր և սորնդերես, ատենախօս: Առ յորժամ նստաւ Աաթուղիկոս, եկին յամենայն կողմանց ի հնազանդութիւն սմա. եկին և Աաթուղիկուն Աղթամարայ, և էառ օրհնութիւն ի նմանէ: և զնաց: Առ արար շինուածս ի սուրբ Հռիփախմէն, տունս գեղեցկացէն, հրուանդանս և հովանոցս. և հստատեաց Վիարանս: Աոյնպէս և ի սուրբ Վայրն Գայիհանէ շրջապատեալ պարապեաց. և յարեմանեան զբանն արտաքոյ կողմանէ շինեաց խորանս, և ի նոյն տեղին հիւսիսց կողմն շինեաց զգերեղմանն իւր, զանտեսատունս և զիսուցս. և հստատեաց և Վիարանս, զի ժամ

և պատարագ մատչե հանապազ : Այլ և կանդնեաց կճեաց
Կաթուղիկե, ի վերայ Խըման տեղին . և հաստատեաց սեղան՝
առնել պատարագ, և յերկու կողմն եկեղեցւոյն բարձրացոյց
յերկրէ, և արար ամսիոն, և կանգնեաց սեղան պատարագի:
Եւ շնեաց որմն ի մեջ եկեղեցւոյն ի հարաւոյ դրանեն մինչեւ
ի դուռն հիւսիսոյ, զի անդ կացցեն յաղօթս, և մի՛ առաջի առ-
ւադ խորանին: Եւ ի տանիս եկեղեցւոյն յերիս տեղիս կանգ-
նեաց Կաթուղիկէ: Այլ արար բարութիւնս. վասնզի պարտս
զոյր Վժոռոյն, և զային պարտատուքն խնդրել զպարտս. և նա
ասէ, ես ոչ եկի պարտս տալ, ոյլ եկի շնուռածս առնել. և
թէ ստիպէք զիս վասն պարտուց, ես գնամ անդ՝ ուստի եկի.
զայս առնելով վերացոյց զամենայն պարտս Վժոռոյն: Եւ եկաց
նա այսպէս խրոխա՛ ահարկու զամենայն առուրս իւր. և մեռաւ
ի թուին ՈՒԴ' Թ. յօզուսոս ամսոյ ի Ճ.Պ., յորում առուր եկի
ի սուրբ Եջմիածին. կացեալ Կաթուղիկոս ամս Բ: Եւ զինի
նորա եղեւ Կաթուղիկոս ձեռնատուն աշակերտ իւր ։ Ահա
պետ Եղեսացին, որ այժմն է: Այս երկու Կաթուղիկոսաց ի
ժամանակի շնեցաւ և նորողեցաւ բաղում վանորայս և եկե-
ղեցիս: Ոքա առնուին հրաման յիշխանեն վասն շնուռեան
եկեղեցեաց: Իայց զիարդ և զկանոն առաջն Կաթուղիկոսացն
քայքոյեցաւ ի սուրբ Վժոռոյն և յամենայն վանորեից վասն
թոյլ տալոյ նոցա. զի ամենայն Առաջնորդք բատ կամաց իւրեանց
առնեին. և Կաթուղիկոսացն ոչինչ լիներ փոյթ. զի ինքեանք
զօր ինչ յիւրեանց աշխարհին վարեալ էին, զեոյն և աստ առ-
նեին: Այլև զօր ինչ պակասութիւն աեսանեին արեղայից և
երիցանց, բերեալ գերծեին զզուխսն և զմուրումն. և բրածեծ
առնեին մահու չափ: Եւ այսպէս կացին ի ժամանակս կենաց
իւրեանց:

ԳՏԱՅԻԽԻ ՇՐԴ.

Ա առն նշանացն երինչոց:

Յառաջ քան զշարժն եղեւ նշան ինչ յերկինս. զի տեսին ի զիշերի միում յօդս՝ որպէս թէ նիզակարունս կապուտո՞ւ և երկայն և լայն՝ ի հարաւոյ և ի հիւսիս, և երկոքին ծայրքն բարակ որպէս դեղարդի. և սակաւ սակաւ դարձոյց զատունս իւր յարեւլը և յարեւուտս. և այնպէս կացեալ յաւուրս Ի՞ և անյայտ եղեւ: Յետ այսորիկ երեւցաւ ասաղ մի ի Միջերկրեայ՝ սաստիկ մեծ քան զայլ աստեղս, գեղին գունով, ունելով զհերլս երկայն և լայն՝ սպիտակ որպէս զձիւն, ձգեալ գէպ յարեւուտս. և փողլէր հերքն՝ որպէս թէ կայծս թափել յերկիր, և ահարկու տեսողացն. և կացեալ այնպէս ամիս մի, և լիներ երկօրեայ երեխւր մինչև ցառաւուած, երբեմն ի մջ զիշերի, և երբեմն յառաւոտին և երբէք ոչ շարժէր ի տեղուոջէն. և ապա եղեւ անյայտ: Յետ այսորիկ երեւցաւ յարեւլս ասաղ մի կարմիր որպէս որդան, և ուներ երիս գէսս, մին սպիտակ, մին աստղագոյն և մին խարսեաշ՝ բոլորագունդ, ինքն բարձր, և գէսքն կախեալ գէպ ի երկիր, ինքն կայր անշարժ, գէսքն շարժէին երբեմն երբեմն. և կացեալ աւուրս վեց, և յետ վեց աւուրց գէսքն ցըռուեցան, և ինքն երեխւր է բազում աւուրս. և կորեաւ անշետ:

ԳՏԱՅԻԽԻ ՇՐԴ.

Ա առն մես նշանին երինչոց:

Մինչդեռ մանուկ էկ ես ի հայրենի դիւղն իմ քանաքեռ, և խօսեաք ընդ յարակից մանկունս. և ի կարդ զբուցաց ասացին մանկունքն, թէ օձն ապրի մինչ ի Ու ամն, և է Ու ամն լինի

վիշտ, և հրեշտակք Աստուծոյ քարշեն զնոս յերկինս, և թողուն ի վերայ մեծամեծ վեմաց՝ և սատակին Օայս առասպել մանկանց, սակայն ինձ հաւատարիմ դոլ թուի. զի ի ժամանակի ծերութեան խմոյ՝ մինչ էի ես ի սուրբ ուխտն Յօհանավանք, յաւուր միում յԱշերորդ ժամուն ի պարզոյ՝ յարեւմնեան կողմըն երկինքն վառեցաւ որպէս հուր, և կայծակունք իջանեին ի վայր, երբեմն ցեղոյր որպէս փայլակն, և երբեմն խաղաղանայր. և հրոյն կախեալ կայր ի վայր որպէս առասան մինչ ի երկիր. և ի ծայր պարանին կապեալ կայր որպէս վիշտ, կապուտ որպէս ամոզ, զլուխն և մլջն և տուան որպէս ճշմարիտ վիշտ, և տուան շարժեր. սյար և անդր, զլուխն և մլջն դաշար առնոյր. և առ սակաւ սակաւ բարձրանայր յերկիր, և հշաս մինչեւ ի հուրըն. և մասց անդին փոքր մի. և ապա պատառեցաւ հուրըն դարձեալ, և վիշտաձեն սեացեալ որպէս ածուխ՝ անկաւ յերկիր յանկարծակի. բայց ոչ իմացաք՝ թէ ուր անկաւ. սակայն այսքան բազումք տեսին որպէս և գրեցաք:

ԳԼՈՒԽԻ ՌԵ.

ՊԼԱԴԵՐՈՎՆ (ՕՀԱԿԱՐԵՎՈՅ ՀՆԴ ՊԼԱԴԵՐՈՎՆ)

Ե թուին ԱՌԴ' Ա, զօրաժողով արար թագաւորն Օսմանցոց Առովթան Մահմատ զամենայն հնագանգեաս իւր, և զնաց ի վերայ ամուր քաղաքին Ֆաանդաց Փելայ. և էր քաղաքս այս ընդ իշխանութեամբն կայսերն, զոր ինքեանք Կաֆրաթօլ ասեն. և էր յոյժ անառիկ. քանզի Գ. կողմն ձոր էր, և բակ պարսպեալ՝ բարձր և լայն. և ի մեջ երկուց որմոցն՝ պողոտայ, և Բ. զրունք կախեալ յերկու ծայրսն պողոտային. Ա. զուռն ի վերայ բուն քաղաքին ներսին որմոյն, Ա. զուռն արտաքին որմոյն. այս չորեքին զրունք հանդէս միմեանց, ոչ ի վերայ երկրի հաստատեալ այլ կախեալ ի վերուստ ի վայր, մեքենայիւք քարշեին և

իջուցանելին ի վայրը։ Եշտ մին կողմն քաղաքին դաշտ էր և դիւր,
որու մ զբունքն էին։ յայսմ կողմանէ պատերազմին առաջիկքն
սաստիկ և յոյժ։ նոյնպէս և գրանդքն պատերազմին։ Եշտ յոր-
ժամ խատացաւ պատերազմն, պատերազմին զնոսա Գուանզըն։
քանզի ի ժամուն պատերազմին խոչ հանդ' բձ վառ . . .⁽³⁰⁾ ու-
նին, և բարձրացուցանեն զիսչվառն մինչ յաղթութիւնն
ինքեանց է։ իսկ յորժամ յաղթութիւնն թշնամեացն լինի, խո-
նարչեցուցանեն զիսչվառն։ Եշտ յայսմ պատերազմիս պատ-
րեցին զնոսա։ Քանզի զներին դուռն պնդեցին, և զի՞ դուռն
պողոտային քարշեցին ի վեր։ նոյնպէս և արտաքին դուռն ևս
քարշեցին ի վեր՝ և թողին ի բաց։ Եշտ ապա խոնարչեցուցին
զիսչվառն։ Եշտ Հաղարացիքն տեսին և հաւատացին ծշմա-
րիտ դուշ և հնչեցին զփողսն պատերազմին։ և աղաղակին աւ-
տը շալլէ, որ է առաք զբերդն, և այսպէս մտին ի մեջ երկու
պարսպացն, և լցաւ պողոտայն ծագէ ի ծագ։ Եշտ ապա իջու-
ցին Լատինք զերկոսին զրունս պողոտային, և մնացին ի ներս
աւելի քան զիէսն Խամայելացւոց։ Եշտ քրիստոնեայքն բարձրա-
ցուցին զիսչվառն, հնչեցին զփողսն, և ասեին, վիվօ՛ վիվօ՛։
որ է ուրախ լերուք, ուրախ լերուք։ Եշտ իրրե տեսին Օսմանցի-
քըն զիսչն բարձրացուցեալ, սկսան փախչել, և Գրանդքն ծըստ-
տեցան զկնի նոցա, հալածելով և կոտորելով խալառ փախու-
ցին մինչ ի քաղաքն իւրեանց Պուտան։ և որք մնացին ի պո-
ղոտայն՝ զերի արարին։ Եշտ Ճ. Վ. փաշայ ամենայն զօրոք իւրեանց
գնացեալ խառնեցան առ զօրսն Գուանզաց, և եղեն քրիստո-
նեայ, և առ սակաւ սակաւ տարան և զնոսա . . .⁽³¹⁾ իւրեանց
առ ինքեանս։ Առին Գրանդքն զՊուտան քաղաք, և հար-
կատու արարին զտաճիկն։ Կոյնութէս առին զԲակըրդանելք,

(30) Աստ եղծեալ են ի բնազրին տառք թշ. 2.

(31) Աստ ևս մեան բառք ինչ անվերծանելք.

քաղաքն, և թողին գատարկ, և գնացին ի տեղիս իւրեանց։
Զայս պատմեաց ուզտապան ոմն տաճիկ Աշւդոկացի, որ փա-
խեալ էր ի պատերազմին Եւ ահա է պատերազմ, և զկատա-
րածն Աստուած զիտէ։

Գ. Ա. Ա. Խ. Օ. Զ.

Պատմուհաս Օ. Հեռանց։

Մինչ էաք մեք ի Օ. միւախն քաղաք ի թուին Ա. Ճ. է մա-
յիս ամսոյ Եւ, չ յԱ; բորդ ժամու աւուրն եկն յարեւելից կողմանէ
մարախ՝ սաստիկ յոյժ և որպէս անձրեւ կարկտախտառն, ըստ
ասելոյն Առզոմանի, առանց թագաւորի է մարախ, և իրրեւ ի
միոջէ հրաման առնեն, և այնքան եկն՝ որ ստուեր արար երկրի,
և զձառագայթու արեգական արդելեաց. և տիւն եղեւ զիշեր։
Եւ անկառ ահ ի վերաց ամենայն ումեք, և ամենայն արուես-
տաւ որք խափանեցան, և աղխեցին զղբունս խանութից և տանց.
և թուշունքն որք կոյին ի քաղաքին՝ նոքա ոչ կարացին շարժել
ի տեղաթէ իւրեանց, և ըսեցին ի խօսից։ Եւ ի Եւ ժամէ աւու-
րըն մինչեւ ց՛ ժամն եկն, և գնացեալ թափեցան ի ծովն. և
ալիք ծովուն ձգեցին արտաքս, և նեխեցաւ զէշն. և ի գարշ
հոսոյն տագնապեին քաղաքն. վասնորոյ փորեցին զաւազն՝ և
լցին ի փոսն, և ծածկեին աւազով. և արդելսու հոսն։ Եւ յետ
աւուրց դարձեալ եկն մարախն, բայց ոչ որպէս զառաջնն, այլ
սակաւ, և կէս ժամու շափի։ Յետ երից ամաց եղեւ սով սաստիկ
երկրին Լիկիացւոց, մանաւանդ ի Օ. միւախն քաղաք։ Վանզի
Գուանզքն կալան զձանապարհս ծովուցն, և ոչ գնաց ցորեան ի
Կոստանդնուպոլիս, և եղեւ սղութիւն. և ծանուցին թագաւո-
րին՝ թէ ցամաք ճանապարհաւ երթայց ցորեան ի Օ. միւախն
Եւ ասկա արար հրաման և պնդապատուեր, թէ այլ ուրեք մի
երթիցէ ցորեան, բայց միայն չ Ատամակոլ Ա ասնորոյ անկառ

սովոր ի Օմբոյն, և սաստկացաւ առաւել յոյժ. և կերին առ
մենայն անսուրը կենդանի. և ի պակասիլ կենդանեացն, ժողո-
վիլին զթրիք ձիոց՝ և աղային, և առնելին հաց: Այլև ոսկը ժո-
ղովիլին, և մանրելին կացնաւ՝ և աղային, և առնելին հաց. և
մինչ ջերմ էր՝ ի կեր գայր, և երբ հնանացը՝ ոչ գայր ի կեր,
մանրելին՝ և ապա ուտելին: Եյլև զփառեալ ծառս և զտերե
ծառոց չորացուցանելին, և փշորեն և ուտելին. և ոչ օդներ նո-
ցա զայն, այլ առաւել վնասեր զկերողսն. բազումք քրիստո-
նեայք գուստերս և զդստերս խրեանց սակաւ զնոյ վաճառելին
տաճկաց առ ի կեցուցանել զնիքեանս. և բազումք զմանկունս
խրեանց տարեալ արկանելին առ զրունս տաճկաց՝ և փախէ-
լին. և տաճիկքն առեալ զնոսա տանելին առ ինքեանս՝ և առ-
նելին զնոսա տաճիկ: Բարձաւ սեր և զութ բարեկամաց, ողոր-
մութիւնք և տուրքեառք և խնամք վերացան. բարեկամք և
սիրելք օտարացան ի միմևանց: Աւ այսպէս տառապէլին ամե-
նիքեանք. և եկաց սովոր մի Եւ յետ երկուց ամաց ել և
աստուածասաստ բարկութիւն ի վերայ Օմբւռնոյ, զի հայեցաւ
Խստուած բարկութեամք յարարածս իւր, և եղեւ շարժ սաս-
տիկ և ահազին. և փլան ամենայն զեղեցիկ շնուռածք, եկեղե-
ցիք և պանդոկք, մզկիթօք և մինարայք անկան. և ծովն եռայր՝
որպէս կաթսայ, և բազում նաւք հարան ընդ միմևանս՝ և խոր-
տակեցան. և որք կային անդ՝ ջրասուզ եղեն: Աւ բազումք մնար-
ցին ի ներքոյ հողոյն՝ և ոչ կարացին հանել. և տունք նոցա զե-
րեզմանք ինքեանց եղեն ըստ մարդարելին: Աւ ի նոյն աւուր
եղեւ կրկին բարկութիւն Խստուածոյ ի վերայ նոցա. վասնզի ան-
կաւ հուր՝ և այրեաց զմացեալն՝ զոր ի շարժէն եղեն կրկին
պատժեալ, որ եղեւ կատարեալ առ նոսա ասացեալն՝ թէ: մնա-
ցեալն ի կարկտէն՝ կերիցէ: մարախս, զայնոսիկ ի վերայ Օմբւռ-
նոյ եկն. զի նախ եկն մարախս, և ապա սովոր, զինի շարժն, և
ապա հուրն: Բայց քակեալն ի շարժէն զեկեզեցին՝ զեղեցիա-
յարմար շնեցին վերստին: Քանզի վաճառականքն յարելից

ծանուցին թագաւորին Օսմանցւոց. և նոքա եղեն պատճառ ու միոյն չայոց, այլև Յունաց և Գրանդաց և ամենայն քրիստոնեց՝ որք կային ի Օմբուզին:

Գ. Լ. Ա. Խ. Կ. Ռ. Օ. Ե.

Ա. Հ. Պ. Հ. Տ. Ա. Ա. Հ. Ե. Հ. Ե.

Ի քաղաքն Օսմանցիներ, որ այժմ ասի Ակըանիկ, Ճրեսյք բազում են բնակեալ անդ: Ասեն, թէ աստ պահեն կուսան աղջկունս վասն գալստեան Ո՞սմանցին իւրեանց: Եւ են վարթամք և հարուսաք, ընչառետք և մեծատունք. որ և հպարտացան և եղեն չքաւորք. խորհեցան խորհուրդ նանիր ինքեանց: Վանդի ժողովեցան նորա ի վերա միում. կոչեցին և զղխաւորս հաւատոյն իւրեանց՝ որ ասի իտիամ, որ է հայրապետ. և ասեն, օ՞ծ ի վերայ մեր թագաւոր՝ որում և հաւանիս դու: Եւ նա ընտրեաց զոմն Աոզն անուն, այր խնատուն, և ճարտար, և դիտուն օրինաց իւրեանց: Եյլ գեղեցիկ տեսլեամբ, և երկայն հասա. կաւ: Եւ օծին զնա՝ և անուանեցին Ո՞ալչէմ Աոզն, որ է Աոզն թագաւոր. և զղեցուցին նմա պատմուման սպիտակ և աղնիւ. և եղին ի զլուխ նորա թագ երեքձլեայ՝ կարմիր և կանանչ. և բազմեցուցին զնա ի վերայ բարձր զահի, և եղին ի ձեռն նորա զաւազան ոսկեզօծ. և պատեցին զմիջով նորա թուրս ոսկեպատենս, և ինքեանք անկեալ երկիրապատեին: Եւ կարգեցին ԾՃան դատաւորս ընդ ԾՃան ցեղիցն. ընտրեցին և բիւրապետ, Ո՞արապետ, Ճ ապետ, զզօրապլուխս և զզօրս բազում: Եւ զրեցին յամենայն երկիր՝ ուր և զո՞ն Ճրեսյք, զպատճէն զայս: Լուարուք ամենայն ազգ Ճրեից, որք էք օրինօքն Ո՞ավխափ. զի ահա շնորհօքն Աստուծոյ՝ մեք թագաւորեցաք աստին, և կամիրք զազգն տաճկաց և զքրիստոնեայն հարկաւու տոնել՝ ի չայոց Ճ ոսկի, և ի Յունաց

Ա. և զուք սպատրաստ եղերուք յաւագ տօնին տաճկայ՝ որ ա-
 սեն Պատում - Հոռնէ, նոքա ամենեքեան փութան ի զիշերա-
 սրաշտօնն իւրեանց չ մզկիթն, և զուք վառեալք զմնուք անկե-
 րուք ի վերայ նոցա՝ և կոտորեցէք զնոսա, զմանկտիս և զիտ-
 նայս նոցա ծառայեցուցէք: Երբե զայս ամենայն առնիցէք, և
 ապա լինիմք մի անձն և մի խորհուրդ գոյլք և գառինք ի մա-
 սին ձարակեսցեն: Յայնժամ զայ Մեսիայն՝ և ընակի առ մեզ:
 Եռաքեցին զթուղթու յամենայն տեղիս ձեռամբ սուրհանդա-
 կաց, մինչեւ ի Եսպահան ևս զրեցին: Եւ ապա բաժանեաց զա-
 մենայն քաղաքս Օսմանցւոց ի վերայ իշխանաց իւրոց. և ինքն
 էսու զԴիւզանդիս տեղի արքունի ինքեան: Եւ ետ զՊրուսա՝
 որ է Տուրսա, Ավսէ անուն ումեմն, և զԴնդրիանուազօխ՝ որ է
 Ենտրանա, ումեմն իշխանի. աստանօր եղեւ յայտնի չարութիւն
 նոցա: Զի Ավսէն այն՝ որ ետուն նմա զՊրուսա, ասէ, ես ծնըն-
 դեամբ և մնագեամբ Ենդրիանացի եմ, տար ինձ զՀայրենի քա-
 ղաքն իմ: Եսէ թագաւորն, զայն՝ որ ետու քեզ, զու նմա իշ-
 խեա, և ոչ ունիս դու իշխանութիւն ի վերայ այլում քաղաքի:
 Եսէ Ավսէ, ես զՀայրենիս իմ ոչ տամ այլում. ի վերայ այսմ
 բանի եղեւ ազմուկ և կտգ: Եւ հրամայեաց թագաւորն արկա-
 նել յերկիր զԱվսէն, և բրածեծ առնել: Եյնդրիան հարին զնա,
 մինչեւ եղեւ կիսամահ, և քարշեցին արտաքաւ Եւ եր ուրբաժ-
 դիշերի, և ամենայն տաճիկքն զնային ալօթել ի մզկիթն: Իսկ
 զՀուտն Ավսէ զնաց սակաւ առ սակաւ մինչեւ յաւագ մզկիթն,
 ուր և փաշայն դայր ազօթել, և անկաւ առ դրան մատիթիւ: Եւ
 ի լուսանայն եկին մոլնայքն, և տեսին զԳՀուտն, և ասեն, ել
 և զնա աստի, զի ահա դայ փաշայն: Եսէ Նըրեայն, ունիմ ինչ
 ասել փաշային, զի օգուտ մեծ լիցի ազդի ձերում: Եւ թոյլ
 ետուն մինչեւ ազօթել փաշային. և ապա տարին զԳՀուտն առ
 փաշայն. և զնացեալ համբուրեաց զոսս փաշային, և նստաւ
 առ նմա, և պատմեաց զամենայն մի ըստ միոջէ՝ աւելորդօք:
 Եւ լուեալ փաշայն՝ սոսկացաւ անձն նորա. և ասէ, ոքքան ժա-

մանակ է՝ որ արտարեալ են խորհուրդդ այդ։ Ֆհուտն ասէ, Ի՞մ ան մարդ միշտ յամենայն երեկոյեան գան մինչեւ ի միւս երեկոյն ուտեն և ըմպեն, և առնեն խորհուրդ։ Նոքա զնան՝ և այլք գան, նոյնպէս առնեն։ Բայց յերեկոյս բազումք գան վան վաղուեան՝ որ շարաթ է, և ոչ ելանեն արտաքս։ զոր ինչ չար խօսին՝ վաղիւն խօսին։ Եւ ապա կոչեաց փաշայն բազումն ի մեծամեծացն՝ և ասէ, լիրուք պատրաստք, զի ի լուսանալ առաւօտուն գնալ (գնացեալ) ընդ Նրեիս ըմբռնել (ըմբռնեսցուք) զԱւահուտին։ Եւ ի լուսանալն՝ առաջի իւրեանց արկին զֆհուտն՝ և զնացին՝ ուր եին ժողովեալ նոքա ընդ թագուորին իւրեանց։ Եւ մասին ի տունն, և տեսին՝ զի բազմեալ եր թագաւորն ի բարձր գահի։ Եսէ զինաւորն տաճկաց, ֆհուտ՝ դուշ ձնուան, էալոյ սանի էսովէնք. որ է այս, էջ այտի, զի խնդրէ զքեզ փաշայն։ Եաւ որ թագաւորել կամքը, և զտաճիկսն կոտորել, ահա այժմ դողացը և վրիթայր, և բեկրեկ ձայնիւ աղաւէր, և կամք մերկանալ ի հանդերձն։ Եւ ոչ թողին, այլ կապեցին զամենեցունց զձեռս յետս, և առեալ տարին առ փաշայն։ Եհարց փաշայն զամենայն, և ստուզիւ տեղեկացաւ։ Եւ ապա հրամայեաց կոտորել զնոսա. և խախամի զիեցուն և զքիթն, զշըթունսն, զականջնն, զմատունս ձեռացն և ոտիցն, զերկորիսն զամենայն հրամայեաց հատանել Եւ ասաց մունետկաց, զի կոչեսցեն բարձր ձայնիւ, թէ ամենայն ոք՝ որ լսէ զձայնս մեր, թէ քրիստոնեայք և թէ աաճիկք, անկերուք ի վերայ աղզին Նրեից, զմեծամեծսն կոտորեցէք, զմանկունան գերեցուցէք, զկանայս նոցախառակեցէք պղզելով, և զինչ նոցա առար առէք, յափշտակեցէք և մի խնայէք. և ո՛վ ոք յափշտակեցէ ի նոցանէ ինչը՝ ինքեանլիցի, բայց զսպանումն նոցա մի խնայեսցէ։ Զայս լուարուք ամենեքին զհրամանս մեծ փաշային։ Եւ զի շարաթ էր օրն, և Նրեայքն ամենեքեանքն ի տան էին, և ով ոք լուաւ զձայն մունետկին, արար՝ որպէս լուաւ. և կոտորեցին յաւուը յայնմիկ Գ մասն Նրեից, և մինչ ի Գ օրն

սպառեցին վամենայն բազումք ի նոցանէ տաճկացան, և բազումք խառնեցան ընդ քրիստոնեոյն. շատք ելին ի քաղաքէն և փախեան, և ոյլք զինչ իւրեանց տային քրիստոնէից, և թաքչէին ի տան նոցա: Եւ այսպէս եզեն նորա սպառեալք ողորմելի մահուամբ. և յընչից նոցա բազումք փարթամացան՝ և եզեն հարուստք: Եւ զկուսանս՝ որ պահէին վասն Մեսիային, հանեալ տարին առ փաշայն, որ էին Ի՞մ ան, հրապարակաւ առ պականեցին: Եւ փաշայն էառ իւր բաժին զտուն թագաւորին նոցա, և անթիւ և անհամար զանձս ոսկւոյ և արծաթոյ. և ասպա զրեաց զիր զպաճէն, և առաքեաց առ Խանթկարն: Ա ասնորոյ և Խանթկարն դրեաց ամենայն հնապանդելոց իւրոց, զի ուր իշեն Ճրէայք ի ներքոյ տէրութեան իւրոյ, զի բազումք հարկս զիցեն ի վերայ նոցա, զի չքաւորեսցին՝ և մի լիցի նոցա լորութիւն: Եւ այսպէս տառապեցուցին զՃրէայս բազումք և տղզի ազգի հարկապահանջութեամբ: Յօհովէտ և մեր զայս լըւեալ էաք յայլմէ, բայց ոչ ուղեղ: Եւ գնացի ևս ի Օմիւոնոյ ի Առատանդնուապօլիս նաւով. զայս պատմաց Ճոռոմ սարկաւագ մի չչենի անուն, որ է Յօհանն. որ և նորն էր ի Սալենիկոյ քաղաքէն:

Գ. Ա. ՈՒ. Խ. Կ. Ը. Բ.

Ապահով պահութէ Ա. առջնութէ:

Այս այս Աւագ էր յԵլրարատայ ի զաւառէն Առասպից ի զեղջէն Եղավարդայ յասորստին Երայոյ: Եւ էր տանուաէրնոյն զեղջն՝ այր ձարտար, և տաենախօս, և պնդերես, և առաջի մեծամեծաց յարգոյ և պնդամիրտ: Եւ զեղականքն առանց հրամանաց նորա ոչ առնեին ինչ: Եւ զի ջուր զեղջն սակաւ էր, և ոչ էր բաւական յարրուցումն անդաստանաց նոցա, վասնորոյ զնացեալ ի կողմն հիւսիսոյ ի մշջ ձորոյ զտին ջուր ցըր-

ուեալ, և նոքա բազում՝ չարշարանօք և յոլով ծախիւք հանին առու, և անդաստանօք ՚Վարայօրան գեղջն՝ որ է Աեաւ-աւեր, բերեալ խառնեցին ընդ ջուրն իւրեանց։ Եւ էր աէր ՚Վարայօրան գեղջն տաճիկ մի՛ ազգաւ ՚Վաճար, լիրր և անզգամ, հայհոյիչ և պղծաբերան, յանդուղն և անհնազանդ, չարագործ և շնացօղ, բնքնահաւան և գուող, ամենեին կամարա՞ և ծառայ՝ և հաճոյական սիրելի սատանային Աս իրբե ետես՝ թէ խառնեցաւ ջուրն ընդ բուն ջրոյն Եղավարդոց, լցաւ սատանայի չար նախանձովն, բորբոքեցաւ անիրաւութեամբ, և առաքեաց զոմանս ի գեղականացն. որք զնացեալ քակեցին զառուն, և իջուցին զջուրն ի զիւղն իւրեանց Աեաւ-աւեր, և պիղծն այն տէր գեղջն Հապուշ - ՚Վասիմ՝ շնեաց պարտէզս, և արար բուրաստան։ Ծանեաց առաւետ, և արրուցանէր այնմ ջրով. և ոչ թողոյր զնալ յլշղավարդ ջուրն զայն Եւ աղաւշին նմա Եղավարդեցիք, և նա ոչ լսէր, ոյլ ծեծէր, հայհոյէր՝ և անարդանօք արձակէր զնոսաւ ՚Վասնորոյ կարեվէր խոցեցան Եղավարդեցիք. և զնացեալ զրեցին թուղթ զանգատանաց, և առաքեցին առ իշխանն, և ասացին, թէ ՚Վարայօրանն գեղովն՝ Եղավարդայ միոյ տան չափ ոչ տան հարկ. այլ Հապուշ - ՚Վասիմն իւրով անզգամութեամբն կամի քակել զայնպիսի պատուական դեղ, որ քան զամենայն երկիրս Երևանայ լրւ է արդեամբ։ ՚Վասնորոյ զրեաց թուղթ խանն առ պիղծն այն՝ և ասէ, չունիս դու իշխանութիւն առ ջուրդ այդ. թոյլտուր զմա զնալ յլշղավարդ ի տեղի իւրի Խոկ նոցա առեալ զթուղթ տարեալ ցուցին այնմ շան։ Իրբե ընթերցաւ, պատառեաց և ետի նոսա, և ասէ, տարեալ զիք ի յամօթոյս կանանց ձերոց. և յարուցեալ Եհար զնոսա փայտիւ, և հայհոյեաց և զըերան խանին. և զանիւ հալածեաց զնոսաւ Եւ նոքա զնացեալ զրեցին միւս ևս արզայ, և զպատառեալ թուղթն եղին ընդ նմա, և ետուն ցիսանն։ Եւ իրբե լուաւ զպատառումն թղթոյն՝ և զարհամարհանս իւր, բարկացաւ սրտմտութեամբ յոյժ. և հրաման

և նոցա՝ և ասէ, զեացիք և կալեալ զշունն այն՝ և չարաշար սպանէք, և կոտորեցիք զնոսա՝ որք համախոչ են նմա՝ թէ, տաճին և թէ քրիստոնեայ, և զդիւղիք քակեցիք, և զանդասա-տանս նոցա զբաւեցիք, և հարկ նոցա դուք տուք։ Օսյու հրա-ման սաստկութեամբ ետ, զբեայ և թուղթ և ետ նոցա, և բե-րանով ևս պատուիրեաց։ Խսկ նոցա առեալ զպատուերս զայս, և զնացեալ ետուն զիր միմեանց, և թէ ոք ոչ երթիցէ, ի կա-տարել զպատուեր խանին, Ճ ամեն ի վեր տացէ, տուգանս խա-նին։ Եւ ապա զբոհ տուեալ ժողովեցան ի մի, և ոմն երիտա-սարդ զդեցուցին ի հանդերձից իւրեանց, և եղին ի զըռեխ նորս աւել և նստեցուցին ի վերայ իշոյ, և անուանեցին զնա՝ Աւե-լաղլուխ իշով թագառոք. և ելին ամրոխիւ ամենելքեան զուա-նայով և զահուլով ծափօք և պարուք, խաղալով և խնդալով ամենայն արուք մինչև կանայք ևս երգելով։ Եւ յորժամ մերձ եղեն Վարսոյօրան գեղջին, տանուտեր Աւագն խրատ ետ նոցա՝ և ասէ, մի զուցէ արխոն հեղուք՝ և լինիք պարտապան արեան. այլ հարեալ ծեծանօք՝ կիսամահ արարէք և թողէք, այն բա-ւական է նոցա մահ։ Խսկ Վարսոյօրանցիք տեսին զըազմութիւն ամբոխին, և զիտացին՝ զի վասն չար առնելոյ գան նորա։ Խսկ անիծեալն ձապուշ-ղասիմ նստեալ եր ամոռուով, և հրաման տայր արբուցանողաց պարափղին։ Եւ ծանուցին նմա, թէ ահա ամբոխ գայ ի վերայ քո. և նա ոչնչ արար փոյթ. այլ ասէք, զիտեմ՝ զի աղաւել գան առ իս, և ես զարձուցանեմ զնոսա ար-համարհանօք և անարդանօք։ Եւ ահա եկեալ հասին ամբոխին, և հրամանցեաց աւելազլուխն, հարէք՝ ասէ, և սպանէք զշունդ զայդ։ Հայնժամ կալեալ զնա՝ արկեալ յերկիր առաթուր, և հարկանեին անողորմ աքացի և բռնցի, փայտիւ և քարիւ, և ե-ղին տույտսն՝ և քարշէին։ Խսկ անիծեալն այն զիտաց՝ որ մա-հու հարկանեին, անձարացեալ՝ և ոչ եզիտ հնար ինչ զերծա-նելոյ, անկաւ առ ոտս Աւաղին, և եմուտ ի մեջ բուց ծնկացն, և կալեալ զերկողիսն ծծէք՝ և ասէք, շուն քո եմ, զաղբդ քո

լիզեցից, մի՛ թուղուր սպանանել զիս, և ես եղեց քեզ շունի
 Եւ ապա զթացեալ առ նա Աւագն՝ անկառ ի վերաց նորա, և
 ասէ, զիս սպանեք փախանակ դորա, և թոյլ տուք դմաւ Եւ
 ապա դադարեցին ի հարկանելոյ: Խսկ կանայքն անիծելոյն յոր-
 ժամ լուան զրօթն զայն, ելն ի վրանացն արտաքս՝ ճշալով,
 ճղճարով և ճվարով. ոմն ասէր, զզաւակ իմ վիժեցի. ոմն ա-
 սէր, զըրդին իմ սպանին. ոմն աղաղակէր, ահա կալեակ պղծե-
 ցին զիս Ասկացն ոչինչ օգտեցան յայոցանէ. այլ աւելագլու-
 խըն բարակ ողորով փոքր փոքր հարկաներ զնոսա՝ և ասէր, ե-
 լեալ կորէք աստի: Խսկ նորա բերեալ զռւոտսն, և նստան ի
 վերաց նոցա՝ և փախեան: Խսկ պիղծն այն ոչ կարաց գնալ վա-
 սր՝ բազում հարուածոցն. յետ երից աւուրց ապա ողջացաւ,
 և ելեալ կորեաւ. և երեց զեղջն՝ ՀՅօհան անունն՝ փախեալ
 անկառ ի ձօր անդր, և եմուտ յորջ մի աղուխու՝ և զերծաւ:
 Խսկ ի դեղականացն՝ որք կամակից են նմա, կալեալ բազում
 հարին և վիրաւորեցին, և քակեցին զտունս նոցա, և տիրեցին
 զեղջն: Խսկ անիծեալն Հապուշ-Դասիմ ի ծածուկ.
 և եկաց մինչեւ ցաշունն. և մրարանեցոյց ընդ ինքեան Գ. տա-
 ճիկ և սուտ քրիստոնեայ մի, և զիշերի զնացին յԱղավարդ.
 և տաճիկքն մնացին յեզր զեղջին, և զսուտ քրիստոնեայն ա-
 ռաքեցին առ Աւագն, և ասեն, այս ինչ բարեկամ տաճիկ ե-
 կեալ կայ արտաքոյ գեղջին, և շտապով երթաց ի Ամդ զաւառ
 հրանեանաւ խանին, վասնորոյ խնդրէ. զբեզ և զորդի քո Ապրւ-
 բէկ, զի ունի ինչ ասել քեզ: Խսկ Աւագն ի տան միում կայը
 ընդ Ռուց հարկահան տաճկաց, և որդին ի սովառու կոյց նոցա:
 Եւ զնացեալ սուտ քրիստոնեայն՝ ասաց նմա զոր ուսեալն եր-
 իբրեւ լուաւ Աւագն զանուն բարեկամին, վաղվաղակի յարեաւ,
 առեալ և զորդին զնաց ընդ Հային: Իբրեւ աեսին զնա՝ կուշան.
 և ի ձայն բարձր գոչէր պիղծն՝ և ասէր, որ ես եմ Հապուշ-
 զասիմն, որ Աւագ զիս ոչ էսպան, ես զնա սպանանեմ. և որ-
 դին զերծեալ մինչեւ ազդ արար զեղջին, և նորա սպանին զնա՝

և կորեան։ Եշւ բարձեալ զնա տարան ի դիւղն։ և ի վաղիւն ծանուցին խանին։ և հրամայեաց խանն զտանել զնա։ և ոչ գտին։ քանզի զնաց նա յԱրտափիլ։ և առեալ անտի զիր զզ ջման, և եկեալ յԱրեան ըրջէր ի ծածուկ։ և ի նոյն ձմեռն սատակեցաւ և տարեալ գոռեցին։ և ի նոյն զիշեր ԳՏ տաճիկ հանին ի գոռէն, և պատառեալ զպատանն՝ պատեցին ի պարանոցըն։ և սրեալ երկայն փայտ հաստ՝ եղին ի նստոյ տեղն, և ցըցեալ ի վերայ գոռին, հատին և զերանն, և եղին ռեխն, և փախեան։ Եշւ վաղիւն տեսեալ զայն՝ ծանուցին խանին։ Ասէ խանն, շունն այն մինչ կենդանի էր, ռեխն պահէր զանտէրն իւր, և յորժամ սատակեցաւ, երեի ի մէջ ռխին։ Եշւ ոչ եաթաղել զնա. թողին այնպէս. շունք և ազռաւք լսվեցին։ Խակ Աւազն նահատակեալ վասն ժողովրդեանն, և պսակեցաւ ի Վրիստոսէ։

ԳՏ ԱՌԻ Ն ԾՐՅԱ.

Ա աղջական բարդապատճեն պատանայն։

Պատանիս այս Բաղդասար էր յԵւդոկիա քաղաքէ՝ որ այժմ ասի թառիսաթ։ Ազգաւ Հայ. և էր քրիստոնեայ ծնողաց զաւակ։ Գոյր սոցա զբացի մի տաճիկ, արուեստիւ կօշկակար. և ետուն զԲաղդասարն նմա աշակերտ։ Եշւ առեալ տաճիկն զԲաղդասարն՝ և զնաց ի Օմիւռին. և անդ վաստակեին զարուեստն իւրեանց։ Եշւ յաւուր միում ելեալ ուսթայն զնաց ի զործինչ, և յամեցաւ։ Եշւ եկին հարկահանքն՝ որք յօտարաց առնուն, և ասի սա խարսհ³²⁾, և ասեն ցԲաղդասար, տուր զինարածն։ Ասէ Բաղդասարն, թոյլ տուք՝ զի զայցէ ուսուցիչն իմ, և տացէ զոր ինչ խնդրէք։ Խակ նորա ոչ ներեցին. այլ առեալ

(32) Տուքը, հարկ արբունի. մարդահարկ.

տարին առ հարկապետն Եշւ ասէ հարկապետն, ընդելո՞ր ոչ
տաս զիսարաձն քու Ասէ երանելի պատանին, ասացի, ներեցէք
մինչև զայցէ ուստայն իմ, և նա տացէ: Ասէ հարկապետն, եկ
տաձկացիր, և մեք թողումք զիսարաձն քո, այլիւ յաւելումք
տալ քեզ զրամն բազումն: Ասէ Բաղդասարն, վասն Եւ մարջլի
զհաւանն իմ ոչ թողում: Եշւ ապա անօրէնքն կալեալ անմեղ
մանուկն, արիեալ յերկիր, բռնութեամբ թրիատեցին. և ետուն
ի շարակ համալի, և տարեալ արկին ի խանութն իւրեանց: Եշւ
եկեալ ուութայն՝ ետես զաշակերտն իւր այնպէս վիրաւորեալ.
բարկութեամբ ելեալ գնաց տու հարաճն (33). կազէր և հայհոյէր
զնոսա՝ ասելով, մի՛թէ անօրէնութեամբ ուրացուցանելն օրէնք
ինչ են: Եշւ հրամացեաց հարկապետն՝ հանել զնա արտաքս:
Եշւ զնացեալ ի խանութն իւր, և ամենայն օր տեսաներ, զե
լայր մանուկն, և կայր արտանութեամբ: Ապա ասէ վարպետն
ցաշակերտն իւր, որդեակ իմ Բաղդասար, ահա յայտնի եղեւ
և վան քո . վասնորց ոչ կարես կալ աստի՛ն քրիատոնէու-
թեամբ. արի և գնա՛ առ ծնօղսն քո, և անդ որպէս կամիս՝ այն-
պէս կաց: Եշւ ետ նմա զրամն, և յանձնեաց զնա կարաւանա-
պետին: Եշւ եկեալ առ ծնօղսն, և պատմեաց լայով: Եշւ ծը-
նօղքն ասացին, որդեակ, ահա ամենեկեան իմացան զքէն, և
զու ոչ կարես ծածկաբար պաշտել զհաւատս քո, երժ զնա
զու յաշխարհն Հայոց ի սուրբ Խջմիածին և յամենայն վանո-
րայքն, և անդ համարձակ պահեա զհաւատ. մի՛ գուցէ աստ
կալեալ զքեզ, վշտացուցանեն զքեզ: Իսկ երանելի մանուկն
Բաղդասար՝ որպէս երկիր բարի ընկալաւ զսերմն ուրախու-
թեան, և ետ զատուղն հազարաւոր. և առեալ զօրհնութիւնս
ծնօղացն՝ և թոշակ ինչ վասն պիտոյից ճանապարհին՝ և ուղ-
ղեաց զէմս իւր զնալ յՆ. յրարատ: Եշւ ելեալ լայով և ինդու-
թեամբ զնաց և հաս ի սուրբ Խջմիածին. և յամենայն վանո-

բայս շրջադայեալ որպէս Աւահան Գոողթնային, և ասպա դը-
տեալ վարդապէտ մի Օսքարիս անուն, աշակերտեցաւ նմա,
և ուսաւ Ասդմոնն և ի բերան ուներ Երւ եղեւ ի մեռանել վար-
դապետին, և գնացեալ նորա Աշրեան քաղաք, և յարեցաւ
առ ոնն քրիստոնեայ համարուեստ իւր, և կայր անդին միամսու-
թեամբ։ Խոկ չարն սատանայ յարոյց ոնն տաճիկ ի վերայ նորա,
և եկեալ առ երանելին՝ և ասէ, ես եմ Խռուխաթեցի, և ծնօղք
քո բազում ազաշնցին ինձ առելով, թէ վասն Վասուծոյ՝ յոր-
ժամ գնաս Աշրեան, զմեր տղայն որոնեա, ուր և իցէ գտեալ՝
ընդ քեզ բերցես, և շրջեցայ յամենայն վանորսց, և ահա սատ
գտի զքեզ. Եկ՝ զե երթիցուք։ Խոկ միամիտ պատանին Բաղ-
դասար զնենգութիւն նորա ոչ խմացաւ, այլև զզութն ծնօղաց
անկաւ ի միան, և պատրաստեցաւ ի զնալ։ Ասէ տաճիկն, թէ
զոյ քեզ զբամ՝ տնոր ի փոխ, զե տաց զմաք մն իմ, և զնալք
յԱրզբում. անդ վաճառեցից առնելուն (34)։ և տայ զիսզն քու
Երւ անմեղ մանուկն հանեալ ետ միամտութեամբ՝ զոր ինչ
ուներ, և ելեալ ընդ կարաւանի, և գնացեալ հասին ի Կարին։
Երւ ետես Բաղդասար զոմն տաճիկ՝ մերձակայ զրկից հօր իւ-
րոյ՝ և համարուեստ ինքեան, որ ի տեսանելն զմիմմանս՝ խնդա-
ցին յոյժ։ Երւ ասէ տաճիկն, ես կամիք գալ Աշրեան վան քո
ըստ խնդրոյ ծնօղաց քոց. և որովհետեւ աստ եկիր, ի միասին
զործեսցուք, և ի միասին զնասցուք։ Երւ կային սիրով, և դոր-
ծին զարուեստն։ Խոկ անիծեալ տաճիկն՝ որ պատրանօք ե-
հան զնա՝ և երեր յԱրզբում, իրրե ետես՝ թէ մնաց ասա, և
ոչ կամի զնալ ընդ ինքեան, զչարեցաւ։ Երւ վասն զրամին՝ զոր
էառ, վարաներ թէ զիանու ուրացի։ Յաւուր միում զի-
տաց՝ թէ ընկեր նորա զնացեալ է ի զիւզ՝ բերել զպիտոյս
իւրեանց, զնացեալ առ փաշայն, և մատնեաց զերանելի մանու-
կըն Բաղդասար, և ասէ, տաճիկի որդի մի ի Խռուխաթոյ՝ զնա-

ցեալ յԱրեան առներ Նայութին. և առեալ բերի մինչեւ
ցասա. աստ ևս առնե Նայութին Եւ փաշայն եղ ընդ նմա
Ը զօրականս՝ և ասէ, զնացեալ բերէք զնաւ Խոկ անիծեալն
այն անկեալ առաջ և զօրականքն զինի, և յորժամ մերձ ե-
ղեն՝ ուր եր մանուկն, և պիտի այն կացեալ ի բացեայ, և մա-
տամբ եցոյց զկրպակն՝ և ասէ, այն է բնակութիւննորա. քանզի
անիծեալն այն երկնւէր յընկերէ նորա Եւ առեալ զնաւ զօրա-
կանքն առեն, դռւ ես ճառիխաթեցի Քաղդասարն ։ Վսէ պա-
տանին, այն ես եմ ։ Ասեն զօրականքն, արի զի խնդրէ զքեզ
փաշայն Խոկ պարկեցաւ մանուկն զիտաց՝ զի պիտի այն վասն
դրամին խրոյ մատնեաց զնաւ. և ելեալ ի խանութիւն՝ ետ բա-
նալն ի միւս խանութպանն՝ և ասէ, յորժամ ընկերն իմ
զայցէ, տուք զբանալիդ ի նաւ Եւ ինքն ելեալ ինդու-
թեամբ զնաց ընդ զօրականան. և եմուտ առ փաշայն, և ետ
ողջոյն ։ Վսէ փաշայն, զու ի մեր աշխարհին տաճիկ ես եղեր.
և զնացեալ ես յԱճամստան՝ դարձեալ ես քրիստոնեաց. արդ
գտրձեալ դարձիր ի տաճկութիւն, և ես կարդեմ զքեզ զօ-
րագլուխ ։ Վսէ մանուկն, ես քրիստոնէից ծնունդ եմ, և սնեալ
եմ քրիստոսական հաւատովն, և բնաւ ոչ զիտեմ տաճկու-
թիւն ։ Վսէ փաշայն, զայդ՝ զոր ինչ և ասե՞ս սուտ խօսիս Դու-
մի զոք յոյս և ապաւեն առնուլ այլ եկ ի ճշնարիտ հաւատումեր.
և թէ ոչ զաս, շարաշար մեռանիս ։ Վսէ Քաղդասարն, ես զհա-
ւատս իմ ոչ թողում. և զու զոր ինչ առնելոց ես ընդ իս՝
արա Եւ հրամայեաց իշխանն տանել զնաւ ի բանտ՝ և զնել
զօտան ի կաճեղս՝ որ է թօնուու Եւ ապա եկեալ տաճիկ ըն-
կեր նորա, և աեղեկացաւ՝ թէ եկեալ տարին առ փաշայն, և
զիտաց՝ որ վասն հաւատոյն են տարեալ. և զնացեալ առ իշ-
խանն աղաչէր՝ զի թողցէ զնաւ. և ասէ, թողլ տուր զմա եր-
թալ ի դժոխա, զի՞նչ օգուտ է ճառորբութիւն դորա մեղ։
Զայս ասէր՝ թերեւս զերծուցեալ փախուսցէ զնաւ զնալ յԱ-
րեան ։ Եւ ոչ լուան նմա, այլ անարդանաք սասաեցին նմա։

Եւ դնացեալ ի բանան, և անկաւ գերեսօք նորա, լոյր և ասէր,
 վաշ որդեանի, լաւ էր թէ չէի տեսեալ զքեզ, քան թէ տեսի ի
 տառապանաւ Եւ ասէ ցնա երանելին Բաղդասար, աղաւեմ ըզ-
 քեզ ուստա՞յ, վասն Աստուծոյ և քո որդւոյ արեւուն՝ բեր ինձ
 երեց մի, զի հաղորդեսցէ զիս. զիտեմ՝ զի ոչ թողուն վիս կեն-
 դանիւ Եւ ելեալ Խուլքն զնաց եղիտ երեց մի Յակոբ անուն,
 որ երբեմն լեալ էր մաքսապետ. որ եկեալ հաղորդեաց, և զգու-
 շացոյց մի երկնչել ի մահուանեւ, Եւ ի վաղիւն հանեալ ի
 բանատէն՝ կացուցին առաջի իշխանին Եհարց իշխանն, թէ ի
 խելս եկիբոր, թէ դեռ ես կաս ի խելադարութեան ։ Սաէ Բաղ-
 դասարն, ես ի բնէ խելօք էի. բայց թէ լսեմ քեզ, յայնժամ
 խելադարիմ։ Յայնժամ սրտնեալ իշխանն՝ ասէ, զու ոչ
 ընկալար զըա՞ս իմ, զի ես զքեզ մեծացուցանել կամի,
 և զու զայն անարգեցեր ։ Սաէ մանուկն, ես վաղութեմն ասացի,
 թէ արա զոր ինչ կարօդ ես, զի ահա կամ պատրաստ ։ Եւ
 բարկացեալ իշխանն՝ հրամայեաց տաճկաց հանել զնա արտա-
 քոյ քաղաքին՝ և սպանանել։ Եւ առեալ տանեին զնա. և ի
 ճանապարհին հարկանեին և կոփ սհարեին, թքանեին։ Խսկ նա
 զնայր սաղմոսելով, և ասեր, Երանի ամենեցուն՝ որ երկնչին ի
 տեառնէ, և զնան ի ճանապարհս նորա. և առեալ տարին ի
 բլուրն՝ որ ասի Խուլք Կշան, և անդ հատին զզլուխ սրբոյն։ Եւ
 քրիստուեայքն հրամանաւ իշխանին վեր առեալ զպատուական
 մարմին սրբոյն զլիսովն՝ և արիւնաշաղախ հողն՝ և տարեալ ի
 հասարակաց գերեզմանն՝ ի հարաւակողմն Եկեղեցւոյն ի ներքոյ
 որմոյն հանգուցին զսուրբն. և էր ժամն Բաւուրն, և պայծառ
 արեգակ Եւ ահա գունդ մի բոլոր՝ որպէս հուր վառեալ՝ պա-
 տառելով էջ յերկնից, և հարաւ յեկեղեցին, և ցնդեալ ի
 վերայ գերեզմանի սրբոյն։ Եւ տեսեալ զայն բազում տաճկաց,
 և երկմտեցան ի հաւատոցն։ Խսկ իմ գոլով անդ ամ մի, բայց
 ի ժամ նահատակութեան սրբոյն ոչ պատահեցայ. այլ ի վա-
 ղիւն հարցի ցթուրք ընկեր նորա. և նա պատմեաց զամենայն ի

ծննդենէն մինչև ի նահատակութիւնն, և ես զրեցի որպէս լը-
ւայ: Աստարեցաւ սուրբն Շաղդասար ի թուխն ԱՌԴՎ,
յաւուր տօնի սրբոց Հռիփսիմեանց: Հետ երից ամաց նահա-
տակեցաւ ՔՊԷ⁽³⁵⁾) Յակոբն, և եղաւ մերձ ի գերեզման Շաղդա-
սարին:

Գ. Լ. ՈՒԽԻ Կ.

Ն Ա Ր Հ Ա Տ Ո Ր Ե Ր Ա Ն Ը Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ր Ե Ր Ա :

Այս այս Ը Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ր Ե Ր Ճ ե ր կ ր է ն Մ ա ր ա ց՝ հ ա ւ ա տ ով ք
քրիստոնեայ, ազգաւ Ճայ, և Ե ր ա յ ր ի ո չ ու ն ե լ ով ուստր կ ա մ
դ ու ս տ ր. և բ ն ա կ ի ւ ր ը ն դ ե ղ ր օ ր ի ւ ր ու մ ի մ ի ու մ տ ա ն. զ ո ր ծ ե ր
ձ ե ռ ա մ բ ի ւ ր ով վ, և կ ե ց ու ց ա ն է ր զ բ ն ք ն: Ե ւ ե ղ ե լ յ ա ր կ ա ծ ի ց ն
ս տ ա ն ա յ ի ց ա ն կ ա ց ա ւ. չ ա ր տ ր ի ա զ ր ո ւ մ ի ը ն դ ն ա ս: Ե ւ
ա ս ա ք է ր ա ռ ն ա կ ա ւ ա տ ս պ ա ռ ա ւ ու ն ս՝ հ ա ւ ա ն է լ չ ա ր կ ա ծ ի ց ն
ն ո ր ա՝ և ս պ ո ւ ն կ ի լ ը ն դ ն ա ս: Խ ս կ բ ա ր ե պ ա շ տ կ ի ն ն ա ն ա ր զ ա ն օ ք
յ ե ս ս դ ա ր ձ ու ց ա ն է ր զ ն ս ս ա ս: Ե ւ յ ա ւ ու ր մ մ ի ու մ ի ն ք ն ա ր ու ր ա ն
ե կ ե ա լ ա ռ ն ա՝ խ օ ս է ր բ ա ն ս զ ա զ ի ր ս և ա զ տ ե զ ի ս: Ե ս է ց ն ա
պ ա ր կ ե շ տ և ս ր բ ա ս է ր կ ի ն ն, ո վ ա ր ու ր տ՝ ի բ ա ց ե ր թ յ ի ն է ն,
մ ի ք ո ւ ց է ե կ ե ա լ ե ղ բ ա յ ր ն ի մ՝ և տ ե ս ա ն է զ ք ե զ ը ն դ ի ս խ օ ս
ս ե լ ով, չ ա ր ա յ ա ր ս պ ա ն ա ն է զ ք ե զ. մ ի ն չ ա յ ս խ օ ս է ր, ե կ ի ն
ո մ ա ն ի ք ա ն դ. և ա ր ու ր ա ն ե լ ե ա լ զ ն ա ց: Ե ւ ի մ ի ու մ ա ւ ու ր ե ր
թ ա յ ր Ը Ն Ո Ր Հ Ա Տ Ո ր ն ի գ ո ր ծ ի ւ ր. և ա հ ա ս պ ա տ ա հ ե ա լ շ ո ւ ն ն
ա յ ն ա ր ու ր տ, և ձ ե ե ա լ զ ձ ե ռ ս ա ռ զ օ ձ ի ն ս ն ո ր ա, ք ա ր շ է ր ա ռ
ի ն ք ն, շ ա մ ր շ է ր և կ ա մ ե ր հ ա մ բ ու ր ե լ: Խ ս կ պ ա ր կ ե շ տ ն ա յ ն կ ի ն
հ ա ր կ ա ն է ր զ ե ր ե ս ս ն ո ր ա, ձ ա ն է ր և թ ք ա ն է ր: Ե ւ ե ղ բ ա յ ր Ը Ը
ն ո ր Հ Ա Տ Ո ր ի ն ի հ ե ռ ա ս տ ա ն է ե տ ե ս, զ ե ք ո յ ր ի ւ ր բ ռ ն ա դ ա տ է ր,
փ ու թ ա ն ա կ ի ե հ ա ս ա ռ ն ա՝ և ա ս է, ա մ լ լ լ լ ա ն⁽³⁶⁾), զ ե ՞ն չ ա զ ը լ ա-

(35) Ք է չ է ր. ա ւ ա ն ա պ ե ս:

(36) Գ ո ւ ց է ե լ լ ա. ն զ ո վ ե ա լ, ո ն փ ծ ե ա լ:

փես, մի՞թէ անտ'ը է դա. և հանեալ զիւռճան՝⁷⁾ և եշար զիմող Վրասոյն՝ և եսպան զատ, և ինքն խօյս ետ անախ։ Եւ տեսեալ զայն այլ Վրասաց, զնացեալ պատմեցին պարոնին թւրեանց։ Եւ պարոնն առաքեալ տարառ առ ինքն զշ նորհաւորն՝ և ասէ, ուր է ելքայր քո՛ որ եսպան զբաւրան։ Ասէ կինն, ոչ թէ ելքայրն իմ եսպան չնա, այլ ես սպանի զնա. վասնզի չարութիւն կամեք առնել։ վասնորոյ սպանի զնա։ Ասէ պարոնն, որովհետեւ գու սպաներ, եկ տաճկացիր, զի շնորհեմք քեզ զինասդ։ Ասէ Շնորհաւորն, Եստուած մի արասցե. քանզի սպանի զնա՝ և եղէ մաշհապարտ, և եթէ ուրանամ զբախառս, լինիմ Եստուածուլայ և ատելի Եստուածոյ։ Եւ բարկացեալ Վուրան՝ ասէ, եթէ թողուժք զդա կինզանի, լինիք մեք ծաղր ամենեցուն, և ասէ ցայլ Վուրան, հարէք զմշլունդ այդ՝ և սպանէք։ Յարեան ի վերայ նորա որպէս զազանք ի վերայ որոճի՝ փայտիւ և խանչալով, և նահատակեցին զպատուական կինն Շնորհաւոր՝ բարի հաւատով։ Եւ եկեալ քրիստոնեիցն, և բարձեալ թաղեցին զնա պատուով ի փառս Վրիխասախ։ Եւ ի թուին ՈՒՆԴՎ, զնացի ես Ասկոյդար (յիւսկիւտար)քաղաք, ի մէջ Եւամաւուրաց գտէ զայս, և զբեցի որպէս և եր

Գ. Լ. ՈՒ. Խ. Կ. Ե.

“Եւահաւում ու ունեն պատուական ինչն”

Կինս այս պատուական եր ի Ալայոց ձորոյ, ի զեղջէն Սրբայ, դուսար խաչայ, և ելև խօսեցեալ ընդ ումեմն երիտասարդի Վիրման կոչեցելոյ։ Հաւուր միում անկաւ երժատաւարդն ընդ նա, որ և յղաւեաւ և ծնաւ ու զի։ Խոկ և իշխանն Յանչուանայ Վուրատ - խան - Ոււ թաւ կամեցաւ ըմբանել զերիտասարդ

ՂԸՆ, և նա իմացեալ կախեաւ և դնաց յԵրարտու ի Կորադաս-
ւիթ զիւղ։ Աւ իշխանն առաքեալ տարաւ առ ինքն զինն
Եզիզ, քանզի այս էր անունն նորա, որ թարգմանի Պատուա-
կան։ Վսէ ցնա սութեանն, զու ընդէ՞ր արարեր բոզութիւն, և
ծնար շնութեամբ որդի։ Վսէ կինն, ևս ընդ ամուսնոյ իմոյ ան-
կայ, և ի նմանէ ծնայ. եթէ ամուսնութիւնն մեզս իցեն, ապա-
քէն դուք ամենեքեան ամուսնացեալ է.ք։ Վսէ իշխանն, մեք
օրինոք եմք ամուսնացեալ՝ և ոչ որպէս զու բոզութեամբ։ Վսէ
կինն, օրինոք ամուսինն մին լինի, և դուք բազում առնուք.
վասնորոյ ամենեքեան բոզ է.ք։ Վսէ իշխանն բարկութեամբ, հա :
Դանիուն⁽³⁸⁾) զու է պատերազմ մտեր ընդ իս. ինձ չէ ինչ փոյթ.
այլ Եկ տաճկացիք, ապա թէ ոչ՝ չարաչար սպանից զքեղ։
Վսէ կինն, բաւական էր ինձ մեղանչումն պոռնկութեամբ։ Խոկ
թէ ուրանամ զհաւատն իմ, յինիմ ուրացօղ՝ և բազում մե-
զաց պարասապան։ Վսէ իշխանն, զայդ ասեցվ ոչ զոյ քեզ
հնար զերծանելոյ՝ բայց թէ ոչ զայցես ի հաւատու մեր։ Վսէ
Եզիզն, ուղիղ հաւատ և օրինիք այս որ ունիմ եռ, այլ հա-
ւատ ոչ զիտեմ։ Հրաման ետ իշխանն զահնայն՝ և առէ, կա-
պեցէք տռո զոջո զորա, և տարեալ կախեցէ.ք ի մինարայէն, և
սպանացէ.ք. և թէ ոչ ուրանայ, կտրէ.ք զպարանն՝ և արկէ.ք
ի վայր, զի անկեայ մեոցի։ Աւ առեալ տանեին զնա կո վահա-
րեցվ և հարկանե ոլ։ և հանին ի զուուի մինարայն արտաքու-
քադաքին, կահ և ոչ հարկանին ծայրիւ թրոյն, և առէին, Առա-
սան⁽³⁹⁾ Կասան Մահմատին, ահա մեռանիու։ Վսէ կինն, յաւուք մի-
ում մեռանելոց եմ, բարուոք է փութով մեռանիմ իմով հա-
ւատովս՝ քանիթէ ուրացութեամբ՝ տար հաւատով և չար ան-
ուատիր։ Խրի տեսին դահճճըն զհաւատատ միսս նորա, հատին
զպարանն. և անկատ յերկիր Պատուականն այն կինն զովելի, և

(38) Ուշ պոռնիկ։

(39) Աղօմք. 2) զաւանել զդաւանութիւն կրօնից տաճկաց։

վախճանեցաւ։ Եւ ժողովեցան Կախչուանայ մեծամեծ քրիստոնեացքն, և գնացին առ Առվելմանն, և խնդրեցին զերանելին թաղել, և առեալ տարան է հասարակաց զերեզմանն, և թաղեցին մեծաւ պատուով է ՈՒՃՃԱՌ թուին։

ԳԼՈՒԽ ԿՐ.

Կահարավունակ Աստվածաշնուրական կամաց կամաց։

Կոյսս այս եր ի դաւառէն Գրողթանայ ի զեղջէն Ըաղկերտոյ, և եր անուն նորա թամամամ, որ է կատարեալ՝ կամ լցեալ, դուստր առն միոյ անզգամբ՝ Մալխաս անուն, և եր տանուտեր Ըաղկերտոյ։ Խսկ զեղականքն ասացին ցնա, եկ տուր զհամար տանուտերութեան քո, և ետ զհամարն, և մնաց ի վերաց նորա բաղում ևս, և խնդրեին ձնչիւ։ Խսկ նա պատրեաց զնոսա՝ և ասէ, թոյլ տուք ինձ աւուրս երիս, և ես հատուցից։ Եւ նա ելեալ փախստեամբ՝ և գնաց յԱսպահան առ իշխանն Կախչուանու Ամահատ-ռզայ-խան՝ և ասէ, դուստր իմ տաց որ գւոյ քում, և գու վերծո՞ զիս ի զեղականաց անտի։ Խսկ իշխանըն արար ըստ կամաց նորա, զրեաց առ շնուկանսն Ըաղկերտոյ, թէ ես առի զհամար զորա, և ինձ եհաս զամենայն, և դուք չունիք հրաման խօսել ընդ զմաւ։ Եւ որդին իւր Մուրթուզայ-ղուլի եր յԱրեւան նստեալ Տեղապահ յետ Օալին, զրեաց առ նա, թէ առաքեալ ի Ըաղկերտ՝ և բեր առ քեզ զդուստր տանուտեր Մալխասին։ Եւ լուեալ զայս ի հօրեն, առաքեաց զարս հանդերձ կնաւ տաճկին ածել զկոյսն թամամն Եւ գնացին հրաւիրակքն, մատուցին զչար աւետիքն։ Եւ մինչեւ ցայժմ ոչ եին լուեալ զայս աղջիկին և մայրն։ յորժամ լուան, աղաղակիին, ճանկիին զերեսս, ճողիին զշերս, լոյին և հառաշիին։ Խսկ տաճիկքն կալեալ զերանելի կոյսն Կատարեալ մերթ ի քարշ, մերթ ի յոտին, և տարեալ մուծին ի ժանուար

ըլնու Խսկ պղիղծն Մալխատ պատուեր առաքեաց առ Մուրթուզայն՝ և ասէ, ո՞նքան մի՛ խօսեսցիս ընդ դստեր իւմոյ, մինչև ես եկեալ արարից զհարսանիսն Եւ առեալ ապրին զնա յեշրեան՝ և ցուցին Մուրթուզայ-զուլուն Եւ տեսեալ զգեղցկութիւն նորա, զարդարեաց զնա ոսկեով, և արծաթով, և դիսպակով, և այլ ևս զարդուք պճնեցոց, և մնայր զարտեան հօր նորա, զի արասցէ, զհարսանիս: Խսկ երանելի կոյսն Կատարեալ ոչ ուրախանայր, ոչ ուտեր, և ոչ ըմբեր: Ե. Ճ. միշտ զմտաւ ածեր, թէ որո՞վ հնարինք կարիցէ զերծանելը Եւ նստեր հանդեպ ձորցն, և ի զլուխս բարձր քարանցն զնեներ՝ զնենեայ խոնարհ տեղի ինչ գտցէ, զի իջեալ փախիցէ. և ոչ եզիտ ցած տեղի: Եւ ասկա ի գիշերի միում խորհեցաւ ի միտս իւր, թէ անկայց ի քարանցս ի վայր, բարուոք է, խոնվ կամաւ և Վրիստոսի հաւատովն մեռանել, քան ուրացութեամբ մնարով կենդանի: Եւ կնքեալ խաչ զերեան, անկաւ ի բարձր քարանցն ի վայր, և ուշաթափ եղեւ սակաւ մի. և ասկա յարուցեալ հայի ընդ նոյն՝ ուղղէ զբնորն զնալ ի կարրի: Եւ ահա պատահեաց տաճիկ մի, և աղաւեաց առ նա կոյսն. և ետ նմա ապազի մի՝ և ասէ, ցոյց ինձ զճանաւ արհ կարրւոյ. և նա եցոյ նմա՝ և ասէ, պատեն զայգեստանադ և մաւա ի Նորագեղ, և անդ ցուցանեն քեզ ճանապարհ: Եւ նա զնացեալ էանց զիիւղն, և առապար ճանասպարհաւ երթայր՝ և ոչ զիտեր թէ ուր զնայր. և հայեցեալ տեսանե՝ զի առաջի իւր զնան բազմութիւն տաճկաց՝ արք և կանայք՝ բնունակիր անասնոք՝ հանդեպ լերինն Աքայի լեռնանալը Եւ փութացեալ եհաս նոցա, զմտաւ ածեալ՝ թէ է շն ինչ երթան նոքա: Ոչ նոքա հարցին ցնա՝ թէ ովլ ես, կամ ուր երթաս, և ոչ նա եհարց ցնոսա ինչ, և անմեռունչ զնայր ընդ նոսա զկնի նոցա: Եւ զնացեալ հասին հանդեպ զեղջն Եղավարդայ: Եւ սուրբ կոյսն եհարց տաճկացն վասն գեղջն. և նոքա ասացին, գեղ է Հա-

